



The National Academy of Sciences of the Republic of Armenia
H.Acharian Institute of Language

Национальная академия наук Республики Армения
Институт языка имени Р. Ачаряна

International Conferance:
ISSUES OF THE ARMENIAN DIALECTOLOGY
Yerevan, October 8–9, 2014

C o l l e c t i o n o f p a p e r s

Международная конференция:
ПРОБЛЕМЫ АРМЯНСКОЙ ДИАЛЕКТОЛОГИИ
Ереван, 8–9 Октября, 2014 г.

С б о р н и к д о к л а д о в

Publishing house “Asoghik”
Издательство “Асохик”
Yerevan – 2014 – Ереван

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Հ.ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**ՀԱՅ ԲԱՐՔԱՌԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ**

Միջազգային գիտաժողով

8–9 հոկտեմբերի, 2014 թ.

Չ ե կ ու ց ու մ ն ե ր ի ժ ո ղ ո վ ա ծ ու

Երևան
«Ասողիկ» հրատարակչություն
2014

ՀՏԳ 809.198.1:06

ԳՄԴ 81.2Հ

Հ 240

Ժողովածուն հրատարակության է երաշխավորել
ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի
գիտական խորհուրդը

Ժողովածուն հրատարակվում է
ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի
ֆինանսական աջակցությամբ

Խմբագրական խորհուրդ՝

Վ.Լ.Կատվայան (նախագահ), Վ.Գ.Համբարձումյան,
Ա.Ե.Սարգսյան, Լ.Շ.Հովհաննիսյան, Ն.Գ.Հովհաննիսյան,
Ա.Ս.Գալստյան, Լ.Ս.Հովսեփյան, Ռ.Ս.Թոխմախյան,
Գ.Կ.Խաչատրյան, Ժ.Ա. Սիքայելյան, Գ.Ս.Սխիթարյան,
Ա.Ա.Աբրահամյան (պատ. քարտուղար)

Հայ բարբառագիտության հիմնախնդիրներ: Միջազգային
Հ 240 գիտաժողովի զեկուցումների ժողովածու. - Երևան,
«Աստղիկ» հրատարակչություն, 2014. – 224 էջ:

Ժողովածուն բովանդակվում է ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան
լեզվի ինստիտուտի կազմակերպած «Հայ բարբառագիտության
հիմնախնդիրներ» թեմայով միջազգային գիտաժողովի նյութերը:

Նախատեսված է հայագետների և հայագիտությամբ հետա-
քրքրվող ընթերցող լայն շրջանների համար:

ՀՏԳ 809.198.1:06

ԳՄԴ 81.2Հ

ISBN 978-9939-50-274-8

© ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, 2014

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Աբրահամյան Անահիտ – Կալսած կալը ժողովելու գործիքի անվանումները հայերենի բարբառներում	5
Աղաբեկյան Մելադա – Հայերեն բարբառային համապատասխանություններ ուրարտերենում	16
Բառնասյան Ջենմա – Դերանունները Մուշ-Տիգրանակերտի բարբառախմբում	24
Թաղևոսյան Հասմիկ – Անկատար դերբայի բարբառային ձևերի կիրառությունները XVII դարի բժշկարաններում	30
Խաչատրյան Հասմիկ – Ազգակցական հարաբերություններ արտահայտող բառանունների բարբառային պատկերը Գեղարքունիքի տարածաշրջանում	37
Կատվայան Վիկտոր – Միջինհայերենյան իրողություններ Բայազետի բարբառում	49
Հովհաննիսյան Լավրենտի – Ղարաբաղի բարբառում միջին իրանական լեզուներից կատարված մի քանի փոխառությունների շուրջ	62
Հովհաննիսյան Նազիկ – Նեղ բարբառային բառեր և բառիմաստներ հոմանիշների՝ XVIII դ. ձեռագիր բառարաններում	68
Մալեք Մոհամմադի Մոհամմադ – «Շահնամեի»՝ Նոր Բայազետի բարբառով տարբերակի լեզվաոճական առանձնահատկությունները	79
Մարգարյան Լուսինե – Բարբառի պատմական զարգացման ընթացքը Արցախի բնականումներում	83
Մեսրոպյան Հայկանուշ – Տոնական օրերի բարբառային անվանումների շուրջ	97
Միքայելյան Ժաննա – Մոկսի հայ բանահյուսությունը և խոսվածքը Հովսեփ Օրբելու դիտարկմամբ	104
Միքայելյան Ժաննա – Արցախի բարբառային միավորների քմային բաղաձայնները	114
Միքայելյան Սոնա – Անտիոքի հայերեն բարբառախմբի արաբական փոխառությունների ձևաիմաստային քննություն	120

Մխիթարյան Գայանե – Դիտարկումներ «Սասնա ծռեր» Էպոսում հիշատակված սագ բառանվան վերաբերյալ	127
Մկրտչյան Գարիկ – Մշո բարբառի արդի վիճակը Գեղար- քունիքի տարածաշրջանում	134
Պապիկյան Միլվա – <i>Խաղք</i> և <i>խայտառակ</i> հասկացություն- ների ըմբռնումը բարբառներում	144
Սանթրոյան Արեն, Պետրոսյան Լիլիթ – Անձնանունները Մշո բարբառով գրառված հեքիաթներում	151
Մարգարյան Նվեր – Հայ բարբառագիտության պատմության շրջանաբաժանման մասին	158
Տեր-Գրիգորյան Լիլիթ, Մկրտումյան Անահիտ – Ջգայա- րանների անվանումներով բաղադրված դարձվածները պարսկահայ տարածքի խոսվածքներում	169

Հաղորդումներ

Գալֆայեան-Փանոսեան Հիլտա – Պոլսոյ բարբառէն դէպի արեւմտահայ գրաւոր կարգաւորուած լեզու	180
Հակոբջանյան Անահիտ – Ղազարոս Աղայանը հայերենի բարբառների մասին	193
Մարգարյան Արմեն – Արտասանական իրողություններ հայ ժողովրդական երգիծական մանրապատումներում և զվարճախոսություններում	203
Վարդանյան Մերգեյ – Թուրքիայում բնակվող համշենահա- յերի արդի լեզվավիճակը	211

Արքահամայան Անահիտ (Հայաստան
ԳԱԱ Հ.Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ)

**ԿԱԼՍԱԾ ԿԱԼԸ ԺՈՂՈՎԵԼՈՒ ԳՈՐԾԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ
ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ**

«Կալսած կալը մի տեղ ժողովելու փայտյա կոթավոր գործիք» հասկացությունը՝ որպես բառահողված, ընդգրկված է Հայերենի բարբառագիտական ատլասի (ՀԲԱ) նյութերի հավաքման ծրագրի «Բառային զուգաբանություններ» բաժնում (հ. 94): Կալսած կալը մի տեղ հավաքելը կարևոր նշանակություն է ունեցել կալի աշխատանքներում: Այդ նպատակով օգտագործվել է փայտյա կոթավոր գործիք, որը հայերենի բարբառներում ունեցել է բազմաթիվ անվանումներ՝ *թի, եղան, լամփառ, քննֆիզ (քաֆրիկ), շանա, դրրգան, յարա, շանգալ, դրրմըղ, գարարի, մըջըլֆա, քառէշտ, տափան, հոտլի, քիրագ, մանգառ, մըղան, հալ, կառափ, կապտուն, սուրութնա, սուրգու, դադոդ, թոխմոխ, կամ, կրըքաշի, սիրէջէգ, քեղհան, ք'անշան, բրխմալ, քերիչ, ծան քերիչ* /ավելի քան 30 անվանում/:

Նշված գործիքանիշ բառերի մեծ մասը հայերենի բարբառներում ունեցել է նաև այլ նշանակություն: Ըստ այդ նշանակությունների՝ տվյալ բառանունները մենք արդեն դիտարկել ենք մեկ այլ աշխատանքում¹: Սույն հոդվածում կանդրադառնանք *մըղան, հալ, կառափ, կապտուն, սուրութնա, սուրգու, դադոդ, թոխմոխ, կրըքաշի, սիրէջէգ, ք'անշան, կամ, բրխմալ, քերիչ, ծան քերիչ, քեղհան* բառանուններին, որոնք նախկինում «կալսած կալը մի տեղ ժողովելու փայտյա կոթավոր գործիք» կամ այլ նշանակություններով մենք դիտարկել:

Հայ: Ըստ ՀԲԱ նյութերի՝ բառանունը *հալ* ձևով գրանցվել է հայերենի բարբառների 34 ենթախոսվածքներում՝ ընդգրկելով Եդեսիայի (1*՝ Կարմունջ), Մուշի (7), Կարինի (10), Բայազետի (1՝ Արծափ), Խոյ-Մարաղայի (1՝ Հախվերիս), Երևանի կամ Արարատյան (14) բարբառները:

* Խոսվածքների կամ ենթախոսվածքների թիվը:

¹ Տե՛ս **Ա. Արքահամայան**, *Երկրագործական գործիքների անվանումները հայերենի բարբառներում*, Ե., 2013:

Հ.Աճառյանը «Հայերեն գաւառական բառարանում» արձանագրել է *հալ* հնչաձևի գործածությունը Լոռիում, Շիրակում և *հեղ* հնչաձևի գործածությունը Համշենում²: Չնայած ՀԱԲ-ում հեղինակը բառանվանը չի անդրադարձել, սակայն այլ աշխատություններում ներկայացրել է բառի ստուգաբանությանն առնչվող դիտարկումներ: Դեռևս 1918 թ. Փարիզում տպագրվող «Mémoires de la Société de linguistique de Paris» հանդեսում հրատարակած՝ հայերենի ստուգաբանություններին նվիրված մի հոդվածում Հ.Աճառյանն առանձին անդրադարձ ունի *հալ*, *հեղ* «փայտե մեծ յուրատեսակ թի կամ թիաձև մեծ ուղղանկյուն տախտակ, որով կալում ցորենն են հավաքում» բառին, որը համեմատում է լատիներեն *pāla* «թի» ձևի հետ³: Ավելի ուշ նա այդ բառին անդրադառնում է իր «Հայոց լեզվի պատմության» մեջ, որում՝ հնդեվրոպական ծագում ունեցող 26 բարբառային բառերի շարքում, նշում է նաև *հալ*, *հեղ* «կալի թի» բառը՝ դարձյալ այն համեմատելով լատիներեն *pala* «թի» ձևի հետ⁴:

Գ.Ջահուկյանը, գրաբարում չվկայված, բայց հայերենի հիմնական շերտի միջոցով եկող և հայերենի ընդհանուր օրինաչափություններին ենթարկվող հնդեվրոպական արմատների շարքում բերելով Հ.Աճառյանի այդ համեմատությունը՝ ծանոթագրության մեջ դա համարում է կասկածելի, քանի որ լատիներեն *pala*-ն բխեցնում են **pag-sla*-ից (հ.-ե. *pag*՝ – ամրացնել)⁵: Գ.Ջահուկյանի «Հայերեն ստուգաբանական բառարանում» բառանվանը անդրադարձ չկա:

Ա.Խաչատրյանը ծագումնաբանական կապ է տեսնում *եղեն*, *եղուլի* «եղան» և *հալ* // *հեղ* «կալի թի, հոսելի» բառերի միջև: Ինչպես նշում է հեղինակը, *եղան*-ը և *հալ*-ը «նախապես ունեցել են «շրջող, փոփոխող», մասնավորապես «կալը շրջող, կալը էրնող» իմաստները... Յեղ կամ *եղ* արմատը ծագում է հ.-ե. **quell*- «դառնալ, շարժվել» արմատից, որի *quol* ձևից են հայերեն *հող*, *հողով* բառերը: Բարբառային *հեղ*-ը կարող է գալ **guel*-ից, իսկ *հալ*-ը՝ նրա ստորին ձայնադարձից՝

² Տե՛ս Հ.Աճառյան, *Հայերեն գաւառական բառարան* (այսուհետև՝ ՀԳԲ) (= Էմիլենյան ազգագրական ժողովածու, հ. Թ), Թիֆլիս, 1913, էջ 630:

³ Տե՛ս Խ.Աճարյան, *Etymologies Arméniennes. – Mémoires de la Société de linguistique de Paris*: Volume 20, Paris, 1918, էջ 162:

⁴ Տե՛ս Հ.Աճառյան, *Հայոց լեզվի պատմություն*, հ. Ա, Ե., 1940, էջ 120:

⁵ Տե՛ս Գ.Ջահուկյան, *Հայ բարբառագիտության ներածություն*, Ե., 1972, էջ 310:

ցալ»։ Ա.Խաչատրյանը կարծում է, որ այս վերջին ձևից է նաև Ղարաբաղի բարբառում առկա *հալ* «գնդակ» բառը⁶։

Նոր Հայկազյան բառարանը բառանունը նշել է «Յաւելուածի» աշխարհիկ բառերի շարքում՝ առանց անդրադառնալու ծագմանը⁷։

Բառանունը վկայված է ազգագրական գրականության մեջ («Միւս օրը կալը արդէն օրանով լցուած էր։ Աբօն հաւաքեց եղանները, հոռուէլիքը, թիակները, հալը, կառափը, կամերը և այլ հարկաւոր գործիքներն ու գնաց կալը»⁸), աշխատանքի երգերում («... Էկաւ թեղելու հրեամ, / Դորվի գացի հալ չեղաւ, / Բոյիկս հալ էնեցի. / Եարոչ ցոբեն էրնեցի...» /Ալաշկերտի բարբառ⁹):

Կառափ: Կառափ/կառապ բառանունը արձանագրվել է հայերենի բարբառների 21 ենթախոսվածքներում՝ ընդգրկելով Մուշի (12), Տավրոբիկ-Մոտկանի (2՝ Արփի, Բիջունք), Կարինի (4), Դիադինի (1՝ Ծաղկաշեն /Արագածոտնի մարզ, ՎԲ/), Խոյ-Մարաղայի (1՝ Անտառուտ /Արագածոտնի մարզ, ՎԲ/) և Երևանի կամ Արարատյան (1՝ Թեղուտ /Լոռու մարզ/) բարբառները։ Բուն Սասունի բարբառում (Գելիեզուզան, Սեմալ) գրանցվել է *գառափ* հնչածնը։ Գեղարքունիքի մարզի Վերին Ճամբարակ բնակավայրում գործածվել է *կրռափան* ձևը։

«Հայոց լեզվի բարբառային բառարանը» արձանագրել է բառանվան գործածությունը նաև Ղազախում, որտեղի ենթախոսվածքներում առկա է նաև *կառափել* «կալում ծեծած հացահատիկը կառափով մի կողմ հավաքել՝ քամուն տալու համար» բայը¹⁰։

Հ.Աճառյանը փաստել է բառանվան գործածությունը Շիրակում։ Նա նշել է, որ այս անվամբ գործիքը «մեծ տախտակ մըն է, որուն վրայ

⁶ Ա.Խաչատրյան, Ստուգաբանական դիտարկումներ. – *Հայերենի բարբառագիտական ատլաս*, պր. 3, Ե., 2010, էջ 32։

⁷ Տե՛ս նաև Հ. Գաբրիել Աւետիքեան, Հ. Խաչատուր Միսրուկեան, Հ. Մկրտիչ Աւգրեան, *Նոր բառգիրք հայկազեան լեզուի* (այսուհետև՝ ՆՀԲ), հ. 2, Վենետիկ, 1837, էջ 1064։

⁸ *Փշրանք Շիրակի ամբարներից*, հաւաքեց Աղ.Մխիթարեանց (= Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Ա), Մոսկուա-Ալեքսանդրպոլ, 1901, էջ 286։

⁹ *Ժողովրդական երգ, առած, ասած, հանելուկ, երդում, օրհնանք, անէծք եւ այլն*, հաւաքեց Ս.Հայկունի (= Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Զ), Մոսկուա-Վաղարշապատ, 1906, էջ 75։

¹⁰ Տե՛ս նաև *Հայոց լեզվի բարբառային բառարան* (այսուհետև՝ ՀԼԲԲ), հ. 3, Ե., 2004, էջ 47։

երկու ծակ կայ, այս ծակերէն չուան անցունելով, եզները կը լծեն և կը քաշեն, կամնած ցորենը հաւաքելու համար՝ որպէսզի այնուհետև թեղեն»: Հ.Աճառյանը վկայել է նաև Շիրակում *կառափ անել, կառափ քաշել* «կառափով ցորեն հաւաքել» հարադիր բարդությունների գործածությունը¹¹: Մակայն նա *կառափ* բառի ստուգաբանությանը չի անդրադարձել:

Գ.Ջահուկյանը, գրաբարում չվկայված, բայց հայերենի հիմնական շերտի միջոցով եկող և հայերենի ընդհանուր օրինաչափություններին ենթարկվող հնդեվրոպական արմատների շարքում նշում է նաև *կառափ* բառը. «կառափ ((*g_{er}-?) «կալքաշ, կապտոն (տախտակ, որով կամնած ցորենը քաշելով հավաքում են թեղելու համար)» (Շիր.) – հունարեն *ἀγείρω* «հավաքել», *τὰ γάργαρα* «բազմություն, կույտ» և այլն (հ.-ե. *ger*-«հավաքել»)»¹²:

Համընթաց բարբառում *կառափ* բառն ունի «փոցխ» նշանակությունը¹³:

Բառանունը վկայված է ազգագրական գրականության մեջ. «Դարմանն էլ... կառափով քաշեցին մարագը»¹⁴:

Կապտոն: Ըստ ՀԲԱ նյութերի՝ *կապտոն* բառանունը գրանցվել է հայերենի բարբառների 6 ենթախոսվածքներում՝ ընդգրկելով Կարինի (5՝ Արմուտլու, Ծպնի / *կարդան*/, Բասենի Ալիճագրակ, Խոսրովական և Կարսի Նախիջևան / *կարդոն*/) և Խոյ-Մարաղայի (1՝ Քիշմիշթափա / *կարդան*/) բարբառները:

Սահակ վարդապետ Ամատունին վկայել է բառանվան՝ «կառափ» նշանակությամբ գործածությունը Շիրակում:

Բառի ստուգաբանությունը չենք գտել:

Մրդան: Ըստ ՀԲԱ նյութերի՝ *մրդան* բառաձևը գրանցվել է հայերենի բարբառների 44 խոսվածքներում ու ենթախոսվածքներում՝ ընդգրկելով Մուշի (1՝ Հադգոն), Խոյ-Մարաղայի (1՝ Ուզ /Մյունիքի մարգ, ՎԲ/), Պարսկահայոց (1՝ Մուծումբար), Երևանի կամ Արարատյան (2՝ Ծաղկավան /Տավուշի մարգ/, Առինջ /Կոտայքի մարգ/), Ղարաբաղի (33) բարբառները և Ղազախ-Կիրովաբաղի (6) միջբար-

¹¹ Տե՛ս ՀԳԲ, էջ 553:

¹² Գ.Ջահուկյան, *Հայ բարբառագիտության ներածություն*, էջ 302:

¹³ Տե՛ս ՀԼԲԲ, հ. 3, էջ 47:

¹⁴ Փշրանք Շիրակի ամբարներից, էջ 288:

բառը: Գրանցվել են նաև *մրղա՛ն*, (Կարճևան /Սյունիքի մարզ/ և Դաշբուլաղ /ԼՂՀ/), *մրղա՛ն* (Գետաշեն), *մր՞ղան* (Վաղուհաս /ԼՂՀ/) հնչաձևերը: Ղարաբաղի բարբառի Գորիսի խոսվածքում գրանցվել է *մրղաս* ձևը, Տավուշի մարզի Աչաջուր գյուղում գործածել են *մաղան* հնչաձևը: Ագուլիսում և Ցղնայում գործածվել է *մրղո՛ն* ձևը: Ըստ ՀՖԱ նյութերի՝ *մողան* հնչաձևը արձանագրված է հայերենի բարբառների 36 խոսվածքներում ու ենթախոսվածքներում՝ ընդգրկելով Երևանի կամ Արարատյան (1՝ Աստապատ), Ագուլիսի (1՝ Բիստ), Մեհտիշենի (1՝ Մեհտիշեն), Ղարաբաղի (32) բարբառները և Ղազախ-Կիրովաբադի (1՝ Սաբաթոու և Դաշբուլաղ) միջբարբառը: Ի դեպ, Ղազախ-Կիրովաբադի միջբարբառի Օրջոնիկիձեի ենթախոսվածքում գործածվել է *մրղանիչ* ձևը:

1892 թ. Ն.Գրիգորովը վկայել է Տաթևում *մրղան* կոչվող գործիքի գործածությունը «կալի գործիք» նշանակությամբ¹⁵:

Ըստ Հ.Աճառյանի՝ բառը կազմված է *մող* «քշել, վանել, առաջ տանել, հրել» արմատից և *-ան* ձևությից¹⁶: ՀԱԲ-ում նշված արմատը ստուգաբանված չէ: Գ.Զահուկյանը հնարավոր է համարում *մող* «մղում, քաշում, հրում» ձևի ծագումը բնիկ հ.-ե. *mu-1՝ *meu- «հեռացնել, տեղից շարժել» արմատից¹⁷:

Հ.Աճառյանը գրանցել է նաև *մղանել*, *մղան մղան անել*, *մղանա-ծակ* տարբերակները¹⁸:

Ք՛ւնչան: ՀՖԱ նյութերում բառանվան գործածությունն արձանագրված է Խոյ-Մարաղայի բարբառի Ագատավանի /հին՝ Չիգրսնմու/ /Արարատի մարզում, ՎԲ/ ենթախոսվածքում:

Բառը կազմված է *քարշ* և *-ան* ձևություններից: Առաջինը փոխառություն է իրան. karš «քաշել» ձևից¹⁹, իսկ երկրորդը հանդես է գալիս

¹⁵ Տե՛ս **Н.Григоров**, Село Татев. – *Сборник материалов для описания местностей и племен Кавказа*, вып. XIII, Тифлис, 1892, էջ 97:

¹⁶ Տե՛ս **Հ.Աճառյան**, *Հայերեն արմատական բառարան* (այսուհետև՝ ՀԱԲ), հ. Գ, Ե., 1977, էջ 355-356:

¹⁷ Տե՛ս **Գ.Զահուկյան**, *Հայերեն ստուգաբանական բառարան*, Ե., 2010, էջ 537-538:

¹⁸ Տե՛ս ՀԱԲ, հ. Գ, էջ 356:

¹⁹ Տե՛ս նույն տեղում, հ. Դ, Ե., 1979, էջ 562-563:

բնիկ հայերեն կամ հայակերտ մի քանի գործիքանիշ բառերում //եղ-ան, մղ-ան, տափ-ան և այլն/:

Կլորքաշի: ՀԲԱ նյութերում բառանվան գործածությունը վկայված է Ղազարի-Կիրովաբադի միջբարբառի Խանլարի ենթախոսվածքում:

Բառը /կալաքաշ «երկրագործական գործիք մ'է, որով՝ ծեծուած կալը կը ժողովեն»/ արձանագրել է նաև Հ.Աճառյանը՝ չնշելով բարբառը: Հ.Աճառյանը գրանցել է նաև *կալաքաշել* «կալաքաշ կոչուած գործիքով կալը հաւաքել»/ բայը²⁰: Ս.Ամատունին գրանցել է *կալաքաշ* գործիքանիշ բառի գործածությունը Ախալքալակում²¹: Ըստ ՀԼԲԲ-ի՝ այդ երկու բառերը գործածվել են Կարինի բարբառում²²:

Բառը հայակերտ է՝ կազմված *կալ*, *քառշ* և *ի/չ*/ ձևայիններից: Առաջին արմատը ՀԱԲ-ում ստուգաբանված չէ: Երկրորդը, ինչպես արդեն նշել ենք, փոխառություն է իրան. *karš* «քաշել» ձևից:

Գ.Ջահուկյանը գտնում է, որ «հազիվ թե բնիկ հ.-ե.՝ **gwailo-* /«կլոր տեղ»/՝ **geu* «ծռել, թեքել, կորանալ, կամար կազմել» արմատից...: Նման է հ.հնդկ. *khala* «կալ» բառին, բայց դժվարություն է հարուցում հնչյունական անհամապատասխանությունը, եթե գործ չունենք կադիւն տիպի համապատասխանության հետ՝ *(s)kel «ծռել» արմատից. հնարավոր է համարվում հ. հնդկ. բառի դրավիդյան ծագումը»²³:

Բառանունը «կալը քաշելու գործիք» արտահայտության կրճատ ձևն է, ինչպես՝ *տրփտքանդի* /տափը քանդող գործիք/, *թռնըխաննի* /թոնիրը խառնող գործիք/, *տիրիվհարե* «թթենու տերև կտրելու ցաքատ», *փրըլվքանի* /փլավքամիչ/, *կըրակխառնի* /վառարանի կրակը խառնելու գործիք/, *տաշտաքերի* «տաշտի խմորը քերելու երկաթյա թաթակիշ» և այլն:

Տննման քաշիլի: Բառանունը «մղան» նշանակությամբ գրանցել է Ռ.Բադրամանը Շամախիի բարբառում²⁴: Բառակապակցության առաջին բաղադրիչը՝ *տննման*, ըստ Հ.Աճառյանի, իրանական փոխառություն է /*darmān* «բժշկութիւն, դեղ» ձևից/, որ հայերենի բարբառ-

²⁰ Տե՛ս ՀԳԲ, էջ 537:

²¹ Տե՛ս Ս. Վրդ. Ամատունի, *Հայոց բառ ու բան*, Վաղարշապատ, 1912, էջ 331:

²² Տե՛ս ՀԼԲԲ, հ. 3, էջ 14:

²³ Տե՛ս Գ.Ջահուկյան, *Հայերեն ստուգաբանական բառարան*, էջ 373:

²⁴ Տե՛ս Ռ.Յ.Բադրամյան, *Շամախիի բարբառը*, Ե., 1964, էջ 249:

ներում պահպանվել է նաև «յարդ» նշանակությամբ²⁵: Երկրորդ բաղադրիչը սերում է նույնպես իրան. փոխառված *karš* «քաշել» ձևից, որի ծագման մասին արդեն նշել ենք:

Պատոն / դատոն: Հ. Աճառյանը Բութանիայի /Նիկոմեդիայի/ խոսվածքում արձանագրել է *դատոն / դատոն* բառերը: Ըստ նրա՝ *դատոն* է կոչվում այն երկրագործական գործիքը, որի «երկար կոթի մը ծայրը հաստատուած է եռանկյունի ձևով և նեղ տախտակներով շինուած մաս մը. ասով կալին մէջ փռուած ցորենը կեդրոնը կը հաւաքեն և թել կը շինեն»: Հ. Աճառյանը նաև նշում է, որ «նոյն բառն է *դատոն*՝ որ գտած եմ «կալ սրբելու փայտ» նշանակությամբ»²⁶:

ՀԲԱ նյութերում բառանունը *դատոն* հնչաձևով գրանցվել է Պոլսի միջբարբառի Խասկալի /Նիկոմեդիա/ ենթախոսվածքում:

ՀԼԲԲ-ն գրանցել է *դատոն / դատոն* ձևերի գործածությունը ինչպես Բութանիայում, այնպես էլ Պոլսում և Պարտիզակում²⁷:

Բառի ստուգաբանությունը և փոխառության աղբյուրը չենք գտել: Թուրքերենի բարբառներում բառի գործածությունը *dadul* «վառարանի թի, հացթուխի թի» տարբերակով գրանցված է Դենիզլիի, Ստամբուլի, Կարսի և Զոնգուլդակի խոսվածքներում²⁸:

Սուրգու: ՀԲԱ նյութերում բառանունը գրանցվել է Սեբաստիայի բարբառի Մանջալիկի ենթախոսվածքում՝ *սուրգու* հնչաձևով:

Բառը փոխառություն է թյուրքերեն *sürgü* ձևից, որ արդի թուրքերենում նշանակում է «տափան, ցաքան», նաև՝ «սողնակ, փական»²⁹: Բառը կազմված է թյուրքերենի *sür* «տրորել, մանրել, քերել», նաև՝ «քաշել, քարշ տալ», «քշել, հեռացնել, առաջ շարժել» արմատից և *gü* ածանցից: Այս բառը թյուրքական շատ լեզուներում ունի նաև «կաշիս մշակելու փայտյա մեծ տախտակ» նշանակությունը³⁰:

²⁵ Տե՛ս ՀԱԲ, հ. Ա, Ե., 1971, էջ 639-640:

²⁶ Տե՛ս ՀԳԲ, էջ 268:

²⁷ Տե՛ս ՀԼԲԲ, հ. 1, Ե., 2001, էջ 313:

²⁸ Տե՛ս *Türkiye'de Halk Ağzından Derleme Sözlüğü (DS)*, с. IV, Ankara, 1969, էջ 1320-1321:

²⁹ Տե՛ս *Турецко-русский словарь*, составил Д.А.Магазаник, Москва, ОГИЗ, 1945, էջ 555:

³⁰ Տե՛ս *Этимологический словарь тюркских языков: Обще-тюркские и межтюркские лексические основы на буквы "Л", "М", "Н", "П", "С" (ЭСТЯ)*, М., 2003, ,

Բառը գործածվում է թուրքերենի մի շարք բարբառներում՝ տարբեր իմաստներով: Օրինակ՝ Մամսունի և Կրրկլարելիի խոսվածքներում այն ունի «փոցխ», Թոխաստի Զիլեի խոսվածքում՝ «կրակ-խառնիչ», իսկ Սվազի, Յոզգաթի և Նիդդեի որոշ խոսվածքներում՝ «ձյունը մաքրելու թի» նշանակությունները³¹:

Սուրոթնա: Ըստ ՀԲԱ նյութերի՝ բառը գործածվել է Խարբերդում և համանուն գավառի Բագմաշեն ու Սվջող գյուղերում / *սուրոթնա* հնչաձևով/ և Նախիջևանի Ազա բնակավայրում / *սուրոթնա* հնչաձևով/:

Այն փոխառությունն է թուրքերենից *sürütme* ձևից, որը թուրքերենի բարբառների Էյլագիքի խոսվածքում ունի «ձյունը մաքրելու թի» նշանակությունը³²:

Այս բառը նույնպես ծագում է թուրքերեն վերոնշյալ *sür* արմատից:

Սիթնեզ: Ըստ ՀԲԱ նյութերի՝ բառանունը գործածվել է Զմշկա-ծագում:

Բառը փոխառությունն է թուրքերեն *sürecek* ձևից, որը թուրքերենի բարբառների Ուրֆայի խոսվածքներում գործածվում է «տանիքներից ձյունը մաքրելու փայտե թի» նշանակությամբ³³: Այս բառը նույնպես ծագում է թուրքերեն վերոնշյալ *sür* «քերել» արմատից:

Թոխսոխ: Ըստ ՀԲԱ նյութերի՝ բառանունը գրանցվել է հայերենի Մարաշ-Զեյթունի բարբառի Զեյթունի և Մարաշի խոսվածքներում:

ՀԼԲԲ-ն արձանագրել է բառի՝ *թոխսոխ* ուղիղ ձևով գործածությունը Վանում, Մուշում, Հավարիկում, Խարբերդում /Բալու/, Մոկսում /Խիզան/, Ղարաբաղում «թակ, փայտե մուրճ», իսկ Ղազախում՝ «երկաթե մեծ մուրճ» նշանակություններով: Կարինում, Մուշում և Խոտորջրում այն ունեցել է նաև «պար» նշանակությունը³⁴:

Հայերենի բառարաններում և բարբառագիտական ու ազգագրական գրականության մեջ բառանվան ստուգաբանության կամ

էջ 391-394, T.Gülensoy, *Türkiye Türkçesindeki Türkçe sözcüklerin köken bilgisi sözlüğü*, c. 2, Ankara, 2007, էջ 823-825:

³¹ St´u DS, c. X, Ankara, 1978, էջ 3719:

³² St´u նույն տեղում, էջ 3724:

³³ St´u DS, c. X, էջ 3717:

³⁴ St´u ՀԼԲԲ, h. 2, էջ 124:

փոխառության աղբյուրի վերաբերյալ նշումներ չենք գտել: Անշուշտ, այն փոխառություն է թուրքերեն tokmak ձևից, որ արդի թուրքերենում հիմնականում «փայտե թակ, փայտե մուրճ» նշանակությունն ունի³⁵:

Այստեղ պետք է մի վերապահում անել: Բառը գրանցվել է «կալսած կալը մի տեղ ժողովելու փայտյա կոթավոր գործիք» նշանակությամբ, սակայն պետք է ենթադրել, որ այն այդ նշանակությունը չունի տվյալ բարբառում, որովհետև թուրքերենից փոխառված բառը թուրքական լեզվական միջավայրում պետք է որ ունենար այն նշանակությունը, ինչ որ թուրքերենում: Համենայն դեպս թուրքերենի բարբառների բառարաններում բառանվան՝ «կալսած կալը մի տեղ ժողովելու փայտյա կոթավոր գործիք» նշանակությամբ գործածության օրինակ նույնպես չենք գտել: Կարծում ենք, որ գրանցման ժամանակ հայ բարբառախոսին հարցվել է ընդհանրապես կալի գործիքի և ոչ թե կալսած կալը մի տեղ ժողովելու փայտյա կոթավոր գործիքի անվանում, և նա տվել է *թոխմոխ* անվանումը, քանի որ փայտե թակը նույնպես մտնում է կալի գործիքների մեջ:

Կամ: Ըստ ՀԲԱ նյութերի՝ բառը գրանցվել է Կարինի բարբառի Կարմրաշենի /Արագածոտնի մարզ, ՎԲ/ ենթախոսվածքում:

Կարծում ենք, որ այստեղ ևս գրանցման ժամանակ հայ բարբառախոսին հարցվել է ընդհանրապես կալի գործիքի և ոչ թե կալսած կալը մի տեղ ժողովելու փայտյա գործիքի անվանում, և նա տվել է *կամ* անվանումը, քանի որ կամը կալի հիմնական գործիքներից մեկն է:

Քերիչ³⁶: Ըստ ՀԲԱ նյութերի՝ բառանունը «կալսած կալը մի տեղ ժողովելու փայտյա կոթավոր գործիք» նշանակությամբ գրանցվել է Կարինի բարբառի Կաղզվանի ենթախոսվածքում:

Բառը հայերենի որոշ բարբառներում գործածվել է այլ նշանակություններով: Հ.Աճառյանը նշում է, որ Երևանում այդպես է կոչվել փայտե կամ երկաթե թիաձև գործիքը, «որով բահին ցեղխը կը քերեն և նման բաներ», Ղարաբաղում՝ հացթուխի գործիքը՝ «հացին քերուքը քերել հանելու համար», իսկ Արաբկիրում՝ «գրաստները քերելու գործիքը»³⁶:

³⁵ См' у *Турецко-русский словарь*, էջ 624: Բառի ստուգաբանությունը տես **T.Gülensoy**, *Türkiye Türkçesindeki Türkçe sözcüklerin köken bilgisi sözlüğü*, c. 2, էջ 906:

³⁶ ՀԳԲ, էջ 1110:

Բառը կազմված է *քեր* և *-իչ* ձևույթներից: Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը *քեր*-ը համարում են բնիկ հայերեն բառ՝ հնիս. *sqer- կամ *qer- «կտրել, ճեղքել» արմատից³⁷: Բառը վկայված է դեռևս 5-րդ դարից. «Եւ ետ հրաման քերել զկողս նորա երկաթի *քերչօք*, մինչև ոռոգան վայրքն ամենայն յարենէ նորա»³⁸:

Ի դեպ, Հ. Աճառյանը վկայել է բարբառներում գործածվող՝ *քեր* արմատով կազմված գործիքանիշ այլ բառեր ևս. *քերանք* /Վեսարիայի հայախոս գյուղեր/ «ձիուն կամ էշուն կոնակը քերելու գործիք», *քերօց* /Վան/ «հացը թոնիրեն քերել հանելու գործիք»³⁹, *տաշտաքեր*, *տաշտաքերիկ* /Դվին, Վան/, *տաշտաքերի*, *տաշտաքերիչ* /Ղարաբաղ/ «տաշտին խմորը քերելու երկաթեայ թաթակիշ» /Վանի բարբառում նույն նշանակությամբ գործածվել է նաև *տաշտաքանդ* բառը⁴⁰:

Ծան քերիզ: Ըստ ՀԲԱ նյութերի՝ բառանունը «կալսած կալը մի տեղ ժողովելու փայտյա կոթավոր գործիք» նշանակությամբ գրանցվել է Թաղավանքի /Խուր-Բոնաշեն գյուղախմբից/ ենթախոսվածքում:

Բարդությունը կազմված է *ձյուն*, *քերիզ* բաղադրիչներից, որոնցից առաջինը բնիկ հայերեն բառ է՝ հնիս. g'huyōm նախաձևից⁴¹: Երկրորդ բաղադրիչը *քերիկ* /փոքր քերիչ/ բառի հնչյունափոխված տարբերակն է:

Բղիսմալ: Ըստ ՀԲԱ նյութերի՝ բառանունը «կալսած կալը մի տեղ ժողովելու փայտյա կոթավոր գործիք» նշանակությամբ գրանցվել է Վանի բարբառի Ապարանցի /Մամոտանց գյուղախմբից/ ենթախոսվածքում:

Բառի ստուգաբանությունը չենք գտել:

Քերիան: Ըստ ՀԲԱ նյութերի՝ բառանունը «կալսած կալը մի տեղ ժողովելու փայտյա կոթավոր գործիք» նշանակությամբ գրանցվել է Սեբաստիայի բարբառի Սեբաստիա քաղաքի խոսվածքում:

Բառի ստուգաբանությունը չենք գտել:

³⁷ ՀԱԲ, հ. Դ, էջ 570-572, Գ. Ջահուկյան, *Հայերեն ստուգաբանական բառարան*, էջ 781:

³⁸ **Ագաթանգեղեայ Պատմութիւն հայոց**, աշխ. Գ.Տեր-Մկրտչեան եւ Ստ. Կանայեանց, Էջմիածին-Տիֆլիս, 1909, § 111:

³⁹ ՀԳԲ, էջ 1109-1110:

⁴⁰ ՀԳԲ, էջ 1014:

⁴¹ ՀԱԲ, հ. Գ, էջ 154-155:

Այսպիսով, ըստ ՀԲԱ նյութերի, կալսած կալը մի տեղ ժողովելու փայտյա կոթավոր գործիքը հայերենի բարբառներում կոչվել է 32 անուններով:

ՀԲԱ նյութերում խոսվածքների ու ենթախոսվածքների քանակով այդ 32 բառերից լայն տարածական ընդգրկում ունեն` *թի* (ավելի քան 135 խոսվածք և ենթախոսվածք), *բննֆիզ* (*բաֆրիկ*) (82), *մրղան* (44), *հալ* (34) *կառափ* (21) բառանունները` իրենց հնչյունական տարբերակներով, սահմանափակ տարածական ընդգրկում ունեն *մրջրլիֆա* (16), *հոսելի* (15) *քառէշտ* (13) բառանունները` իրենց հնչյունական տարբերակներով, հազվադեպ հանդիպող բառանունների թվին են դասվում` *լանփան* (4), *քնրազ* (4), *դրրզան* (3), *դրրմրղ* (3), *գայրարի* (3), *կապտոն* (3), *սորոթմա* (3), *սիրէջէզ* (3) *յարա* (2), *տափան* (2) և այլն:

Այդ բառանուններից բնիկ հայերեն են 6-ը /2-ը կասկածելի/, փոխառություն են 12-ը, այդ թվում` իրաներենից` 3-ը, թուրքերենից` 9-ը /1-ը որպես միջնորդ լեզու հունարենից/, անստույգ են 7-ը, հայա-կերտ` 7-ը:

Абраамян Анаит – Названия инструмента для сбора обмолоченной пшеницы в армянских диалектах. – Сбор обмолоченной пшеницы имел важное значение в молотильных работах. В этих целях использовался инструмент с деревянной рукояткой, который в армянских диалектах имел множество названий: *məlan*, *hal*, *kařap’*, *kaptōn*, *surut’ma*, *surgu*, *dadōl*, *t’ōxmōx*, *kələk’aši*, *sirējēg*, *k’āšan*, *kam*, *bəxmal*, *k’ērič’*, *can k’ērig*, *k’ēlhan* и т.д.

Abrahamyan Anahit – Names of the Tool for Gathering Threshed Wheat in Armenian Dialects. – Collection of threshed wheat in one pile was of great importance in the threshing operations. For this purpose, use tools with wooden handle, which in Armenian dialects have many names: *məlan*, *hal*, *kařap’*, *kaptōn*, *surut’ma*, *surgu*, *dadōl*, *t’ōxmōx*, *kələk’aši*, *sirējēg*, *k’āšan*, *kam*, *bəxmal*, *k’ērič’*, *can k’ērig*, *k’ēlhan* etc.

Աղաբեկյան Մելադա (Հայաստան,
ԳԱԱ Հ.Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ)

**ՀԱՅԵՐԵՆ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՈՒՐԱՐՏԵՐԵՆՈՒՄ**

Հայ-ուրարտական շփումների մի որոշակի ժամանակահատված (մ.թ.ա. IX-VI դդ.) մեզ հայտնի է Վանի թագավորության սեպագիր արձանագրություններով: Ինչպես պարզվում է, երկու լեզուների ընդհանրությունների բացահայտումով ի հայտ են գալիս նաև հայերեն Բարբառների յուրահատկությունների հնագույն հետքեր ուրարտերենում: Այս փաստը մեզ հնարավորություն է տալիս հայ-ուրարտական ընդհանրությունների օգնությամբ որոշելու նաև նախագրային հայերենի բարբառային տրոհվածության աստիճանը:

Հետազոտողների համար ոչ պակաս կարևոր է հենց ուրարտերեն սեպագիր տեքստերի գիտականորեն ճշգրտված ընթերցումը, քանի որ դրանց կամայական մեկնությունները նյութի պատմահամեմատական վերլուծության ժամանակ ավելի են բարձրացնում հնարավոր սխալների չափը: Ցավոք, չափազանց շատ են այս ոլորտում սիրողական մակարդակով հետազոտությունները, որոնք, անշուշտ, խանգարում են ուսումնասիրությունների ժամանակ քիչ թե շատ հավաստի արդյունքների հանգեցում: Հիմնական պատճառն այն է, որ տարածաշրջանում ուրարտերենով զբաղվողների՝ հատկապես ոչ լեզվաբան-համեմատաբանների համար եղել ու մնում է ամեն գնով ուրարտերենը իրենց մայրենի լեզուների նախատիպը համարելու մտայնությունը: Դա հանգեցնում է գիտական փաստերով չհիմնավորված, ամենաարտառոց եզրակացությունների:

Մեր ուսումնասիրության ժամանակ, իհարկե, աշխատում ենք չօգտագործել այդպիսի կեղծված «փաստեր»: Այս սկզբունքով առաջնորդվելով՝ ձգտել ենք հատկապես ուրարտերեն նյութի համար դիմել հնարավորինս հավաստի, ինչ-որ տեղ էլ զգուշավորության սահմանն ավելի ընդարձակող հեղինակների հետազոտություններին:

Ուրարտերեն *edi(1)a* «այնտեղ, ինչ-որ բանի (մեկի) ուղղությամբ, դեպի» բառը երբեմն *-edi* ձևով հանդես է գալիս նաև որպես ուղղության հոլովի իմաստակիր մասնիկ՝ *uštadi* ^{KUR} *Etiumiedi* «ուղևորվեցի

դեպի էթիունի», ^{KUR}Liquie edia «դեպի Լիքիու», uštadi ^{KUR}Urmeue edia «ուղևորվեցի դեպի Ուրմե»¹:

Կարծում ենք՝ -edi մասնիկը իր գուգահեռներն ունի նաև հայերեն բարբառներում. *էտդ/տի, էդտի, էնդ/տի* «դեպի (այս կողմ, այդ կողմ, այն կողմ)»: Նշված օրինակներում (e)di-ն հետադաս է, իսկ հայերենի այլ տարածքային տարբերակներում, օրինակ՝ Արցախի, Մուշի, նախադաս է, ինչպես՝ *տիյէր* «դեպի վեր», *ուէր* «դեպի վար» (Ղրբ. բրբ.) և *դիսա, դիդա, դինա* «դեպի (այս կողմ, այդ կողմ, այն կողմ)» (Մուշի բրբ.) և այլն:

Այդ մասնիկը առկա է նաև տարածաշրջանի այլ լեզուներում (քարթվելական, կովկասյան): Գուցե Հայկական լեռնաշխարհում և նրա հարակից շրջաններում վաղնջական ժամանակներից (օրինակ՝ լեզուների նոստրատիկ ընդհանրության) շրջանառվող բառ-մասնիկ է: Եթե այսօր հին լեզուներից ուրարտերենում ենք՝ -edi մասնիկի գործառնությունը բացահայտում, դա չի նշանակում, իհարե, որ մյուսները նրանից են փոխառել:

Ուրարտերեն pit(u)- «ջարդել, ոչնչացնել»² բայարմատը, առանց -u- հիքակազմ ձայնավորի (բայի ակտիվ սեռի ցուցիչ), ինչպես կարելի է նկատել, և՛ ձևով, և՛ իմաստով գրեթե նույնանում է հատկապես մեր արևմտյան բարբառներում տարածված *փիծ/ց(իլ) // փիծ/ց(իւլ)* «սատկել, ոչնչանալ» բային:

Հ. Աճառյանը *փիծ* «պիղծ, անմաքուր», *փծել* «պղծել», փից – *փցկիլ* «եղծանիլ», *փցուն* «փծուն, անպիտան» ձևերի արևելահայ բարբառային համապատասխանություններից նշում է միայն *փրծնի* «գեշ, անպիտան» (Եր.) և *փրցնիլ* «կերակրի փչանալը, հացը թրջվելով խխում դառնալը» (Ազլ.)³:

Գ. Ջահուկյանը ուրարտերեն pitulie «ջարդի, ոչնչացնի» (pit(u)-բայի ապառնի ձև) բառի և հայերեն բարբառային *պտլիլ* «փչանալ, ավերվել» (Վան, Խլաթ) ձևերի նմանությունը պատահական է համարում: Տողատակում ավելացնում է. «...եթե, մանավանդ, հայերեն բայը կապված է *պատլիլ* համիմաստ բայի հետ, որ Հ. Աճառյանը (ՆՇԲ, 4², էջ

¹ Н.В. Арутюнян, *Корпус урартских клинообразных надписей*, Е., 2001, էջ 442:

² Տե՛ս նույն տեղում, էջ 458:

³ Տե՛ս Հ. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, հ. I-IV, Ե., 1971-1979:

43) բխեցնում է արաբերենն ե՛լ «սուտ լինել, չգործել, վերացվել» արմատից⁴:

Իր ավելի վաղ հրատարակած մի աշխատանքում Գ. Ջահուկյանը գրում է, որ «հայերենի վրա արաբերենի գործած համեմատաբար ուժեղ ազդեցության մասին կարելի է խոսել միայն VII դարից սկսած»⁵: Բայց և այնպես նշում է նաև «V դարի մատենագրության մեջ հիշատակված մի շարք բառեր, որոնք սեմական լեզուների համապատասխան բառերի մեջ ամենից ավելի մոտ են արաբականներին»⁶: Սակայն այդ ցուցակում չկա արաբ. ե՛լ արմատը, որից, ըստ հեղինակի, սերում է վերը նշած հայ. բառը: Գ. Ջահուկյանը իր մեկ այլ աշխատանքում հայ. *փիծ* արմատի և հնդեվրոպական որոշ լեզուների համապատասխան բառերի միջև ձևափմաստային կապ է տեսնում⁷:

Այս ամենից կարելի է եզրակացնել, որ երկու տաբեր արմատների (*փիծ*- և *պատլ*- // *պտլ*-) հանգող հոմանիշ բառերի ստուգաբանությունները հետազոտողների կողմից միախառնվել են: Հնարավոր է, որ հայերեն ձևերը հանգում են միևնույն հ.-ե. արմատի, բայց դրանք կարող են լինել նաև օտար փոխառություններ: Սակայն բոլոր դեպքերում հայերեն բառերը և առաջարկվող նախատիպերը ժամանակագրորեն տարբերվում են, որը և վկայում են դրանց հնչյունական բաղադրիչների համեմատության արդյունքները:

Շայտնի է, որ վաղնջական ժամանակներից բառակզբի հ.-ե. կամ տվյալ ժամանակ օտար համարվող **p*-ի դիմաց հայերենում առկա է *h*/*j* կամ *q*/*n*: Նշված դիրքում հ.-ե., ինչպես նաև օտար փոխառությունների երկշրթնային խուլերից հայերենում պահպանվել է միայն շնչեղ **p*^h-, որն ունեցել է կա՛մ հայ. *փ*-ի, կա՛մ նրան հնչարտաբերական հատկանիշներով շատ մոտ յուրահատկություններ: Ուրեմն նշված դիրքում օտար *p* և հայ. *պ* համապատասխանությունը ավելի նոր երևույթ է: Ինչ վերաբերում է մի քանի բառերում օտար *t*-ի դիմաց հայ. *ծ* -ի առկայությանը, ապա դա հավանաբար ավելի հնուց եկող

⁴ Տե՛ս Բ.Ն.Առաբեկյան, Գ.Բ.Ջահուկյան, Գ.Խ.Սարգսյան, *Ուրարտու-Հայաստան*, Ե., 1988, էջ 143:

⁵ Գ.Բ.Ջահուկյան, *Հայոց լեզվի պատմություն*: Նախագրային ժամանակաշրջան (այսուհետև՝ ՀԼՊ.ՆԺ), Ե., 1987, էջ 485:

⁶ Նույն տեղում:

⁷ Տե՛ս Գ.Բ.Ջաուկյան, *Очерки по истории дописьменного периода армянского языка*, Ե., 1967, էջ 104:

հատկանիշ է հայերենում, քանի որ միևնույն դիրքում հ.-ե. քմային *ǵ-ն հայերենում կարող է արտացոլվել և՛ *տ*, և՛ *ծ* հնչյուններով (*արածեմ* – *արատ*, *արատտ*, *բոյծ*, *բուծանեմ* – *բուտ*, *բտեմ*, *քերծեմ* – *քերթեմ*): Գ. Ջահուկյանը վաղնջական հայերենում հնչյունների այսպիսի տարբերակվածությունը համարում է բարբառային տրոհվածության արդյունք⁸: Ուրեմն *t – ծ* համապատասխանություն հնարավոր է հայերենի վաղնջական շրջանի ավարտին, այսինքն՝ մ.թ.ա. III և II հազարամյակների սահմանագծին կամ մ.թ.ա. II հազարամյակում, երբ տեղի է ունեցել հայ. առաջնալեզվային բաղաձայնների (*թ*, *տ*, *թ*) քմայնացումը, որն էլ իր հերթին համընկնում է հայ, հետնալեզվային հպականների 2-րդ. քմայնացմանը նույն դիրքում (*i*, *e*, *y*-ի մոտ)⁹: Հիշենք նաև, որ Ն. Հարությունյանի վերոհիշյալ աշխատանքում «ջարդել, ոչնչացնել» իմաստով առկա է ուր. *pit-* և ոչ սեմական եռաբաղաձայն *btl-* արմատը:

Մենք քննել ենք հատկապես Մուշի բարբառային միավորների հնչյունների պատմական անցումները և պարզել, որ բառի միջբաղաձայնային դիրքում այլ բարբառային միավորներում հանդիպող *այ>է>հ* հնչյունափոխություն այստեղ ի հայտ չի գալիս, ինչպես. Փայտ > փետ/դ > փետ/դնալ, սայլ > սէլ > սէլվոր, քայլ > քէլ(է) «քայլի բ», քէլ(աց)ող և այլն: Սա գալիս է ասելու, որ խնդրո առարկա բարբառային արմատի ձայնավորումը (*h*) սկզբնական է և իր պատմական ընթացքում հնչյունափոխական նշված ճանապարհով չի անցել: Հետևաբար՝ ենթադրելի է, որ հայերեն բարբառային *փիծ/g-* արմատը գալիս է ավելի վաղ ժամանակներից, երբ հայերեն բառի որոշակի դիրքերում դեռ կար *տ/ծ* հերթագայություն: Այսինքն՝ ուր. *pit-* և հայ. *փիծ-* արմատների ցեղակցությունը հնարավոր է: Չի ժխտվում, իհարկե, նաև այդ գործընթացին մի երրորդ լեզվի միջնորդությունը:

Ուրարտերեն արձանագրություններում հանդիպող *aštiuzi* բառն առաջինն ընթերցել ու մեկնաբանել է Գ. Մելիկիշվիլին և այն համարել հայ. *Սստուած*-ի նախատիպը¹⁰: Ն. Հարությունյանը իր բառարանում *aštiuzi*-ն նշում է ոչ թե դիցանունների, այլ հասարակ անունների շար-

⁸ Տե՛ս ՀԼՊ.ՆԺ, էջ 252-253:

⁹ Տե՛ս Գ.Բ.Ջաուկյան, *Очерки...*, էջ 182-183:

¹⁰ Տե՛ս Գ.Ա.Մելիկիշվիլի, *Урартские клинообразные надписи*, Մ., 1960, էջ 438:

քում, քանի որ այն աստվածության որոշիչ շումերական գաղափարագիրը չունի:

Հայերեն այդ բառաձևի ստուգաբանությամբ զբաղվել են շատ համեմատաբաններ: Նրանք հիմնականում հանգել են այն եզրակացության, որ *սստուած* բառը ունի հնդեվրոպական ծագում¹¹:

Գ. Ջահուկյանը գտնում է, որ «ուրարտական արձանագրություններում ավանդված դիցանուններում հնարավոր է բացահայտել հայկական բառերով ու արմատներով մեկնվող» շերտ և օրինակներում նշում է նաև ուր. «Aštiuzi – հայ. *սստուած* – «հաստող, հաստատող» կամ հ.-ե. *ansu+diu+wad» բառերը¹²: Իսկ Վ. Համբարձումյանի ստուգաբանությամբ՝ հայ. *սստուած* բառը ծագում է հնդեվրոպական *Has-tiey-os նախաձևից¹³: Երկու հեղինակների ստուգաբանություններն էլ մենք հավանական ենք համարում: Սակայն հարցին, կարծում ենք, կարելի է մոտենալ և այլ տեսանկյունից:

Սստուած-ը կարելի է համեմատել նաև հայ. *սստանել* «ուղղել կամ քննել» բառի հետ, որը մոտ է ուր. ašit(u)- «դարձնել, անել, վերածել» ակտիվ սեռի բային: Հայերենում *Սստուած*-ը թերևս կրավորաձև հիմք է, մինչդեռ նրա բայիմաստն (արարող, ստեղծող) ընկալվում է որպես ներգործական, ակտիվ սեռի գործողություն: Ըստ Գ. Ջահուկյանի՝ *-ած*-ը հայերենի հնագույն շրջանի (մ.թ.ա. I – մ.թ. I հազ.) ածանց է և գալիս է *wad-tel* -ից (հ.-ե. <*aǵ-), իսկ բայաձևնց դարձել է ավելի ուշ¹⁴: Բայց *-ու* հիմքով բայ (*սստ-ուլ*, *հաստ-ուլ*) հայերենում չենք գտնում: Կարծում ենք՝ պատասխանը պետք է փնտրել ուրարտերենում, որտեղ ակտիվ սեռի բայահիմքերը կազմվում են *u*-ով: Ուրեմն կարելի է ենթադրել նաև, որ հայերեն *Սստուած* բառը կազմված է ուր. *astu-* բայահիմքով, որին ավելացել է հայ. *-ած* վերջածանց:

Ուրարտերեն *astiuzi* բառաձևին ավելի մոտ կարող ենք դիտել բարբառային *Սստուծ/ձ* // *Սստոծ/ձ* ձևերը, եթե, իհարկե, վերջիններս առաջացել են նախքան ուրարտերենի՝ պատմական ասպարեզից

¹¹ Ավելի մանրամասն տե՛ս Վ.Գ.Համբարձումյան, *Հայերեն Սստված բառի ծագումն ու տիպաբանությունը*, Ե., էջ 2002:

¹² Տե՛ս Բ.Ն.Առաբեկյան, Գ.Բ.Ջահուկյան, Գ.Խ.Սարգսյան, նշվ. աշխ., էջ 150-151:

¹³ Տե՛ս Վ.Գ.Համբարձումյան, նշվ. աշխ., էջ 31:

¹⁴ Տե՛ս Գ.Ջահուկյան, Հին հայերենի վերջածանցների ծագումը, *Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր*, պրակ 2, Ե., 1998, էջ 8:

դուրս գալը: Դրանք, հնարավոր է, հայերենի տվյալ բարբառային միավորի ներքին հնչյունական օրենքների, ինչպես օրինակ՝ վերջնթերային շեշտի, գործառության արդյունք են: Այդ տարածքային տարբերակներում (Թբիլիսի, Արցախ, Սյունիք և այլն) *Մ ստուած* բառի վերջին վանկի անշեշտ երկբարբառի *ա* բաղադրիչը թուլանալով ընկնում է՝ *Մ ստուծ/օծ*: Երկու լեզուներում տվյալ բառերի ձևաիմաստային ընդհանրությունը դեռ չի կարող անառարկելի փաստ համարվել, որ դրանք այդ լեզուներից մեկի՝ մյուսին անցած փոխառություն են: Այսպիսի դեպքում չի բացառվում, անշուշտ, մի երրորդ աղբյուրից ծագելու հանգամանքը

Նյութի ընդհանուր ուսումնասիրության ժամանակ ի հայտ եկան նաև այլ փաստեր, որոնք հետաքրքրեցին մեզ:

Մենուայի որդի Արգիշտիի (Արգիշտի I) մի արձանագրության համատեքստի քննությամբ հնարավոր է համարվում *aštiuzi-n* թարգմանել «կուռք, տոտեմ, ինչ-որ աստվածության պաշտվող արձանիկ»: Ըստ տեքստի՝ այդ իրը Էթիունիի Արդինի քաղաքից գողացան (*irbilani*) Էթիունական ռազմիկները, որի պատճառով թագավորը նույն տարում հարձակվեց Էթիունցիների վրա ու հաղթեց նրանց¹⁵:

Իսկ ինչպե՞ս պետք է հասկանալ այս հաղորդումը: Ու՞մ էր պատկանում այդ իրը, որի պատճառով մարտեր են մղվել: Հիմնականում ենթադրվում է, որ Էթիունցիները (տեղի բնիկները) նվաճված տարածքից հետ են տարել իրենց աստվածության՝ *aštiuzi*-ի արձանիկ-կուռքը: Ահա, թե ինչու ուրարտները այդ բառին, որ իրենց համար չաստվածություն է նշանակում, չեն կցում աստվածության ցուցիչ շումերական գաղափարագիր:

Հետաքրքիր է մեկ այլ հանգամանք նա: Ուրարտերեն ^(d)*ina(ini)*, ^(d)*iniriaše*, ^(d)*inuanaue* (տրակ. հոլ.), խուռ. *eni* բառաձևերը արձանագրություններում հանդիպում են, թեև ոչ միշտ, նաև «տեր, աստված» շումերական համապատասխան ցուցիչով: Ուրեմն դրանք տվյալ համատեքստում ունեն այդ իմաստները: Մինչդեռ ուր. *ini*, *inani* ձևերը ցուցական-անձնական դերանուններ են «այս/սա, այդ/դա, այն/նա»¹⁶: Ի դեպ, հայերեն որոշ բարբառներում, օրինակ՝ Մուշի, դրանք բոլորը գործառում են *ի* հավելական ձայնավորով (*իսա*, *իդա*, *ինա*), որը,

¹⁵ St' u Н.В.Арутюнян, նշվ. աշխ., էջ 178, 180:

¹⁶ St' u նույն տեղում, էջ 448-449:

կարծում ենք, հայերենի *h* նախդիրն է: Արդ, ե՞րբ են դրանք աստվածության ցուցիչ ստանում:

Աշխարհի ժողովուրդների պատկերացումներում կարևոր տեղ է գրավել թաբուի երևույթը, որն իր արտահայտությունն է գտել խոսակցական լեզուներում: Թաբուով արգելվում է բուն անձի, իրի անունը բարձրաձայն արտաբերելը, և հաճախ դրա փոխարեն օգտագործվում է բառապաշարում առկա մեկ այլ՝ կա՛մ նոր ստեղծված բառ, կա՛մ էլ 3-րդ դեմքի ցուցական-անձնական դերանուն, որ հայերենի բարբառներում այսօր էլ տարածված երևույթ է՝ *էն, էնի*: Երևի դա է եղել պատճառը, որ ուրարտերենում ևս այդ դերանունը մերթ ընդ մերթ ստացել է աստվածության ցուցիչ (դետերմինատիվ) շումերական գաղափարագիր:

Հայերեն *հար* արմատով կազմված *հարույ, հարուած* և այլն բառերի ստուգաբանության ժամանակ ևս նույն հարցն է առաջանում, ինչ և *աստուած*-ի դեպքում. արդյոք այտեղ առկա է ուրարտերենում ևս հանդիպող բայահիմք կազմող -u- ձևույթը: Հայերեն *հար*-ը հանգում է հ.-ե. *per- (*por-/*pər-/*pɾ) արմատին, որից առաջացել է նաև *հարու*-յ բայը: Այստեղ կարելի է ավելացնել նաև հայ. *հարու տալ* «պոզահարել» հարադիր բարդությունը, որի *հարու*- բաղադրիչը բայի մաքուր հիմքն է:

Չենք կարող չնկատել հայերեն նշված և ուր. par(u)- «քշել (անասուն), տանել (գերիներ)», parult(u)- «քշել, տանել»¹⁷ բառերի ձևաիմաստային նմանությունը (*հարու* - par(u)-): Մեկ այլ հարց է առաջանում: Ինչպես գիտենք, նախագրային հայերենի բառակզբում տեղի է ունեցել *p>h (հ.-ե. *p->h) հնչյունափոխություն:

Ուրարտերեն բառաձևերը, ինչպես նշվեց, մեզ հայտնի են մ.թ.ա. I հազարամյակի (IX-VI դդ.) սեպագիր արձանագրություններով: Սակայն դրանց և հայերենի բառանյութի հնչյունական քննությունը ուր. P – հայ. *h*- համապատասխանության օրինակաչափություն չի բացահայտում: Հայերենին բնորոշ հ.-ե. *p- հայ. *h*-, *qpn*- անցումը ուրարտերենում այլևս չի կրկնվում (հմմտ. ուր. pal(ǰa)- «խոսել» խուռ. pal- հայ. *պաղատ-եմ*, ուր. pili(e) «ջրանցք», խուռ. pala, հայ. *պեղ-եմ*, *paḡa/ini(e)*

¹⁷ Տե՛ս նույն տեղում:

«եզ, ցուլ, խոշոր եղջերավոր անասուն», հմմտ. հայ. *պսխրէ* և այլն¹⁸: Հետաքրքիր է, որ հ.-ե. *per- արմատը ուրարտերենում արտացոլված է զրո ձայնդարձի հայերեն տարբերակով *pə-//*pɾ > հայ. *par- > *հար*: Ուրեմն, կարելի է եզրակացնել, որ ուրարտերն ու հայերը, որպես հարևաններ, միմյանց հետ շփվել են մ.թ.ա. I հազարամյակից ավելի վաղ, երբ հ.-ե. արմատի թույլ ձայնավորումը հայերենում դարձել էր լիաձայն *ա*, իսկ բառակզրի *p-ն դեռ պահպանվում էր: Կարելի է ենթադրել նաև երրորդ աղբյուրի ազդեցություն ինչպես ուրարտերենի, այնպես էլ հայերենի վրա: Համենայն դեպս փոխներթափանցումները ենթարկվել են յուրաքանչյուր լեզվի կանոններին: Տվյալ դեպքում ուրարտերենը պահպանել է բառակզրի *p-ն, իսկ հայերենը այն հնչյունափոխել է:

Агабекян Мелода – Армянские диалектные соответствия в урартском языке. – Фонетические и морфологические материалы способствуют выявлению армяно-урартских связей. Эти факты также утверждают, что урартцы и армяне до IX в. до н.э. жили по соседству, и взаимные языковые проникновения соответствовали языковым законам, функционирующим в указанный период данного языка.

Aghabekyan Melada – Armenian Dialectal Coincidences in the Urartian Language. – The phonetic and morphological materials of Armenian dialects contribute to the discovery of linguistic relations between the Armenian and Urartian languages. They also confirm the fact that Urartians and Armenians, living as neighbours, communicated with each other earlier than in the 9th century BC, and mutual penetrations from one language into the other underwent the rules of those languages existing in that period of time.

¹⁸ Տե՛ս Մ.Աղաբեկյան, Հայ-ուրարտական ստուգաբանական դիտարկումներ. – Պատմաբանասիրական հանդես, 2013, 1:

Բառնասյան Ջեմմա (Հայաստան,
ԳԱԱ Հ.Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ)

ԴԵՐԱՆՈՒՆԵՐԸ ՄՈՒՇ-ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ԲԱՐԲԱՌԱՄԲՈՒՄ

Ուսումնասիրության առարկա դարձնելով հայերենի բարբառների դերանվանական համակարգը՝ արդեն իսկ ներկայացրել ենք *անձնական, ցուցական, որոշյալ, ժխտական, անորոշ, հարցահարաբերական* և *փոխադարձ* դերանունների վերաբերող ուսումնասիրություններ՝ իմաստագործառական քննության ենթարկելով բարբառագիտական մենագրություններից, հայ ժողովրդական բանահյուսությունից և քարտեզագրման նպատակով հայերենի բարբառների տարբեր խոսվածքների գրանցումներից դուրս գրված համապատասխան իրողություններ: Նմանատիպ քննությունը տարբեր բարբառներում ու խոսվածքներում առկա ընդհանուր կամ միայն տվյալ տարածքի բարբառներին հատուկ իրողություններ գտնելու, համեմատելու հնարավորություն է ընձեռում: Քննության առնենք արևմտյան խմբակցության բարբառների հարավկենտրոնական կամ Մուշ-Տիգրանակերտի բարբառախմբում առկա դերանունները՝ անդրադառնալով ինքնատիպ ձևերին ու հետաքրքիր իրողություններին: Գ.Ջահուկյանն իր բազմահատկանիշ վիճակագրական դասակարգման մեջ այս բարբառախմբում է ընդգրկել նաև Բուն Սասունի (Գեղեգուզանի) և Տավուրիկ-Մոտկանի բարբառները¹:

Դերանուն խոսքի մասին նվիրված ծավալուն մենագրության մեջ Հ. Աճառյանը փաստում է, որ անձնական դերանունները բառապաշարի համահայերենյան շերտին են պատկանում, և հայոց լեզվի բոլոր փուլերում մշտապես գործառող *ես, դու, մենք, դուք* դերանուններն առկա են հայերենի բոլոր բարբառներում: Այնուամենայնիվ, կարելի է գտնել նաև յուրօրինակ, ինքնատիպ ձևեր, ինչպես, ասենք, *յէ* (առանց *ս-ի*) բառաձևը՝ Արդվինի բարբառում գործառող, որը Հ.Աճառյանի կարծիքով՝ «նորօրինակ երևույթ է հայերենի բարբառներում»²: Նմանատիպ բառաձև մենք գտել ենք նաև Մշո բարբառում՝ բացառապես խոսքի շղթայում, ինչպես, ասենք՝ *Հ՛ըմմէն գ՛ածին, յէ լէ գ՛ածի*:

¹ Տե՛ս Գ.Ջահուկյան, *Հայ բարբառագիտության ներածություն*, Ե., 1972, էջ 134:

² Հ.Աճառյան, *Լիակատար քերականություն հայոց լեզվի*, հ. 2, Ե., 1954, էջ 59:

Հոգնակի առաջին դեմքի դերանունը, որ գրաբարում *մեք* էր, հետգրաբարյան հայերենում գրեթե բոլոր բարբառներում դարձել է մենք (ն-ի հավելում): Հ.Աճառյանը դա բացատրում է հարասության օրենքով. տվյալ դեպքում «ոնգականից հետո կրկնվել է ն ձայնը՝ ճիշտ ինչպես ունենք կանաչ > կանանչ, կամաց > կամանց, կամուրջ > կարմուջ > կարմունջ և այլն»³: Մասունի բարբառի խոսվածքներում գործառում է հենց *մըք*-ը (մըք գրկըրըք): Գելիեգուզանի խոսվածքում սովորական է *ի* հենարանով ձևերի գործածությունը, ինչպես՝ *Մըկի կացիք, տուկի մացիք* (մենք գնացինք, դուք մնացիք)⁴:

Մշո բարբառի ուսումնասիրությանը նվիրված մենագրության մեջ կարծիք է հայտնվում, որ ստացական դերանվան իմաստը արտահայտվում է «*մի, ձի* բառերի և անձնական դերանունների հոգնակի տրական հոլովի օգնությամբ՝ *օղնէր մի* (իմ մեր ոտքերը) *տընէր ձ ի* – ձեր տները, *շօրէր ձ ի* – ձեր շորերը, *խէլք մի* – իմ, մեր խելքը և այլն»⁵:

Ինչպես երևում է շրջուն շարադասությամբ ոճական լրացուցիչ բաշխում ենթադրող այս կառույցներից, առաջին դեմքի դերանվան թե՛ եզակին և թե՛ հոգնակին արտահայտվում են *մէր* (տվյալ դեպքում՝ *մըր*) դերանվան վերջնահնչյունի կորստով առաջացած *մի* բառաձևով, ինչպես հետևյալ օրինակում՝ *Օղնէր մի պաղան* (իմ ոտքերը կամ մեր ոտքերը սառեցին): Նույն երևույթն առկա է Մասունի բարբառում:

Հետաքրքիր իրողություններ են ի հայտ գալիս անձնական դերանունների հոլովական համակարգը քննելիս, ինչպես, ասենք, այն, որ անձնական *ես* դերանվան հայցական հոլովածնը նման է ուղղականին: Այլ խոսքով՝ առավել պարզ է և մոտ անվանական հոլովմանը: Նման փաստեր շատ կարելի է գտնել հատկապես մեր կողմից քննվող բարբառախմբում: Տիգրանակերտի բարբառով գրանցված բանահյուսական պատառիկներում կան ասվածը հաստատող օրինակներ, ինչպես. *Ըմմընէ՛ դարան, յէսի* (ինձ) *չըդարան*:

Նախորդիվ հայցականով առանձնացող բարբառներում *զ* նախդիրն առ այսօր կենսունակ է: Մշո բանահյուսությունից բերենք օրինակ.

³ Նույն տեղում, էջ 58:

⁴ Տե՛ս **Վ. Պետոյան**, *Մասունի բարբառը*, Ե., 1954, էջ 45:

⁵ **Ս. Բաղդասարյան-Թափալցյան**, *Մշո բարբառը*, Ե., 1958, էջ 98:

*Այօ՛, մամօ՛, կարկէք զիս,
Ջ ուլհագ տըղին տըվէք զիս,
Թալէ զմաքօք, գ ըրգէ զիս...*

Այս բարբառում առաջին դեմքի անձնական դերանվան բացառական հոլովածնը նույնպես ինքնատիպ է՝ *հ իսնէ*: Ասենք՝ *Հ իսնէ ի ննճ է գ ուղիս* (ինձնից ի ննջ ես ուզում): Սասունի բարբառը նույնպես ունի համարժեք ձև՝ *իսնա*: Հակադրվելով Ա.Այտընյանի հայտնած այն կարծիքին, թե որոշ բարբառներում անձնական դերանվան եզակի առաջին դեմքի բացառական հոլովում առկա *իսնէ* (Մուշ) և *իսւմէ* (Պոլիս) ձևերն ակնհայտորեն հայցական հոլովից են ծագում և ոչ թե՛ տրականից, ինչպես ընդունված է կարծել՝ Հ.Աճառյանը տարակուսանք է հայտնում՝ արձանագրելով. «Ըստ այսմ՝ մնում ենք երկրնտրանքի մեջ և չենք կարողանում որոշել *իզմէ*, *իսմէ*, *իսնէ* ձևերի ծագումը»⁶:

Մեր կարծիքով՝ խնդրո առարկա բարբառներում կիրառվող բացառական հոլովի այդ *իսնէ* և *հ իսնէ* ինքնատիպ ձևերը հայցականից են սերում, թեև այս աշխատանքում մենք ընդամենը փաստում ենք տվյալ բարբառախմբում գործառող դերանվանական ինքնատիպ ձևերի առկայությունը՝ դրանց ծագումնաբանությանն այլ ուսումնասիրությամբ անդրադառնալու համար:

Մշո բարբառում անձնական դերանունների սեռական՝ *իւմ*, *քոււմ*, *մէր*, *ձ էր* հոլովածներն ունեն նաև զուգաձևություններ՝ *իմուն*, *քումուն*, *մէրուն*, *ձ էրուն*, որոնք ի հայտ են գալիս փոխանվանաբար հոլովվելիս: Բարբառի քննությանը նվիրված մենագրության մեջ այդ ձևերը դիտարկվում են որպես ստացական դերանուններ⁷: Իհարկե, գրաբարյան *քո* ստացական դերանվան տրականի՝ *քում* –ի հետ աղերսն ակնհայտ է, և Մշո բարբառի Մկրագոմ գյուղի խոսվածքով կարելի է ասել՝ *Իմ ու քում մը խառնէ* (մի՛ խառնիր): Նույնպիսի օրինակ բերենք Սասունի պարերգից՝ *Ըմ յար քրք քում էլ խօրօղիգ*⁸:

Քանի որ անձնական դերանունները անձնանիշ են և իմաստաբանական պլանում՝ միշտ որոշյալ, ուստի և հոդառու չեն: Միայն փոխանվանական նշանակությամբ սեռականի ձևը կարող է հող

⁶ Հ.Աճառյան, նշվ. աշխ., հ. 2, էջ 77:

⁷ Տե՛ս **Մ.Բաղդասարյան-Թափալցյան**, նշվ. աշխ., էջ 97:

⁸ Տե՛ս **Վ.Պետոյան**, նշվ. աշխ., էջ 79:

ստանալ և իբրև անկախ, «ուղիղ» ձև՝ հոլովվել՝ *իմուն, քումուն, մե-րուն, ձ էրուն*: Բերենք օրինակ Մշո ասացվածքներից. *Խաճ իմուն է, գորուտէն յէ՛ս գինամ*:

Նույնատիպ օրինակներ կարելի է բերել նաև Սասունի բարբառով գրառված ազգագրական նյութերից. *Մէլիք գըսը. «Տալի տ, հէրտ իմու՛նը, թը՛ քըմունը»*⁹:

Մեր կարծիքով՝ ինքնատիպ երևույթ է Տիգրանակերտի բարբառում եզակի երկրորդ դեմքի *թուն* դերանունը փոխանվանաբար հոլովելիս ի հայտ եկող *քումէ* հոլովածը՝ *քնը* բառիմաստով: Բարբառին նվիրված մենագրության մեջ վկայվում է, որ հատկապես անեծքներում է հանդիպում այս հոլովածնի յուրօրինակ ու հետաքրքիր գործածություն, երբ դրվելով հետադաս՝ ստորոցալից հետո, արտահայտում է *քո* հոլովածնի իմաստ, ինչպես՝ *Վիզիթ գ՛օղրի քումէ* (քո վիզը կոտրվի): Մենագրության հեղինակը գտնում է, որ «այս երևույթը գուցե պետք է բացատրել պատմականորեն դերանվան սեռական և տրական հոլովիմաստների միասնացման, միաձուլման միտումով»¹⁰: Կարծում ենք, որ այդ հոլովիմաստների միասնականությունը բարբառում եղել է ի սկզբանե:

Ինքնատիպ կարելի է համարել նաև ոչ օրինաչափ հնչյունափոխության ենթարկված (անճանաչելիորեն փոխված) դերանվանական ձևերը: Մշո բարբառում *հ իրար* (իրար) փոխադարձ դերանունը *հետ* կապով ձևի պարագա է ձևավորում՝ *հ իրարու հետ*: Սակայն բարբառին բնորոշ է նաև *հետ* կապի նախադաս կիրառությունը (հեղ ուր մօր, հեղ մըզի), իսկ *իրար* դերանվան հետ առաջին հայացքից տարօրինակ *խըղրաց* բառաբաղադրությունն է կազմում, քանի որ *հ-խ* հնչյունափոխությունը օրինաչափ չէ Մշո բարբառի համար, թեև նմանատիպ օրինակ է նաև, ասենք, *լուսադեմին* իմաստով գործառող *խըլլսուն* (հետ+լուսուն) ժամանականիշ բառը:

Հետաքրքիր դերանվանական ձևեր են ի հայտ գալիս նաև որոշյալ և անորոշ դերանունները քննելիս: Մշո և Սասունի բարբառում գործառող *ամէգ* դերանունն առաջին հայացքից կապվում է *ամէնքը* որոշյալ դերանվան հետ: Մինչդեռ այն ուղղակի *ամեն մեկը* որոշյալ դերանունն է՝ «յուրաքանչյուրը» նշանակությամբ (բաղադրիչ-

⁹ Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 19, Ե., 1999, էջ 38:

¹⁰ Տե՛ս Ա. Զանեյան, Տիգրանակերտի բարբառը, Ե., 1978, էջ 159:

ների կցումով և մեկ շեշտով արտասանելիս հնչյունների կորստով): Այսպես՝ *Ամէգ հավկ վըր ուր էրմին* (յուրաքանչյուր հավք՝ իր երամի հետ): Անորոշ դերանունների գործառնությունն անդրադառնալիս կարելի է նշել անորոշ հողին համարժեք *մեկ* (մի,մէ,մը) բառի մասին, որ համատարած է հայերենի բարբառներում, և իբրև յուրահատկություն՝ ներկայացնենք Մշո բարբառում այդ դերանվան կրկնահավելման երևույթը, ինչպես՝ *Մէ կընիգ մը տեսա, մէ տըղէ մէ կար հեղ՝ մագեր հուստըգուգ* (հյուսած): Կամ, ասենք, Ալաշկերտի խոսվածքով բերվող այս ասացվածքում՝ *Մէգ մէ մէգու անուն իդա՝ յա դ՛նունա, յա հ էրտիգ*¹¹:

Չ. Աճառյանի վկայությամբ՝ աշխարհի շատ լեզուներում սովորական է *մարդ* բառին անորոշ դերանվան իմաստ վերագրելը: Դա բնորոշ է նաև հայերենին¹²: Անորոշության իմաստն առավել խտանում է *մատուսմուտ* բառաբաղադրության մեջ, որ գործածական է Մշո բարբառում, ինչպես՝ *Խըյ (հո) մատուսմուտ չրտեսա՞վ ըզքըզի*¹³:

Չարցահարաբերական *ուր* դերանվան արժեքով Մշո բարբառում գործառող *դ՛որ* ձևը, հավանաբար, *ընդ* նախորդի և *որ* հարցական դերանվան կցումով (ընդ+որ), ինչպես նաև առաջին վանկի անկումով խոսելիս առաջացած բառաձև է՝ օրինաչափ հնչյունափոխությամբ: Գործողության ուղղություն ցույց տվող այս դերանունն առկա է Մշո, Մասունի բարբառներում՝ իր գործառական շառավղի մեջ ընդգրկելով նաև արևելյան իմբակցության մի շարք բարբառներ (Բայազետի, Ջուղայի և այլն): Ակնհայտ է, որ այդ բարբառախմբում *ինչու՞*՝ հարցական դերանվան իմաստով գործառող ձևերը *ո՞ր* դերանունից են սերում՝ *օրի՞*՝ (Մասուն), *հ՛օրի՞*՝ (Մուշ): Բերենք մեկ օրինակ Տարոն-Տուրուբերանի ազգագրական գոտին ընդգրկող ժողովրդական հեքիաթներից. «Օրըմ՝ *հ՛օրի՞ չրս էրտա օյըրդի քու էրգիր՝ տեսնաս ի՞ մայ է՛, ի՞ մայ չէ քու ժողովուրտ, վօր ըզվի՞ ը վըրէն՝ գօր կէնէ՞*» (մի օր ինչու՞ չես գնում քո երկրներում շրջելու, որ տեսնես ինչպե՞ս է, ինչպե՞ս չէ քո ժողովուրդը, ո՞վ է ում ճնշում)¹⁴: Նույն այս օրինակում առկա է Մշո բարբառի դերանվանական համակարգում գործառող հարցահարա-

¹¹ Տե՛ս **Ք. Մաղաթյան**, *Ալաշկերտի խոսվածքը*, Ե., 1985, էջ 158:

¹² Տե՛ս **Չ. Աճառյան**, նշվ. աշխ., հ. 2, էջ 415:

¹³ Տե՛ս **Չայ ազգագրություն և բնահյուսություն**, հ. 3, Ե., 1972, էջ 93:

¹⁴ Տե՛ս **Չայ ժողովրդական հեքիաթներ**, հ. 13, Ե., 1985, էջ 258:

բերական *ուլ* դերանվան ուղղական հոլովի ինքնատիպ մի ձև՝ *վօր* : Կարելի է ասել՝ *Վօ՞ր էգա՞վ ձ՞րը տուն*: Ըստ Հ. Աճառյանի՝ «*Ո՞ւն և ո՞ւլ* միևնույն բառերն են. բուն ձևն է՝ *n*, որ սկզբում բնականաբար *n* ընդհանուր գործածությունն ուներ, հետո՝ ձայնավորի մոտ պատահած ժամանակ, ներդաշնակության համար (հորանջից խուսափելու նպատակով) ավելացավ *վ* բաղաձայն, իսկ *n* մնաց բաղաձայնի մոտ»¹⁵: Ապա ավելացնում է, որ Մշո և Բայազետի բարբառները «կորցրել են նաև *ուլ*-ը և ունեն միայն *վօր*»¹⁶: Մասունի բարբառում օրինաչափ է *վրը* բառաձևը՝ *Վր՞ը ը գրա՞ր* (ո՞վ է ասում): Նշենք նաև հետևյալը. քանի որ հարցական *վօ՞ր* դերանվան հոգնակին բացակայում է Մշո և Մասունի բարբառներում, այդ իմաստն արտահայտելուն օգնում է հոգնակի թվով ստորոգյալը, ինչպես՝ *Վր՞ը ը գրա՞րիս*:

Մուշ-Տիգրանակերտի բարբառախմբի դերանվանական համակարգում առկա հետաքրքիր իրողությունների փնտրտույքը ևս մեկ անգամ հաստատում է նշանավոր բարբառագետ Ա.Ղարիբյանի այն կարծիքը, որ «շատ հաճախ դերանուններն են բարբառների հարևան լինելու հանգամանքը պարզելու հայտանիշը»¹⁷:

Барнасян Джемма – Местоимение в Муш-Тигранакертской группе диалектов. – В работе рассмотрены местоимения юго-центральной или Муш-Тигранакертской группы диалектов Западной группировки с учетом своеобразия форм. Результат исследования вновь подтверждает мнение выдающегося диалектолога А.Гарибяна о том, что очень часто местоимения являются показателем, позволяющим установить соседство диалектов.

Barnasyan Jemma – The Pronoun in Mush-Tigranakert Dialect Groups. – In the paper studied the pronouns south-central or Mush-Tigranakert dialect group of Western grouping taking into account the singularity of forms. The result of the study again confirms the opinion of famous dialectologist A.Gharibyan that very often the pronouns are the indication of clarifying the circumstance of dialects being neighbors to each other.

¹⁵ Հ.Աճառյան, նշվ. աշխ., հ. 2, էջ 389:

¹⁶ Նույն տեղում, էջ 394:

¹⁷ Ա.Ղարիբյան, *Հայ բարբառագիտություն*, Ե., 1953, էջ 144:

Թաղևոսյան Հասմիկ (Հայաստան,
ԳԱԱ Հ.Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ)

**ԱՆԿԱՏԱՐ ԴԵՐԲԱՅԻ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՁԵՎԵՐԻ
ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XVII ԴԱՐԻ ԲԺՇԿԱՐԱՆՆԵՐՈՒՄ**

Անկատար դերբայն իր կիրառություններով աչքի է ընկնում միջին հայերենի երկրորդ շրջանում (XV-XVII դդ)¹: Սա միանգամայն տրամաբանական կարելի է համարել, եթե նկատի ունենանք, որ առաջին շրջանում միջին հայերենը մեզ է ներկայանում կիլիկյան գրական հայերենով, որի գլխավոր հատկանիշը, ինչպես գիտենք, *կու-*ով սահմանական ներկայի կազմությունն է, իսկ անկատար դերբայի մասին, բնականաբար, խոսք լինել չէր կարող: Միջին հայերենի առաջին փուլում մեր մատենագրության մեջ *ուլ-*ով անկատարի երկու նմուշ է վկայված: Առաջինը հանդիպում է XII դ. Մխիթար Հերացու աշխատության մեջ. «Ապա թե հիւանդին թպտիրն *մաշում* լինի, կերակուր չոր չէ պատեհ...»², իսկ երկրորդը՝ XIII դ. Վարդան Արևելցու «Պատմութիւն տիեզերական» աշխատության մեջ. «...զինչ քրիստոնեայ կայ և արքայունք ընդ ծով և ընդ ցամաք՝ ամենու սիրտն հետ քեզ լաւ են, եւ քեզ աղօթք են առնում»³: Եթե հաշվի առնենք այն կարծիքը, որ վերոնշյալ *մաշում*-ը արաբերեն բառ է և նշանակում է «չարաբաստիկ»⁴, ապա մեզ կմնա *ուլ-*ով անկատարի մեկ վկայություն միայն:

Այլ է պատկերը միջին հայերենի երկրորդ՝ Գ. Ջահուկյանի շրջանաբաժանմամբ աշխարհաբարացման ենթաշրջանում (XV-XVI դդ.)⁵, երբ Կիլիկիայի հայկական պետության անկումն իր հետ բերում է կիլիկյան հայերենի թուլացում, աշխուժանում են հայերենի բարբառներն ու ենթաբարբառները, և լեզվի անմիօրինակությունն էլ շատանում է ի հաշիվ բարբառայնությունների: Այս շրջանում անկատար

¹ Առաջնորդվել ենք «*Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության*» (Կ. Ա, Ե., 1972) գրքում կատարված շրջանաբաժանմամբ (էջ 42-44):

² Մ. Հերացի, *Ջերմանց մխիթարութիւն*, Վենետիկ-Ս.Ղազար, 1832, էջ 61:

³ Տե՛ս *Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության*, Կ. Ա, էջ 304:

⁴ Տե՛ս Ա.Մարգարյան, *Հայերենի հարադիր բայերը*, Ե., 1966, էջ 471:

⁵ Տե՛ս Գ.Ջահուկյան, *Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը*, Ե., 1969, էջ 49:

ներկայի հիման վրա արդեն տարորոշվում են բարբառների *ոււ* և *կը* ճյուղերը:

Հայտնի փաստ է, որ անկատարի *-ոււ* վերջավորությունն իր ծագմամբ կապվում է ներգոյականի *ոււ* հոլովածին հետ: Հիմնվելով այն փաստի վրա, որ բոլոր *-ոււ* վերջավորություն ունեցող բարբառներն ունեն նաև *ոււ*-ով անկատար՝ Ա. Այտընյանի կողմից առաջ քաշված այս տեսակետն⁶ անվերապահորեն ընդունում են բոլոր հայագետները⁷:

Անկատար դերբայի գործածությունը հաճախական է դառնում XVI-XVII դդ. սկսած: Այս շրջանում արդեն սովորական են դառնում անկատարով կազմված դիմավոր ձևերը⁸: Ուշագրավ է հատկապես այն, որ նշված ժամանակաձևերը իրենց արտացոլումն են գտել ոչ միայն տվյալ ժամանակաշրջանի առօրյա խոսքում և գեղարվեստական գրականության մեջ, այլև գիտական՝ տվյալ դեպքում՝ բժշկագիտական գրականության մեջ:

Հիշյալ ժամանակաշրջանում են (XVII դ.) շարադրվել Սեբաստիայի բժշկագիտական դպրոցի ներկայացուցիչներ Ասար և Բունիաթ Սեբաստացիների բժշկարանները: Կիլիկիայի բժշկական դպրոցից հետո մեզանում ստեղծված բժշկագիտական ձեռքբերումները զարգացրին Ամասիայի և Սեբաստիայի դպրոցները: XV դ. վերելք ապրեց Ամասիայի դպրոցը՝ ի դեմս Ամիրդովլաթ Ամասիացու, իսկ XVI դ. վերջից առավել աչքի ընկավ Սեբաստիայի դպրոցը, որն իր վերելքին հասավ XVII դ.: Այս բժշկագիտական դպրոցից հատկապես ուշադրության են արժանի Ասար Սեբաստացու «Գիրք բժշկական արհեստի» և Բունիաթ Սեբաստացու «Գիրք բժշկութեան տումարի» բժշկարանները, որոնց քննությունը մեզ պատկերացում է տալիս XVI-XVII դդ. լեզվական վիճակի մասին: Նշված բժշկարանները, ինչպես նկատում է Ղ. Հովնանյանը, հարազատորեն պահպանել են *կու*-ով ներկան: Դեռ ավելին, Ղ. Հովնանյանը Ասար Սեբաստացու բժշկարանը առանձնացնում է *կու* մասնիկի կիրառության տեսա-

⁶ Տե՛ս **Ա.Այտընեան**, *Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզուի*, Ե., 1987, էջ 203:

⁷ Տե՛ս *Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության*, հ. Ա, էջ 366, *Հայոց լեզվի պատմական քերականություն*, հ. 2, Ե., 1975, էջ 87-90:

⁸ Տե՛ս **Ս.Ղազարյան**, *Հայոց լեզվի համառոտ պատմություն*, Ե., 1981, էջ 265:

կետից⁹: Խոսելով Մեքաստացիների և նորագույն բժշկարանների լեզվի մասին՝ նա նկատում է, որ դրանք «շատ տեղ կը մօտենան արդի ռամկօրենին՝ թե՛ ըստ նշանակութեան բառից եւ բացատրութեանց, եւ թե՛ ըստ դասատրութեան մասանց նախադասութեան. այնչափ՝ մինչևի շատ անգամ ճշդի կը նոյնանան արեւմտեան (Կ.Պոլսոյ) բարբառոյն...»¹⁰:

Չնայած *կու*-ով ներկայի կիրառությանը՝ վերոհիշյալ բժշկարաններում առանձին դեպքերում նկատելի են նաև արևելյան բարբառներին բնորոշ *-ուվ* և *-ման* վերջավորություններով անկատար ներկայի ձևեր: Միջին հայերենի վերջին շրջանի համար սա էլ, թերևս, կարելի է բնական դիտել: Ասար Մեքաստացու բժշկարանում ուշադրության է արժանի հատկապես անկատար դերբայով և *լինել* անկանոն բայի հարադրությամբ կազմված բաղադրյալ երկրորդական ժամանակի գործածությունը:

Ինչպես գիտենք, դերբայով և *լինել* բայի խոնարհված ձևերով կազմված բաղադրյալ երկրորդական ժամանակների կիրառությունը սովորական է եղել դեռևս գրաբարում: Բաղադրյալ ժամանակների կազմությանը սկսած գրաբարից մասնակցել են անցյալ (հետագայում՝ հարակատար, վաղակատար) և ապառնի դերբայները (տեսեալ եմ, էի, իցեմ, տեսանելոց եմ, էի, իցեմ): Արդի հայերենում անկատարի միայն *-լիս* վերջավորությամբ ձևն է մասնակցում երկրորդական բաղադրյալ ժամանակների կազմությանը (ապրելիս է լինում, եղել): Մա, բնականաբար, իր հիմքն ունի «ս» ճյուղի բարբառներում, որտեղ ներկա և անցյալ անկատար ժամանակները կազմվում են *լիս* անկատարով (ուզելիս իմ, իս, ի): Ինչ վերաբերում է *-ուվ*-ով անկատարին, ապա պետք է ասել, որ այն թե՛ ժամանակակից հայերենում և թե՛ բարբառներում մասնակցում է միայն հիմնական բաղադրյալ ժամանակների կազմությանը (երկրորդական բաղադրյալ ժամանակների կազմությանը գրեթե չի մասնակցում): Առանձին բարբառային օրինակներ նկատելի են միայն Արարատյան և Թիֆլիսի բարբառներում, ավելի կոնկրետ՝ Խ. Աբովյանի («Հազար կպրե կարաս, հազար օձ, կարիճ՝ բերանները բաց, նրան *ըլեին սպասում*, որ քրքրեն, կուլ տան, մարսեն»,

⁹ Տե՛ս Դ. Յովնանեան, *Հետազոտութիւնք նախնեաց ռամկօրենի վրայ*, մասն Ա, տետր Բ, Վիեննա, 1897, էջ 509:

¹⁰ Նույն տեղում, էջ 510:

«Հեր, մեր, ազգական... իրան անունը տալիս ու սուր *ըլեին անուս*»), Գ. Մունդուկյանի («Թէ մութ գիշեր էլ է, հենց գիդենաս աստղիրը հիդդ մալլահաթ *ըլին անուս*», «Էն ուփրո լալ չի ըլի, վուր գեդնի տակն ըլիմ ու գերեզմանս վուտի տակը կոխչըտում ըլին») ստեղծագործություններում¹¹: Ա. Աբրահամյանի վկայմամբ՝ դրանք հիմնականում հանդիպում են նախահեղափոխական շրջանի հայ գրողների երկերում. տվյալ դեպքում նա օրինակ է բերում Մուրացանից. «*Լողացնում է եղել*», «*Աղոթում է եղել*, երբ կույր աչքերով *գտնվում է եղել* Սևանում»¹²:

Անկատարի նման կիրառությունները աչքի են ընկել XVIII-XIX դդ, մինչդեռ Ասար Մեքաստացին գործունեություն է ծավալել XVI-XVII դդ., և նրա բժշկարանում¹³ նմանակարգ տասը գործածություն ենք արձանագրել.

Գնալ բայով՝ «Աչացն, որ արտասուն *լինի գնում* խարեն՝ աչքն քաշեն, արտասուն կտրե՛» (էջ 187), «Ինչ տեղէ, որ երակ լինի կտրիլ արին *լինի գնում* վեր էն ցանեն արինն կապե՛» (էջ 188), «Թէ մարդոյ քեսմէն արին *լինի գնում*, է (7) գարե կշռանք խմէ, շուտով ազատի Աստուծով» (էջ 189):

Ուտել բայով՝ «Թէ աթաշակի համար *լինի ուտում* թող կերակրին քիչ աղ ձգե՛» (էջ 225), «Ի Ա (1) օր, որ *ուտում լինի*, աղ չուտե՛» (էջ 226):

Տանել բայով՝ «Թէ շատ դուրս *լինի տանում*, որ նստոտեղն ցաւի, Ա (1) ձու դեղնուց խորովէ, մին փոքր նշի յուղ հետն խառնէ մլիամ դառնա՛» (216), «Որ օգտէ մարմնոյն թուլութեան և ուխտաւորութեան և մոռացկոտութեան և որ գիշերն մսրէ կամ ջրվէթ *լինի տանում*» (էջ 228):

Թափել բայով՝ «Թէ աչացն արտասուն *լինի թափում* աչքն քաշէ, արտասուն կտրե՛» (էջ 188):

Ցաւալ բայով՝ «Թէ որ փիք ունենայ, որ փորն *ցաւում լինի* Դ (4) դրամ ֆլուս խիարշամպայ ձգե՛...» (էջ 117):

¹¹ Տե՛ս Ա.Աբրահամյան, *Հայերենի դերբայները և նրանց ձևարանական նշանակությունը*, Ե., 1953, էջ 91-92:

¹² Տե՛ս նույն տեղում, էջ 92:

¹³ Տե՛ս Ա.Մեքաստացի, *Գիրք բժշկական արհեստի*, Ե., 1993: Օրինակների էջերը նշվում են փակագծերում:

Երևալ բայով՝ «Թե՛ նստոյտեղին մեջն *երևում լինի* կամ դուրս լինի եկել, առ քաֆուր դէյատրին...» (էջ 216):

Վերոհիշյալ կիրառությունները կարող են վկայել, որ տվյալ ժամանակաշրջանում բարբառներն ավելի գործուն են եղել, *ոււ-* ով անկատարի բարբառային կիրառությունն էլ ևս մեկ ապացույց է անկատար դերբայի՝ ներգոյական հոլովից առաջացած լինելու մասին¹⁴:

Անկատարի՝ իբրև առանձին դերբայի առանձնացումը հայ քերականագիտության մեջ կատարել է Մ. Աբեղյանը՝ փաստելով, որ վերջինս առանձին գործածություն չունի և եղած որոշ օրինակներն էլ՝ *գնում ժամանակ, գնում տեղ*, (փոխանակ գնալու) նա բարբառային է համարում¹⁵:

Ասար Մեբաստացու բժշկարանում մեկ անգամ հանդիպում է անկատար դերբայի անկախ կիրառություն. «Չուր չինին, որ պահես, *ուտում ժամանակն* ձգես, ջրին մեջն եփես» (էջ 226): Այստեղ ևս այս անկատար դերբայը ակնհայտորեն արտահայտում է «*ուտելու ժամանակ*» իմաստը:

Բժշկարաններում կիրառվել է նաև *-ոււ-*ին համարժեք *-ման* վերջավորությամբ անկատար դերբայը, որը բնորոշ է Նոր-Ջուղայի բարբառին, ընդ որում այս ձևը կիրառվել է *ոււ-*ին զուգահեռ (ոււմ-ը ընդհանուր է եղել բացի միավանկներից բոլոր բայերի համար): Ջուղայի բարբառում *-ման* են ստանում միայն չեզոք, կրավորական և կրավորակերպ-չեզոք բայերը (վախման ամ, խագման ամ, հալման ամ), ներգործական բայերը *-ման* կարող են ստանալ միայն կրավորական իմաստ արտահայտելու դեպքում, իսկ եթե բայարմատում որևէ ածանց կա (վ, ն, ց) ներգործականը արտահայտվում է առանց ածանցի (թողնել-թողման), բայց կրավորականի դեպքում վերջինս մնում է¹⁶:

Նետագայում արդեն հենց Ջուղայի բարբառում *ոււ* ճյուղի բարբառների ազդեցությամբ տեղի է ունենում *ման-*ից *ոււ-*ի անցում, իսկ *ման-*ը պահպանվում է միայն միավանկ *գալ, տալ, լալ* բայերի համար¹⁷:

¹⁴ Տե՛ս **Ա. Աբրահամյան**, *նշվ. աշխ.*, էջ 92:

¹⁵ **Մ. Աբեղյան**, *Հայոց լեզվի տեսություն*, Ե., 1965, էջ 313:

¹⁶ **Հ. Աճառյան**, *Քննություն Նոր-Ջուղայի բարբառի*, Ե. (ապակետիպ), 1940, էջ 250-253:

¹⁷ Նույն տեղում, էջ 255:

Անկատարի այս *ման*-ը դարձյալ կապվում է ներգոյական հոլովի հետ. տվյալ դեպքում *ման*-ը *ումն* վերջավորությամբ բայանուն-գոյականի ներգոյականն է (շարժումն – շարժման – ի շարժման եմ)¹⁸: Իբրև *ում*-ով վերջավորվող գոյականի թեքված ձև՝ մեր մատենագրության մեջ *ման*-ի կիրառություններ բազմիցս կարելի է գտնել թե՛ գրաբարի և թե՛ հետգրաբարյան շրջաններում: Նմուշները հայտնի են դեռևս VII դարից՝ Հովհան Մամիկոնյանի, Անանիա Շիրակացու աշխատություններում¹⁹: Միջին հայերենի երկրորդ շրջանում արդեն նկատելի է *ի* նախդրի անկում, ներգոյականի իմաստի մթագնում և գոյականից ժամանակային անցում բայի: Օրինակ՝ Ամիրդովլաթ Ամասիացու «Օգուտ բժշկութեան» աշխատության մեջ գուգահեռաբար կիրառվել են և՛ նախդրավոր, և՛ աննախդիր ձևեր. *ի շարժման կայ* (էջ 50), *ի լարման լինայ* (122), *կանգնման լինայ*, *գնացման ջրերն* (էջ 273)²⁰:

Բունիաթ Սեբաստացու բժշկարանում²¹ հանդիպող երկու օրինակներում էլ ներգոյականի իմաստը գիտակցվում է, մանավանդ որ կա *ի* նախդրի առկայությունը. «Նշանն, որ ի սավտայե լինի այն է, որ...քուն չի լինայ, շատ գրուցել չուզի, երակն *ի լարման լինի*» (էջ 162), «Նշանն, որ ի յարենն լինի այն է, որ յորժամ ձայն տաս ծիծաղի և երեսն կարմիր լինի և երակն *ի կանկման լինի*» (էջ 66):

Պատկերը փոքր-ինչ այլ է Ասար Սեբաստացու բժշկարանում, որտեղ *-ման*-ով անկատարի հինգ օրինակներից միայն մեկում է ներգոյականի իմաստը փոքր-ինչ զգալի. «Թե մարդ հանապազ անպատճառ *ի ծիծաղման լինի*, վրան հայելով ծիծաղն դադարեցնե՛» (էջ 185):

Մյուս դեպքերում *-ման*-ով անկատարը արդեն կիրառվել է իբրև ժամանակակազմիչ դերբայ, ի դեպ հանդես է գալիս նաև *լինել* բայի հարադրությամբ՝ իբրև երկրորդական բաղադրյալ ժամանակ: Բերենք օրինակները. «Թե կնոջ մեջքն կապվել լինի *չընի տեսման* մի քանի օր յիրիկունն Բ (2) դրամ այս մաջունես հապ շինե կուլ տայ, մեջքն բացվի» (էջ 223), «Եթե Ա (1) կամ Բ (2) օրեն կե հետ բլլամ կամ արին *լինի*

¹⁸ Նույն տեղում, էջ 256:

¹⁹ Տե՛ս **Ա.Աբրահամյան**, նշվ. աշխ., էջ 102:

²⁰ **Ամիրդովլաթ Ամասիացի**, *Օգուտ բժշկութեան*, Ե., 1940: Օրինակների էջերը նշված են փակագծերում:

²¹ Տե՛ս **Բ.Սեբաստացի**, *Գիրք բժշկութեան տումարի*, Ե., 1987: Օրինակների էջերը նշվում են փակագծերում:

գոլման, առ Ե(5) դրամ դուրսի քաֆուր ծեծե՛» (էջ 220), «Թե կերած կերակուրն դարգ լինի արարել, դուրս *չլինի տանում*, մինակ բլղամ լինի *գոլման*, առ դոման խատիճ Ը (8) դրամ» (էջ 218):

Ասար Մեքաստացու բժշկարանում մեկ անգամ միայն *-ման*-ով անկատարը հանդես է գալիս անկախ ածականական դերբայի (ոչ ժամանակակաղմիչ) կիրառությամբ. «Եթե *ցավման աչքն* քաշեն կամ խարեն, աչաց դեղերի մեջ խառնեն, խիստ օգտ է աչաց մթըննալուն և հակուրութիւնն տանի» (էջ 188), Այստեղ արդեն *ցավմանը* «ցավող» իմաստն ունի:

Այսպիսով, XVII դ. բժշկարաններում ուշադրության են արժանի անկատար դերբայի բարբառային կիրառությունները, որոնց քննությունը կարող է օգտակար լինել միջին հայերենի ու բարբառների ուսումնասիրության համար:

Тадевосян Асмик – Применение диалектных форм несовершенного причастия в лечебниках XVII века. – В статье рассматриваются диалектные формы настоящего времени, которые употреблялись в лечебниках Асара Себастаци и Буниата Себастаци (XVII век). Причастия с окончаниями *-нул* и *-ման* характерны для восточных диалектов. В лечебнике Асара Себастаци особенно примечательно употребление несовершенного причастия *-нул* в составе второстепенного составного времени с нерегулярным глаголом *լինել* (*быть*). В обоих лечебниках параллельно с *-нул*-ом применялось несовершенное причастие с окончанием *-ման*, которое характерно для джугайского диалекта. Это причастие тоже в основном употреблялось вместе с глаголом *լինել*, образуя второстепенное составное время.

Tadevosyan Hasmik – Usage of the Dialectal Forms of Imperfect Participle in the Medical Books of the 17th Century. – This article touches upon dialectal present tense forms, which were used in the medical books of Asar Sebastatsi and Buniat Sebastatsi (17-th century). Participle with endings *-нул* and *-ման* are characteristic for East dialects. Use of imperfect participle with ending *-нул* is especially remarkable in Asar Sebastatsi's medical book. It is used with irregular verb *լինել* (to be) as a part of secondary composite tense. Imperfect participle with the ending *-ման* is used in parallel together with *-нул* in both medical books. This participle, which is typical for the Dzhuga dialect, is also generally applied with the verb *լինել*, making secondary composite tense.

Խաչատրյան Հասմիկ (Հայաստան,
ԳԱԱ Հ.Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ)

**ԱԶԳԱԿՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ
ԲԱՌԱՆՈՒՆԵՐԻ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՊԱՏԿԵՐՈՂ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ
ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ¹**

Գեղարքունիքի մարզն ընդգրկում է Սևանա լճի ավազանի նախկին հինգ վարչական միավորները՝ Գավառի, Մարտունու, Սևանի, Վարդենիսի և Ճամբարակի: Մարզի բնակավայրերը հիմնվել են տարբեր ժամանակներում, և տարածաշրջանում գործառու էն բարբառային հետևյալ միավորները՝ Բայազետի, Մշո, Արարատյան (Մակու), Դիադինի, Վանի և Ղարաբաղի բարբառները՝ իրենց յուրահատուկ ենթաբարբառներով և խոսվածքներով:

Հիմք ընդունելով մեր «Ազգակցական հարաբերություններ արտահայտող բառերը հայերենի բարբառներում» ուսումնասիրության դասակարգումը², սույն հոդվածում ներկայացնում ենք Գեղարքունիքի մարզի բուն ազգակցական և միջնորդավորված արյունակցական-ազգակցական հարաբերություններ արտահայտող բառանունների քննությունը: Բուն ազգակցությունը՝ իբրև կենսաբանական և հասարակական երևույթ, պայմանավորված է ծնող, հարազատ, զավակ հարաբերություններով: Այստեղ առաջին շարքում են *մայր* և *հայր* բառերը:

Մայր հասկացության դիմաց հիշյալ մարզի խոսվածքներում առկա են հետևյալ բառանունները՝ *մէր, աղէ, մամա, ամայ*: Ինչպես գիտենք, *մայր*-ը բնիկ հայերեն բառ է, որ ծագում է հնիւ. *mate'r նախաձևից, որը գործածական է հնդեվրոպական քույր լեզուներում: Գեղարքունիքում (հատկապես Գավառում, Մարտունիում և Սևանում) *մայր* բառանունը գործառու է այ՛լէ հնչյունափոխությամբ *մէր* հնչաձևով: Միայն փախստականներով վերաբնակեցված գյուղերում է, որ

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության շնորհիվ՝ N SCS «13-6B 382» գիտական թեմայի շրջանակներում:

² Տե՛ս **Հ.Խաչատրյան**, *Ազգակցական հարաբերություններ արտահայտող բառերը հայերենի բարբառներում*, Ե., 2009, էջ 16-17:

մայր-ը *մըէր* հնչյունական տարբերակով է գործածվում (օրինակ՝ Արտանիշ գ., որոնք հիմնականում գաղթել են Դաշքեսանի Շարուկքար գյուղից): Բարբառներում ընդհանրապես լայն կիրառություն ունի *մայր* հասկացության *մամա* բառանունը, որն առկա է նաև Գեղարքունիքում: Հ.Աճառյանը բառը փոխառված է համարում հունարեն *μάμα, μάμη* «մեծ մայր, մամ» բառից: Մինչդեռ Գ. Ջահուկյանը կարծում է, որ բարբառներում պահպանված են հնդեվրոպական արմատական ձևեր, որոնք, սակայն, բացակայում են հայերենի գրավոր հուշարձաններում և մարդկություն. սեռ, տարիք, ազգակցություն արտահայտող բառերի թվում ներառում է *մա, մամ* բարբառային բառերը, որոնք գերազանցապես մանկական կամ փառաբանական բնույթի են: Եվ մեկ այլ առիթով հեղինակը գրում է. «Եթե նկատի առնենք բառի տարածվածությունը բարբառներում՝ տարբեր ձևերով և իմաստներով (մամ, մամա, մամիկ՝ «տատ», մամ «մայր», մամո «մայրիկ») և մանավանդ մամա «ուտել» մանկական բառի գոյությունը, ապա կարելի է ավելի հավանական համարել հայերեն բառերի բնիկ լինելը, թեև, իհարկե, հնարավոր է որոշ տարածքներում խառնում (կոնտամինացիա) հուն. և պրսկ. ձևերի հետ»³:

Ղարաբաղյան խոսվածքներին բնորոշ բառանուն է *ամայ*-ը՝ որպես *մայր* (Արտանիշ, Փամբակ): Թերևս հնարավոր է *ա՛յ մա-*ն դարձած լինի *ամայ*, այսինքն՝ ձայնարկության հետադաս կիրառությամբ բառաձև: Չենք բացառում նաև, որ *ամայ* բառաձևի բառավերջում *յ*-ի առկայությունը գուցե ավելի հին երևույթ է. թերևս հին հայերենում առկա վերջնահանգ *յ*-ի արտացոլումն է, որ բարբառային այս բառում քարացած պահպանվել է, մանավանդ որ *ամայ*-ը բարբառներում փաստված է ոչ միայն իբրև կոչականի ձև:

Գեղարքունիքի մարզի որոշ խոսվածքներում (Ն.Գետաշեն, Վարդենիկ) փաստել ենք *ադէ* բառանունը՝ որպես *մայր* հասկացության բառաձև: Այս բառի շուրջ հայ լեզվաբանության մեջ տարբեր կարծիքներ կան: Հ.Ասմանգուլյանը այն համարում է քրդական փոխառություն. *ade (ate) atta*-քրդ. - *de*- «մայր»⁴: Գ.Ջահուկյանը կարծում է,

³ Գ.Ջահուկյան, *Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան* (այսուհետև՝ ՀԼՊ.ՆԺ), Ե., 1987, էջ275, 179:

⁴ А.Асмангулян, *Этимологический состав терминов родства армянского языка*, Научные труды, N 3, Е., 1971, էջ 101:

որ գրաբարում չվկայված հնդեվրոպական արմատների մեջ կան զգալի թվով բնաձայն և մանկական բառեր, որոնք հնչյունապես շեղվում են հայերենի բուն օրինաչափություններից, և այս շարքում ընդգրկում է *աղէ* բառաձևը⁵:

Փամբակի խոսվածքում գործառում է նաև *աճի* բառաձևը, որով երեխան մորն է դիմում: Սա հավանաբար իգական սեռը մատնանշող *աղջիկ* ընդհանրական բառանվան մասնավորումն է՝ մայր իմաստով, որն առաջացել է *աղջի՛* կոչական ձևից: Այս բառաձևը բնորոշ է դարաբաղյան խոսվածքներին:

Հայր: Գեղարքունիքի մարզում **հայր** հասկացության զուգաբանություններ են դիտարկվել *հէր*, *խէր*, *հայրիկ*, *ապա*, *ափօ* բառաձևերը: *Հայր*-ը բնիկ հայերեն բառ է, որը ծագում է հնդեվրոպական *pater նախաձևից և առկա է ցեղակից շատ լեզուներում: Հիշյալ տարածքում այն ներկայանում է *հէր* և *խէր* հնչաձևերով: Բայազետի բարբառում, որը ներառում է Գավառի շրջանը (Հացառատ, Սարուխան, Արծվաքար և այլն) գործառում է միայն *խ*-ով տարբերակը, իսկ Մարտունու շրջանը բաժանվում է երկու խմբի. Ջուլաքար, Վաղաշեն, Աստղաձոր, Վարդենիկ, Գեղհովիտ գյուղերի խոսվածքներում առկա է *խ*-ով տարբերակը՝ *խէր*, իսկ Երանոս, Ծովասար, Մադինա, Ձորագյուղ, Վարդաձոր գյուղերում՝ *հէր*:

Մարտունու Լիճք գ. վկայված է նաև *ապա*, Սևանի Գեղամավանում՝ *ափօ*, *ապէր* բառաձևերը՝ որպես **հայր** հասկացության նշանակելիներ: Լեզվաբանության մեջ այս բառերի շուրջ կարծիքները բաժանվում են երկու խմբի: Լեզվաբանների մի մասը՝ Հ.Աճառյան, Հ.Ասմանգուլյան, *ապի*-ն կապում են *եղբայր* բառի հետ⁶: Գ.Ջահուկյանը *ապի* (*ափու*՝ *հայր*) բառը հայերենի գրավոր հուշարձաններում բացակայող, սակայն հայ բարբառներում պահպանված հնդեվրոպական արմատական ձև է համարում⁷: Մեր կարծիքով՝ նշվածներից *ափի*, *ափօ*, *ափու*, *ապա*, *աքօ* բարբառային տարբերակները հանգում են հնդեվրոպական արմատական *ապա* ձևին, որը կապ չունի եղբայր

⁵ Տե՛ս Գ.Ջահուկյան, *Հայ բարբառագիտության ներածություն* (այսուհետև՝ ՀԲՆ), Ե., 1972, 283-300:

⁶ Տե՛ս Հ.Աճառյան, Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), հ. 2, Ե., 1973, էջ 16:

⁷ Տե՛ս ՀԼՊ.ՆԺ, էջ 275:

բառի հետ, իսկ հայերենի բարբառներում հանդիպող *ափէր*, *ապէր*, *ապար* բառաձևերը առնչվում են *եղբայր* բառին:

Բուև ազգակցական բառանվանումների երկրորդ իմաստային շրթան ընդգրկում է **երեխա, տղա, աղջիկ** հասկացությունները: Ըստ Հ.Աճառյանի՝ *երեխա*-ն անկունք, քրիստոնեական մկրտություն դեռ չստացածը, չմկրտվածն էր, և նա ենթադրում էր, որ կար ասորական **raxa* ձևը, որից փոխառյալ են մի կողմից հայերեն *երախայ*, մյուս կողմից պահլ. *raxik* ձևերը⁸:

Գեղարքունիքի մարզում **երեխա** հասկացության բառանուններ են փաստվել *երեխա*, *ըրախա*, *խոխա*, *ճիժ* բարբառային բառաձևերը: Գավառի, Մարտունու, Վարդենիսի և Սևանի խոսվածքներում գործածական են *երեխա* և *ճիժ* բառերը: *Ճիժ* բառը միջին հայերենում արդեն առկա էր, սակայն բառի ծագումն անհայտ է:

Ճամբարակի շրջանի խոսվածքներում (Արտանիշ և Ջիլ) Ղարաբաղի բարբառին բնորոշ *ըրախա*, *խոխա* բառաձևերն են գործառում: Ինչպես տեսնում ենք, *ըրախա* բառաձևում շեշտի հետ կապված հնչյունափոխություն է տեղի ունեցել՝ **ե>ը**: Իսկ բառամիջի **ա-ի** առկայությունը պայմանավորված է մեզ փաստված գրաբարյան *երախա* բառաձևով: Արտանիշում և Ջիլում գործածվում է նաև *խոխա*-ն: Հ.Աճառյանն այն համարում է թուրքերենից փոխառյալ բառ՝ բիւեցնելով *խախա* (*xaxa*) տխմար, անմիտ բառից⁹: Ալ. Մարգարյանը այն համարում է *երեխա* բառի ավելի «բարդ և ավելի հեռուն գնացած հնչյունական ձևափոխություն, որն է՝ երախայ > երեխայ > ըրախա > ըրեխա > հըրեխա > հըրոխա > հոխա > խոխա»¹⁰: Մակայն այս վարկածը դեռևս դիտարկման կարիք ունի:

Տղա: «Նոր բառգիրք հայկազեան լեզվի» աշխատության մեջ *տղա* բառը բացատրվում է «իբրև մանուկ, փոքր երեխա, իբր պատանի կամ երիտասարդ, անչափահաս տղա»¹¹: Ինչպես գիտենք, արևելյան գրական լեզվում բառը հատուկ է միայն արական սեռին, բայց

⁸ Տե՛ս ՀԱԲ, հ. 2, էջ 35:

⁹ Տե՛ս Հ.Աճառյան, *Թուրքերեն փոխառեալ բառեր հայերենի մեջ*, Մոսկուա-Վաղարշապատ, 1902, էջ 159:

¹⁰ Ալ. Մարգարյան, *Բարբառային բառերի մեկնություններ*, Պատմա-բանասիրական հանդես, 1971, 3, էջ 212-213:

¹¹ Տե՛ս *Նոր բառգիրք հայկազեան լեզուի* (այսուհետև՝ ՆՀԲ), հ. 2, Վենետիկ, 1837, էջ 881:

արևմտյան գրական լեզվում, նաև գրաբարում և միջին հայերենում՝ թե՛ արական և թե՛ իգական սեռին: Հ.Աճառյանը բերում է հին մատենագրությունից հետևյալ օրինակը՝ «Տայր Աննա ստինս տղային և անուանեաց զնա Մարիամ»¹²: Տղա բառը համարվում է ասորական փոխառություն: Գեղարքունիքի մարզի խոսվածքներում տղա բառանունը ներկայանում է անհնչունավոխ ձևով՝ նշանակելով միայն «արու զավակ»:

Երեխա հարաբերության իգական եզրը արտահայտվում է *աղջիկ* բառանվամբ: Գ.Ջահուկյանը Հ.Աճառյանի չստուգաբանված բառերի ցանկից *աղջիկ* բառին վերագրում է ուրարտական ծագում¹³: Ա.Մեյեն *աղջիկ* բառը կապում է *աղալ* բայի հետ¹⁴: Վ.Համբարձումյանը, անդրադառնալով *աղջիկ* բառի ստուգաբանությանը, պաշտպանում է Մեյեի տեսակետը և ի մի բերելով պատմամշակութային և լեզվական փաստերը՝ նկատում է, որ հայերեն *աղջիկ* բառը, որի նախնականն է *աղիջ* (>աղիճ) ձևը, հանգում է հ.-ե. **al** արմատին, և հայերեն *աղջիկ* բառի **աղ(ալ)** արմատն ամենանախնական իմաստով նշանակել է «երկանքով աղացող, աշխատող տնտեսուհի»¹⁵:

Գեղարքունիքի մարզում ընդհանրական կիրառություն ունի *աղջիկ* բառանունը՝ տարբեր հնչաձևերով (Գավառ՝ շրթնային **ա՛**-ով՝ *ա՛խյիկ*, Մարտունի, Սևան, Վարդենիս՝ *ախյիկ*, *ախճիկ*):

Բուն ազգակցական բառանվանումների երրորդ շրթան կազմված է *քույր* և *եղբայր* բառանուններից: Քույր-ը բնիկ հայերեն բառ է: Ըստ Թ.Գամկրելիձեի և Վ.Իվանովի՝ *քույր* բառի ստուգաբանական իմաստը ավելի լայն է. կին՝ մեծ ընտանիքի անդամ, արյունակից ազգական¹⁶: Եվ հիշյալ տարածքում *քույր*-ը դրսևորվում է միայն *քույր*՝ գրաբարյան ոյ>ու (Սևան, Մարտունի, Գավառ, Վարդենիս) և *քիր*՝ ոյ>ի (Վերին Ճամբարակ, Վահան, Արտանիշ, Ջիլ և այլն) հնչատարբերակներով:

¹² Տե՛ս ՀԱԲ, հ. 4, Ե., 1979, էջ 412:

¹³ Տե՛ս ՀԼՊ.ՆԺ, էջ 436:

¹⁴ Տե՛ս Ա.Մեյեն, *Հայագիտական հետազոտություններ*, Ե., 1987, էջ 436:

¹⁵ Վ.Համբարձումյան, *Ակնարկներ հայոց լեզվի համեմատական բառագիտության*, Ե., 1998, էջ 29-33:

¹⁶ Տե՛ս Գ.Վ.Գամկրելիձե, Վ.Վ.Իվանով, *Индоевропейский язык и индоевропейцы*, т. 2, Тбилиси, 1984, էջ 764:

Եղբայր: Համարվում է բնիկ հայերեն բառ՝ հնդեվրոպական *brater նախաձևից առաջացած: Հիշյալ նախաձևի համար ենթադրվում է ավելի լայն իմաստ՝ «արական սեռի արյունակից ազգական»: **Եղբայր** հասկացությունը Գեղարքունիքի մարզում դրսևորվում է եզակի *եղբայր* բառանվանումով, որը, իհարկե, հիշյալ խոսվածքներում առկա է բառասկզբի դիրքում է>ա, բառամիջում՝ այ>է հնչաձևով՝ *ախպէր*: Հ.Աճառյանը, Է.Աղայանը *ա*-ով տարբերակը համարում են ավելի հին երևույթ՝ առաջացած դեռևս նախապատմական շրջանում¹⁷: Գավառի շրջանի խոսվածքներում *ախպէր* բառանունը դրսևորվում է Բայազետի բարբառին բնորոշ *ա* ձայնավորի շրթնայնացմամբ՝ *անխպէր*, իսկ դարաբաղյան խոսվածքներում (Արտանիշ, Ջիլ, Փամբակ) հանդիպում է *ախպըրէր* հնչատարբերակը:

Ազգակցական հարաբերություններ արտահայտող բառանունների երկրորդ ենթաշերտում **երկրորդաբար միջնորդավորված արյունակցական հարաբերությունների ազգակցական** անուններն են՝ *տատ*, *պապ*, *քեռի*, *մորաքույր*, *հորեղբայր*, *հորաքույր*:

Գեղարքունիքի մարզում **տատ** հասկացության բառանուններ ենք դիտարկել *տատ* (կոչական՝ *տառի՛*), *մամէ* (*մամիկ*), *մէձ մամէ*, *նան* (*նաննի*), *բաբո* զուգաբանությունները: Ըստ Հ.Աճառյանի՝ *տատ* բառը բնաձայնական է, որը հատուկ է մանկական լեզվին և առկա է թե՛ հնդեվրոպական և թե՛ այլ լեզվախմբերի մեջ, օրինակ՝ սանս. *tata*, վրաց. *դէդա*՝ մայր, թուրք՝ *dede*՝ պապ և այլն¹⁸:

Տատ բառանունը գործառում է Սևանի, Գավառի, Մարտունու, Վարդենիսի խոսվածքներում: Գավառի Շովազարդ և Գեղարքունիք գյուղերում առկա են նաև *մամէ*, *մէձ մամէ* բառաձևերը: Ջահուկյանը *մամ*-ը մանկական կամ փաղաքշական բնույթի հնդեվրոպական արմատ է համարում¹⁹: Ինչպես հայտնի է, այլ վայրերում *մամ*-ը նաև «մայր» իմաստով է գործածվում: Փաստենք, որ *առէ* բառաձևը հիշյալ տարածքում ոչ միայն **մայր** հասկացության բառանուն է դիտվել, այլև **տատ** հասկացության (Գավառի Կարմիր գյուղ, Արծվաքար):

¹⁷ Տե՛ս Հ.Աճառյան, *Հայոց լեզվի պատմություն*, մաս Բ, Ե., 1951, էջ 414-415, Է.Աղայան, *Բարբառային հնարանությունները հայերենում*, ԳՍ Տեղեկագիր, 1958, 5, Ե., էջ 65-72:

¹⁸ Տե՛ս ՀԱԲ, հ. 4, էջ 379:

¹⁹ Տե՛ս ՀԼՊ.ՆԺ, էջ 276:

Հայերենի բարբառներում որպես **տատ** հասկացության նշանակելիներ շատ հաճախ **մեծ** ածականով որոշիչ-որոշյալ կապակցային ձևեր են փաստված, ինչպես, օրինակ, *մինձ մար*, *մինձ արս*, *մինձ անս* և այլն²⁰: Բսկ Կոզենի խոսվածքում **տատ** հասկացության բառանուն է դիտվել *մեծըիկ*-ը:

Հայտնի է, որ հայերենի բարբառներում *մեծ* բառի հոմանիշ է համարվում *ջոչ*: Այստեղից էլ՝ *ջոչ մամ*, *ջոչ աղէ*, որոնք էլ ընդամենը մեկ աստիճանով առաջ են մղվել և, ինչպես *մեծըիկ* բառի դեպքում, բառիմաստային բևեռացումով առաջացել է *ջօջօ* բառաձևը **տատի** դիմաց: Բառը փաստել ենք Մշո խոսվածքներում (Մարտունու Լիճք, Ծակքար և այլն) *ջօջո շնչեղ ձայնեղ տարբերակով*: Դաշտային Ղարաբաղից բռնագաղթածներով վերաբնակեցված գյուղերում գործառու էն **տատ** հասկացության *նան* (*նանն*), *բարօ* բառանունները (Արտանիշ, Ջիլ, Փամբակ և այլն):

Գ.Ջահուկյանը բարբառային հնաբանությունների շարքում ներառել է նաև *նան* բառանունը, չնայած հնարավոր է համարում նրա իրանական ծագումը կամ էլ բնիկ և իրանական փոխառյալ ձևերի խառնուրդ լինելը (բաղարկություն)²¹: Փամբակում **նանը** հոր մայրն է, **տատ-ը**՝ մոր մայրը, Վահան գ.-ում հոր մայրը *տատունց ամայ* բառակապակցությամբ է դրսևորված, մոր մայրը՝ *տատունց ազի*: Նշված օրինակներից երևում է, որ հայերենի բարբառներում երբեմն հստակորեն տարբերակվում են հոր և մոր մայրերը: Նույնիսկ այլ բարբառներում արձանագրված են *քեռմամա* (Վանի Խեք գ.), *քարմար* (Մարաշ) բառաձևերը, որոնցում մայրական տատը օտարվում է որպես քեռու մայր:

Բարօ բառը՝ որպես **տատ** հասկացության նշանակելի, հայերենի բարբառներում մեկուսացած գործածվում է Ղարաբաղ-Շամախիի միջբարբառախմբում: Մեր կարծիքով՝ *բարօ*-ն աղերսներ ունի *պսպ* բառի հետ: Ազգակցական բառերի՝ ծնող իմաստով բառաշերտում հեշտությամբ իմաստային անցումներ են տեղի ունենում:

Պսպ: Ծնող հարաբերության միջնորդավորումը ծնող հարաբերությամբ արական եզրով դրսևորվում է *պսպ* բառանվամբ: Հ.Աճառ-

²⁰ Տե՛ս Հ.Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 92:

²¹ Տե՛ս ՀԼՊ.ՆԾ, էջ 182:

յանը *պայ* բառի «մեծ հայր» իմաստը պիլ. *pap ձևից է փոխառյալ համարում, իսկ ՆՀԲ-ում *պայր* դիտված է որպես հունական փոխառություն²²:

Գեղարքունիքի մարզում *պայ* բառը փաստված է *պաբէ, պայէ* բառազուգաբանություններով, որոնք, կարծում ենք, կոչականից առաջացած բառաձևեր են:

Երկրորդաբար միջնորդավորված արյունակցական հարաբերությունների երկրորդ իմաստային շղթայի բառանուններն են *մորաքույրը, հորաքույրը, հորեղբայրը* և *քեռին*: Ինչպես նկատելի է, *քեռի* բառը հին հայերենից ավանդված միակ արմատական ձևն է, իսկ *հորաքույրը, մորաքույրը, հորեղբայրը* նկարագրական ձևով առաջացած բառաձևեր են, որոնք, ըստ Ջահուկյանի, մասամբ գալիս են հնից և գուգահեռներ ունեն այլ լեզուներում:

Հ.Աճառյանը կարծում է, որ *քեռին* ծագումնաբանորեն կապված է *քույր* բառի սեռական հոլովաձևի հետ²³: Հ.Ասմանգույյանը ևս սկզբում փորձում է աղերսներ գտնել *քեռի* և *քույր* բառերի միջև, այնուհետև գալիս է այն եզրակացության, որ հետագա հնչյունական զարգացման հետևանքով այս երկու բառերը ձևաբանական տարբեր կառույցների համանուններ են դարձել²⁴: Գ.Ջահուկյանը ևս *քեռին* համարում է *քույրից* անկախ կազմություն՝ այն բխեցնելով հ.ե. *suesor- «սեփական արյունից ձևից». *suesriio-s՝ *քեռի*²⁵:

Քեռի հասկացությունը Գեղարքունիքի մարզի խոսվածքներում հիմնականում դրսևորված է *քեռի* բառանվան տարբեր հնչաձևերով: Ք հնչյունի քմայնացմամբ, ինչպես նաև **ա**-ի առաջնալեզվային արտասանությամբ՝ *քյւռի* հնչատարբերակն է առկա Բայազետի և Ալաշկերտի խոսվածքներում (Սարուխան, Գեղարքունիք, Գեղհովիտ, Վաղաշեն, Ծակքար և այլն): Որոշ խոսվածքներում (Նորադուս, Գեղամավան) **ք**-ի քմայնացումն այնքան է ուժեղացել, որ *ք*- քմայինը վերածվել է **չ**-ի՝ *չյւռի*:

²² Տե՛ս ՀԱԲ, հ. 4, էջ 25, ՆՀԲ, հ.2, էջ 599:

²³ Տե՛ս ՀԱԲ, հ. 4, էջ 666-667:

²⁴ Տե՛ս **А.Асмангулян**, նշվ. աշխ., էջ 57:

²⁵ Տե՛ս ՀԼՊ.ՆԾ, էջ 189:

Ճամբարակում և Վարդենիսի՝ փախստականներով վերաբնակեցված բնակավայրերում (Արտանիշ, Ձիլ, Վահան և այլն) գործառուս է *դայի* բառանունը (դայի հնչածևով)՝ որպես *քեռի*:

Մորաքույր, հորաքույր: Այս բառաձևերում բացակայում է հասկացության ընդհանրացված բառիմաստը և պահպանվել է միջնորդավորված եզրերի (հոր կամ մոր) սեռի իմաստույթը: Գեղարքունիքի մարզի Բայազետի և Մշո խոսվածքներում, ինչպես նաև Սևանի շրջանի խոսվածքներում (Մակու, Արծափ) ունենք անհոդակապ *մորքուր, հորքուր* բառաձևերը, որը երբեմն հանդիպում է *ք*-հնչյունի խլացմամբ՝ *մորկուր, հորկուր* (Մշո խոսվածքներում): Իսկ Ալաշկերտի որոշ խոսվածքներում *հորքուրն* առկա է **հ>խ** տարբերակով՝ *խորկուր, խորքուր* (Ձուլաքար, Վարդենիկ, Գեղհովիտ և այլն):

Վերին Ճամբարակում և այս ենթաշրջանի խոսվածքներում գործառուս են *ա* հոդակապով բառաձևերը՝ *հրաքիր, մրաքիր* և կամ էլ *հոքիր, մոքիր* զուգաբանությունները: Բարբառներում առկա *աքիր* բառաձևը այս ենթաշրջանում դիտարկվել է որպես և՛ *մորաքույր*, և՛ *հորաքույր* հասկացությունների բառանվանում (օրինակ՝ Փամբակ գյուղի խոսվածքում, որի բնակիչները Դաշքեսանի Ջագլիկ գյուղից են):

Ճամբարակի Վահան գ. մորաքույրը **աքիրն** է, հորաքույրը՝ **հրաքիրը**: *Աքիրը*, կարծում ենք, *մորաքույր* բառի մաշված տարբերակն է: Ջագլիկցիների խոսվածքում (Փամբակ գ.) փաստված է նաև մորաքույր հասկացության նշանակելի *աքա*-ն, *հորաքույր*-ինը՝ **քիրի**-ն: *Աքա* բառաձևը, կամ *մորաքույր* բառի մաշված տարբերակն է, կամ էլ աղերսներ ունի *քա* (*քալա*) իգական կոչական ձայնարկության հետ²⁶: Իսկ *քիրի*-ն թուրքական փոխառություն է: Հարկ է նշել, որ այն հայերենի որոշ բարբառներում գործառուս է «հորաքույր», իսկ մի մասում էլ՝ «մորաքույր» իմաստով: Այսինքն՝ ինչպես *քիրի*-ն, այնպես էլ *աքիր*-ը ունեն ընդհանրացված բառիմաստ, ինչպես օրինակ ռուսերենում *тетя* բառաձևը:

Հորեղբայր: Նկարագրական կաղապարով առաջացած բառաձևը ինքնին մատնանշում է ծնող հարաբերության (այստեղ՝ հայր) միջնորդավորումը համաձին հարաբերության արական եզրով, որն է՝ **հորեղբայր:** Գեղարքունիքի մարզում այն ներկայանում է *հորեղբայր*,

²⁶ Տե՛ս նաև ՀԱԲ, հ. 4, էջ 537:

կակօ, ամի, սպօ բառանուններով: *Հորեղբայր* բառանունը հիշյալ տարածքում դրսևորվում է հնչյունական յուրօրինակ տարբերակներով: *Հօրօխպէր* բառը *խօրօխպէր* հնչաձևով առկա է Գավառի շրջանի խոսվածքներում, ինչպես նաև Մարտունու և Վարդենիսի որոշ խոսվածքներում (Զոլաքար, Գեղհովիտ, Վարդենիկ և այլն): Մարտունու **հ**-ախոս գյուղերում (Զորագյուղ, Երանոս, Վարդաձոր և այլն) գործառու է *հօխպէր* բառաձևը, որը *հորեղբայր* բառի արագախոսության ընթացքում առաջացած բառաձև է, իսկ **խ**-ախոս վայրերում՝ *խօխպէր* (Վաղաշեն, Ծակքար):

Մարտունու շրջանի խոսվածքներում **հորեղբայր** հասկացության բառային դրսևորում է դիտարկվել *կակօ* բառաձևը, որը հավանաբար քրդերենից է փոխառված և հիշյալ տարածքում հանդես է գալիս տարբեր հնչաձևերով: Օրինակ՝ Զորագյուղում՝ *կյւկօ*, Մաղինա գ.-ում՝ *կյւկէ*, Ծակքարում՝ *կակօ* և այլն:

Հայտնի է, որ *սպօ, ամի* բառաձևերը հայերենի բարբառներում գործածվում են մի քանի իմաստներով. *սպս, սբս* հնչաձևերով գործածվում է «մայր» իմաստով, *սպի ամի, սբս սպօ, ամօ*՝ «հայր» իմաստով, իսկ Մարտունու Լիճք, Ներքին Գետաշեն գյուղերում **սպօ**-ն փաստված է «հորեղբայր» իմաստով: Այստեղ ևս, կարծում ենք, իմաստային տեղաշարժ է տեղի ունեցել «հայր» իմաստից «հորեղբայր» իմաստին:

Գեղարքունիքի մարզի որոշ խոսվածքներում (Գեղամավան, Լիճք, Փամբակ և այլն) **հորեղբայր** հասկացության բառանուն է վկայված թուրքերենից փոխառյալ *ամի* բառանունը, որը հիմնականում դրսևորվում է առաջնալեզվային *ü*-ով՝ *üմի*:

Հորեղբոր կին: Այս հասկացությունը հայ բարբառներում բացի հորեղբոր կին բարդ կադասյարի հնչյունական բազմապիսի տարբերակներից գործառու է նաև տարարմատ անվանումներով, որոնցից հիշյալ մարզում վկայված են *գալօ, տաղօ, տաղէ, üգի, ագի* բառաձևերը:

Գավառի խոսվածքներում գործառու են վրացերենից փոխառյալ *ձալօ* բառանունը **ձ>գ** հնչյունափոխությամբ՝ *գալօ* տարբերակով: Մարտունու որոշ խոսվածքներում (Մաղինա, Զորագյուղ, Ծակքար, Ծովասար և այլն) առկա է *տաղօ* բառանունը, իսկ Վաղաշեն գ.-ում արձանագրված է *տաղէ*-ն որպես **հորեղբոր կին** հասկացության

նշանակելի: Մենք կարծում ենք, որ *տաղօ* և *տաղէ* բառաձևերը սերտորեն առնչվում են *տուղու*, *դուղու*, *տաղա* բառերի հետ, որոնք համարվում են հնդեվրոպական բնաձայնական բառեր: Փախստականներով վերաբնակեցված գյուղերում գործառում է *ազի-ն*՝ որպես հորեղբոր կին (Արտանիշ, Փամբակ): Մեր կարծիքով՝ Հ.Ասմանգուլյանը ճիշտ եզրահանգման է գալիս՝ *ազի* բառը համարելով արխաիկ ազգակցական տերմին, որը չի արտացոլվել հին հայերեն գրական լեզվում, սակայն ավանդված է հայերենի բարբառներում նախ՝ «մայր» իմաստով, ապա արդեն բառիմաստի տեղաշարժով առաջացած «հորաքույր» (Ղարաբաղ), «հորեղբոր կին» իմաստներով²⁷:

Այսպիսով՝ ազգակցական հարաբերություններ արտահայտող բառանունները դարերի ընթացքում պահպանել են իրենց կենսունակությունը, ինչպես նաև համարվել ու հարստացել են ուրիշ լեզուներից փոխառված միջոցներով: Եվ քանի որ ազգակցական բառերը մտնում են լեզվի հիմնական բառապաշարի մեջ և օժտված են բավական մեծ կայունությամբ ժամանակի և արտաքին այլ ազդակների նկատմամբ, այդ պատճառով էլ Գեղարքունիքի մարզի տարբեր խոսվածքներում նրանք ևս դրսևորվում են աշխարհընկալման և լեզվամտածողությունից բխող կաղապարային ձևերով, որոնց կողքին բարբառային հարուստ ներկայանակը մեզ է հրամցնում հնդեվրոպական արմատներով յուրօրինակ տարբերակներ, հնավանդ արմատներից իմաստային տեղաշարժումներով առաջացած բառանվանումներ: Առկա են նաև նկարագրական բառաձևեր, որոնք գալիս են հնից և զուգահեռներ ունեն հնդեվրոպական այլ լեզուներում, ինչպես նաև բառաձևեր, որոնց մի մասը ավանդված չէ հին գրավոր հուշարձաններում:

Хачатрян Асмик – Диалектная карта понятий, выражающих родственные связи, в Гегаркуникском регионе. – В статье исследуются лексемы, выражающие прямые родственные связи: *մայր, հայր, տղա, աղջիկ, երեխա, քույր, եղբայր*, и их эквиваленты в диалектах Гегаркуника: *մէր, աղէ, մամա, ամայ, հէր, խէր, ամօ, էրէխա, քրախա, խօխա, ճիժ, քիր, քուր, ախպէր, տրղա, ախցիկ*.

²⁷ Տե՛ս **А.Асмангулян**, նշվ. աշխ., էջ 42-47:

Вторая группа включает понятия, выражающие опосредованно-родственные связи: **տատ, պապ, քեռի, մորաքույր, հորեղբայր, հորաքույր**, и их диалектные варианты: *տատ, մամէ, ջօջօ, բարօ, նան, պարէ, հօրկուր, խօրկուր, մօրկուր, հրրաքիր, մրրաքիր, աքիր, արա, բիբի, խօրոխպէր, հօխպէր, խօխպէր, կակօ, ամի*.

Khachatryan Hasmik – Dialectal Characteristic of the Concepts Expressing Kindred Relations in the Region of Gegharkunik. – This article presents an examination of the words expressing sibling connection and indirect kinship relations in the Region of Gegharkunik. The Armenian dialectal variations of the concepts of **mother, father, son, daughter, child, sister, brother** used in the Region of Gegharkunik have been included among the words expressing sibling connection; these are: *մէր, աղէ, մամա, ամա, հէր, խէր, ապօ, էրէխա, ըրախա, խօխա, ճիժ, քիր, քուր, ախպէր, տըղա, ախիկ*.

The second level includes the names for the concepts expressing secondary indirect kinship relations: **grandmother, grandfather, uncle (mother's brother), aunt (mother's sister), uncle (father's brother), aunt (father's sister)**. The dialectal variations of these concepts in the Region of Gegharkunik are as follows: *տատ, մամէ, ջօջօ, բարօ, նան, պարէ, հօրկուր, խօրկուր, մօրկուր, հրրաքիր, մրրաքիր, աքիր, արա, բիբի, խօրոխպէր, հօխպէր, խօխպէր, կակօ, ամի*.

Կատվայյան Վիկտոր (Հայաստան,
ԳԱԱ Հ.Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ)

**ՄԻՋԻՆՀԱՅԵՐԵՆՅԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԲԱՅԱԶԵՏԻ ԲԱՐԲԱՌՈՒՄ¹**

Լեզվի պատմական զարգացման ընթացքը նախ և առաջ տեսա-
նելի է դառնում գրավոր աղբյուրների լեզվական նյութի դիտարկու-
մով: Մինևույն ժամանակ, այդ ընթացքը դիտարկելի է նաև բանավոր
խոսքի, հատկապես՝ բարբառների ընձեռած նյութի շրջանակներում:
Բարբառները, լինելով գիտակցական մշակման ու կանոնարկման
չենթարկվող լեզվավիճակներ, իրենց համակարգերում յուրահատուկ
կերպով զուգորդում են լեզվի զարգացման տարբեր փուլերի վերա-
բերող իրողություններ, որոնց առանձնացումը և խմբավորումը ըստ
փուլերի կարող է կարևոր լինել ոչ միայն տվյալ բարբառին վերա-
բերող, այլ նաև ընդհանուր լեզվի պատմական զարգացմանն առնչվող
հարցեր քննելիս: Այս առումով որոշակի հետաքրքրություն են ներկա-
յացնում նաև բարբառներում միջինհայերենյան իրողությունների
դրսևորումները, մանավանդ որ, ինչպես նշում է Գ. Ջահուկյանը, «կա-
րելի է ասել, որ արդի բարբառների հնչյունական և ձևաբանական
խմբերը սկսում են գծագրվել հին շրջանի վերջերից և միջին շրջանի
սկզբներից»²: Միաժամանակ, ըստ Հ. Մուրադյանի, հայերենի գրի առ-
ման շրջանի բանավոր-խոսակցական լեզվի դրսևորումներն են, որ
տարբեր «գործոնների փոխազդեցությամբ և իրենց ներքին զարգաց-
ման օրինաչափությունների ուժով գալիս հասնում են մինչև միջին
դարերը, ստեղծելով լեզվական մի նոր համակարգ՝ իրենց ընդհան-
րություններով ու տարբերություններով հանդերձ»³: Այսպիսով, մի-
ջինհայերենյան իրողությունները մի կողմից իրենց արմատներով գա-
լիս են հինհայերենյան շրջանից, մյուս կողմից՝ պարունակում են
բարբառային ներկա վիճակի սաղմերը: Բոլոր դեպքերում փաստ է, որ

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ի կողմից տրամադրվող
ֆինանսական աջակցության շնորհիվ՝ № SCS 13-6B382 գիտական թեմայի
շրջանակներում:

² Գ. Ջահուկյան, *Հայ բարբառագիտության ներածություն*, Ե., 1972, էջ 192:

³ Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Ա, Ե., 1972, էջ 35:

այդ իրողությունները վկայված են հենց միջին հայերենի շրջանից սկսած:

Հայտնի է, որ միջին հայերենը ընդհանուր առմամբ չի ներկայանում իբրև միասնական նորմավորված գրական լեզու⁴: Ինչպես նկատել է Յ. Կարստը, «Թեև, ի հակադրություն հին ու նոր հայերենի և նրանց բնութագրող հատկանիշների, միջին հայերենը երևում է որպես մի ամբողջություն, այնուամենայնիվ այն ոչ մի դեպքում իրենից չի ներկայացնում միատարր մի լեզու, այլ հանդես է բերում բարբառային զգալի տարբերություններ»⁵: Այդ հանգամանքը ընդգծել է նաև Հ.Աճառյանը. «միջին հայերենը մի ընդհանուր լեզու չէր, այլ թե կային Հայաստանում և Հայաստանից դուրս բազմաթիվ միջին հայերեն բարբառներ, որոնցից մեկն էլ կլիկկյան հայերենն էր»⁶: Այդ հանգամանքը նկատի ունենալով՝ լեզվաբանը նշում է, որ միջին հայերենի և աշխարհաբարի ընդհանրությունները «ավելի կշատանան, եթե փոխանակ առնելու գրական աշխարհաբարը, համեմատության առնենք արդի զանազան բարբառները»⁷: Չներկայանալով իբրև միասնական գրական լեզու՝ միջին հայերենը, իր բոլոր տարբերակային ձևերով հանդերձ, այնուամենայնիվ մեկ միասնական լեզու էր, որի ներսում տեղի էին ունենում նաև լեզվական ընդհանուր և միասնական գործընթացներ, և որի բոլոր դրսևորումների հիմքում ընկած էին ընդհանուր և միասնական հատկանիշներ: Մերօրյա բարբառները միջինհայերենյան շրջանից ժառանգել են ինչպես ընդհանուրհայերենյան, այնպես էլ բարբառային, մասնավոր հատկանիշներ: Հասկանալի է, որ բարբառագիտական առումով հետաքրքրություն են ներկայացնում միջին հայերենի շրջանից գրավոր աղբյուրներում ավանդված և՛ լայն տարածում ունեցող, և՛ մասնավոր այն հատկանիշները, որոնք, արդի բարբառային հայերենի այս կամ այն տարբերակին կամ մի շարք տարբերակների բնորոշ լինելով, ընկալվում են իբրև բարբառային հատկանիշներ: Այդպիսիք իրենց արտահայտությունն ունեն նաև Բայազետի բարբառում:

⁴ Տե՛ս Գ.Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 193, Մ.Ղազարյան, *Հայոց լեզվի համառոտ պատմություն*, Ե., 1981, էջ 247:

⁵ Յ.Կարստ, *Գիլիկկյան հայերենի պատմական քերականություն*, Ե., 2002, էջ 14:

⁶ Հ.Աճառյան, *Հայոց լեզվի պատմություն*, մաս 2, Ե., 1951, էջ 253:

⁷ Նույն տեղում, էջ 252:

Կատարելով V դ. բարբառների բազմահատկանիշ դասակարգում՝ Գ. Ջահուկյանը հարավարևելյան միջբարբառի մեջ ընդգրկում է նաև Կոզովլիտի ենթաբարբառը⁸, որի հետագա զարգացումն է ներկայացնում Բայազետի բարբառը: Բարբառային այդ միավորը միջինհայերենյան շրջանում շարունակել է իր զարգացումը, ձեռք բերել թե՛ հնչյունական, թե՛ քերականական բնույթի նոր հատկանիշներ, հարստացրել բառապաշարը նորակազմություններով ու փոխառություններով: Նախ ներկայացնենք Բայազետի բարբառի՝ միջինհայերենյան իրողություններին համընկնող հնչյունական հատկանիշները:

1. Շեշտի հետ կապված հնչյունափոխական իրողությունների ծավալում:

Միջին հայերենի շրջանից սկսած՝ *ա, է, ո* ձայնավորները ևս շեշտի հետ կապված փոփոխությունների են ենթարկվում: Համարվում է, որ միջին հայերենի տարբերակների մի մասում բազմավանկ բառերը վերջնավանկի գլխավոր շեշտից բացի առաջին վանկում ունեցել են նաև երկրորդական շեշտ, իսկ միջնավանկի ձայնավորները թուլացել են և աղվել⁹: Նկատվել է, որ այս երևույթը հատկապես հատուկ է կիլիկյան հայերենին և ընդհանրապես միջին հայերենի արևմտյան տարբերակներին: Առավել տարածում է գտնում *ա-ի* սղուժը, ինչպես՝ *հասկնալ, հավնել, ճանչնալ, զանկտել, դարտկել, տաքնալ* և այլն¹⁰: Պատմական այս հնչյունափոխությունը լայն ընդգրկում ունի Բայազետի բարբառում, ինչպես՝ *խասկընալ, խավնել, խավըրծիլ, ճանչընալ, գանգըտել, դանտըրկել, տանքնալ, մանդնիք, մոթթրան, մմըրկոտ, մպակընել, հանաչի, բանիս, գերընդի, կմոդել, կմրկըտան, խավսար, փատըտել, փառաբընել* և այլն: Միջին հայերենում ավելի քիչ են հանդիպում *ե-ի* և *ո-ի* սղման դեպքերը¹¹, ինչպես՝ *գիտնան,*

⁸ Տե՛ս Գ.Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 185:

⁹ Տե՛ս Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Ա, էջ 73-74:

¹⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 74-75, նաև՝ Զ.Աճառյան, նշվ. աշխ., էջ 241-242:

¹¹ Ըստ Հ.Մուրադյանի՝ այն, որ միջին հայերենում բառական ուղիղ ձևերում բառամիջի *ո* և *է* ձայնավորների սղումը արձանագրվում է սակավ օրինակներով, «բացատրվում է ոչ թե օրինաչափության անհետևողականությամբ, այլ միայն նրանով, որ տվյալ դիրքում, *ա-ի* համեմատությամբ, մյուս ձայնավորները ավելի քիչ հաճախականություն ունեն» (տե՛ս Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Ա, էջ 88):

ուննալ, երսուն, վայլէ¹², պատըռոտ, բորբսե, ժողվել¹³ և այլն: Այդպիսիք համեմատաբար քիչ են նաև Բայազետի բարբառում, ինչպես՝ *գիդալ, յեռուն, խսնյի, անծըրի, անըղնակ, անվլել, թիթըռնեկ, խառճըկաթ (խաչերկաթ), տիրապըտել, հ'առավտուն, դ'օղը'ըղալ, թօռմել, պանտըռտել, ժողվել, օղըղել, տըրըփալ* և այլն:

Միջին հայերենում հիշյալ ձայնավորները սղվում էին նաև շեշտի տեղափոխության հետևանքով, ինչպես՝ *դարպսեն, ի քաղթեն, երկթե, հիւրնդին, ճակտին, բերնին¹⁴* և այլն: Այս կարգի հնչյունափոխությունը (նաև է-ի և օ-ի) օրինաչափական է Բայազետի բարբառում, ինչպես՝ *դանրվըզի, քախկի, երկըթե, խիվընդի, ճանկտի, բ'երնի, հ'անգըճի, անըռնոցօլ, անշարըքօլ, անդնացալ, հ'անծըկել, բ'անբըկել, բ'արեգմասեր, հ'ավըլնալ, հ'իրսօլ (հ'իրես), մեռլի (մեռել), վանկի, ցօրնի (ցօրեն), հ'անըկըտուր (հ'անէշ), գ'օմշի (գ'օմէշ), խէվխըվալ, բ'օլըրել, բ'օրփըսնեկ, կօշկըռնեկ (կօշկոռ), կօտըշխըրել (կօտոշ), մօլըրել, օլըրել, սանբնեկ (սանպոն), կօղվիկ (կօղօվ)* և այլն:

Ինչպես փաստում է Հ. Մուրադյանը՝ բառամիջի ձայնավորների անկման առաջին վկայությունները գալիս են XI դարից¹⁵: Հետագա դարերի գրավոր աղբյուրներում երևույթը ավելի մեծ տարածում է ստանում¹⁶:

¹² Տե՛ս նույն տեղում, էջ 82:

¹³ Տե՛ս նույն տեղում, էջ 87:

¹⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 75: Բերված օրինակները վերաբերում են *ա* ձայնավորին, բայց Հ.Մուրադյանը կարծում է, որ «միջին հայերենի շրջանում բառաթեքման ընթացքում նման հնչյունափոխություն կատարվում էր նաև *ո* և *է* ձայնավորների հետ, երբ նրանք շեշտագրկվում էին» (տե՛ս **Հ.Մուրադյան, Հայոց լեզվի պատմական քերականություն**, հ. 1, *Հնչյունաբանություն*, Ե., էջ 77):

¹⁵ Տե՛ս **Հ.Մուրադյան**, նշվ. աշխ., էջ 78: Հ.Մուրադյանի կարծիքով՝ «բառական ուղիղ ձևերում միջնավանկի ձայնավորի անկման երևույթը հաջորդել է բառաթեքման ժամանակ շեշտագրկությունից կատարվող հնչյունափոխությանը: Այսինքն՝ այստեղ նախնականը բառաթեքման ընթացքում կատարված փոփոխությունն է, որը այնուհետև նմանությամբ տարածվել է նաև բառական ուղիղ ձևերի վրա» (նույն տեղում, էջ 87):

¹⁶ Տե՛ս նույն տեղում:

2. Ձայնավորների՝ մասնավոր բնույթ ունեցող փոփոխություններ:

Միջինհայերենյան գրավոր աղբյուրներում արձանագրվում են ձայնավորների՝ մասնավոր բնույթ ունեցող պատմական փոփոխություններ, որոնք իրենց արտահայտությունն ունեն Բայազետի բարբառում: Նման փոփոխություններից են.

ա > ը – միջ. հյ.՝ *ընկնիլ, ընգողին*, XV-XVI դարերից նաև՝ *ընել, ընել, ըմմէն* և այլն¹⁷. Բայազետի բարբառ (այսուհետև՝ Բ. բրբ.)՝ *հ ըմէն, հ ընցընել*, նաև՝ *խընձըրել* (խանձել), *ճըբըղվել* (ճապաղիլ), *մընձըրել* (մանձրել), *շըլսկ* (շալակ) և այլն.

ու > վ (թվականներում՝ իբրև շաղկապ) – միջ. հյ.՝ *տասնվիհարթն*¹⁸. Բ. բրբ.՝ *տըսվերկու, տըսվիրեք*.

ու > օ – միջ. հյ.՝ *յողարկէ*¹⁹. Բ. բրբ.՝ *հ օղըրկել, օղոռթ* (ուղղորդ).

ու > ը կամ զրո – միջ. հյ.՝ *ըղեղ, յըրկեց, ղըրկէ*²⁰. Բ. բրբ.՝ *հ ըղեղ, հ ըղըրկել, ղըրկել*.

ե > ի – միջ. հյ.՝ *իրեք, իրիկունի*²¹, *ավիրել*. Բ. բրբ.՝ *իրեք, հ իրկուն, հ իրես, սվիրել*.

ե > ա – միջ. հյ.՝ *աղբեր*²². Բ. բրբ.՝ *սվիսպեր*.

ն > ու – միջ. հյ.՝ *Գուհար, մինչուր, ինչուր* (մինչ որ)²³. Բ. բրբ.՝ *Գուվար, չուր, թունդիր, խունջան, կուժղեզ, կուրել* (կորնչել).

ն > ա – միջ. հյ.՝ *Շնահաւոր* (Շնորհաւոր), *կաթաղիկոս, Յաւանէս*²⁴. Բ. բրբ.՝ *շընահավոր*.

ը > ու, ի – միջ. հյ.՝ *պուտուկ* (պտուկ), *ճիճի* (ճճի), *յիստակ*²⁵. Բ. բրբ.՝ *պուտուկ, կունգուխ* (կնգուղ), *ճիճու, հ յիստրկել, քիսիկ* (քսակ):

3. Երկբարբառների մենաբարբառացում.

¹⁷ Տե՛ս՝ *Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության*, հ. Ա, էջ 75-76:

¹⁸ Տե՛ս՝ նույն տեղում, էջ 78:

¹⁹ Տե՛ս՝ նույն տեղում, էջ 80:

²⁰ Տե՛ս՝ նույն տեղում:

²¹ Տե՛ս՝ նույն տեղում, էջ 82:

²² Տե՛ս՝ նույն տեղում:

²³ Տե՛ս՝ նույն տեղում, էջ 85-86:

²⁴ Տե՛ս՝ նույն տեղում, էջ 86:

²⁵ Տե՛ս՝ նույն տեղում, էջ 87-88:

Գրաբարի հետդասական շրջանում սկիզբ է առնում երկբարբառների մենաբարբառացման միտում, որը, հետագա դարերում ծավալվելով բանավոր խոսակցական տարբերակներում, միջինհայերենյան շրջանում վերածվում է կատարված իրողության²⁶: Բայագետի բարբառում այդ իրողությունն արտացոլվում է հետևյալ կերպ.

այ > է²⁷ – միջ. հյ.՝ *ձէն, աղբէր, կէր* (կայր), *զարմանէր* (զարմանայր). Բ. բրբ.՝ *ձէն, ա՛խպէր, կէր, զարմանէր, կէծակ, էծ, գէլ* և այլն:

Դեռևս միջին հայերենում նկատելի է այն երևույթը, որ թեև բառավերջի *այ-ի յ-ն* համր էր, սակայն բաղաձայն մասնիկի հավելումից հետո գործում էր նույն այ > է օրինաչափությունը՝ *քահանայ > քահանէք, տղայ > տղէք, Թումայ > Թումէն*²⁸: Իրողությունը հատուկ է նաև Բայագետի բարբառին, ինչպես՝ *տըղա – տըղէն, տըղէն. մնլըվա-մնլըվէք, բուղա – բուղէն, գ՛աթա – գ՛աթէք, ձ՛ըմա – ձ՛ըմէն, շուշպն – շուշպէն, լուլն – լուլէն, հ՛ալվա – հ՛ալվէն, մնլն – մնլէք* և այլն²⁹:

Ոյ > ու³⁰ – միջ. հյ.՝ *քուր, բուս, թուլ, ընկուզ*. Բ. բրբ.՝ *քուր, քորուր՛ուս, թուլ, լուս, ըզգուշ, բ՛ուն, հ՛ուս*:

²⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 90: Ի դեպ, երկբարբառների մենաբարբառացման մասին պետք է նկատի ունենալ, որ «Կիլիկյան հայերենի մեջ նման փոփոխությունները գրական լեզվի նորմա չեն. դրանք գրավոր լեզվում արձագանքներն են բանավոր-խոսակցական լեզվում կատարված հնչյունափոխական տեղաշարժերի» (տե՛ս նույն տեղում, էջ 91):

²⁷ Համարվում է, որ *այ* երկբարբառի վերածվելը պարզ ձայնավորի սկսվել էր միջին հայերենի նախորդ շրջանում և լայն տարածում ստացել XIV-XV դդ.: Այ > է հնչյունափոխությունը տարածված է հատկապես Վասպուրականում, Սյունիքում, Արարատյան գավառում, Վայոց ձորում և Արևելյան Հայաստանի այլ վայրերում ստեղծված ձեռագրերում ու պատմական հուշարձանների արձանագրություններում (տե՛ս նույն տեղում, էջ 91-92):

²⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 93: Հ.Մուրադյանը ենթադրում է, որ «այստեղ ո՛չ թե բառավերջի ա-ն է հնչյունափոխվել է-ի, այլ նախնական այ-ը: Ուստի այ > է հնչյունափոխությունը ավելի հին երևույթ է, քան բառավերջի բաց վանկում յ-ի անկումը» (նույն տեղում):

²⁹ Ինչպես երևում է, օրինաչափությունը գործում է նաև փոխառյալ բառերում՝ ըստ երևույթին համաբանությամբ:

³⁰ Սյս հնչյունափոխության հիմքը, ըստ Հ.Մուրադյանի, շեշտազրկման հետևանքով հնչյունափոխված ձևի անցումն է բառական ուղիղ ձևին (տե՛ս նույն տեղում, էջ 102):

Իւ > ու³¹ – միջ. հյ.՝ *ձուլթ, հարուր, արուն, ձուն*. Բ. բրբ.՝ *ձ՛նլթ, հ՛արուր / հ՛արիր, արուն, ձ՛ուն, ք՛արութուն, արուր, խուր (հիր), ձուլ*, *շուլ*:

Եւ > ե – միջ. հյ.՝ *գեղ, եղ*. Բ. բրբ.՝ *գ՛եղ, յեղ*³²:

4. Բառասկզբում նաև մաքուր ձայնեղ հպականների և հպաշփականների գործառություն:

Բայազետի բարբառի հինհայերենյան բառաշերտում բառասկզբում ձայնեղները միշտ շնչեղ են, ինչպես՝ *ք՛ան, ք՛ուսել, գ՛երան, գ՛ըթել, դ՛աթար, դ՛եղին, ձ՛ի, ձ՛ուն, ջ՛առթել, ջ՛ուր*: Շնչեղ ձայնեղները պահպանվում են նաև միջինհայերենյան կազմություններում, ինչպես՝ *ք՛անարար, ք՛ընակըռել, գ՛ովասանք, գ՛եղացի, դ՛արուփոս, դ՛ուրել, ձ՛ըկտել, ձ՛իլավոր, ջ՛ընջըխել, ջ՛ըրել*: Հավանաբար ավելի վաղ շրջանում կատարված փոխառություններ են շնչեղ ձայնեղներով սկսվող *ք՛իճ (թրք.), դ՛ախ (պրսկ.), ք՛ըրինձ (պել.)* բառերը: Մինչդեռ միջինհայերենյան շրջանի փոխառությունների սկզբում բարբառս այլևս չունի շնչեղ ձայնեղներ. դրանցում գործառում են մաքուր ձայնեղներ, ինչպես՝ *ք՛սրէմք՛սր, բէգումսն, գ՛ւզգ՛ւր, դ՛սն, ջ՛սնու, ջրվալ* (պրսկ.), *ք՛սրիշել, բիգ, դամաղ, դօշ (թրք.), դ՛սվի, ջաֆա, ջրվուղ, ջուլ* (արաբ.) և այլն: Այսպես միջինհայերենյան շրջանից սկսած՝ Բայազետի բարբառը փոխառյալ բառերի սկզբում, ի տարբերություն հինհայերենյան բառաշերտի բառերի և դրանցով ձևավորված նոր կազմությունների, ունի մաքուր ձայնեղ հպականներ և հպաշփականներ:

5. Ձայնեղ *հ՛*-ի հավելում ձայնավորով սկսվող բառերի սկզբում:

Այս հավելումը հատուկ է Արարատյան, Կարնո, Մշո, Բայազետի և հարակից այլ շրջանների բարբառներին³³: Ըստ Հ. Սուրադյանի՝ հավելման գործընթացը սկսվել է X-XI դարերից ոչ շուտ և այնուհետև հարատևել է մինչև մեր օրերը³⁴: Բայազետի բարբառում *հ՛*-ի հավելում հանդիպում է բոլոր ձայնավորներից առաջ էլ, ինչպես՝ *հ՛ափեղա*,

³¹ Միջին հայերենում հանդիպում է այս երկբարբառի երկու կարգի փոփոխություն՝ *իւ > ու, իւ > ի*. տարբերակների մեծ մասին բնորոշ է առաջին փոփոխությունը (տե՛ս նույն տեղում, էջ 105):

³² Միջին հայերենում ձայնավորների և երկբարբառների փոփոխությունների մասին տե՛ս նաև **Հ.Աճառյան**, նշվ. աշխ., էջ 241-242:

³³ Տե՛ս **Հ.Սուրադյան**, նշվ. աշխ., էջ 315:

³⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 318:

հ'անգաճ, հ'ախպուր, հ'ըմէն, հ'էքուց, հ'էսօր, հ'անքան (անագան), հ'ընգընէլ, հ'ունթ (անութ), հ'ընցընէլ, հ'յնչկ (այք), հ'առէչ, հ'առավոտ, հ'առիք, հ'առու, հ'ատըկէլ (ատակէլ), հ'արափացի (արաբացի), հ'էժան, հ'առճակ, հ'առտ, հ'ավէլ, հ'ափ, հ'ըլնէլ, հ'էթթիս, հ'էրէկ, հ'ի՝րկուն, հ'ի՝րես, հ'էրկէն, հ'ընգէր, հ'իմանայ, հ'ի՝նքը, հ'ի՝շնէլ, հ'ի՝րար, հ'օղըրկէլ, հ'ըղէղ, հ'ուսում, հ'ուստ և այլն:

6. Հնչյունափոխական մասնավոր երևույթներ:

Բայագետի բարբառում արձանագրվող մասնավոր հնչյունափոխական շատ իրողություններ կատարված փաստ էին դեռևս միջին հայերենում: Ներկայացնենք այդ իրողությունների մի քանի օրինակներ ըստ հնչյունափոխության տեսակների:

Հնչյունի անկում.

ր, ն, հ, դ – միջ. հյ. ջաղաց, աժէլ, եփ, շնահաւոր, դուս, ժաժէլ, ճամփա, մտէ, Արտաւագ³⁵. Բ. բրբ. ջ'աղաչ, յնժէլ, յեփ, շընախավոր, դ'ուս, ժնժէլ, ճնմփա, մըտում (մտնում), մտտավագ (Արտավագ).

Հնչյունի հավելում.

ն, դ – միջ. հյ. կանանչ, ճանանչէլ, կարմունջ, մանտր, ծանդր, թոնտրէն³⁶, Բ. բրբ. կմնանչ, ճմնչընայ, կմրմունջ, մմնդըր, ծմնդըր, թունդիր.

Առնմանում.

միջ. հյ. թուխտ, նաֆթ, պաքսեալ, ժաժէլ, ջաղաջ, ցեթէց (ցայտել)³⁷, Բ. բրբ. թուխտ, ննֆտ, պնքսել, ժնժէլ, ջ աղաչ, ցեթէլ.

Դրափոխություն.

միջ. հյ. դարտկէլ, կարմունջ, վլանայ, բալնիք³⁸, Բ. բրբ. դ'առտըկէլ, կմրմունջ, վըլալ, բ'ալնիս:

Բերված փաստերը անշուշտ վկայում են միջին հայերենի շրջանում բանավոր խոսքում կատարված հնչյունաբանական էական զարգացումների մասին: Եվ իրավացի է Ս. Ղազարյանը, երբ գրում է. «Հայոց լեզուն իր զարգացման ոչ մի շրջանում հնչյունափոխական կանոնների այնպիսի բազմազանություններ, ինչպիսին միջին հայերեն

³⁵ Տե՛ս նաև *Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության*, հ. Ա, էջ 144-150:

³⁶ Տե՛ս նաև *նույն տեղում*, էջ 154-155:

³⁷ Տե՛ս նաև *նույն տեղում*, էջ 156-158:

³⁸ Տե՛ս նաև *նույն տեղում*, էջ 161-163:

նում է, չի ունեցել: ... Հնչյունափոխական այդ օրինաչափությունների մի մասը կապված էր շեշտի հետ և ընդհանրապես հատուկ է հայերենին՝ իր զարգացման բոլոր շրջաններում, իսկ մնացած ձևերը շեշտի փոփոխմամբ չի կարելի բացատրել: Նրանք ավելի շատ բարբառային առանձնահատկություններ են, որոնք ներթափանցել էին միջին հայերենի հնչյունական համակարգի մեջ և զգալի չափով ազդել նրա դրսևորումների վրա»³⁹:

Միջինհայերենյան գրավոր աղբյուրները երևան են բերում զգալի տեղաշարժեր նաև բառապաշարում, որոնք հաճախ պայմանավորված են բանավոր խոսքից կատարվող ներթափանցումներով⁴⁰: Իբրև դրա արտահայտություն՝ Բայազետի բարբառի բառապաշարում զգալի տեղ է զբաղեցնում միջինհայերենյան շերտը: Այն իր մեջ ներառում է ինչպես բնիկ ու բարբառային բառեր, նորակազմություններ, այնպես էլ փոխառյալ բառեր: Մեր մոտավոր հաշվարկներով՝ ներկայումս Բայազետի բարբառում գործառում են միջին հայերենով ավանդված առնվազն 1100 բառեր⁴¹: Սրանցից բնիկ են հնդեվրոպական ծագում ունեցող այն բառերը, որոնք, տարբեր պատճառներով հին գրականության մեջ ավանդված չլինելով, հայտնի են դարձել միջին գրական հայերենի միջոցով⁴²: Նման բառերից են, օրինակ՝ *մրժ* (միջ. հյ.՝ *մշուշ*), *բօվել*, *լըխկել* «փափկել, հալվել» (միջ. հյ.՝ *լքիլ*, *լքնուլ*, որոնք, ըստ Հ. Աճառյանի, կապվում են *լկիլ* «կակղել, թուլանալ, հալվել» բային), *թառ*, *չիր*, *մայթ* (դռշար), *մըքրլկել* «ամպել» /Բայազետի բարբառում գործառում է նաև *մըքրռել* «մռայվել. ամպել» բառը/ (միջ. հյ.՝ *մզլիլ* «նեխել. բորբոսնել. ամպել»), *դախծ* (*դաղձ* «վայրի անանուխ»), *մըլիկ* «մրջուն» (միջ. հյ.՝ *մլուկ* «փայտոջիլ»), *փընթի*, *լակ* և այլն⁴³:

³⁹ Մ. Ղազարյան, նշվ. աշխ., էջ 221:

⁴⁰ Ինչպես նշում է Մ. Ղազարյանը, «միջին հայերենի բառային կազմը գրաբարի համեմատությամբ ավելի հարուստ էր ու բազմազան և ուներ զարգանալու, իր միջոցները ընդլայնելու անսահման հնարավորություններ» (տույն տեղում, էջ 277):

⁴¹ Հաշվարկը կատարել ենք Ռ. Ղազարյանի և Հ. Ավետիսյանի «Միջին հայերենի բառարան» (հ. 1, Ե., 1987, հ. 2, Ե., 1992) աշխատության ընձեռած բառամթերքի շրջանակներում:

⁴² Տե՛ս *Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության*, հ. Ա, էջ 187:

⁴³ Տե՛ս նույն տեղում, էջ 187-191:

Միջին հայերենի շրջանում բարբառներից գրական լեզու են ներթափանցել բազմաթիվ բառեր, որոնց ծագումը դեռևս (կամ վերջնականապես) ճշտված չէ: Այդ բառերի մի մասը⁴⁴ գործառու է և Բայազետի բարբառում, ինչպես *պմնդ, ժուկ, մգոա, վիզ, թուշ, ճիվ, ճուռ, գ՛ոզ, բ՛ըշտել*, քարով քարալեղ մնել (միջ. հյ.՝ *լեխել* «սաստիկ ծեծել»), *ճոճ* ու *կելքնթ* (միջ. հյ.՝ *ճոջ* «բամբասանք»), *շիվար, ձ՛ըցում, պուլիկ, կմնթ, մմմշել, տըսկել* (միջ. հյ.՝ *տզկիլ* «թացանալ»), *ճիրել, շըտուկ, բ՛ետ, ջ՛ոշ, խախանդ* (միջ. հյ.՝ *հարհանդ*), *կուտ, յեղա* (միջ. հյ.՝ *եղի*), *զօխ, պուպու* (միջ. հյ.՝ *բուբու*), *ճըմուռ, սըբաս* (միջ. հյ.՝ *սպաս*), *փօխինդ, ժուռ, շոռ* և այլն:

Բայազետի բարբառում զգալի քանակություն են կազմում միջինհայերենյան շրջանում արաբերենից, պարսկերենից և թուրքերենից փոխառված բառերը: Այդ շրջանի արաբական փոխառություններից են՝ *մլէնի, մմանաթ, սյիբ, դսվի, զաբուն, լմզմթ, վարսա* «պալարախտ» (Բ.բրբ. «ցավ, հիվանդություն»), *բըղլամ, ժըղլել, խալխս* (մաքուր), *խըլըսել* (սպառվել), *մջէբ, թմրզել, թորզել, միրաթ, թաբութ, կմբուլ* (համաձայն), *խըլդ, կսյը, խալվաթ, խսյսսյթ, կօլօտ, հսզրր, հալ, հսյվսն, խարսա, հավալա, կսլսթ, ջըրէզ, քուֆըռ սսբսբ, հուբլ* և այլն: Պարսկերենից կատարված փոխառություններ են հետևյալ բառերը՝ *մէյմուն, փաշա, գմգ, թմրսզու, բալըշ, փմռդս, քուֆտս, գուսսն, զիյան, յադ, որժբսբ, կօտոշ, թուռշի, ջէրգս, գ՛ախ, չափառ, դսստս, զաբուն, զըլֆ, թսսս, թըրաշել, լախ, խըշտ, խըշկել, չսրէք, ջ՛օկ* և այլն: Թուրքերեն փոխառություններից են՝ *թօփ, ժընջիլ, մնջախ, թըվանք, փարա, բէ, բ՛իճ, թօզ, յօրդան, ջուլ, չիթ, մնըլ, յսնսկ, չսյիր, տմնդիլ, յարա, յախու, բսրիշել, կութի, ճիմ, ճոթ, քօք* և այլն:

Նչյունական ու բառապաշարային նշված երևույթների հետ Բայազետի բարբառում իրենց արտացոլումն ունեն նաև միջինհայերենյան քերականական մի շարք իրողություններ: Ինչ խոսք, միջինհայերենյան քերականական համակարգը, էականորեն տարբերվելով գրաբարյանից, պարունակում էր լեզվի զարգացման այն միտումները, որոնք հետագայում հանգեցնելու էին աշխարհաբարյան

⁴⁴ Նկատի չունենք գրական աշխարհաբարում գործածվող բառերը:

համակարգի ձևավորմանը: Չանդրադառնալով միջին հայերենի համակարգի ընդհանուր հայերենյան իրողություններին՝ դիտարկենք այդ համակարգի այն հատկանիշները, որոնք բնութագրական են Բայազետի բարբառի համար: Այդ կարգի հատկանիշներից են հետևյալները.

1. Ա խոնարհման ածանցավոր բայերի *ան* ածանցի ձայնավորի անկում.

միջ. հյ.՝ *շատնալ, խոշորնալ, մեծնալ*⁴⁵, Բ. բրբ.՝ *շմտընալ, ջօջընալ, խասկընալ* և այլն.

2. -եր վերջավորությամբ վաղակատար դերբայի առկայություն⁴⁶.

միջ. հյ.՝ *տեսեր, շրջեր, իջեր, մնացեր, հաներ*, Բ. բրբ.՝ *տեսեր, հ իջեր, մնցեր, խաներ*.

3. Էական բայի եզակի երրորդ դեմքում *ա* ձևի դրսևորում:

Առայժմ հայտնի առաջին վկայությունը վերաբերում է 13-րդ դարին՝ «այս այ հանգիստ Ովանիսի»⁴⁷: Բայազետի բարբառում՝ *էթում ա, գ ալում ա*:

4. Մի շարք դեպքերում անցյալի նախկին կամ հետագա ցոյական հիմքի դիմաց՝ արմատական հիմք.

միջ. հյ.՝ *չասի, տուի, տուիր, տուաւ, տուին*⁴⁸, ավելի ուշ նաև՝ *արիր, ասիր, ասաւ, ասին, կանչէք, ծիծաղէք, իսկէք, պահէք*⁴⁹. Բ. բրբ.՝ *մսի, մսիր, մսավ, մսինք, մսիք, մսին, տըվի, տըվիր, տըվեց*,

⁴⁵ Տե՛ս *Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության*, հ. Ա., էջ 303: Այս անկմանն անդրադարձել ենք նաև հնչյունափոխությունների մասին խոսելիս:

⁴⁶ Ընդհանրապես միջին հայերենում հեղինակները խառը օգտագործում են վաղակատար դերբայի *էլ, էր* վերջավորություններով ձևեր, և դրանք դեռևս չեն տարբերակվում ըստ բարբառների Ում (ել) և Կը (եր) ճյուղերի (տե՛ս նույն տեղում, էջ 374):

⁴⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 83:

⁴⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 332, 351:

⁴⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 365, 387, 390: Նկատվել է, որ անցյալյան հիմքից կազմվող հոգնակի հրամայականի ձևերը առավելապես բնորոշ են Ում ճյուղի բարբառների ներկայացուցիչ հեղինակներին (տե՛ս նույն տեղում, էջ 390):

տըվինք, տըվիք, տըվին, ւնրի, ւնրիր, ւնրավ, ւնրինք, ւնրիք, ւնրին, կւննչէք, խըմէք, պւնիւէք:

5. Սահմանափակ տարածում ունեցող հոգնակերտների դրսևորում.

միջ. հյ.՝ *կնանիք* (անիք), *գեղրանք* (րանք), *իշվանք* (վանք)⁵⁰, Բ. բրբ.՝ *կընանիք, գ՛եղրանք, տեղրանք, դ՛իղրանք, իշվանք, գ՛իլվանք, տիրվանք*⁵¹ և այլն:

6. Միջինհայերենյան Ու հոլովման արտացոլում.

միջ. հյ.՝ *ահու, արևու, գլխու, պասպու, լուսու, ծախու, ճամփու, տիրու*⁵². Բայագետի բարբառում սրանք դրսևորվում են իբրև քարացած ձևեր (*հ՛ախու* /վախենալով/, *հ՛իր ւնրելու* /իր կարծիքով/, *հ՛իրա գ՛ըլխու* /ինքնագլուխ/, *պւնպու տուն, լուսու դ՛ւմ* /լուսադեմին/, *ծնխու* /վաճառելով/, *ճնմփու դ՛ընել* /ճանապարհել/, *տիրու* /գործածվում է հայեղանքներում/), քանի որ այստեղ այդ բառերը Ու հոլովման չեն ենթարկվում:

7. Անձնական դերանունների թեք ձևերում *ի, իկ* մասնիկների դրսևորում.

միջ. հյ.՝ *ինձի, ինձիկ, մեզի, մեզիկ, քեզի, քեզիկ*⁵³, Բ. բրբ.՝ *ընձի, ընձիկ, մեզի, մեզիկ, քեզի, քեզիկ, ձ՛եզի, ձ՛եզիկ:*

8. Անձնական դերանունների կրճատ ձևերի դրսևորում.

միջ. հյ.՝ *քե*⁵⁴, Բ. բրբ.՝ *քե, մե, ձ՛ե:*

Ինչ խոսք, բերված բարբառային հասկանիշներով Բայագետի բարբառում միջինհայերենյան իրողությունների դրսևորումները չեն սահմանափակվում, որովհետև, հասկանալի է, այդ շրջանի գրավոր աղբյուրներում չէին կարող արտահայտվել ժամանակի բանավոր խոսքի, բարբառների (բնականաբար՝ նաև Բայագետի բարբառին վերաբերող) բոլոր իրողությունները: Ներկայիս բարբառներում միջին

⁵⁰ Տե՛ս *Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության*, հ. Բ, Ե., 1975, էջ 60:

⁵¹ Տե՛ս նաև **Վ. Կատվայան**, Գոյականի հոգնակի թվի կազմությունը Բայագետի բարբառում. – *Լեզու և լեզվաբանություն*, 2007, 1-2, էջ 3-13:

⁵² Տե՛ս *Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության*, հ. Բ, էջ 22-25:

⁵³ Տե՛ս նույն տեղում, էջ 92:

⁵⁴ Տե՛ս նույն տեղում:

հայերենից եկող բարբառային այլ հատկանիշներ թերևս կարելի է վեր հանել ներքին համեմատությունների, լեզվի պատմական զարգացման բոլոր փուլերի սովյալների համադրման միջոցով: Ինչևէ, Բայազետի բարբառի համար բնութագրական հնչյունական, բառապաշարային և քերականական բերված փաստերը մեզ թույլ են տալիս եզրակացնել, որ Բայազետի բարբառի ներկա վիճակը շարունակությունն է միջին հայերենի շրջանում ևս գործառած բարբառային մի համակարգի, որի ներսում յուրօրինակ կերպով զուգորդված են եղել ինչպես ընդհանուրհայերենյան, այնպես էլ բերված ու գրավոր աղբյուրներում չվկայված այլ հնչյունաքերականական ու բառապաշարային հատկանիշներ:

Катвалян Виктор – Среднеармянские реалии в Баязетском диалекте. – Проистекающие из среднеармянского периода и характерные для Баязетского диалекта фонетические, лексические и грамматические признаки свидетельствуют о том, что нынешнее состояние Баязетского диалекта является продолжением диалектной системы, функционировавшей в период среднеармянского языка, внутри которой своеобразно сочетались признаки как общеармянские, так и свойственные диалектному армянскому языку.

Katvalyan Viktor – Middle Armenian Realities in the Dialect of Bayazet. – The phonetic, lexical and grammatical features, characteristic to the dialect of Bayazet and derived from the Middle Armenian period, certify the fact that the present level of the dialect of Bayazet comes from a dialectical system which was used in the Middle Armenian period and in which features typical to both common Armenian and Armenian dialects co-existed.

Հովհաննիսյան Լավրենտի (Հայաստան,
ԳԱԱ Հ.Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ)

**ՂԱՐԱԲԱՂԻ ԲԱՐԲԱՌՈՒՄ ՄԻՋԻՆ ԻՐԱՆԱԿԱՆ ԼԵՁՈՒՆԵՐԻՑ
ԿԱՏԱՐՎԱԾ ՄԻ ՔԱՆԻ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՁ**

Պատմական հանգամանքների բերումով հայերենի բարբառները զգալի ազդեցություն են կրել հարևան լեզուներից, այդ թվում՝ պարսկերենից: Վերջինից կրած ազդեցությունը ակնառու է հատկապես արևելյան խմբակցության բարբառներում:

Ղարաբաղի բարբառի իրանական փոխառությունները հիմնականում պարսկերենից են: Մակայն գործառում են մի շարք բառեր, որոնք ամենայն հավանականությամբ միջին իրանական լեզուներից կատարված փոխառություններ են՝ փաստեր բարբառի և իրանական լեզուների ավելի վաղ առնչությունների, նաև իրանական լեզուների բառապաշարի քննության առումով, քանի որ այդ լեզուների բառապաշարի շատ միավորներ գրավոր ավանդված չեն¹:

Միջին իրանական լեզուներից կատարված փոխառությունները տարբերակելիս առաջնորդվել ենք հետևյալ սկզբունքներով.

1. Հաշվի ենք առել միջին իրանական լեզուների և պարսկերենի հնչյունական-հնչյունափոխական առանձնահատկությունները. օրինակ՝ միջ. իր. *ak-* վերջավորությունը նոր պարսկերենում *e-*ի փոխվելը (երբեմն արտասանվում է նաև *a*), պարզ խուլ բաղաձայնների շնչեղ խուլերի վերածվելը և այլն:

2. Հաշվի ենք առել նաև Ղարաբաղի բարբառի որոշ հնչյունական առանձնահատկություններ, հատկապես այն, որ Ղարաբաղի բարբառում *g, q, ŋ, ɖ, ʒ* բաղաձայնները վերածվում են *u, y, ɯ, ɔ* խուլերի: «Այս օրենքին ենթարկվում են միայն հայերեն բառերը, նրանց մեջ առնելով նաև ասորերենից, հունարենից և պարսկերենից առնված փոխառությունները (հին փոխառություններ), հմմտ. ջուխտ>*ճօխտ*, բրինձ>*պրինձ* ..., իսկ թուրքերենից փոխառյալ բառերը մնում են ան-

¹ Ըստ իրանական լեզուների շրջանաբաժանման՝ միջին իրանական լեզուների գործառության ժամանակաշրջանը մ.թ.ա. IV-III – մ.թ. VIII-IX դարերն են: Իրանական լեզուների շրջանաբաժանման հիմքում ընկած են ավելի շատ պատմամշակութային, քան լեզվական իրողություններ:

փոփոխ, ինչպես *բւձգ* «իշխան», *բօլ* «բավական»...: Ձայնափոխության այս զանազանությունը ցույց է տալիս, «որ օրենքը գործել է թուրքերենի Հայաստան գալուց առաջ և հետևաբար Ղարաբաղի բարբառի ծագումը ընկնում է նույնպես ԺԲ դարուն»²:

Այս սկզբունքները հիմք ընդունելով՝ հին փոխառություններ կարելի է համարել ներքոհիշյալ բառերը.

Լօլակ – «օրորոցի մեջ դրվող հաստուկ ձևով խողովակ...»:

Պարսկերեն *lūla* «խողովակ» բառի առկայությանը ենթադրել է տալիս միջին իրան. *lūlak* | *lolak* ձևը, որը, սակայն, վկայված չէ: Բարբառում *լուլա*-ն բազմիմաստ է՝ թերևս հարևան այլ լեզվի ազդեցությամբ:

Թալակ – «թակարդ», որոշ խոսվածքներում՝ *թւլակ*: Պարսկերեն *թւլակ*-ի դիմաց բարբառային ձևը հուշում է, որ այն կարող է լինել ավելի վաղ շրջանում կատարված փոխառություն: *Թալակ*-ի հին փոխառություն լինելու կողմնակի փաստարկ կարելի է համարել և այն, որ բառը հանդես է գալիս մի շարք կայուն կապակցություններում՝ փոխաբերական իմաստներով.

– *Թալակ ըղնել* – 1. Հանցագործության մեջ բռնվել: 2. Փորձանքի մեջ ընկնել:

– *Թալակ ընգած աղվես* – Խեղճացած՝ անելանելի վիճակի մեջ ընկած խորամանկ մարդ:

– *Թալակ սարել* – Դավ նյութել:

– *Թալակ քրցիլ* – 1. Հանցագործության մեջ բռնել: 2. Փորձանքի մեջ գցել:

– *Օխոր թըլակա պրրծած* – Խորամանկ, ճարպիկ³:

Կրոճ, գրաբարում գոհճ, պրս. *girj* «1. շաքարի, քարի, աղի ամբողջական կտոր, 2. հողակոշտ, գուղձ, 2. փխբ.՝ ամրակազմ» (ՂԲԲ, 365): Բարբառային բառերի *կ*-ն և *ճ*-ն հուշում են, որ փոխառությունը նոր պարսկերենից չէ: Արմատական բառարանը (այսուհետև՝ Արմ.) և Նոր Հայկազեան բառարանը (այսուհետև՝ ՆՀԲ) նշում են միայն մեկ

² **Հ.Աճառյան**, *Հայոց լեզվի պատմություն*, մաս 2, Ե., 1951, էջ 380:

³ Օրինակները տե՛ս **Ա.Սարգսյան**, *Ղարաբաղի բարբառի բառարան* (այսուհետև՝ ՂԲԲ), Ե., 2013, էջ 184:

օրինակ՝ վկայված XII դարից: *Գոհձ*-ը Արմ-ը մեկնում է «մեծ կտոր աղ՝ որ դեռ լեսուած չէ»:

Բառավերջի *ւյ*-ի (նոր պարսկերենում՝ d) պատճառով հին փոխառություն պետք է համարել *ասպ(ը)*՝ «1. ջուլիակի հաստոցի շարժուն շրջանակը՝ սանրաձև թելերով, որոնց արանքով անցնում են հենքի թելերը, 2. կտավի գլխի հենքի թելերը» (ՂԲԲ, 69): Ջուլիակագործական տերմին է և *ասպագան*-ը⁴:

Քանի որ խոսք եղավ ջուլիակագործությանը վերաբերող բառերի մասին, նշենք, որ բառարաններում *ջուլիակ*-ի եզակի վկայությունը միջինհայերենյան շրջանից է: ՆՀԲ-ն բառը համարում է «ոսմկական», Հ.Աճառյանը՝ փոխառություն նոր պարսկերեն յսlahāk «ոստայնակ» ձևից և չի ընդունում բառի հին փոխառություն լինելու Հյուբշմանի կարծիքը՝ գրելով՝ «խաբուելով հայերեն *-ակ* վերջաւորութիւնից դնում է (Հյուբշմանը – Լ, Հ) հին իրանական փոխառութեանց մէջ...անշուշտ ենթադրելով պիւ յօlahāk ձևը (տե՛ս ՀԱԲ, *Ջուլիակ* բառահոդվածը):

Ընդունելի ենք համարում Հյուբշմանի կարծիքը, որովհետև եթե բառը լիներ նոր փոխառություն, ապա բարբառում կունենար *ջուլիակ* ձևը, և ոչ թե *ճուլիակ*:

Ղարաբաղի բարբառում այժմ այդ բառն այնքան էլ գործածական չէ: Այն որոշ գյուղերում նաև տոհմանուն է (հիմքում ընկած է այդ արհեստով զբաղվելու հանգամանքը):

Ի դեպ, տոհմանուններում ավելի լավ են պահպանվել բարբառային հին ձևերը: Ասում են՝ *Դավիթ*, բայց *Տիվիթանց* (տօնը, թաղը), *Գաբրիելյան*, բայց *Կափունց*, *Գրիգորյան*, *Գրիքոր*, բայց *Կյուքունց* և այլն:

Հրրիշտրանկ – բառարանում նշված է երկու իմաստ. «1. գերբնական արարած՝ Աստծու պատգամաբերը, հոգեառ հրեշտակ: 2. փիւք. շատ տգեղ՝ այլանդակ անձ» (ՂԲԲ, էջ 434): Ավելի հաճախական է վերջինը:

Բառահոդվածի ծագումնաբանական նշումների մասում բառը կապվում է գրաբարյան *հրեշտակ*-ի հետ:

Արդի հայերենում *հրեշտակ*-ը, ի տարբերություն բարբառի, միայն դրական հատկանիշ է արտահայտում. ըստ Է. Աղայանի

⁴ *Ասպագան* բառը վկայված է Տիրայր Տեր-Հովհաննիսյանի անտիպ բառարանում:

բառարանի՝ «դրական հատկությունների՝ բարեմասնությունների մարմնավորումը շատ գեղեցիկ, չքնաղ էակ (սովորաբար կանաց և երեխաների մասին): Մաքրության՝ անմեղության՝ անարատության մարմնացում»⁵:

Արմատական բառարանում նույնպես բառի որևէ բացասական հատկանիշ չի նշվում: Բառարանային այս համեմատությունները որոշակի հիմք են տալիս կասկածելու բրբ. *հրրիշտրակ*-ի ծագումնաբանական կապը գրբ. *հրեշտակ*-ի հետ: Թեև տարբեր լեզուներում առկա են իմաստային բնեռացումներ, հմմտ. հուն. *τερασ* «հրաշալի նշան» նաև՝ «ճիվաղ, հրեշ», ռուս. *ангел*-ը (*ангел* ձևով) ունի նաև «չար ոգի»⁶ իմաստը:

Գրաբարից ավանդված *հրեշտակ*-ը իրանական փոխառություն է՝ պահելով միջին իրանական ձևը (նկատի ունենք *ակ* վերջավորությունը՝ ի տարբերություն նոր պարսկերենի *ֆերեշթե* կամ *ֆերեշթա* ձևի): Բարբառային *հրրիշտրակ*-ը պետք է համարել միջին իրանական լեզուներից կատարված փոխառություն:

Ղարաբաղի բարբառում *հրրիշտրակ*-ի բացասական երանգով գործածությունը հիմք է տալիս կարծելու, որ այն *հրեշ*-ի բաղադրությամբ կազմված ձև է, մանավանդ որ առկա է *է*-ի հնչյունափոխությունը:

Գ. Ջահուկյանը *հրեշ*-ը համարում է իրանական փոխառության *հրաշ*- արմատից⁷:

Հրաշք-ը հետհինգերորդարյան վկայություններում ունի նաև «հրեշ, այլանդակ բան, դիվական արվեստ» իմաստները, այնպես, ինչպես վերը նշված հունարեն բառը:

Ինչ վերաբերում է *հրրիշտրակ*-ի երկրորդ բաղադրիչի՝ *տրակ*-ի *ր*-ի առկայությունը, ապա այդ երևույթը բնորոշ է ժողովրդախոսակցական լեզվին, բարբառներին, հմմտ. *նապաստակ*-ի նաև՝ *լաբրստրագ*, *լափրստրակ*, *ըլբաստրակ* ձևերը:

Տրրիճակ – «Իրար կպած երկու տների միջնապատի վրա բացված փոքրիկ պատուհան»: (Հիրըվաները տրրիճակավը ուրուր տեւ-

⁵ Է. Աղայան, *Արդի հայերենի բացատրական բառարան*, հ. 1, Ե., 1976, էջ 907:

⁶ Տե՛ս Բ.И.Даль, *Толковый словарь живого великорусского языка*, М., 2008, էջ 4, 16:

⁷ Տե՛ս Գ. Ջահուկյան, *Հայերեն ստուգաբանական բառարան*, Ե., 2010, էջ 471:

տէն ին տամ) (ՂԲԲ, 733): Պրս. *դւրիչէ* «դոնակ, օդանցք» բառը հաստատում է բարբառային բառի իրանական ծագումը (բառի արմատն է *dar* «դուռ»), իսկ բարբառային ձևի հնչյունակազմն էլ անվերապահորեն հաստատում է վաղ շրջանից փոխառյալ լինելը՝ (*դ*-ի փոխարեն *տ*, *չ*-ի փոխարեն *ճ* և *ակ* վերջավորությունը):

Պարիճակ ձևի գրավոր վկայությունը միջինհայերենյան շրջանից է, որն իր նախնական իմաստը չունի և նշանակում է «ձուլելու կաղապար»:

Տէնգ – «բրինձ մաքրելու գործիք» (Արմ.): Բարբառային այլ ձևեր են՝ *դանգ*, *դինգ*, *տինգ* (ՂԲԲ, 116): Աճառյանը համարում է իրանական փոխառության՝ նշելով պրս. *dink* զուգահեռը՝ հավելելով, որ «բարբառային *տ* նախաձևով և ոչ *դ*, ինչպես նաև բառի ընդարձակ տարածությունը, ցոյց են տալիս, որ փոխառությունը կարծուածից ավելի հին է» (տե՛ս Արմ, *Դինգ* բառահոդվածը): Ըստ Աճառյանի՝ բառը գործածական է Զեյթունի, Համշենի, Տիգրանակերտի, Մշո բարբառներում:

Տօշ – «Մարդու և կենդանիների մարմնի առջևի պարանոցից ցած ընկած մասը՝ կուրծք, լանջ» (ՂԲԲ, 744): Բառահոդվածում նշված են նաև այլ իմաստներ, որպես ծագումնաբանական զուգահեռ է դիտվում պրս. *daš* թրք. *dōš*:

Բառի իրանական ծագումը կասկած չի հարուցում. հմմտ. Միջին պարսկերեն *dōš*, պրս. *daš* «ուս», քրդերեն *doš* «կուրծք» (իր. **dauš* «ուս, ձեռքի վերին մաս», որը ծագում է *h.*-*ե.* **dous* «ձեռք, դաստակ»-ից):

Իրան. *d*-ի դիմաց բարբառում *տ*-ն վկայում է, որ բառը փոխառվել է վաղ շրջանում: Բարբառում գործածական *դուշման*-ը նույնպես իրանական փոխառություն է. միջ. պրս. *dušnam*, պրս. *dušman*, որը սակայն չենք կարող միջին իրանական փոխառություն համարել:

Նշանց տալ «ցույց տալ» (հրդէն նրհաշ տօ, թող քինա): Տարբերակներն են *նրհաշ*, *նրհանչ*, *նրշանս* (*տալ*): Նախնական ձևը պետք է համարել *նշանս տալ*-ը: Թե՛ն ՆՇԲ-ում այն արձանագրված չէ, բայց այդ բայական հարադրությունը վկայված է V դ. գրաբարում՝ Եզնիկ Կողբացու նշանավոր գրքում. «Եւ զաճելն և նուազել լուսնի՝ իբրև ընդ պատենիւք իմն մտանել և ելանել ասեն իմաստունք: Եւ նշանս անտի տան, զի է երբէք՝ յորժամ յաճմունսն իցէ և լնոյն, շուրջ զանօթովն ծանրանայ...» (Եզն., 176) (ընդգծումն մերն է – Լ.Հ.): Ընդգծված հատվածի

աշխարհաբար թարգմանությունն է. «Եւ (իբրև) փաստարկ *մատնացույց են անում* այն...»⁸:

Նշան բառը իրանական փոխառություն է: Պարսկերենում նույնպես գործածական է այդ հարադրությունը *nišan dādan* «ցույց տալ»:

Հավանաբար միջին իրանական լեզուներում էլ այն գործածական է եղել: Ուրեմն՝ հայերենում և պարսկերենում նույնաձև և նույնիմաստ բառակապակցությունը կարելի է համարել կամ որպես լեզվամտածողական ընդհանրություն, կամ էլ, նկատի առնելով *նշան*-ի իրանական ծագումը, *նշանս տալ*-ը դիտել որպես պատճենում:

Ամփոփենք: Հայ բարբառների մանրագնին քննությամբ կարելի է բացահայտել հին փոխառությունների մի զգալի շերտ, որը կարևորվում է հայոց լեզվի պատմության, պատմական բարբառագիտության որոշ հարցերի լուսաբանման առումով:

Իրանական շերտի բացահայտումը, անշուշտ, կնպաստի նաև միջին իրանական լեզուներում գրավոր չավանդված բառերի կամ բառիմաստների վերականգնմանը:

Ованнисян Лаврентий – О нескольких словах в карабахском диалекте, заимствованных из среднеиранских языков. – В статье рассматривается ряд слов карабахского диалекта, которые заимствованы из среднеиранских языков. Дифференциация новых и старых заимствований основана на фонетических особенностях иранских языков, древнеармянского языка и карабахского диалекта.

Hovhannisyan Lavrenti – On a Few Borrowings from Middle Iranian Languages in Dialect of Kharabakh. – Several words are being examined in the article which the dialect of Kharabakh has borrowed from Middle Iranian languages. The differentiation of new and old borrowings is based on the one hand on the Middle Iranian languages and New Persian, and from the other hand on the Old Armenian (Grabar) and features of phonetic changes of the dialect of Kharabakh.

⁸ *Եզրնկայ վարդապետի Կողբացոյ Եղծ աղանդոց*, թարգմանությունը և ծանոթագրությունները Ա.Ա.Աբրահամյանի, Ե., 1994, էջ 176, 177:

Հովհաննիսյան Նազիկ (Հայաստան,
ԳԱԱ Հ.Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ)

**ՆԵՂ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԲԱՌԵՐ ԵՎ ԲԱՌԻՄԱՍՏՆԵՐ ՀՈՄԱՆԻՇՆԵՐԻ՝
XVIII ԴԱՐԻ ՁԵՌԱԳԻՐ ԲԱՌԱՐԱՆՆԵՐՈՒՄ**

Հայերենի բարբառների բառապաշարային տարբերությունները ունեն դրսևորման երկու արտահայտություն՝ բառային (տվյալ հասկացությունը տարբեր վայրերում տարբեր բառային միավորներով է առկա) և իմաստային (հայերենի համար ընդհանուր (կամ հին հայերենից ավանդված) բառը տարբեր վայրերում ունենում է իմաստային տարբեր կիրառություններ)¹: Այս տարբերակման մեջ առանձնանում են նեղ բարբառային բառերը, որոնք գործառու են մեկ-երկու բարբառում, ընդգրկում են բարբառային սահմանափակ տարածք, այդ տարածքից դուրս մասամբ կամ լրիվ անհասկանալի են և կարիք ունեն լրացուցիչ բացատրության:

Հունանիշների՝ XVIII դ. ավանդված ձեռագիր բառարաններում հանդիպում են նեղ բարբառային բառեր և նեղ բարբառային բառիմաստներ:

Ամօթել բայն առկա է Ձեռ. 6762-ում (110բ)՝ *խայտարակել*². *առակել*. *ծանակել*. *նշառակել*. *ծաղր առնել*. *խաղ առնել*. *տնագել*³ հոմանիշային շարքի վերջում⁴: Այն արձանագրված է «Միջին հայերենի բառարան»-ում «անպատվել, վիրավորել, խայտառակել» նշանակությամբ՝ Կամենեց-Պոդոլսկ քաղաքի հայկական դատարանի XVI դ. արձանագրություններից քաղված միակ օրինակով՝ «Կու գայր հար-

¹ Տե՛ս **Հ.Մուրադյան**, Բառային զուգաբանությունների արժեքը. Քարտեզագրման մի փորձ. – *Հայերենի բարբառագիտական ատլաս*, 2, Ե., 1985, էջ 69-70:

² Ձեռ. 6762-ում առկա է *խայտարակել* տարբերակը:

³ Ձեռ. 6762-ում առկա է *տնագ ունել* հարադրությունը:

⁴ Հունանիշային շարքերը ներկայացվում են նշված բոլոր ձեռագրերի բառերի համատեղմամբ: Փակագծերում նշվում են ձեռագրի համարը և էջը: Հոդվածում պահպանված է ձեռագիր բառարանների ուղղագրությունը:

բաժ և գղբացիսներն անհարկիք խօսոք ամօթեց»⁵, որից, թերևս, պարզորոշ է առավելապես «անպատվել, վիրավորել» նշանակությունը:

Ըստ Հ.Աճառյանի՝ *ամօթել*-ը պոլսահայ բարբառում նշանակում է «ամաչեցնել»⁶, նույնն է արձանագրում «Հայոց լեզվի բարբառային բառարան»-ը՝ «ամոթանք տալ, պարսավել»⁷, «Արդի հայերենի բացատրական բառարան»-ը առանձնանում է «ամոթանք տալ»-ի «հզվդ.» նշումով⁸: Վենետիկում 1859 թ. հրատարակված «Համառոտ բառարանի պետս նորավարժից» բառարանում *յամօթ առնել* հարադրական կազմությունը բացատրված է իբրև «խախք ընել»⁹: Հարկ է թերևս հիշեցնել, որ *խախք*-ը նույն *խայտառակ*-ն է (հմմտ. *խաղք անել* «անպատվել, ծանակել, այպանել, խայտառակել»): ՀԼԲԲ, հ. Բ, 2002, էջ 274), որը, ինչպես նշում է Հ. Աճառյանը, առկա է Երևանի, Նոր Բայազետի, Պոլսի, Վանի («գտ. խաղք (Ակն, Ասլ., Պլ. խախգ)» բարբառներում (ՀԱԲ, հ. 2, էջ 320)¹⁰:

Ե՛վ արևելահայերենում, և՛ արևմտահայերենում *ամոթ*-ը նաև «անպատվություն, խայտառակություն»-ն է (ԱՀԲԲ, ն.տ.)¹¹:

Ուրեմն և կարելի է հավանական համարել հոմանիշային շարքում առկա *ամօթել*-ի «խայտառակել» իմաստը, այլև ենթադրել, որ բառն այդ նշանակությամբ գործածվել է որոշակի տարածքում:

⁵ Տե՛ս Ռ.Ղազարյան, Հ.Ավետիսյան, *Միջին հայերենի բառարան* (այսուհետև՝ ՄՀԲ), հ.1, Ե., 1987, էջ 41:

⁶ Հ.Աճառյան, *Քննություն պոլսահայ բարբառի*, Ե., 1941, էջ 185:

⁷ *Հայոց լեզվի բարբառային բառարան* (այսուհետև՝ ՀԼԲԲ), Ե., հ. Ա, 2001, էջ 50:

⁸ Բ.Աղայան, *Արդի հայերենի բացատրական բառարան* (այսուհետև՝ ԱՀԲԲ), Ե., 1976, էջ 34:

⁹ *Համառոտ բառարանի պետս նորավարժից*, Վենետիկ, 1859, էջ 3:

¹⁰ Տե՛ս նաև Հ.Աճառեան, *Հայերեն գաղափարական բառարան* (այսուհետև՝ ՀԳԲ), Թիֆլիս, 1913, էջ 990:

¹¹ Տե՛ս նաև Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան (այսուհետև՝ ԺՀԼԲԲ), հ. 1, Ե., 1976, էջ 55: Յ.Գայայեան, *Բառարան-գանձարան հայերեն լեզուի*, Գահիրե, 1938, էջ 14:

Աճապանալ-ը¹² վկայված է *գարմանալ. հիանալ. սքանչանալ. հրաշանալ. սիրանալ. ապշել. ի հիացման լինել. հիմարանալ*¹³ հոմանիշային շարքում (Ձեռ. Ձեռ. 566, 143ա. 3110, 85բ. 775, 58բ. 873, 192բ. 6762, 106բ): Այն արձանագրված չէ բառարաններում:

ՄՀԲ-ն «գարմանալ, հիանալ» նշանակությամբ ունի *աճապ մնալ, յաճապ գալ* հարադրական կազմությունները (ՄՀԲ, հ. 1, էջ 36): Թեև ըստ ՀԼԲԲ-ի՝ *աճապ*-ը նաև *աջաբ* և *աճեփ* տարբերակներով գործառում է հայերենի և՛ արևմուտյան, և՛ արևելյան խմբակցության մի շարք բարբառներում (ՀԼԲԲ, հ. 1, էջ 96), սակայն *ւնջըբննլ* բայն առկա է միայն Մոկսի բարբառում¹⁴: Վերջինիս բայական համակարգը քննելիս նաև Մ.Մուրադյանն է հավաստում բարբառում առկա *ւնջըբննլ* «գարմանալ»-ը: Ըստ ՀԼԲԲ-ի՝ *աջեբնալի* «գարմանալի» ածականը նույնպես գործառում է միայն Մոկսի բարբառում (ՀԼԲԲ, ն.տ.), սակայն բարբառի ձևաբանական իրողությունները ներկայացնելիս Մ. Մուրադյանը չի անդրադառնում ածական անվանը, հետևաբար *աջեբնալի* «գարմանալի»-ն աշխատանքում չի արձանագրվում: Բայց և բարբառում առկա *ւնջըբննլ* «գարմանալ» բայը հնարավորություն է ընձեռում հավանական համարելու նաև *աջեբնալի* ածականի առկայությունը բարբառում, մանավանդ հայերենում առկա են անորոշ դերբայից -ի ածանցով բաղադրված նմանատիպ կազմություններ, ինչպես՝ *սիրելի, համակրելի, ցանկալի, տանելի* և այլն¹⁵:

Թփանք-ը վկայված է միայն Ձեռ. 775-ում՝ *զէն. Սպառազինութիւն. անօթ պատերազմի. գործի*¹⁶ *պատերազմի. (իսկ մասնաւոր անունք) սուր. սուսեր. դալապր. նրան. դաշոյ. թուր. վաղարկաւոր*¹⁷:

¹² Ձեռ. 6762-ում առկա է *աճապանել* տարբերակը:

¹³ Ձեռ. Ձեռ. 566-ում, 3110-ում, 775-ում և 873-ում առկա է *հիմարեցալ* բայաձևը:

¹⁴ Տե՛ս Մ.Մուրադյան, Ուրվագիծ Մոկսի բարբառի. – *Հայերենի բարբառագիտական ատլաս*, 1, Ե., 1982, էջ 166:

¹⁵ Տե՛ս Ա.Աբրահամյան, Ն.Պառնայան, Հ.Օհանյան, *Փամանակակից հայոց լեզու*, հ. 2, Ձևաբանություն, Ե., 1974, էջ 181:

¹⁶ Ձեռ. 3100-ում՝ *գործիք* բառը:

¹⁷ Ձեռ. 873-ում՝ *վաղակաւոր* տարբերակը:

արդն¹⁸. մարտացու. աշտե. տեզ¹⁹. նիզակ. գեղարդ. ասպար. Վահան. մկունդ. գրահ. վերտ. վարապանակ²⁰. սաղաւարտն²¹. հրացան. Հրագէն. թոփ²². նէտ. աղեղն. կապարձ²³. լայնալիճք. փքին. պարս. պարսատիկ հոմանիշային շարքում (հմմտ. Ձեռ. Ձեռ. 566, 244ա. 3110, 86բ. 775, 59ա. 873, 193ա. 6762, 107ա):

Հայերենի բարբառներում հնչյունական տարբերակներով գործածվող *թվանք* «հրացան» բառի *թփանք* տարբերակը բառարանային տվյալներով որևէ բարբառում արձանագրված չէ: ՄՀԲ-ն նշում է *թւագ, թրւանկ, թուանկ* տարբերակները պարսկերեն tofang-ից (ՄՀԲ, հ. 2, էջ 258, 263, 269): «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության» աշխատությունում *թւանկ*-ը ներառված է թուրքերեն բառերի ցանկում՝ tufank²⁴: Նշված տարբերությունն արձանագրվում է ոչ թե փոխատու լեզվի ճիշտ կամ ոչ ճիշտ լինելը «բացահայտելու», այլ փոխատու լեզվում *-թ-* հնչյունի առկայությունը փաստելու համար: Հ. Աճառյանը նշում է նաև, որ ժողովրդախոսակցական և գրական թուրքերենի *-թ-* հնչյունը հայերենում « = » (հավասար՝ Ն.Հ.) է *-ֆ-*²⁵ միաժամանակ արձանագրելով «թրք. تفك tüfenk»-ի թիւֆենկ..., թըվանքյ..., թըվենկ..., թվանգյ...» տարբերակները համապատասխանաբար Պոլսի, Վանի, Նոր Նախիջևանի, Ղարաբաղի բարբառներում²⁶: Հարկ է նաև հիշատակել ըստ Հ. Մուրադյանի հավանական այն ենթադրությունը, որ «հայերենում ֆ-ն որպես հնչյուն զիտակցվել է նախ արևմտյան տարածքի բարբառներում, ոչ ուշ, քան VIII դարը, և հետագայում միայն սկսել է տարածվել դեպի **հարակից շրջանները**, չընդ-

¹⁸ Ձեռ. 566-ում բառն առկա չէ:

¹⁹ Ձեռ. 6762-ում՝ տեք:

²⁰ Ձեռ. 566-ում՝ վերապանակ, Ձեռ. 775-ում՝ վարանապակ տարբերակները:

²¹ Ձեռ. 775-ում՝ սաղաւարդն տարբերակը:

²² Ձեռ. Ձեռ. 566, 6762, 3110-ում՝ դոփ տարբերակը:

²³ Ձեռ. Ձեռ. 775, 873-ում առկա չէ:

²⁴ *Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության*, հ. Ա, Ե., 1972, էջ 285:

²⁵ Տե՛ս **Հ.Աճառեան, Թուրքերենի ազդեցութիւնը հայերենի վրայ եւ թուրքերէնէ փոխառեալ բառերը Պոլսի եւ հայ ժողովրդական լեզուին մէջ համեմատութեամբ Վանի, Ղարաբաղի եւ Նոր-Նախիջևանի բարբառներուն**, Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Գ, Մոսկուա-Վաղարշապատ, 1902, էջ 31:

²⁶ Նույն տեղում, էջ 136:

գրկելով, սակայն, ամբողջ հայերենը»²⁷, որքանով հայտնի է *-ֆ*- հնչյունի բացակայություն- չգոյությունը Թբիլիսիի, Մեղրիի, Հավարիկի, Խոյի (Ուրմիայի)²⁸, Մարաղայի և Ղարաբաղի բարբառներում²⁹:

Հայերենի բարբառներում գործառող հնչյունական տարբերակներից *թփանք*-ին «հարագատ» է *թֆանք*-ը, որը ՀԼԲԲ-ն վկայում է Չհավահալի բարբառում³⁰ (ՀԼԲԲ, հ. Բ, 2002, էջ 136): Թեև հավանական չի թվում, որ Չհավահալի բարբառը կրող անձը, որին խորթ չէր *ֆ* հնչյունը, այն փոխարիներ *փ*-ով: Ուրեմն և կարելի է ենթադրել, որ ձեռագիրն ընդօրինակողը պատկանել է *ֆ* հնչյուն չունեցող տարածքի, և *ֆ*-ն արտագրելով *փ` թֆանք*-ը դարձրել է *թըփանք*: Բայց և միաժամանակ հարկ է փաստել, որ *ֆ* հնչյուն չունեցող նշված տարածքներում բառի բոլորովին այլ տարբերակներ են գործառում:

Հարկ չէր լինի անդրադառնալու *թփանկ* բառին, եթե այն արձանագրած չլիներ վաճառական և բանահավաք, ծնունդով խոտրջուրցի Եղիա Մուշեղյան Կարնեցին «հայատառ թուրքերենով» XVIII դ. 20-ական թթ. կազմած «Թուրքերեն-հայերեն բառարան»-ում³¹, որը լույս է տեսել Բ. Չուգասյանի աշխատասիրությամբ: Վերջինիս կարծիքով Կարնեցին, չունենալով «լեզվական կոտ գիտելիքներ» և լինելով «արևմտահայերենի կրող», «դժվարությամբ է կողմնորոշվել և թուրքերենի ձայնեղները հայերեն տառադարձելիս երկվություն է հանդես բերել՝ դրանք տառադարձելով մերթ հայերեն ձայնեղներով և մերթ խուլերով»³², և բացի այդ, ըստ Բ. Չուգասյանի, «բարբառային բառերի

²⁷ **Հ.Մուրադյան**, *Հայոց լեզվի պատմական քերականություն*, հ. 1, Ե., 1982, էջ 262:

²⁸ Տե՛ս **Գ. Ջահուկյան**, *Հայ բարբառագիտության ներածություն*, Ե., 1971, էջ 47, 51-62: Այդ է փաստում նաև Ա.Ղարիբյանը. տե՛ս **Ա.Ղարիբյան**, *Համառոտություն հայ բարբառագիտության*, Ե., 1941, էջ 264: Մ. Ասատրյանի հավաստմամբ, սակայն, Խոյի բարբառում *ֆ* հնչյուն չկա. **Մ.Ասատրյան**, *Ուրմիայի (Խոյի) բարբառը*, Ե., 1962, էջ 19-20:

²⁹ Տե՛ս **Գ.Ջահուկյան**, նշվ. աշխ., էջ 47, 51-62: Տե՛ս նաև **Կ.Դավթյան**, *Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը*, Ե., 1966, էջ 62:

³⁰ Չհավահալի բարբառն ունի *-ֆ*- հնչյուն. **Հ.Աճառեան**, *Հայ բարբառագիտություն. ուրուագիծ և դասատրություն հայ բարբառների (բարբառագիտական քարտեզով)*, Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Ը, Մոսկուա – Նոր-Նախիջևան, 1911, էջ 242:

³¹ **Եղիա Մուշեղյան Կարնեցի**, *Թուրքերեն-հայերեն բառարան*, Ե., 1986, էջ 114:

³² Նույն տեղում, էջ 22:

մի մասը.... գալիս է Կարինի՝ Մուշեղյանի մայր բարբառից, իսկ մյուս մասը՝ հայերենի արևելյան բարբառներից», քանի որ նա՝ իբրև վաճառական և Արևելյան հրեղիական ընկերության պաշտոնյա, եղել է բազմաթիվ երկրներում³³: Ընդունելով և հաշվի առնելով Բ. Չուգասյանի դիտարկումները, այդուհանդերձ, քննվող բառի առնչությամբ հարկ է փաստել, որ Կարնո բարբառին նվիրված մենագրության մեջ *թփանք* տարբերակն է (բարբառում էլ առկա է *ֆ* հնչյուն)³⁴: Հավանական կարելի է համարել, որ Կարնեցին իր շրջագայությունների ժամանակ լսել և գրի է առել *թփանկ* բառաձևը (փաստ է, որ այն արձանագրված է բառարանում), սակայն անհայտ է, թե որ տարածքից:

Խձուձ-ը հանդիպում է միայն երկու ձեռագրում՝ *ստուման կամփասկ. խձուձ* հոմանիշային շարքում (Ձեռ. Ձեռ. 566, 271ա. 6762, 125ա):

Ըստ ՀԼԲԲ-ի՝ *խձուձ*-ն իբրև «Սափորի՝ տակառի՝ շշի բերանը գոցելու խցան» գործառում է Սեբաստիայում, Տերենտեում, Մարզվանում, իսկ «ամուր փակված՝ խցված (աման, տակառ, շիշ)» նշանակությամբ *խձուձ*-ը՝ միայն Կեսարիայի բարբառում³⁵ (ՀԼԲԲ, հ. Բ, էջ 334): Թեև հարկ է փաստել, որ Ս.Անթոսյանի՝ Կեսարիայի բարբառին նվիրված աշխատությունում *խձուձ*-ը «ամուր փակված (դուռ, խուփ)»-ն է³⁶, ըստ Հ. Գազանճյանի էլ՝ «առանց ամենափոքր ձեղք մնալու փակված, խցուած (դուռ, տուփ եւն)» նշանակությամբ *խձուձ* տարբերակն առկա է Եվդոկիայի բարբառում³⁷:

Թերևս Կեսարիայի և Եվդոկիայի բարբառներում առկա *խձուձ/խձուձ*-ը և հայերենի բարբառներում գործառող *խձուձ*-ը (Լ.

³³ Նույն տեղում, էջ 24:

³⁴ Տե՛ս **Հ.Մկրտչյան**, *Կարնո բարբառ*, Ե., 1952, էջ 35, 142:

³⁵ Կեսարիայի բարբառում, ինչպես նշում է Ս.Անթոսյանը, «...բառի վերջում ծ-ն հնչվում է ձ...» (**Ս.Անթոսյան**, *Կեսարիայի բարբառ*, Ե., 1961, էջ 33), և, թերևս, այդ է պատճառը, որ *խձուձ* բառում առաջին ծ-ն, առնմանությամբ պայմանավորված, դարձել է ձ (այդպես է նաև պոլսահայ բարբառում՝ ծեծ>ձեձ, ծիծ>ձիձ. տե՛ս **Հ.Աճառյան**, *Քննություն պոլսահայ բարբառի*, էջ 50):

³⁶ Տե՛ս **Ս.Անթոսյան**, նշվ. աշխ., էջ 276:

³⁷ Տե՛ս **Յ.Գազանճեան**, *Եւդոկիոյ հայոց գաւառաբարբառը*, Վիեննա, 1899, էջ 29:

Ղզխ. Սս. «Կալի տակի մնացորդ, փոշի դարձած հարդ», Գնձ. Սս. «Կանեփի թելի մաքրված՝ ավելորդ մասը, սանդղուք»։ ՀԼԲԲ, հ. Բ, էջ 334) կարելի է համանուններ համարել։

Ձեռագիր բառարանի մյուս գրչագրերում՝ նշված հոմանիշային շարքում, առկա է *բղուղ* բառը՝ *ստոման*. *կամփասկ*³⁸. *բղուղ* (հմմտ. Ձեռ. Ձեռ. 3110, 107ա. 775, 74բ. 873, 214բ)։ Ըստ ՀԼԲԲ-ի՝ *բղուղ*-ի գործառնան տարածքային շրջանակն առավել ընդգրկուն է՝ Ար., Խրբ., Կր., Մղր., Մշ., Վն., Մկս. և այլն (ՀԼԲԲ, հ.Ա, էջ 201)։ Եվ դարձյալ կարելի է, թերևս, ենթադրել, որ ձեռագիրն ընդօրինակողը հավանաբար չի հասկացել *խձուձ* բառը և արտագրելիս այն փոխել է իրեն հասկանալի «սափորածև, բերանը համեմատաբար լայն կավել փոքր աման» նշանակությամբ *բղուղ*-ով (*ստոման*-ը և *կամփասկ*-ը, ըստ ՆՀԲ-ի, հունարեն համապատասխանաբար «ստամնոս» և «գամփսագիս, կամ գամփսագիս» բառերն են և նշանակում են «... սափոր, կուժ, դորակ, ... աման, անօթ, ...» (ՆՀԲ, հ.1, էջ 1043. հ.2, էջ 747. այս բառերը հիշատակվում են «Գրաբարի հոմանիշների բառարան»-ում³⁹)։ Կամ էլ ենթադրել, որ ձեռագիրն ընդօրինակողին անհասկանալի է եղել *բղուղ*-ը և *բղուղ*-ի փոխարեն լրացրել է մոտավորապես նույն նշանակությամբ իրեն ծանոթ *խձուձ*-ը։

Արդի հայերենում *խձուձ*-ը «վուշի՝ կանեփի թելերի կամ առհասարակ ծեծված ցողունների խոփվ»-ն է, նաև բժշկական՝ «ախտահանված շղարշ (մառլյա), որ մտցնում են խոր վերքերի մեջ՝ թարախը արտածելու կամ արյունահոսությունը կասեցնելու համար», այլև շինարարական (դյուբել) ու ռազմական (օբյուրատոր) եզրույթ (ԱՀԲԲ, էջ 581, 615. ԺՀԼԲԲ, հ. 1, էջ 524)։

Շիւարեալ-ը⁴⁰ հանդիպում է *յիմար*. *մորոս*. *անմիտ*. *անիմաստ*. *տգէտ*. *անգէտ*. *ռակայ*. *տիմար*. *ախմար*. *խելածէտ*. *խելագար*. *խելացնոր*. *յիմարամիտ*. *ախմարամիտ*. *բթամիտ*. *վայրենամիտ*. *պաճարամիտ*. *գրաստախել*. *մանկախել* հոմանիշային շարքում (Ձեռ. Ձեռ. 566, 261բ. 3110, 102ա. 775, 69ա-69բ. 873, 207ա. 6762, 118ա)։

³⁸ Ձեռ. 873-ում՝ *կամփասկ*, Ձեռ. 3110-ում՝ *կամսակ* տարբերակները։

³⁹ Տե՛ս Ռ.Նազարեան, *Գրաբարի հոմանիշների բառարան*, Ե., 2006, էջ 366, 617։

⁴⁰ Ձեռ. 566-ում՝ *շուարեալ*, Ձեռ. 6762-ում՝ *շրարեալ* տարբերակները։

Շուա(յ)ր, շիա(յ)ր, շ(ի)վար, շ(ը)ւար հնչյունական տարբերակները՝ «առաւել ոմկ.», «գվռ.», «բրբ.» նշումներով, հայերենի բառարաններն արձանագրում են «մուրոված, շփոված, անձար, շմած» նշանակություններով⁴¹: «Վարանել» նշանակությամբ *շիարիմ կամ շուարիմ կամ շուարիմ* տարբերակներն է հիշատակում նաև Ն.Բյուզանդացին X- XVII դդ. մատենագրության մեջ (ՆԲԲ, էջ 581): ՀԳԲ-ն, ՄՀԲԲ-ն և ՀԼԲԲ-ն առադրում են Մշո և Վանի բարբառներում հանդիպող «խեղճ, ողորմելի, անգործ, պարապ, աւարայ» իմաստները՝ ՀԳԲ-ի՝ «սարսախ» իմաստի հավելումով (ՄՀԲԲ, հ.3, էջ 533. ՀԳԲ, էջ 839. ՀԼԲԲ, հ. Դ, էջ 241): *Մարսախ*-ը, ըստ Մալխասյանցի, «տաճկերեն sarsak «ապուշ, տխմար, ախմախ» բառն է (ՄՀԲԲ, հ. 4, էջ 194):

Շուարիմ-ը բացատրելիս թուրքերեն բառի է հղում նաև Գ. Փեշտըրմալճեանը՝ «տարտամ և ապուշ մնալն.... (տաճ.շաշմագ)» (ԳՓԲ, ն.տ.). վերջինըս էլ «թրք. شاشمق šaşmaq»-ն⁴² է, որը Արարատյան, Թրիլիսիի, Ղարաբաղի բարբառներում պահպանվել է *շաշ* ձևով որպես «ապուշ, տխմար, ախմախ, խելապակաս» (ՄՀԲԲ, հ. 4, էջ 194. ՀԼԲԲ, հ. Դ, էջ 200)⁴³:

Շիվար-ի «թուլամիտ» նշանակությունը ՀԼԲԲ-ն արձանագրում է միայն Սեբաստիայի բարբառում (ՀԼԲԲ, հ. Դ, էջ 241): Այնպես որ ձեռագիր բառարաններում հանդիպող «հիմար, տխմար, բթամիտ» նշանակությամբ *շիվարեալ*-ն առկա է Մուշ-Վան բարբառային սերտ տարածքում, այլև Սեբաստիայում: Տվյալ իրողության առիթով տեղին է հիշեցնել պատմական հետևյալ փաստը: Բագրատունիների անկումը ողբերգական հետևանքներ է ունենում Հայաստանի համար.

⁴¹ Տե՛ս *Նոր բառգիրք հայկազեան լեզուի* (այսուհետև՝ ՆՀԲ), հ. Բ, Վենետիկ, 1836, էջ 490. *Մոճեռն բառարան հայկազեան լեզուի* (այսուհետև՝ ԱԲ), Վենետիկ, 1865, էջ 639. **Գ. Փեշտըրմալճեան**, *Բառգիրք հայկազեան լեզուի* (այսուհետև՝ ՓԲ), հ. 2, Կոստանդնուպոլիս, 1846, էջ 461. ՀԳԲ, 839. **Ե.Մեղրեցի**, *Բառգիրք հայոց* (այսուհետև՝ ԲՀ), Ե., 1975, էջ 251. **Նորայր Բիւզանդացի**, *Բառագիրք ստորին հայերենէ ի մատենագրութեանց ԺԱ-ԺԷ դարոց* (այսուհետև՝ ՆԲԲ), Ժնե, 2000, էջ 581. **Ս.Մալխասեանց**, *Հայերէն բացատրական բառարան* (այսուհետև՝ ՄՀԲԲ), հ. 3, 1946, Ե., էջ 533. ՄՀԲ, հ.2, Ե., 1987, էջ 217. ԱՀԲԲ, էջ 1109. ԺՀԼԲԲ, հ. 4, էջ 85. ՀԼԲԲ, հ. Դ, 2004, էջ 241:

⁴² **Հ.Աճառեան**, *Թուրքերէնի ազդեցութիւնը հայերէնի վրայ....*, էջ 258:

⁴³ Տե՛ս նաև **Տ.Նաւասարդեանց**, *Բառգիրք Արարատեան բարբառի*, Տիլիս, 1903, էջ 88:

ծայր է առնում զանգվածային արտագաղթ, հետագայում՝ թյուրք-սելջուկյան ծավալուն արշավանքների ժամանակ՝ բռնագաղթ Բյուզանդիա, Եգիպտոս, Կիլիկիա... Եվ ինչպես նշում են պատմաբանները, XI դ. Սենեքերիմ Արծրունին, հանձնելով Վասպուրականը Բյուզանդիային, գաղթում է Սեբաստիա՝ միանալով կայսրությանը, իր հետ տանելով ազնվականության, զինվորականության, բնակչության մի սովոր հատված⁴⁴: Ուրեմն և բացատրելի է քննվող բառի առկայությունը նաև Սեբաստիայի բարբառում:

Քշտել-ն առկա է երկու հումանիշային շարքում՝ *հատանել. կտրել. կտրատել. ջարդել. խզել. ի բաց հատանել. ի բաց խզել. ի բաց կորզիլ. ի բաց հանել*⁴⁵ և *ջարդել. քանդել. հատանել. յատանել. սրբել. մանրել. փշրել. կտորել*⁴⁶ (Ձեռ. Ձեռ. 566, 255բ և 269ա. 3110, 97ա և 106բ. 775, 65բ և 73բ. 873, 202ա և 213ա. 6762, 114բ և 123բ):

Գրաբարի տպագիր բառարաններում *քշտել* նշանակում է «ի բաց վարել հատնելով. կտրել. կորզել. քանդել. յապաւել. կոճոպել. ծայրաքաղ առնել. ճղերը կտրտել. կրճատել» (ՆՀԲ, հ. 2, էջ 1003. ԱԲ, էջ 836. ՂԳԲ, 639. ԳՀԲ, էջ 693)⁴⁷:

Եվ թեև պարզորոշ է *քշտել*-ի՝ ձեռագիր բառարաններում առկա «հատանել, կտրել» իմաստը, այդուհանդերձ հարկ է անդրադառնալ և հետևել բառի իմաստային զարգացումներին:

ՆԲԲ-ն X-XVII դդ. մատենագրությունից հավելում է «գարնել» (ՆԲԲ, էջ 746), իսկ ահա ՀԱԲ-ը՝ առադրում բարբառներում հանդիպող մի շարք իմաստներ՝ *քշտել* «թները սոթտել» (Ալշ.), *քիշտել* «գարնել» (ՀՃ.), «հարու տալ, եղջերցել» (Սվեդ.), «նուագարան ածել» (Եւդ.), «ուտել» (Երև.) (ՀԱԲ, հ. 4, էջ 585): Նույնը «բբբ.» նշումով վկայում է ՄՀԲԲ-ն (ՄՀԲԲ, հ. 4, էջ 582):

Ցավոք, ՀԼԲԲ-ում՝ *քշտել* բառահոդվածում, չի տարբերակվում, թե ո՛ր բարբառում *քշտել*-ի ո՛ր նշանակությունն է գործառում, և բառի փնտրտուքն էլ հայերենի բարբառներին նվիրված աշխատանքներում

⁴⁴ **Մ.Չամչեանց**, *Պատմութիւն հայոց*, հ. Բ, Վենետիկ, 1785, էջ 902: **И.Орбели**, *Избранные труды*, т. 1, М., 1968, էջ 225:

⁴⁵ Ձեռ. 775-ում՝ չկա:

⁴⁶ Ձեռ. Ձեռ. 566-ում, 6762-ում և 873-ում՝ *կտտորել* տարբերակը:

⁴⁷ Տե՛ս նաև **Մ.Ջախջախեան**, Բառգիրք ի բարբառ հայ և իտալական (այսուհետև՝ ՋԲ), Վենետիկ, 1837, էջ 1480, այլև ԳԲ, էջ 925:

որևէ արդյունքի չհանգեցրեց, իսկ Ալաշկերտի խոսվածքը ներկայացնող մենագրության բարբառային բառերի բառարանում, ի հակադրություն Հ.Աճառյանի արձանագրածի, *քշտել*-ն արձանագրված չէր⁴⁸: Բայց և միաժամանակ նկատվեց, որ արևմտյան խմբակցության բարբառներում (Պոլիս, Եվդոկիա, Մալաթիա, Դերսիս) գերակշռում է *սոթտել*-ը՝ *սոթթել*, *սոթել* տարբերակներով⁴⁹ (բացառություն են Սասունը և Մուշը՝ *քշտիլ*, *քրշտել*)⁵⁰: Ս.Ամատունու վկայությամբ *քշտել*-ը՝ «Տ. ՍՈԹԹԵԼ» հղումով, առկա է Արարատյան բարբառում⁵¹, Ռ.Բաղրամյանի հավաստմամբ Շամախիի բարբառում՝ *կրշտել* տարբերակով⁵²:

«Բրբ.» և «ժղ.» նշումներով «թները փեշերը նն հաւաքել, սոթտել»-ը արձանագրում են արդի հայերենի բացատրական բառարանները (ԱՀԲԲ, էջ 1574. ԺՀԼԲԲ, հ. 4, էջ 744):

Կարելի էր, իհարկե, շրջանցել և չանդրադառնալ ձեռագիր բառարաններում վկայված վերոնշյալ բառերին՝ դրանք համարելով պարզապես սխալագրություններ, բայց և ակնհայտ է՝ դրանք գործառու են հայերենի բարբառներում, հետաքրքիր են միջբարբառային առնչությունների տեսանկյունից, այլև, ինչպես իրավացիորեն նկատել է Հ. Մուրադյանը, «Բարբառների լեզվական հարուստ նյութը հնարավորություն է տալիս համեմատական քննությունների միջոցով թափանցելու լեզվի պատմության խորքերը, վերականգնելու բարբառային տարբերությունները գրավոր պատմության սկզբում և նրանից առաջ, դրանով իսկ նպաստելու մեր պատկերացումների ընդլայնմանը հայերենի հնագույն շրջանի բարբառային բաժանվածության աստիճանի մասին»⁵³:

⁴⁸ Տե՛ս **Զ.Մադաթյան**, *Ալաշկերտի խոսվածքը*, Ե., 1985, էջ 245-248:

⁴⁹ Տե՛ս **Ս.Ամատունի**, *Հայոց բառ ու բան*, Վաղարշապատ, 1912, էջ 595, 676: **Յ.Գազանձեան**, նշվ. աշխ., էջ 54-55: **Թ.Դանիելյան**, *Մալաթիայի բարբառը*, Ե., 1967, էջ 208: **Ռ.Բաղրամյան**, *Դերսիսի բարբառը*, Ե., 1960, էջ 168:

⁵⁰ Տե՛ս **Վ.Պետոյան**, *Սասունի բարբառը*, Ե., 1954, էջ 166: **Ս. Բաղդասարյան-Թափալցյան**, *Մշո բարբառը*, Ե., 1958, էջ 274:

⁵¹ **Ս.Ամատունի**, նշվ. աշխ., էջ 676:

⁵² Տե՛ս **Ռ.Բաղրամյան**, *Շամախիի բարբառը*, Ե., 1964, էջ 231:

⁵³ **Հ.Մուրադյան**, Բառային գույգաբանությունների արժեքը..., էջ 75:

Оганесян Назик – Узкодиалектные слова и значения слов в рукописных словарях синонимов XVIII века. – В рукописных словарях синонимов XVIII в. засвидетельствованы слова, которые встречаются в одном (или двух) диалектах, охватывающих ограниченную диалектную территорию и частично или полностью непонятные вне этой территории.

Рассмотрены слова աւօթել (опозорить), աճապանալ (удивляться, изумляться), թփանք (ружьё), խձուձ (прочно закрытый сосуд), շիւրեալ (глупый), քշտել (засучивать).

Hovhannisyán Nazik – Restricted Dialectal Words in the XVIII Century Manuscript Dictionaries of Synonyms. – The XVIII century manuscript dictionaries of synonyms testify words, which are used in one or two dialects, included limited area region and partly or fully incomprehensible.

The words աւօթել (disgrace), աճապանալ (surprised), թփանք (gun), խձուձ (firm closed dish), շիւրեալ (fool), քշտել (roll up, tuck up) are considered.

Մալեք Մոհամմադի Մոհամմադ (Իրան,
Սպահանի համալսարան)

**ՇԱՀՆԱՄԵԻ՝ ՆՈՐ ԲՍՅԱԶԵՏԻ ԲԱՐԲԱՌՈՎ ՏԱՐԲԵՐԱԿԻ
ԼԵԶՎԱՌՃԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Հայ իրականության մեջ «Շահնամեի» սիրվելու հիմնական պատճառներից են եղել հայ և իրանական ժողողությունների պատմա-մշակութային խորը կապերի դարավոր ավանդույթը և դրա հիմամբ ձևավորված փոխադարձ ջերմ վերաբերմունքը: Եվ հայերենի տարբեր բարբառներով պատմված «Շահնամեի» բանահյուսական պատումների առկայությունը այդ ամենի ապացույցն է:

Իրանական էպոսը և առասպելները նախապես տարածվել են հայ նախարարների և իշխանների միջավայրում, իսկ հետագայում տեղայնացվելով՝ տարածվել նաև ժողովրդի տարբեր խավերի մեջ: Բացի «Շահնամեի» իրանական բանահյուսական տարբերակներից, որոնք ասվել և պատմվել են թեյարաններում, սրճարաններում ու այլ հասարակական վայրերում, որոշ տարբերակներն էլ քրդերենով, բելուջերենով, հայերենով և տարածաշրջանի այլ լեզուներով են պատմվել և հասարակության հետաքրքրությանն արժանացել: «Շահնամեի» հայկական տարբերակները, որ ներշնչվել են «Շահնամեից», երբեմն նույնիսկ «Շահնամեի» սկզբնական աղբյուրներից, բանահյուսական արժեքավոր նյութեր են համարվում: Դրանք հաճախ սյուժեի առումով որոշ չափով հեռացել են իսկական տարբերակից և, այսպես ասած, տեղայնացվել են¹:

Հայկական «Ռոստամ Զալ», «Բորգե», «Բեժան» տարբերակներում իրանական և հայկական էպոսները միաձուլվել են, և բանահյուսական հետաքրքիր խառնվածք է առաջ եկել: «Շահնամեի» հայկական բանահյուսական տարբերակները պատմվել են արևելահայ և հատկապես արևմտահայ տարբեր բարբառներով, ինչպես՝ Մոկսի, Վանի, Շատախի, Նոր Բայազետի և այլն, որոնք արժեքավոր նյութ են բարբառագիտության, բանահյուսության, ազգագրության և բանասի-

¹ Շահնամեի հայկական բանահյուսական տարբերակների մասին տե՛ս նաև **J.R.Russell**, *The Šāh-nāme in the Armenian Oral Epic. – Armenian and Iranian Studies* (Harvard Armenian Texts and Studies 9), Cambridge MA, 2004, էջ 1063-1079:

րական ուսումնասիրությունների համար: Այդ պատումների մի զգալի մասը հրատարակվել է հայ ազգագրագետների ջանքերով²:

Նոր Բայազետ գավառը կամ Գեղարքունիքը ոչ միայն հնագիտական, այլև ազգագրական և բանահյուսական տեսակետից չափազանց հետաքրքրական է³: Նոր Բայազետի բարբառով «Շահնամեի» «Ռոստամ Ջալ» հայկական բանահյուսական տարբերակը գրի է առել Ե. Լալայանը: Այդ տարբերակը նրան պատմել է Նոր Բայազետի գավառի Ղըշլաղ գյուղի իննսունամյա մի ծերունի: 1906 թ. այն հրատարակվել է «Ազգագրական հանդեսի» էջերում⁴:

«Հայ ժողովուրդն իր կեցության ծանր պայմանների ժամանակ դիմել է իրանական վիպաշխարհի պատումներին, թարմացրել դրանք սեփական բանահյուսության ոգով և ամեն կերպ աշխատել Իրանի դյուցազնական հերոսներին կապել հայկական «Մասնա ծոեր» էպոսի հերոսներին»⁵: Իրանական վիպաշխարհի նկատմամբ հայ ժողովրդի հետաքրքրությունը հատկապես աճել է XI դ. երկրորդ կեսին, երբ թուրք-սելջուկ ցեղերը տարածվում էին Հայաստանում, ավերում ու այրում ծաղկող քաղաքներն ու գյուղերը: Այս իրողության արդյունքը լինում է այն, որ Հայաստանում ստեղծվում է «Ռոստամ Ջալ» ժողովրդական վեպը, որի բազմաթիվ պատումների մեծ մասը ավանդել են «Մասնա ծոեր» էպոսի ասացողները⁶:

Ըստ Մ.Աբեղյանի՝ «Շահնամեի» չափը դեռևս X դ. ծանոթ է եղել Գրիգոր Նարեկացուն: «Կարելի չէ կարծել, – պարզաբանում է Մ. Աբեղյանը, – թե հայերին Կոստանդին Երզնկացու ապրած շրջանում միայն ծանոթ է եղել Ֆիրդուսու «Շահնամեն» և նրա բանեցրած չափը, որ պարսից մեծ բանաստեղծից առաջ էլ ուրիշները գործածել են»:

Իրանի մշակույթի և ազգային ինքնության վկայագիրը պարսիկ մեծանուն բանաստեղծի ստեղծագործությունը, ավելի քան հազար

² Տե՛ս նախկին ՀՄԽՀ Կուլտուրայի պատմության ինստիտուտի «Ֆոլկլորի» արխիվում պահպանված հայ-իրանական վեպի պատումները:

³ Նոր Բայազետի ազգագրության մասին տե՛ս **Ե.Լալայեան**, Նոր Բայազետի գաւառ կամ Գեղարքունիք. Պատմական տեսութիւն. – *Ազգագրական հանդէս*, 1906, թ. 2, էջ 5-37:

⁴ Տե՛ս **Ե.Լալայեան**, Ռոստամ Ջալ /Նոր Բայազետի բարբառով/. – Նույն տեղում, էջ 69-85:

⁵ **Ավ.Հ.Շահումվարյան**, *Շահնամեն և հայկական աղբյուրները*, Ե., 1967, էջ 149:

⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 149-150:

տարի է, որ օտար արշավանքների դեմ իրանական մշակույթի մշտնջենական պահապանն է⁷:

Նախաֆիրդուսյան շրջանի հայ հեղինակներից ոմանք այնքան էլ բարենպաստ չեն արտահայտվել մասնավորապես Իրանի վիպական զրույցների մասին, անողոք քննադատության են ենթարկել Պարսից քեշը⁸, Զրադաշտի վարդապետությունը, «անմիտ և անհանճար բանից յարմարանք» են համարել Իրանի հարուստ մշակույթի ամեն մի արտահայտություն: Այդ վիճակը միանգամայն փոխվում է XI դ., երբ Հնդկաստանի, Իրանի, Մերձավոր Արևելքի, Հայաստանի, Վրաստանի, Ադվանից աշխարհի, Ռուսաստանի և այլ երկրների համար ստեղծվում են քաղաքական ծանր պայմաններ: Արևելքից՝ Միջին Ասիայի տափաստաններից, քոչվորները, Իրանում ծայր առած ներքին հակասություններից ու գժտություններից, ավատական վերնախավի մեջ ծագած անհամերաշխությունից օգտվելով, ասպատակում են երկիրը մինչև Ատրպատական: Նրանք նվաճում են նաև Միջագետքը, Հայաստանը, Վրաստանը, Ադվանքը և այլ երկրներ: Սակայն նույնիսկ այդ մտայլ ժամանակներում ժողովուրդները շարունակում էին ապրել իրենց անցյալի դյուցազնական հերոսների քաջագործությունների հիշողությամբ և օրինակով: Նվաճված ժողովուրդներն առավելապես ոգևորվում էին իրանական հերոս Ռոստամով: Տարածաշրջանի երկրներում տեղի է ունենում վիպական բազմաթիվ տարբերակների միացում, որոնք, վերամշակվելով նոր սոցիալական միջավայրին համապատասխան երանգներով, պատմվում են տարբեր ժողովուրդների մեջ, անցնում մեկից մյուսին: Նվաճված ժողովուրդների մտավորականները նման պայմաններում չէին կարող պատվ դիրք գրավել: Շուտով նրանք դիմում են անցյալի պատմություններին և հնագույն մատյաններին, դրանցից հանում պատմական ու դիցաբանական բազմաթիվ հերոսների անուններ, զրում նրանց մասին⁹:

«Շահնամեում» արտահայտված անձնանունների կարևոր մասը հիշատակվում է նաև «Շահնամեի» հայկական պատումներում հնչյունական տարբերակներով: Անձնանունների նշված հնչյունական գույգաբանությունները կարևոր լեզվաբանական նյութեր են միջին և

⁷ Տե՛ս **M. Mortazavai**, *Ferdosi va Shahname*, Tehran, 1369 (1990) 12:

⁸ Տե՛ս **Եզնիկ Կողբացի**, *Եղծ աղանդոց*, Ե., 1994, էջ 117:

⁹ Տե՛ս **Ավ. Հ Շահումվարյան**, նշվ. աշխ., էջ 165-166:

նոր հայերենի փոխառված բառերի հնչյունական անցումների և օրինաչափությունների քննության ասպարեզում: Օրինակ՝ Աֆրասիաբ /افراسياب, Աղա-էլիազ /اقا الیاس, Բեժանգ /بیژن (Bizan), Ղահրամանի դաթլ /Ղահրաման կտրիճ/ قهرمان, Դադնուրադ շահ /داغ مراد شاه, Ջալ /ژال, Ռուստամ /رستم, Ֆահրամարզ /فرامرز, Գիւ /گیو, Բուրզ /برزو: Հայկական տարբերակներում հիշատակվում են նաև քաղաքների և երկրների անուններ, օրինակ՝ Օզբեկստան /ازبکستان

Շահնամեի հայկական բանահյուսական տարբերակների բառապաշարի ուսումնասիրությունը ցույց է տալիս իրանական փոխառությունների լայն կիրառությունը, ինչպես օրինակ, *Գիւրզ* /گرز, *Քեաման* /کمان, *Գլխի թաս* /تاس, *Փերգահ-դադի* /پیرزاد, *դների մասկեամն* /مسکن, *Փուլատու-բանդու դև* /اديو پولادوند ايندا, *ադաթ* – *սովորություն* /عادت, *դուշման* /دشمن, *հարայ* /հչոց/ /هوا, *դալաք* /دلآک, *սուրիաթ* /դեմք/ /صورت, *ախ քաշել* /اه کشیدن, *ջահել* /جاهل, *խարջ* /خرج, *նալալադ* /نعلبند, *թադարուքը տէսավ* /նախպատրաստվեց/ /تدارک دیدن, *փահլավան* /پهلوان, *դիլքին* /հեռադիտակ/ /دوربين, *նէքար* /ծառա/ /نوکر, *ֆըրընտահ* /پرنده, *ջանկ-դիոլի կզանեն* /պատերազմի փող հնչեցնել/ /چنگ و دهل:

«Շահնամեի» հայկական բանահյուսական պատումների պատկերավոր արտահայտությունները, դարձվածքներն ու հարուստ ոճերը առանձնահատուկ նշանակություն ունեն հայ-իրանական բանահյուսության և բարբառագիտության բնագավառում:

Малек Мохаммади Мохаммад – Лингвостилистические особенности варианта Шахнаме на диалекте Нового Баязета. – Новый Баязет или Гегаркуникская область очень интересна не только с археологической, но и этнографической и фольклорной точек зрения. Выражения, фразы и стиль армянской фольклорной версии Шахнаме "Ростам Зал" в диалекте Нового Баязета имеют особую важность для армяно-иранской филологии и диалектологии.

Malek Mohammadi Mohammad – The Linguistic and Stylistic Features of the Armenian Variant of The Šāh-nāme in New Bayazid Dialect. – New Bayazid or Gegharkunik region is not only very interesting from the archaeological, but also ethnographic and folklore aspect. The expressions, phrases and rich styles of the Armenian folkloric version of “Rostam Zal” of the The Šāh-nāme in New Bayazid dialect have specific importance in the field of Armenian-Iranian philology and dialectology.

Մարգարյան Լուսինե (Լ.Ղ.Հ.,
«Մեսրոպ Մաշտոց» համալսարան)

**ԲԱՐԲԱՌԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ ԱՐՑԱԽԻ
ԲՆԱԿԱՆՈՒՆԵՐՈՒՄ**

Բարբառի/լեզվի/ պատմական զարգացման ընթացքը տեսանելիորեն ուրվագծվում է նրա բառապաշարային իրողություններում: Յուրաքանչյուր բառ ունի պատմություն և հասցեագրվում է որևէ ժամանակի՝ որոշարկելի, թե՛ ոչ: Տեղանունը՝ որպես բառային միավոր, ունի իր պատմությունը, կենսագրությունը, ազգագրությունը: Ի տարբերություն բառային մյուս միավորների՝ այն «պահպանողական» է, իմաստային տեղաշարժերի չի ենթարկվում և դառնում է իր ստեղծման ժամանակաշրջանի մասին հավաստի տեղեկույթ ամփոփող պահոց: Արցախի բնականուններում շերտագրված է Արցախի ժողովրդի և Արցախի բարբառի զարգացման ընթացքը: Եվ եթե լեզվական բոլոր մյուս իրողությունները, առավելապես բառային միավորները, տեղեկույթը հաղորդում են միայն իրենց ժամանակի մասին, և հաջորդող ժամանակները վկայվում են նրանց մեջ իմաստափոխական շարժերով ու փոխանցումներով, ապա տեղանունը հասցեագիրն է միայն մի ժամանակաշրջանի: Այն յուրօրինակ հնադարան է, որում արձանագրվածը հավաստի է առավելապես և տեղեկատվական նշանակալի արժեք ունի: Յուրաքանչյուր ժամանակաշրջան կարող է այս կամ այն տեղանվամբ վկայվել, այդպիսով՝ տեղանունը դառնում է ժամանակաշրջանի վկայագիր: Այդ առումով տեղանվան ուսումնասիրությունը կարևորվում է այն կրող ժողովրդի ու լեզվի ուսումնասիրության համար: Այդպես և Արցախի բնականունները արժանահավատորեն փաստում են Արցախի պատմությունը, Արցախի՝ վաղնջական շրջանից հայալեզու բնատարածք լինելու իրողությունը, վկայում նրա հարաբերությունները հնագույն ժողովուրդների հետ, նրա անցած բազմադարյա ճանապարհը նշում:

Արցախի տեղանվանական որոշ իրողությունների քննությամբ կերևակվեն լեզվական ազդեցությունները և համապատասխանաբար պատմական պայմանների անդրադարձումները:

Այսպես՝ **Արցախ** տեղանվան վկայությունը դեռևս մ.թ. ա. VIII դարից է. «Վանի կամ Արարատյան հայկական թագավորության երկու գահակալները մ.թ.ա. VIII դարում արձանագրել են, որ իրենք դեպի հյուսիս, հյուսիս-արևելք կատարած արշավանքներով իրենց տերությանն են միացրել նոր երկրամասեր, որոնց հետ է եղել նաև **Ադախ-Արցախը/ սեպագրերում՝ Ադախունի/**»¹: «Որ Ուրտեխեն կամ **Ադախունին** նույն Արցախն է, վկայում են նաև Մարդուրի Բ-ի արձանագրության մեջ հիշատակվող Արցախի գավառների, բնակավայրերի և գետերի՝ Հարձլանք, Պարծկանք, Պիանք, Գիշի, Տրտու, Կուրական անունները»²: «Մարդուրի Բ-ի կողմից Գանձադռան տարեգրության հատվածներից մեկում Բ.ա. 741 թ. տեղի ունեցած դեպքերի կապակցությամբ և Ռուսա Ա-ի՝ Շովինարի ժայռափոր արձանագրության մեջ հիշատակված է **Ադախունի** տեղանունը»³: Ռուսա թագավորի անվան հիշատակությամբ մի արձանագրություն է հայտնաբերվել Ստեփանակերտի ու Խոջալուի դամբարանաբլուրների պեղումների ժամանակ, որը վկայում է հայկական այդ թագավորության մեջ **Ադախ-Արցախ** հիշատակությունը⁴:

Հայ պատմագրության մեջ Արցախն առանձնանշվում է այսպես. «Տասներորդ նահանգն է **Արցախ** կամ **Արձախ**»⁵: Ինչպես հավաստում է Բ. Ուլուբաբյանը. «Եղիշեի և Ագաթանգեղոսի ցանկերում **Արցախն ու Ծաղեից** երկիրը նույնական էին: Եվ դա պայմանավորված է նրանով, որ իշխանանիստը Ծաղ-Սաղք ավանն էր և իշխանանիստի անունից էլ երկիրը ստացել էր «Ծաղեից» հորջորջումը»⁶:

¹ **Բ.Ուլուբաբյան**, *Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը*, Ե., 1994, էջ 12:

² **Յ.Փարազյան**, *Սեպագիր տեղանուններ Այրարատում և հարակից նահանգներում*, Եր., 1998, էջ 40-41:

³ **М.В.Никольский**, *Клинообразные надписи Закавказья ("Материалы по археологии Кавказа")* V, М., 1960, էջ XXXI, **Г.А. Меликишвили**, *Урартские клинообразные надписи*, М., 1960, էջ 266:

⁴ **Բ.Ուլուբաբյան**, *Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը*, Ե., 1994, էջ 18:

⁵ **Հ.Հիւբշման**, *Հին հայոց տեղոյ անունները*: Հայոց աշխարհին պատմական տեղեկագրութեան մասին ուսումնասիրութիւններով /թարգմ./ Հ.Բ.Պիլեզիկ-ճեան/, Վիեննա, 1907, էջ 100-101:

⁶ **Բ. Ուլուբաբյան**, *Խաչենի իշխանությունը X-XVI դդ.*, Ե., 1975, էջ 36:

Ադախ տեղանունը հիշատակված է նաև հետագա ժամանակների հայկական աղբյուրներում: «...Գնաց ի կողմ **Խաչենոյ, Տանձեայ և Ադախայ** կրկին անգամ»⁷: Խաչենն այստեղ երկրամասի կենտրոնականն էր ճանաչվում, Տանձիքը նրանից հյուսիս ընկած մասն էր, Մռավից հյուսիսարևմտյան հատվածը՝ ներառյալ Գոշավանքը, իսկ **Ադախը** պիտի լիներ **Արդախ**՝ Գանձասարն ու շրջակայքը⁸: «Ամենայն հավանականությամբ, **Ադախ-Արցախ** մեկ բնակավայրի անունը հետագայում տարածվել է ողջ նահանգի վրա»․ - նշում է Վ. Բալայանը⁹: Իր պատմալեզվաբանական ուսումնասիրության մեջ Գ. Ղափանցյանը այդպիսի երևույթը օրինաչափ է համարում տեղանվանակոչումներում՝ նշելով՝ «սկզբնապես անունը, որ կարող էր տարածքի մի որոշ մասն անվանել, հետագա ընդլայնմամբ կարող է տարածվել ողջ երկրում՝ իհարկե աշխարհաքաղաքական գործոններով պայմանավորված»¹⁰: Ինչպես օրինակ՝ **Խաչենք** էր կոչվում Արցախը X դ. «Խաչենը գահերեց իշխանների նստավայրն էր, ուստի և նրա անունով էին կոչվում ամբողջ նահանգն ու իշխանությունը»¹¹:

Լեզվաբանական քննությամբ ևս հաստատվում է **Արցախ** տեղանվան վաղնջականությունը: Ինչպես նշում է Ղափանցյանը, Հայաստանի տեղավանագիտության մեջ պահպանվել են մի շարք անուններ *-ա/ս* վերջավորությամբ¹²: Այդ *-ha* տեղանվանակերտ ածանցի գործածությունը տարածված էր: Այդ են վկայում բնակավայրերի, քաղաքների անունները¹³: Նա *-ha* մասնիկը համարում է խուռաուրարտական *-hi* ստացական մասնիկը՝ *i-a* հերթագայությամբ: Եվ նշում, որ այն առկա է հայկական տեղանվանագիտության մեջ, ինչպես՝ Աթթախ, Շատախ, Քաշախ, նաև Արձախ/Արցախ/¹⁴: Գ. Ջահուկյանն այս կարծիքը հավանական է համարում՝ նկատի ունենալով ածանցի

⁷ Մ. Կաղանկատվացի, *Պատմութիւն Աղուանից աշխարհի*, Ե., 1983, էջ 353:

⁸ Բ. Ուրուբաբյան, *Խաչենի իշխանությունը X-XVI դդ.*, էջ 116:

⁹ Վ. Ռ. Բալայան, *Արցախի պատմություն*, Ե., 2002, էջ 34:

¹⁰ Գր. Կապանյան, *Историко-лингвистические работы, К началу истории армян*, Е., 1956, էջ 43:

¹¹ Բ. Ուրուբաբյան, *Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը*, էջ 55:

¹² Գր. Կապանյան, *Историко-лингвистические работы, К началу истории армян*, էջ 435:

¹³ Նույն տեղում, էջ 41:

¹⁴ Նույն տեղում, էջ 50:

տարածման ոլորտը ու նաև հնարավոր համարում խեթալուվական աղբյուրից առաջացումը¹⁵: Հետաքրքիր է Լ. Հարությունյանի՝ **Արցախ** տեղանվան մեկնաբանությունը. «**Արցախ /Արձախ/,** Կաղարծի /կախված + արձն + ի /տեղանուններն ունեն նույն արմատները՝ **արձ/ն/**, որ նշանակում է քար, ժայռ: **Արցախ** բառի անաղարտ ձևն է **արձեղ**, իմաստը՝ քարեղեն, ժայռեղեն վայր: Արցախը ոչ միայն տարածաշրջանի, այլև աշխարհի հնագույն տեղանուններից է»¹⁶: Այդ վերլուծությունները վկայում են մինևույն իրողությունը՝ Արցախը վաղնջական շրջանից հայալեզու տարածք էր: Եվ դա փաստող հավաստի աղբյուրը լեզվական հուշարձանն է՝ տեղանունը:

Հայերի և հնագույն ժողովուրդների լեզվական առնչությունները վկայող հետաքրքրական վկայություններ կան Արցախի տեղանուններում: Հայ-խեթական լեզվադերասակցությունն է փաստում **Թաղավարդ** տեղանունը. խեթերեն watar-ջուր բառի հետ է կապվում: Ինչպես նշում է Գ. Ղափանցյանը՝ խեթերեն «widar» = հայերեն «urd» – ջուր իմաստով պահպանված ունենք Եղվարդ (ենթադրաբար՝ Վերին ջուր) և Թաղավարդ (ենթադրաբար՝ Ներքին ջուր) տեղանուններում¹⁷: **Թաղավարդ** տեղանվան նշյալ ստուգաբանությունը հիմնավորվում է նաև պատմաաշխարհագրական տվյալների ուսումնասիրությամբ: Բնակատեղին հարուստ էր ջրային ռեսուրսներով. թվով՝ 62 աղբյուր է նշում Յուրի Բեզլարյանը¹⁸: Մինչդեռ **Թաղավարդ** անվան ստուգաբանությունը, բացատրությունը բանավոր և գրավոր շատ աղբյուրներում տրվում է բառի ժամանակակից լեզվագագեղությանը գիտակցվող իմաստով՝ *վարդերի թաղ*¹⁹, ինչը թյուրըմբռնման տեղիք է տալիս: **Թաղավարդ** բնականվան հնագույն լինելն է փաստում նաև

¹⁵ Գ.Զահուկյան, *Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան*, Երևան, 1987, էջ 331:

¹⁶ Լ.Հարությունյան, *Նշխարներ Արցախի բնահյուսության, Չորրորդ գիրք*, Ստեփանակերտ, 2009, էջ 81:

¹⁷ Капанян Гр., *Историко-лингвистические работы, К начале истории армян*, էջ 82, Գր.Ղափանցյան, *Հայոց լեզվի պատմություն, Հին շրջան*, Ե., 1961, էջ 152:

¹⁸ Յ.Բեզլարյան, *Թաղավարդ. պատմագրական և փաստագրական տեղեկատվություն*, ձեռագիր, էջ 11:

¹⁹ Գ.Առուստամյան, *Թաղավարդ*, Ե., 1995, էջ 73, Ս.Ա.Մելքումյան, *Լեռնային Ղարաթաղ*, Ե., 1990, էջ 225:

թաղ բաղադրիչը: Այն հնդեվրոպական արմատ է՝ «թաղ, քաղաքա-մաս» նշանակությամբ²⁰: Արցախի տեղանուններում այն հաճախական կիրառություն ունի՝ ինչպես **Հին Թաղեր, Թաղուտ, Հոռաթաղ, Մոխրաթաղ, Վարնկաթաղ, Ճանկաթաղ /թաղ** բաղադրիչով՝ թվով 14 բնականուն /:

Արցախի որոշ տեղանունների ծագումը կապվում է հնագույն ցեղանունների հետ: Պատմության թատերաբեմում այսօր չկան այդ ցեղերը, բայց Արցախի որոշ տեղանուններով վկայվել է նրանց երբեմնի գոյությունը և հայերի հետ ունեցած բնակմերձակցությունը: Գ. Ղափանցյանն այդպիսի տեղանուններ է դիտում՝ *khaš* - քաշ-ից՝ Քաշաթաղը²¹, *sodi*-ից՝ Ծաղ/ Սողքը/, *vai*-ից՝ Վայոց ձորը, *lahiç*-ից՝ Աղահեճքը²²: Ստեփանոս Օրբելյանի ուսումնասիրության մեջ Քաշաթաղ գավառը մեկնաբանվում է՝ *թաղ/квартал/ քաշերի /քաշ ցեղանուն*²³: Բ. Ուլուբաբյանը Արցախի հնագույն բնակավայր **Հաթերքի** անվան ծագումը նույնպես կապում է **հաթեր** ցեղանվան հետ²⁴:

Ավելի ուշ՝ հունաբանության հնարավոր ազդեցությունն են վկայում Արցախի **Հարանդ, Վարանդա** գավառանուններում *անդ-այ/անդա* տեղանվանակերտ ցուցիչները: Գ. Ղափանցյանի դիտարկմամբ՝ *-anda* տեղանվանակազմական մասնիկի առկայությունը Հայոց, Վրաց աշխարհներում է նկատելի, և հին սեպագրական փաստերը այդ ածանցով տեղանուններ չեն վկայում Հայոց աշխարհի տարածքում: Դրանք առկայանում են արդեն ավելի ուշ և հիմնականում այն ժամանակաշրջանում, երբ նկատելի էր հունականության ազդեցությունը²⁵:

Քրիստոնեական հավատքն ու դերը վկայող բնականուններ էլ անշուշտ առկա են: Հավատքի ունեցած դերով են պայմանավորված

²⁰ Գ.Ջահուկյան , *Հայերեն ստուգաբանական բառարան*, 2010, էջ 255:

²¹ Գր.Капанцян, *Историко-лингвистические работы, К начале истории армян*, էջ 135:

²² Նույն տեղում, էջ 130:

²³ Ստեփանոս Օրբելյան, *Պատմութիւն նահանգին Միսական*, Թիֆլիս, 1911, էջ 617:

²⁴ Մ.Աղաջանյան, *Հաթերք. պատմությունը հնադարից մինչև մեր օրերը*, Ստեփանակերտ, 2012, էջ 24:

²⁵ Գր.Капанцян, *Историко-лингвистические работы, К начале истории армян*, էջ 415:

վան/ք/ բաղադրիչով բնականունները: Ըստ Գ. Ղափանցյանի՝ *վան*-ը փոքրասիական *va(n)*ու կամ *va(n)na* ածանցն է²⁶, որի իմաստային ճշգրտումը հայերենի տվյալներով է վերհանելի: Սկզբնական իմաստն էր *բնակավայր*, ապա՝ *օթևան*, *կացարան*: Վան/ք/ բաղադրիչով ունենք **Վանք**, **Դադիվանք** հին բնականունները, և նորանուն **Օիծեռնավանք**, **Երիցվանք** բնակավայրերը, որոնք կոչվել են իրենց իսկ տարածքում առկա վանքերի անվամբ: **-Վանք** բաղադրիչով բնականունների ծնունդը միանշանակ պայմանավորված է տվյալ տարածքում ապրող բնակչության համար նշյալ վանքերի խաղացած դերով, նրանց գործառական ու հասարակական նշանակությամբ: Այսպես՝ Մարտակերտի *Վանք* գյուղը «գտնվում է Գանձասարի վանքի ստորոտում, հնում եղել է վանքի մոտ և սպասարկել նրան: Այն կոչվել է **Գանձասարի** կամ **վանքի** գյուղ, հետագայում կրճատ **Վանք**»²⁷: **Վանք** հասարակ անվան հատկացումը տվյալ դեպքում Գանձասարի վանքի՝ շրջակա բնակավայրերի նկատմամբ ունեցած բացառիկ ուղղորդող դերով է պայմանավորված: Եվ այդ ընդգծված, բացառիկ հատկանիշը դարձել է տեղանվանիչ:

Արցախի բնականուններում նկատելիորեն մեծ է իրանական ազդեցությունը: Վկայված են այնպիսի միավորներ, որոնք գործառական ակտիվությամբ հիմք են տվել նոր կազմությունների և իրենց տեղանվանակերտ կենսունակությունը պահպանում են առ այսօր: Այսպես՝ *-apat*, *-kert*, *-šat*-, *-šen* և այլն:

apat-ը Հ. Աճառյանը²⁸ բացատրում է *շէն*, *շէն տեղ*: Նույն կերպ է մեկնաբանում Գ. Ջահուկյանը²⁹: Ինչպես նշում է Լ. Հովհաննիսյանը, այն գրաբարում և այժմ էլ տեղանվանակերտ ձևույթ է³⁰: Գ. Ղափանցյանը բառի նախնական իմաստը մեկնաբանում է որպես *ջրային տարածք*, ապա՝ *բնակության վայր*³¹: Բառի հականիշն է *անապատը՝ անջուր տարածք*: Արցախի **Խնապատ** բնականվան ստուգաբանությունը

²⁶ Գր.Капанцян, *Историко-лингвистические работы*, т. II, էջ 452:

²⁷ *Դիվանի հայ վիմագրության*, պրակ 5, Արցախ /Կազմ.՝ Ս.Գ.Բարխուդարյան/, Ե., 1982, էջ 73:

²⁸ Հ.Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, հ.Ա., 1926, էջ 227:

²⁹ Գ. Ջահուկյան, *Հայերեն ստուգաբանական բառարան*, էջ 67:

³⁰ Լ.Հովհաննիսյան, *Հայերենի իրանական փոխառությունները*, Ե., 1990, էջ 128:

³¹ Գր.Капанцян, *Историко-лингвистические работы*, т. II, էջ 160.:

հիմնավորում է ջրային տարածքի հետ ունցած աղերսը: Նախկինում՝ IX-XVII դդ., գյուղն անվանվում էր՝ **Ջրվեր** նաև **Ջրհոր**, որը հաստատվում է տեղում կատարած ուսումնասիրություններով և 1667թ. տվյալներով /ՀՊՊԿԱ, ֆ.57, ց.1., գ.3, թ.113³²: Մեկ այլ աղբյուրում նշվում է, որ գյուղի հին ու հայալեզու անունն է **Ջրավեր**՝ կազմված ջուր և վայր բաղադրիչներից: Թուրքական տիրապետության մի կարճ ժամանակաշրջանում գյուղն ուներ *Թեզխասրաբ* անունը: **Խոնապատ և Ջրավեր** անունները իմաստային առումով համատեղվում են³³: Այդ հիմքից ելնելով՝ հնարավոր ենք դիտում **Կուսապատ** գյուղի՝ ջրակողմ տարածք լինելու մեկնաբանությունը: Ոչ հավաստի աղբյուրներում՝ բանավոր զրույցների, ավանդությունների հիմամբ կառուցված, այն մեկնաբանվում է **կիսատ պատ** կամ **կուսի/կողմի պատ**. այդպիսի մեկնաբանությունը բառիմաստի պարզագույն վերլուծությունն է: Պատմական փաստը նշում է, որ այն գտնվում է Կուսապատ գետի հովտում՝ Ջրակն/Ճիրակն/ ձորի ձախափնյա լանջին³⁴: Վերջին հանգամանքը որոշակի հավաստիություն է հաղորդում մեր վարկածի ճշտությանը:

-**kert /անել, աստված**³⁵, գործ, գործվածք, շինություն³⁶ նախնական նշանակություններով/ տեղանվանակազմիչ միավորը գործառականորեն ակտիվ է Արցախի բնականվանակազմություններում՝ և՛ հին, և՛ նոր: Ինչպես **Տիգրանակերտը** հայերն անվանում են **Թգրանակերտ**, իսկ աղբյուրներից ենթադրելով, **Թառնակերտ**³⁷: Սրանք Սեբեոսի կողմից հիշատակված Տիգրանակերտ ավանի մնացորդներն են, որը շարունակել է գոյատևել նաև վաղ միջնադարում³⁸, **Դաստակերտը**³⁹, **Դոնա-**

³² Ս.Սարգսյան, *Արցախ. պատմաշխարհագրական ճշգրտումներ*, Ե., 1996, էջ 67:

³³ Լ.Հարությունյան, նշվ. աշխ., էջ 49:

³⁴ Ս.Ա.Մելքումյան, *Լեռնային Ղարաբաղ*, Ե., 1990, էջ 167: *Դիվան հայ վիմագրության*, պրակ 5, Արցախ, էջ 93::

³⁵ Гр.Капанян, Историко-лингвистические работы, т. II, էջ 161:

³⁶ Հ.Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, հ.Բ, 1926, էջ 579:

³⁷ *Դիվան հայ վիմագրության*, պրակ 5, Արցախ, էջ 135:

³⁸ Պատմութիւն Սեբեոսի եպիսկոպոսի ի Հերակլին, Թիֆլիս, 1912, էջ 148, 283:

³⁹ Ս.Սարգսյան, նշվ. աշխ., էջ 71: Ս. Եպս. Բարխուդարյանց, *Արցախ*, Ե., 1996, էջ 150: *Դիվան հայ վիմագրության*, պրակ 5, Արցախ, էջ 99:

կերտը՝ Կովսականի գավառում, ապա ավելի նոր ժամանակներում՝ Մարտակերտը, Ստեփանակերտը:

Իրանական ծագման այդ տեղանվանակերտ միավորները Արցախի տարածքում տարբեր կենսունակությամբ են դրսևորվել. առաջինը՝ *apat*-ը, նվազ հաճախականությամբ, մինչդեռ մայրենի լեզվում՝ իրաներենում, կայուն հաճախականությամբ գործածվելով, ինչպես նշում է Գ. Ղափանցյանը⁴⁰, իսկ երկրորդը՝ Արցախի տարածքում ակտիվ, իսկ մայրենի լեզվում(և հին, և նոր ժամանակներում)՝ նվազ հաճախականությամբ:

–*šat*-ը մայրենի լեզվում ունի *ուրախություն, բավականություն* իմաստը: Առկա էր որոշակի թվով աշխարհագրական անուններում և առավել տարածված էր թագավորների, իշխանների անուններով բաղադրված կառույցներով: Ղափանցյանը նշում է, որ իրանական –*šat*-ի աշխարհագրական գործառությունը մեռած է, և հայկական տեղանուններում առկա *շատ*-ը հայկական ծագում ու նկարագիր ունի:⁴¹ Լ. Հովհաննիսյանը հավաստում է, որ «արդի հայերենում *շատ*-ը գործուն տեղանվանական ձևույթ է, սակայն այն ընկալվում է *բազում, շատ* նշանակությամբ, իսկ գրաբարինը ծագումնաբանորեն կապում են պիլ. –*šat/ուրախ/* բառի հետ»: Ու նաև հավելում, որ «համոզիչ չի թվում տեղանվանակերտ *շատ* ձևույթի ծագումնաբանական կապը պիլ. –*šat/ուրախ/* բառի հետ: Ըստ երևույթին *շատ*-ը ենթադրում է այլ ծագում»⁴²: Անշուշտ, *բազում, առատ* նշանակությամբ է *շատ*-ը տեղանվանակազմությունների հիմքը դարձել, ապա և ժամանակի ընթացքում վերածվել սոսկ տեղանվանական ձևակազմիչ միավորի: Արցախի բնականուններում տեղանվանակերտ այս ձևույթը չունի լայն աշխարհագրություն: Այսօր բնականվանացանկում վկայված օրինակ է Հադրութի շրջանի **Վարդաշատ** գյուղն է: Գյուղի հին անունը նշվում է **Որթնաշատ**⁴³, **Վորդնաշատ**. Բարբառային արտասանությունն էլ փաստում է վերջիններիս հավաստիությունը՝ Վրթնաշատ: Բայց նրա ծագման հետ կապված շրջանառվող վարկածները միանշանակ չեն, քանի որ պատմական-աշխարհագրական տվյալները

⁴⁰ Գր.Капанцян, *Историко-лингвистические работы*, т. II, էջ 161:

⁴¹ Նույն տեղում, էջ 163:

⁴² Լ.Հովհաննիսյան, *Հայերենի իրանական փոխառությունները*, էջ 134:

⁴³ Մ.Մարգարյան, նշվ. աշխ., էջ 70:

տարակարծությունների հիմք են տալիս: Անվանումը կարող է կապվել խաղողի որթի հետ. պատմական աղբյուրում կա այսպիսի արձանագրություն. «Այստեղ/ Հաղրություն/ հիմնականում խաղողագիներ են, սակավ են թթայգիները»⁴⁴, նույն աղբյուրում մեկ այլ տեղեկույթ այլ վարկածի հիմք է տալիս՝ որդից առաջացած լինելու մասին. «1877 թ. Հաղրություն գործում էր մետաքսագործարան, որն ութ ամսվա ընթացքում արտադրում էր 50-60 փուլք մետաքս»⁴⁵: Չի բացառվում **Վարդանաշատ**-ի հնարավորությունը. այն նույն արտասանությունը կունենար բարբառում: Եվ սա հիմնավորելի է նրանով, որ հայկական տարածքում **շատ** բաղադրիչով առավել տարածված էր անհատների/թագավորների, իշխանների/ անուններով բաղադրված կառույցները: Ներկայիս **Վարդաշատ**-ը վերանվանում է և հնչողական նմանությամբ վերականգնված, գրականացված ձև՝ գուրկ պատմական հիմքից: Գրեթե բոլոր դեպքերում, երբ ստույգ չէ պատմական փաստը, կամ տեղանվան և նրա բառական նշանակության միջև խզվել է կապը, տեղանվան բացատրությունը կատարվում է բառիմաստի պարզ, երբեմն կամայական վերլուծությամբ ու վերականգնմամբ: Ունենք նորանուն **Օաղկաշատ** գյուղ, որը պատմական **Վաքա/Վահկա/** գյուղն է⁴⁶, ապա վերանվանվել էր **Ղշաղ**, ներկայումս էլ՝ **Օաղկաշատ**: Վերջինիս փաստում է **շատ** տեղանվանակերտ մասնիկի կենսունակությունը նաև նոր ժամանակներում: Ի տարբերություն առաջինի՝ **Օաղկաշատ**-ի մինչտեղանվանական իմաստը ակնհայտ է, իսկ **Վրրթնաշատ**-ում մինչտեղանվանական իմաստը մթագնվել է, և նրանում, բնականաբար, ավելի վառ է տեղանվանական էությունը, որի բացահայտումը հնարավոր է միայն պատմական պայմանների համալիր քննությամբ:

-**Տեն**-ը մայրենի լեզվում ունի *շինվածք, շինություն* իմաստը: Արցախի բնականվանակազմություն մեջ *շեն*-ը ամենակատիվ տեղանվանակազմիչ ձևույթն է, որը գործառական ակտիվությունն ու կենսունակությունը չի կորցրել: Հիմնականում հանդես է գալիս տեղանվանական բարդություններում՝ որպես երկրորդ բաղադրիչ: **Շեն** բաղադրիչի տեղանվանակերտման կենսունակության ապահովման

⁴⁴ СМОМПК, Выпуск 6, Тифлис, 1888., էջ 170:

⁴⁵ Նույն տեղում, էջ 174:

⁴⁶ Ս.Մարգարյան, նշվ. աշխ., էջ 69:

կարևոր պայման է նաև բարբառային բառաշերտում **շեն** բառի իմաստային նեղացումը՝ **ցյուղ** նշանակությամբ՝ մի կողմից, մյուս կողմից՝ իմաստային ծավալումը՝ **բնակավայր** նշանակությամբ: Այսպես՝ **Խոնաշեն, Բերդաշեն, Մաճկալաշեն, Նորշեն, Մեծ շեն, Սարուշեն, Սպիտակաշեն**, բնականուններում **շեն**-ի *բնակավայր* մինչտեղանվանական նշանակությունն ինքնին գիտակցելի չէ: Այն բարդությանը ձույլ է հանդես գալիս, մինչդեռ **Մաղաթաշեն, Սյուրիշեն, Սարգսաշեն, Մեյրիշեն, Սարդարաշեն, Տոնաշեն, Մեհտիշեն, Վազգենաշեն** բնականուններում վերականգնելի է *ցյուղ* մինչտեղանվանական նշանակությունը, այսինքն՝ նշյալ անձանց կողմից հիմնադրված կամ նրանց պատվին անվանակոչված գյուղ: **Շեն** մասնիկով բնականվանական կազմությունները հասցեագրվում են տարբեր ժամանակների, բայց նրանց գործածության հաճախականությունն և մեծ ակտիվությունն առավել նկատելի էր ֆեոդալական հասարակարգի, կալվածատիրական ժառանգորդության ժամանակաշրջանում:

Կոլխոզաշեն-ը խորհրդային ժամանակաշրջանի վերանվանում է՝ նախկին **Մաշադիշենի/Մուշադեշենի/** փոխարեն. և հատկանշելի է, որ **Կոլխոզաշեն** անվան մեջ **շեն**-ը գիտակցվում է որպես տեղանվանակերտ ձևակազմիչ միավոր՝ զուրկ բառային իմաստից՝ ի հակադրություն հին բնականվան, որից «փոխառվել» է եզրը: Նոր անվանումներում իբրև տեղանվանակերտ մասնիկ է գիտակցվում **շեն**-ը:

Արցախի բնականունները լավագույնս վկայում են այն լեզուն, բարբառն ու բարբառակիրը, ով անվանակոչել է: Քիչ չեն այն բնականունները, որոնք բարբառային ձևերով են վկայվել ու դարձել տեղանուններ: Այդպիսիք են՝ **Շակուտին/Օրկօտեն/, Մմակահողը, Տողը, Թբղուն, Մոշխմհատը, Կոճողոտը, Չափարը, Քերթը, Շեխերը:**

Արցախի բնականուններում մեծ և կենսունակ շերտը, ինչպես ենթադրելի էր, հայկական ծագման/հնդեվրոպական արմատներ/ տեղանիշ անուններն են, կամ նրանցով բաղադրված կազմությունները, ինչպիսիք են՝ **ձոր, թաղ, քար, սար, գոմ ցյուղ, հող, ջուր/աղբյուր/գետ, սար:** Ընդ որում դրանք կիրառական մեծ հաճախականությամբ դրսևորվել են ինչպես հին բնականունների կազմություններում, այնպես էլ հիմք են դառնում նոր բնակավայրերի անվանակոչումների համար: Այսպես՝ **Ձոր.** առավել տարածված են այդ բաղադրիչով բաղադրված տեղանվանական բարդությունները/ թվով 14 հին ու նոր բնականուն/՝ **Շամձոր/Օսմձոր, Շամձոր/, Խանձաձոր/Խընձաձոր/,**

Առաջածորը/Ըոչածոր/, Ուխտածոր, Բերդածոր, Բերծոր, Բանածոր («Այսօր գյուղը Բանածոր են կոչում: 200 տարի առաջ Բանագուր էր: 1736 թ. Աբրահամ Կրետացի կաթողիկոսի մոտ կարդում ենք Պնածոր: Ավելի վաղ հանդիպում ենք **Բերծոր, Բինածոր, Վանագուր, Բանածոր** և Արցախում տարածում գտած Շենատեղ և Նապատ անուններին»⁴⁷) և այլք: **Քար** բաղադրիչով՝ **Քարահունջ, Քարվաճառ, Քարագույխ/Քրրկրլոխ/2** բնակավայր/, **Գառնաքար/Գիռնաքար/** և այլն/թվով՝ 7 բնակավայր/: **Գոմ** բաղադրիչով բարդությունները հիմանականում-**եր** հոգնակերտով են դրսևորվում: Հոգնակերտ մասնիկի տեղանվանիչ կիրառությունը օրինաչափ էր դեռևս հնագույն ժամանակներում: Ցեղանունից, անձնանունից կամ աշխարհագրական այլ անուններից հոգնակերտ մասնիկների միջոցով էին կերտվում նաև առաջին տեղանունները՝ բնականունները, ինչպես՝ **Հայք, Վիրք, Տայք, Կորճայք, Վայք**: Արցախի բնականուններում հոգնակերտ մասնիկի տեղանվանակերտության հատկանիշը պահպանվել է և առկայացել նաև նոր կազմություններում, ինչպես՝ **Թաղեր, Ջրաղացներ, Գոմեր, Շեխեր** և այլն: **Գոմ** բաղադրիչով բանականուններ են՝ **Եզնագոմեր** («բնակավայրի մասին հիշատակվում է Ստեփանոս Օրբելյանի **Ժամանակագրությունում**»⁴⁸), **Պողոսագոմեր, Հարությունագոմեր, Սողոմոնագոմեր, Գոմեր**: Այդ բարդություններում **գոմ** բաղադրիչը՝ իբրև տեղանվանակազմիչ ձևույթ, նշանակությամբ համարժեք է տեղանվանակերտ մասնիկներ դարձած **շեն, հող** ձևույթներին: **Հող** բաղադրիչով բաղադրված բնականուններ են **Օմակահողը, Ղազարահողը, Պոռթահողը**: **Ջուր** և **աղբյուր** բառերը իբրև նունանիշներ են հանդես գալիս տեղանվանական կազմություններում: Արցախի բարբառում /ավագ սերնդի խոսքում/ այսօր էլ աղբյուրը **ջուր/ձուր/** անվամբ են կոչում: **Ջուր**-ով բաղադրված բնականունները ավելի վաղ շրջանի բնակավայրեր են, այսօր **աղբյուր**-ի աշխարհագրությունն ավելի լայն է/թվով՝ 11 բնականուն/: Արցախի հին բնականունները մեծ մասամբ երկրի աշխարհագրական ու տնտեսական բնութագիրն են տալիս: Այն, որ Արցախի բնականուններում իբրև տեղանվանահիմք հանդես են գալիս աշխարհագրական օբյեկտները, փաստում է այն իրողու-

⁴⁷ Ս.Ղույան, *Բանածոր*, Ե., 2013, էջ 13-15:

⁴⁸ **Զոհրաբ Ըոքոյան**, *Քաշաթաղի պատմության ուղեկիցները*, 21.11.2013. /hhpress.am/

թյունը, որ դրանց ճնունդը կապվում է հնագույն ժամանակների հետ, երբ աչքի համար տեսանելի երևույթներն անվանման հիմք են դարձել: Հետագայում արդեն այդ օբյեկտների հատկանիշներն են գուճակցվել նրանց:

Տեղանունը ժողովրդի ու նրա պատմության լեզվական հուշարձանն է, որ վկայում է տվյալ ժողովրդի անցած ճանապարհը, աշխարհընկալումն ու գաղափարական հասունությունը: Բայց և մինևնայն տեղանունը կարող է իր մեջ առնել տեղեկույթ մի քանի ժամանակաշրջանների մասին: Վերջիններս առավել դժվար վերլուծելի են, բայց ավելի կարևոր տվյալ հանրության պատմության ճանաչողության առումով: Արդեն հնուց վկայված տեղանունը կարող է նոր ժամանակի ոգուն, ընկալումներին, լեզվամտածողությանը հարազատ մեկնաբանվել: Այդ դեպքում կարևոր է պատմական ու աշխարհագրական տեղեկանքի առկայությունը, այլապես տեղանունը կդադարի տվյալ ժողովրդի կենսագրության կարևոր հասցե լինելուց: Եվ պատահական չէ, որ Արցախի բնակավայրերի անուններն իրենց պատմությամբ նույնանում են իրենց իսկ ժողովրդի պատմությանը. նույն անցքերը նկատելի են բնականուններում՝ նրանց փոխակերպումներում ու տեղաշարժերում: Արցախյան տարածքում բնակավայրերի վերանվանումների հաճախականությունը պայմանավորվում է հենց նրանով, որ այս տարածքում պատմական իրադարձությունները, «ճողվածքները» շատ էին, ու յուրաքանչյուրն իր հետքն է թողել: Այսպես՝ ներկայիս **Աստղաշեն** գյուղի պատմական անունը **Քարաղբյուր** էր⁴⁹: Մինչև թուրք սելջուկների հարձակումները գյուղը կոչվում էր **Քարաղբյուր**: Հետագայում կոչվել է **Դաշբուլաղ**, իսկ 1988 թ. վերանվանվել է **Արցախաշեն**⁵⁰, ապա և **Աստղաշեն**: Կամ՝ **Խնապատը**. նախկինում՝ **Ջրվեր**⁵¹, թուրքական տիրապետության մի կարճ շրջանում՝ **Թեզխարաբ**, ապա վերանվանվել էր **Ոսկեվազ**⁵², հետո՝ **Խանաբաղ**, ապա և՝ **Մրգաշատ** կամ **Այգեձոր**⁵³, ու ներկայումս՝ **Խնապատ**: Կամ՝ **Մարտունին**. մինչև XIX դարասկիզբն այս բնակավայրը կոչվել է **Խոնաշեն**, որից հետո վերանվանվել և կոչվել է **Նիկողանկա**,

⁴⁹ Մ.Մարգարյան, նշվ. աշխ., էջ 67:

⁵⁰ Մ.Ա.Մելքումյան, նշվ. աշխ., էջ 124:

⁵¹ Մ.Մարգարյան, նշվ. աշխ., էջ 67:

⁵² *ԼՂՀ պետական արխիվ*, ֆ. 1, ց. 1, գ. 17:

⁵³ Նույն տեղում:

հետո նորից **Խոնաշեն**, իսկ 1925թ. Ալ. Մյասնիկյանի ողբերգական մահից հետո/ նրա հեղափոխական ծածկանունը եղել է Մարտունի/ նրա հիշատակի հավերժացման խորհրդով բնակավայրն անվանել են **Մարտունի**: Եվ սա օրինաչափորեն տարածված երևույթ է Արցախի բնականուններում:

Տեղանունները՝ հին կամ նոր, անպայմանորեն արտացոլում են տվյալ երկրի ներքաղաքական վիճակը, ժողովրդի սոցիալական ու հասարակական կազմակերպվածության մակարդակը, ընկալումները, վերաբերմունքը, սերունդների հարաբերությունները: Որքան կամայական են անվանակոչումները, նույնքան անկայուն է երկրի ռազմավարությունը, իրականացվող քաղաքականությունը:

Խորհրդային ժամանակաշրջանն այդպիսի ժառանգություն է թողել՝ պատմական հիմքից կտրված կամայական վերանվանումներով, տեղանվան բառիմաստի ուղիղ թարգմանություններով, որոնք հիմնականում աղավաղել են տեղանվան նշանակությունը՝ տեղանվան արտահայտած բառիմաստով տեղանվանական էությունն ընկալելու թյուր գիտակցություն ամրակայելով: Ինչպես՝ **Քարագլուխ - Դաշբաշի, Բերդաձոր - Ղարաղըշլաղ, Քարին տակ - Դաշալթի** և այլն:

Ծնվել կամ վերանվանվել են նոր բնակավայրեր խորհրդային ժամանակաշրջանի գաղափարական ոգին արտահայտող անուններով՝ **Կոլխոզաշեն, Լենինական, Կարմիրական, Կարմիր շուկա, Կարմիր գյուղ** և այլն: Դրանցից որոշները ամրագրվել են ու արդեն հուշարձանն են իրենց ժամանակի, մի մասն էլ նորից վերանվանվել է: Այսօր էլ բնակավայրերը վերանվանելիս միշտ չէ պատմական զգուշություն դրսևորվում, ինչը ռազմավարորեն կարևոր է:

Ունենք նորածնունդ ու նորանուն բնակավայրեր, ինչպիսիք են՝ **Իվանյանը, Քաջավանը, Արցախամայրը, Արաքսավանը**: Նաև նոր բնակավայրեր՝ պատմական հին անուններով, որոնք պայմանավորված են վերաբնակումներով ու բնակչության տեղաշարժերով. Ինչպես՝ **Նոր Բրաջուր, Նոր Վերինշեն, Նոր Մարաղա, Նոր Բանանց, Նոր Գետաշեն** և այլն: Մեր պատմության մեջ անվանումների կրկնության կամ նույնականության հիմնական պատճառը բնակչության տեղափոխություն-տեղաշարժն է. սա ունի արդեն ազգային նկարագիր:

Արցախի բնականունները կնիքն են Արցախի պատմության ու աշխարհագրության, և դրանք՝ որպես բառային միավորներ, բառա-

պաշարի այն շերտն են կազմում, որոնցում և որոնցով ամրագրվում է ժամանակը: «Տեղանունը հողին դաշված մեր հիշողությունն է»⁵⁴:

Маркарян Лусинэ – Процесс исторического развития диалекта в ойконимах Арцаха. – В ойконимах Арцаха стратиграфированы процессы развития арцахского народа и диалекта. Исследование некоторых топонимических явлений Арцаха способствует выявлению фактов языкового влияния и исторических условий. Каждый период зафиксирован в ойконимах арцахского диалекта и в его истории.

Краткое исследование ойконимов, подтверждающих языковые связи древних народов до наших времен, свидетельствуют о том, что Арцах с древних времен являлся местом жительства армяноговорящего населения.

Margaryan Lusine – The Process of Historical Development of the Dialect in the Oykonyms of Artsakh. – The growth of the Artsakh people and the development of the dialect are stratigraphied in the oykonims of Artsakh. The analysis of some oykonims of Artsakh facilitate the identification of the facts of language influences and historical conditions. Each period was fixed on the oykonims of the Artsakh dialect and its history.

A brief study of place names, which verifies linguistic ties of the ancient peoples till our times, suggests that since the ancient times Artsakh has been the place of residence of the Armenian-speaking population.

⁵⁴ Լ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 50:

Մեսրոպյան Հայկանուշ (Հայաստան,
ԳԱԱ Հ.Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ)

ՏՈՆԱԿԱՆ ՕՐԵՐԻ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Տոնակատարություններն ու տոնական հանդիսությունները, ազգային ու ընծայաբերության ծիսական կարգը վաղնջական բնույթ ունեն և հայ ժողովրդի կենցաղի անկապտելի մասն ու ուղեկիցն են: Հեթանոսական հարուստ դիցարանով պայմանավորված բազմաթիվ տոներ՝ հավատալիքների ամբողջությամբ ու ծիսական արարողություններով, ապա և համապատասխան բառապաշարով, նախաքրիստոնեական ժամանակներից պահպանվել և հասել են մեր օրերը:

Հայտնի է, որ նորակառույց եկեղեցիները հիմնվում էին հեթանոսական մեծանների և կուռքերի արձանների տեղում, քանի որ դրանք ժողովրդի մեջ ընկալվում էին որպես սրբավայրեր: Այդ մասին Վ. Բոդյանը գրում է. «Մեծանները հնուց ի վեր եղել են մոնումենտալ կառույցներ, որոնց մեծ մասի հիմքերի վրա քրիստոնեական շրջանում կառուցվեցին եկեղեցիներ ու վանքեր»¹: Հին և նոր կրոնների, հեթանոսական և քրիստոնեական մշակույթների, կրթության ու դաստիարակության միաձուլումը չէր կարող չարտացոլվել լեզվի մեջ:

Ազգաթանգեղոսը և Փավստոս Բուզանդը ևս, վկայելով այս մասին, հավելում են, որ Գրիգոր Լուսավորիչը քրիստոնեական դաստիարակություն է տալիս հիմնականում քրմերի զավակներին²:

Չնայած քրիստոնյաների՝ հին կրոնի հանդեպ ունեցած անհանդուրժողական վերաբերմունքին՝ հեթանոսության տարրերը՝ որպես քրիստոնեական կենսակերպի ու տոների ծիսակարգային բաղադրիչներ, համարել են քրիստոնյա հայերի եկեղեցական տոնացույցը:

Այդպես նորացվել են Տրնդեզը, մատաղի³, ազգայիի և այլ արարողություններ: Հայ եկեղեցու տաղավար տոներից Քրիստոսի պայծառակերպության տոնը համընկնում է հեթանոսական Վարդավառ

¹ Վ. Բոդյան, *Հայ ազգագրություն*, Ե., 1974, էջ 215:

² Տե՛ս Ազգաթանգեղոս, *Պատմություն հայոց*, Ե., 1983, էջ 436, Փաւստոս Բուզանդ, *Պատմություն հայոց*, Ե., 1987, էջ 14:

³ Կռապաշտ հայերը զոհաբերության նպատակով որևէ կենդանի էին նետում կրակի մեջ:

տոնին: Նավասարդի 1-ը, Գրիգոր Լուսավորչի և Տրդատ թագավորի սահմանած կարգի համաձայն, տոնվել է նաև որպես Հովհաննես Կարապետի տոն⁴:

XVIII դ. Միմեոն Երևանցի կաթողիկոսի կողմից հաստատված և Քրիստոսի ծնունդով պայմանավորված տոմարի համաձայն՝ շաբաթվա օրերից առաջինը՝ միաշաբթին կամ կիրակին, նվիրվում է Բարձրյալի հիշատակությանն ու երկրպագությանը: Հ. Աճառյանը ԿԻԻՄ-ԿԷ գլխաբառի տակ գրում է, որ այն կազմված է հունարեն «տեր» բառից, նշանակում է «տերունական» և քրիստոնեության միջոցով տարածվել է մի շարք լեզուներում⁵: Որպես «տերունական» բառի հունանիշ՝ արցախցի բարբառախոսները գործառում են *գիրգիրսնկան* բաղադրությունը, իսկ Անկարայի թրքախոս հայերը՝ *կիրակի* հունաբանության *գիրէյի* հնչատարբերակը:

Անդրադառնալով կրոնակեղեցական մի շարք բառերի քննությանը՝ Վ. Առաքելյանը հիշատակում է նաև *կիրակի* բառը. «Առաջին անգամ Աստվածաշնչում են գրական քաղաքացիություն ստացել գայիսոն, ...եկեղեցի, եպիսկոպոս, ...կիրակե, ... հեթանոս, սաղմոս, քրիստոնեայ...» բառերը⁶:

Հ. Աճառյանն իր ստուգաբանական բառարանում ներկայացնում է *կիրակի* բառի բարբառային պատկերը, որին հավելել ենք բարբառագիտական մենագրություններում, լեզվի ինստիտուտի ձեռագիր նյութերում առկա, ինչպես նաև մեր հարցումների ընթացքում գրանցված հնչատարբերակները. ա) արևելյան բարբառախումբ. *կիրսնկի*, Կարճևան // *գիրսնգի*, Կաքավաբերդ // *կիրէկի*, Բուրդուր // *կըրսնկի*, Ագուլիս // *կըրէկի* // *գըրէգի*, Ղարաբաղ // *գիրսնկե*, Մեղրի // *գիրսնգի*, Շամախի // *գըրսնգի*, Բերդ // *գըրսնգի* // *գիրսնկի* // *գիրազի*, Գորիս // *գիրազի*, Լոռի, բ) արևմտյան բարբառախումբ. *գիրսնգե*, Տիգրանակերտ // *կիրսնկը*, Մոկս // *կըրակե*, Ոզմ // *կիրսնկի*, Կարին, Ախալցխա // *գիրազե*, Խարբերդ, Սվեդիա // *գիրէգի*, Ակն // *գիրէգի*, Սեբաստիա

⁴ Տե՛ս Ղ. Ալիշան, *Համապատում*, Վենետիկ, 1901, էջ 89-91:

⁵ Տե՛ս Հ. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան* (այսուհետև՝ ՀԱԲ), Կ. Ե., 1973, էջ 598:

⁶ Վ. Առաքելյան, *Հինգերորդ դարի հայ թարգմանական գրականության լեզուն և ոճը*, Ե., 1983, էջ 214:

// *գիագի*, Խոփա և Բորչկա // *գիյագի*, Ջեյթուն, Համշենի Առդլու // *գիյնգի*, Հաջըն // *գիրայի*, Կեսարիա, գ) պարսկահայ բարբառախումբ. *կիրնկի*, Մարաղա // *կիրնկի*, Ուրմիա // *կիրակի*, Մալմաստ // *կըրակե*, Մուժումբար և այլն: *Կիրակի* (Վան, Ջուղա, Նոր Ջուղա), *կիրագի* (Մուշ, Ալաշկերտ, Թիֆլիս), *գիրագի* (Երևան, Սվեդիա, Ջեյթուն, Մուչավա, Առտիալ, Ասլանբեկ, Մալաթիա, Նոր Նախիջևան, Պոլիս, Ռոդոսթո, Համշեն, Աշնակ) տարբերակները միաժամանակ բնորոշ են և՛ արևելյան, և՛ արևմտյան բարբառատարածքներին:

Կեսարացիների կրոնական տոնակարգում կա *գանները զենուք գիրագի*, որը նշվում է զոհաբերության և ազալիի հատուկ ծիսակարգերով:

Արարատյան բարբառի *կիրագմուտ* // *կիրագմուտ*-ը հատկանշում է սուրբ համարվող շաբաթ երեկոն: Ընդհանրապես պարսավելի էր սուրբ համարված շաբաթ օրերը աշխատելը, որը պայմանավորված է հրեական սովորույթով: Արաբկիրում այդ օրը բնորոշում են *անեծքմոր*, Պոլսում՝ *մայրը տղան անիծած օր*: Ըստ այդ նախապաշարմունքի՝ բարեկենդանի շաբաթ օրն աշխատողը ենթարկվում է մոր անեծքին և զրկվում աշխարհի բարիքներից:

Կիրակի տերունական օրվանից բացի, տարվա մեջ առանձնացվում են քրիստոնեական բովանդակություն ունեցող բազմաթիվ տոնական օրեր, որոնք բարբառախոս հայերի բառապաշարում ունեն գանազան հատկանշումներ: Օրինակ՝ Խիանում կոչում էին *նըշուլ օր*, Ադանայում՝ *հրաշալի օր*, Պոլսում՝ *հրամայված օր* և այսպես շարունակ: *Նըշուլ* կամ *հրաշալի* օրերի առթիվ կազմակերպվող հանդիսությունները ևս ունեն տարբեր անվանումներ: Օրինակ՝ Արաբկիրի բարբառում որևէ տոնի առթիվ կատարվող խնջույքը կոչվում է *կըթտուք*: Ակնհայտ է, որ կազմված է *կուլք* // *կիթ* + *տալ* բառերից, այսինքն՝ «բերքից, այգեկութից հյուրասիրելը, տալը»: Այդ բառով ակնցիներն անվանում են հատկապես անդրանիկ որդու մկրտությունից հետո տանը կատարվող տոնահանդեսը: Կրոնական տոնակատարության օր են նշում Երզնկայի *մախս օխտը*, Սվեդիայի բարբառի *կըճատ օր*⁷ լեզվական միավորները, որոնք հումանիշ են *կիրակի* բա-

⁷ Տե՛ս **Ս.Մալխասեանց**, *Հայերեն բացատրական բառարան*, հ 2, Ե., 1944, էջ 448:

ոին: Կարելի է ենթադրել, որ *կըճատ*՝ «կիսատ» են անվանել՝ նկատի առնելով օրվա ոչ ամբողջական աշխատանքային լինելը: Կարինում՝ գյուղական տոնախմբությունն անվանում էին դ՛երի. կարծում ենք՝ *տեր* > *դեր* բառի *տիրոջ* -*դերի* սեռական հոլովածն է, այսինքն՝ «տիրոջը նվիրված»: Արարատյան բարբառում գործառվում են *ազատ օր* և *կարմիր օր* հոմանիշները, որոնք նորագույն կազմություններ են՝ պատճառաբանված ժամանակակից տոնացույցներով, և միշտ չէ, որ ունեն կրոնատեղեցական բովանդակություն:

Շ. Աճառյանը «Ակումբ» գլխաբառի տակ նշում է *ագում օր* (Մանիսա, Նոր Նախիջևան, Պոլիս, Մեքաստիս), *ագամ օր* (Ադանա, Սվեդիս), *ագան օր* (Ջեյթուն) բարբառային կապակցությունները՝ «եկեղեցական մեծ տօնի հանդիսաւոր օր» բացատրությամբ⁸: Կեսարացիները գործառում են պարզապես *ագում* կամ *ագումօր* կցականը («Այսօր ագումօր է, ժամը շատ մարդ կըլլա»):

Կարնո բարբառի Բաբերդի խոսվածքի *հավկուր* անհողակապ բարդությամբ նշվում է տերունական տոների նախատոնակ երեկոն, որի հիմքում ընկած է այն սնահավատությունը, ըստ որի՝ այդ երեկոները աշխատողներն իրենց ենթարկում են հավկուր դառնալու վտանգի: Ակնհայտ է, որ այս հասկացության հիմքում ընկած է հրեաների շաբաթապահության ավանդույթը, որի մասին կարողում ենք Հին Կտակարանում. «Աստուած օրհնեց եօթներորդ օրը և սրբագործեց այն, որովհետև... հանգստացաւ իր այն բոլոր գործերից, որ սկսել էր անել»⁹:

Ադանայի և Պոլսի բարբառներում *հավկուր*¹⁰ բառն իմաստային կոնկրետացմամբ է ընկալվում և նշում է միայն Քրիստոսի հարության տոնից մինչև Համբարձում ընկած ժամանակահատվածը:

Հայաստանյայց եկեղեցու կանոնակարգով տարվա բոլոր օրերը հանդիսավոր են և բաժանվում են երկու մասի՝ տոնական և պահոց, այսինքն՝ տոների նախապատրաստության համար նախատեսված: «Եկեղեցական կանոնների համաձայն՝ յուրաքանչյուր շաբաթվա չո-

⁸ ՀԱԲ, հ.Ա, Ե., 1971, էջ 110:

⁹ *Օննոց*, Բ 3:

¹⁰ Հավկուր դառնալու անհանգստությամբ պայմանավորված այս նախապաշարմունքով է բացատրվում նաև ադանացի և պոլսեցի կանանց՝ այս ընթացքում երեկոները չաշխատելու պատճառաբանությունը:

րեքշաբթի և ուրբաթ օրերը պահոց են», – նշվում է «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարանում¹¹: Չորեքշաբթի օրը պահք է՝ ի պատիվ Աստվածամոր ավետման, ուրբաթ օրը ի նշանավորումն Հիսուսի խաչելության:

Ղարաբաղի բարբառի *պասաստոն* իսկական բարդությամբ հատկանշվում են բոլոր պահքատեսակները՝ առանց կոնկրետ օրերի և կերակրատեսակների տարբերակման: Պահոց հանդիսավոր օրերը հայտնի են *աթոռք* || *թ՛լ՛ղոսի կիրակի* || *յօթշապաթներաց* (Վան), *վարդավառի* || *եղյակ* || *եղիական* (Վասպուրական), *հոգուպահք* (Մարաշ), *թրթուրի*¹² (Ակն), *նըվասարդի*¹³ (Ագուլիս), *կենտապաս* (Երևան), *խեղդ աշուն* || *հորթաթոդի*¹⁴ || *հիսնակաց* (Մուշ) և այլ հոմանիշներով:

Բուն բարեկենդանի կիրակի երեկոյան կատարվող առտնին հանդեսը, երբ գերդաստանի բոլոր անդամները հավաքվում են գերդաստանի մեծի օրհնությունն ստանալու և բերանները փակելով Մեծ պահքը դիմավորելու՝ Երևանում կոչում են *բերանփակեք*, Ախալցխայում՝ *պասնուտ*: Պահքի առաջին օրը միմյանց շնորհավորելը Արարատյան բարբառում կոչվում է *պասշնորհավորեք*, Բուլանուխի խոսվածքում՝ *պասբարև*: Մուշում *պասբարև* բառիմաստի մասնավորեցում կա, և նշանակում է ծխական քահանայի տուն գնալով՝ պահքը շնորհավորելը, ինչպես նաև նորափեսաների՝ այդ նպատակով աներանց տուն գնալը:

¹¹ «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Ե., 2002, էջ 843:

¹² *Թրթուրի պահք* արտահայտության շուրջ մասնավոր մի գրույցի ժամանակ Լայդենի համալսարանի հայագետ Հ.Մարտիրոսյանի հետ եկանք այն եզրակացության, որ այս պահքը նվիրված է եղել շերամապահությանն ու շերամի թրթուրներին: Չօգուտ այս համոզման է խոսում նաև Ակնի՝ մետաքսի ճանապարհի վրա գտնվելը: Չի բացառվում նաև, որ թրթուրի կոչվի, որովհետև տարվա այդ օրերին են ծառերը սրսկելով պայքարում թրթուրների դեմ:

¹³ «... նոյեմբերի 13-ը, երբ նախրաթոդ է, և երբ վարձված ծառաները արձակվում են»: Մալմաստի թուրքերը ևս գործածում են այս բառը նախրաթոդ իմաստով (տե՛ս ՀԱԲ, հ. Բ, էջ 493):

¹⁴ Նոյեմբերի վերջին կատարվող ծիսական արարողություն, երբ վարձկան հուտադներն աշխատանքի ավարտից հետո ազատ են արձակվում:

Ակնում և Պրուսայի Ենիճե գյուղում աջը համբուրելու արարողությունը կոչվում էր *ձեռքպագ*: Ըստ ձեռքպագի ավանդույթի՝ Չասկին, կաղանդին, Քրիստոսի ծնունդին, ինչպես նաև Տյառնընդառաջին երիտասարդները կամ նորասականները գնում են մերձավոր ազգականների տները՝ մեծահասակների ձեռքը համբուրելու՝ ի նշան հարգանքի: Պոլսի բարբառում *ձեռքպագ* բառը իմաստի նեղացման է ենթարկվել: Ըստ այդմ՝ հարսանիքից ութ օր հետո, նաև տոնական օրերին հարսն ու փեսան գնում են հարսի հոր տուն՝ նրա ծնողների ձեռքերը համբուրելու:

Մարաշցիներն ունեն հարբաժատոն. Մեծ պահոց առաջին երկուշաբթի օրը կանայք չեն մանում, որպեսզի տարվա ընթացքում գինովցածների չհանդիպեն, քանի որ, ըստ հավատալիքի, նրանք կոտրում են ճախարակը կամ ծոում են ճաղերը:

Տոնական օրերը, ինչ խոսք, առանձնանում են նաև հատուկ կերակրատեսակներով և դրանց համապատասխան բազմաթիվ խոսքային միավորներով, որոնցից հիշատակենք մի քանիսը. *քեշկեգ*¹⁵ (Մալաթիա), *անուշապուր*¹⁶ (Պոլիս, Գյումրի), *ասիլ-բասիլ*¹⁷ (Լոռի), *վասիլ* (Ախալցխա), *կուլուլ գաթա* || *գամբոսա* (Երզնկա), *դըրմուզ* || *դարու*¹⁸ (Մասուն) և այլն:

¹⁵ Հավանաբար դա պետք է պատրաստված լինի հատկապես գազարով, քանի որ *քեշիր* Աղաբազարի բարբառում նշանակում է «ստեպդին, գազար» (տե՛ս **Հ.Աճառեան**, *Հայերեն գաղափարական բառարան*, Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Թ, Թիֆլիս, 1913, էջ 1109):

¹⁶ Նոր տարվա անուշապուր պատրաստելու համար խաշած ցորենով կաթսան մի ամբողջ գիշեր պահում են վերականների մեջ, որպեսզի հատիկները հնարավորինս խոշորանան: Հաջորդ օրը նորից եփում են՝ խառնելով մի քիչ այլուր, շաքար, չամիչ, կաղին, ընկույզ, նուշ և վարդաջուր: Ամանների մեջ լցնելուց հետո վրան ցանում են դարչին: «Նաւասարդի մէկը, որ մինչև հիմայ տօնում են. տարւայ մէջ այսօր միայն եփում են հերիսան, ինչպէս որ Պօլտում յունուարի 1-ին եփում են անուշապուրը» (ՀԱԲ, հ. Գ, Ե., 1977, էջ 436):

¹⁷ Նոր տարուն թխվող մարդակերպ փոքրիկ հաց: Բմաստավոխության հիմում հույն եկեղեցու Ամանորի առաջին օրվա սրբի՝ այի վասիլի՝ սուրբ Բարսեղի անունն է, որին էլ նվիրված են կաղանդի հունարեն երգերը:

¹⁸ Նոր տարվա կեսգիշերին թխվող բավականին մեծ հաց, որի մեջ դնում են բարեբախտություն և անհաջողություն խորհրդանշող փոքրիկ իրեր, որոնց պատահական բաշխումով էլ որոշում են տարվա երջանիկին կամ անհաջողակին:

Այսպիսով, ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բարբառախոս քրիստոնյա հանրության համար տարվա բոլոր օրերը տոնական են կամ տոնի նախապատրաստական, ունեն համաժողովրդական բնույթ և բնորոշվում են բառակազմական ու բառիմաստային առումով հետաքրքրություն ներկայացնող բազմաթիվ բառաձևերով ու արտահայտություններով:

Месропян Айкануш – О диалектных названиях праздничных дней. – В статье рассматриваются диалектные варианты названия праздничных дней. Исследование показывает, что для диалектоговорящей христианской общины все дни года праздничные, которые в диалектах армянского языка выражаются разными интересными словами, фразами и словосочетаниями.

Mesropyan Haykanush – On the Dialectal Names of Holidays. – The article examines the holidays' dialectal names. The exploration shows that for Christians speaking with dialect all days in a year are holidays or have holiday preparation meaning or popular character. Also, all the days are characterized by many word forms and expressions having interesting form of word combinations and meaning.

Միքայելյան Ժաննա (Հայաստան,
ԳԱԱ Հ.Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ)

**ՄՈՎՍԻ ՀԱՅ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԽՈՍՎԱԾՔԸ
ՀՈՎՍԵՓ ՕՐԲԵԼՈՒ ԴԻՏԱՐԿՄԱՍԲ**

Հայազգի մեծանուն արևելագետ, հայագետ ակադեմիկոս Հովսեփ Օրբելին 1906 թ., դեռևս Պետերբուրգի համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետում սովորելու տարիներին, Նիկողայոս Մառի արշավախմբի կազմում մասնակցում է Անի քաղաքի պեղումներին: Այժ գործուղումը շրջադարձային է դառնում երիտասարդ ուսանողի նախասիրությունների համար: Ինչպես Կ. Յուզբաշյանն է վկայում, Հ. Օրբելին «իսկական բարձրագույն կրթություն ստացավ Անիի պեղումների ժամանակ»¹:

Հ. Օրբելուն հատկապես հետաքրքրում էին Արևելքի՝ Հայաստանի, Վրաստանի, Իրանի պատմությունն ու մշակույթը: 1907 թ., պատմաբանասիրականի ուսումնառությանը զուգահեռ, Հ. Օրբելին ընդունվում է Պետերբուրգի համալսարանի արևելյան լեզուների ֆակուլտետը: 1909 թ. նա ավարտում է պատմաբանասիրական, իսկ 1911 թ.՝ արևելագիտության ֆակուլտետները: Երիտասարդին հատկապես գրավում էր հայագիտությունը: Դրան նպաստել էին Նիկողայոս Մառի հետ նրա շփումները, ով այն ժամանակ արևելագիտության ֆակուլտետի պրոֆեսոր էր:

1910 թ. Ն. Մառը Պետերբուրգի գիտությունների ակադեմիայի նիստում առաջարկում է Արևմտյան Հայաստանի Վան քաղաք ուղարկել մի մասնագետի, որը կգրադվեր Վանի նահանգի ճարտարապետական հնությունների ուսումնասիրության և տեղաբնակների՝ լեզվի ու բանահյուսության հավաքչական աշխատանքներով: Այս պատասխանատու և ծանր գործը հանձնարարվում է Հովսեփ Օրբելուն:

Մինչ մեկնելը Հ. Օրբելին ուսումնասիրում է Մուշի և Մոկսի խոսակցական լեզուներին վերաբերող գրավոր աղբյուրները: Նրան հատկապես հետաքրքրում է մոկսեցիների լեզուն, որում, ըստ Հ. Օրբելու, դեռևս շատ չբացահայտված և արխաիկ երևույթներ կային²:

¹ Կ.Յուզբաշյան, *Ակադեմիկոս Հովսեփ Օրբելի*, Ե., 1987, էջ 16:

² Տե՛ս Ի.Ա.Օրբели, *Фольклор и быт Мокса*, М., 1982, էջ 141:

1911 թ. ամռանը Պետերբուրգի համալսարանը տակավին նոր ավարտած Հ. Օրբելին հասնում է Վան, այնուհետև ուղևորվում Մոկս: Մոկսաց աշխարհը, շրջապատված լինելով բարձր, անառիկ լեռներով, կարծես մեկուսացած լինե՞ր արտաքին աշխարհից: Հատկապես ձմռանը ճանապարհները անանցանելի էին դառնում: Այդ հանգամանքները, ըստ երիտասարդ հետազոտողի, իրենց ազդեցությունն են թողել տեղացիների խոսակցական լեզվի ու սովորույթների վրա: Օգոստոս ամսին հագիվ երկու օրում Հ. Օրբելին Վանից հասնում է Մոկս: Առաջին անգամ մեկ ամիս հյուրընկալվում է քուրդ Մուրթուլա բեկի՝ տեղական պրիստավի տանը, որը, քրդերենից բացի, անաղարտ տիրապետում էր տեղի խոսակցական հայերենին և թուրքերենին: Հ. Օրբելին իր գրառումներում նկարագրում է Մուրթուլա բեկի կենցաղը, նիստուկացը, որով մեզ պարզ է դառնում պրիստավի ժողովրդավար էությունը: Նրա տունը չունե՞ր տեղական քրդական սովորություններին հարիր տեսք: Այն նորակառույց էր, սենյակների դասավորությունը և կահավորանքը «ա լա ֆրանկա» էր՝ ինչպես ընդունված էր այդ թվերին Թուրքիայի բարձրաշխարհիկ մարդկանց կենցաղում³: Բեկի տանը ամեն երեկո հավաքվում էին քուրդ և հայ բնակչության ամենատարբեր խավերի մարդիկ. հասարակ արհեստավորներ, գյուղացիներ, աղաներ, քաղաքային բնակիչներ և ավելի քիչ՝ բեկեր: Նրանք գալիս էին՝ բեկից զանազան խորհուրդներ լսելու կամ էլ որևէ հարցում օգնություն խնդրելու: Ի դեպ, Մուրթուլա բեկը հայերի մեծ բարեկամն էր: Հ. Օրբելուն պատմել էին, որ 1895-1896 թթ. հայկական ջարդերի ժամանակ նա մեծ օգնություն է ցույց տվել արևմտահայերից շատերին՝ փրկելով թուրքի յաթաղանից: Երկրորդ անգամ Հ. Օրբելին Մոկս է գնում 1912 թ. գարնանը և որոշ օրերի դարձյալ հյուրընկալվում է Մուրթուլային:

Մոկսաց աշխարհի բնակիչների վերաբերյալ երիտասարդ արևելագետը հետաքրքիր ժողովրդագրական տվյալներ է արձանագրում: Այսպես. 1911-1912 թթ. Մոկս քաղաքի բնակչության մեծ մասը՝ 672 տուն, հայեր էին, քրդերը՝ մուսուլման սուննիները, 640 տուն և 4-5 տուն էլ գնչուներ էին: Մշտական բնակվող թուրքեր չկային, միայն գործի բերումով թուրք չինովնիկների 3-4 ընտանիք կար: Սրանց նկատմամբ տեղացիների վերաբերմունքը բարեհաճ չէր: Իսկ հեռա-

³ Տե՛ս նույն տեղում, էջ 15:

վոր շրջաններում բնակվում էին քոչվոր քրդեր, որոնք խիստ տարբերվում էին նստակյաց կյանք վարող քրդերից և՛ իրենց լեզվով, և՛ սովորույթներով, և՛ տարագով ու նիստուկացով: Մոկաց աշխարհը՝ Մոկս քաղաքով ու գյուղերով հանդերձ, մտնում էր Վանի նահանգի մեջ: Հայերն ու նստակյաց կյանք վարող քրդերը, բացի Մոկուսից (այսպես էին տեղացիները անվանում Մոկս քաղաքը), ապրում էին 75 գյուղում և 5 ագարակում: Գյուղեր կային, որոնցում հիմնականում հայեր էին ապրում, կամ, ընդհակառակը, միայն քրդեր: Այդ բնակավայրերը իրարից գրեթե չէին տարբերվում⁴: Երիտասարդ հետազոտողը իր գործուղման ընթացքում նաև ամենայն մանրամասնությամբ գրի է առնում Մոկսի մշակութային կյանքը: Այս բոլոր փաստերը առ այսօր խիստ կարևորվում են՝ որպես տեղաբնակ հայերի ոչնչացումից անմիջապես առաջ ականատես գիտնականի վկայություններ:

Չ. Օրբելին հնագիտական հետազոտություններից զուգահեռ սկսում է ուսումնասիրել հայ և քուրդ բնակչության կենդանի խոսքը: Մոկաց աշխարհում երիտասարդն իրեն դրսևորում է որպես գիտակ բարբառագետ, թեպետ մինչ այդ նա բարբառագիտությամբ հատուկ չէր զբաղվել: Մոկսի՝ արևմտահայ բավականին խրթին բարբառային խոսքը ռուսական կրթությամբ, Թիֆլիսի բարբառի իմացությամբ երիտասարդի համար հեշտ չէր հասկանալի ու գրի առնելը: Նախ՝ նա ստիպված էր իր համար ստեղծել տառադարձման մի համակարգ, որով քիչ թե շատ դյուրին կդառնար խոսվածքի գրանցումը: Հարկ է նշել, որ այդ տառադարձումը նրան հետագայում պետք է եկել նաև տեղի քրդերեն խոսվածքի նյութերի գրանցման ժամանակ:

Մոկսի բարբառային նյութի հավաքման ընթացքում Չ. Օրբելին աշխատում էր խոսեցնել այնպիսի բարբառախոսների, որոնք երբևէ դուրս չէին եկել իրենց բնօրրանից կամ, գոնե, Վանի նահանգից, այսինքն՝ նա ընտրում էր հնարավորինս լավ պահպանված, այլ ազդեցություններից զերծ խոսքը: Չ. Օրբելին կազմում է Մոկսի խոսվածքի բավականին հարուստ բարբառային բառարան, որում գրանցում է «առօրյա կենցաղի բոլոր այն բառերն ու արտահայտությունները, որոնք վերաբերում են դաշտային աշխատանքներին, արհեստներին, անասունների ու բույսերի անուններին...»⁵: Հետաքրքիր է նշել, որ

⁴ Տե՛ս **И.А.Орбели**, *Избранные труды*, т. 2, Е., 2002, էջ 9:

⁵ **И.А.Орбели**, *Фольклор и быт Мокса*, էջ 46:

տեղացի երեխաներին դուր էր գալիս եկվոր երիտասարդի հավաքչական աշխատանքները, և իրենք էլ իրենց հերթին էին նրան օգնում՝ ամեն անգամ մոտը վազելով ու մի նոր բարբառային բառ հրամցնելով:

1911-1912 թթ. ձմռան ամիսներին Հ. Օրբելին, բնակվելով Վանում, մշակում է իր հավաքած բառային ու քերականական նյութերը: Երիտասարդ արևելագետը նաև որպես լեզվաբան էր մոտենում իր ուսումնասիրություններին: Եվ, ինչպես երևում է, ունենալով փայլուն լսողություն, որն ընդհանրապես անհրաժեշտ է բարբառային ցանկացած միավորի հնչյունական համակարգի ճիշտ ընկալման համար, կարողանում էր տարբերել Մոկս քաղաքի և շրջակա գյուղերի ենթախոսվածքների միջև գոյություն ունեցող նրբությունները: Հարկ է նշել, որ Մոկսի խոսվածքի՝ հատկապես հնչյունական համակարգը հայերեն բարբառների մեջ ամենաբարդերից մեկն է. այն ունի քմային ձայնավորներ ու քմային բաղաձայններ, հարուստ է երկբարբառներով ու եռաբարբառներով, որոնք նույն բառի սահմաններում հաճախ անկայուն դրսևորումներ են ի հայտ բերում: Հ. Օրբելին, 1912 թ. գարնանը վերադառնալով Մոկս, ուսումնասիրում է տեղի քրդերի լեզուն: Կազմում է նաև Մոկսց աշխարհի քրդերեն խոսվածքի բառարան:

Ավելի ուշ մեծանուն հայագետը մի քանի անգամ Լենինգրադում անդրադարձել է Մոկսից բերած նյութերի մշակմանը՝ դրանք պատրաստելով տպագրության: Ցավոք, Մոկսի խոսվածքի բառարանի վերջնական մշակման աշխատանքները Հ. Օրբելին այդպես էլ չի ավարտում: Եվ նրա կենդանության օրոք այն լույս չի տեսնում: Հայերեն և քրդերեն բարբառագիտական նյութերը պահպանվել են մեծ գիտնականի արխիվում քարտային համակարգով՝ առանձին թղթերի վրա և տեսրեքում՝ մեքենագիր կամ ձեռագիր վիճակում:

1972 թ. լույս է տեսնում Գ. Ջահուկյանի «Հայ բարբառագիտության ներածությունը», որում, հեղինակի առաջարկած բազմահատկանիշ դասակարգման մեթոդով, Վանի բարբառի մեջ ներառվում են Մոկսի, Շատախի, Ոզմի, Բաստի, Վանի խոսվածքները⁶: Գոյություն ունեն նաև Հ. Աճառյանի կարծիքը, որը Մոկսի լեզուն դասում էր Վանի ենթաբարբառների շարքում: Հետևելով բարբառների դասակարգման ջահուկյանական մեթոդին՝ մենք նույնպես Մոկսց աշխար-

⁶ Տե՛ս Գ.Ջահուկյան, *Հայ բարբառագիտության ներածություն*, Ե., 1972, էջ 134:

հի խոսակցական լեզուն համարում ենք *խոսվածք*, իսկ առանձին բնակավայրերինը՝ *ենթախոսվածք*:

1975 թ. Շ. Օրբելու ձեռագիր աշխատանքները հրատարակելու կապակցությամբ Լենինգրադ է գործուղվում Հայաստանի ԳԱ լեզվի ինստիտուտի ավագ գիտաշխատող Մ.Մուրադյանը: Մեծ հայագետի բարբառային անտիպ նյութերը նա պետք է պատրաստեր հրատարակման՝ նաև փոխելով դրանք՝ այն ժամանակվա համար ընդունված տառադարձումով: Այս գործի համար նման մասնագետի ընտրությունը պայմանավորված էր նրանով, որ Մ. Մուրադյանը տիրապետում էր Շատախի խոսվածքին, իսկ Սոկսի խոսվածքն էլ, հայտնի փաստ է, աղերսներ ուներ այդ խոսվածքի հետ:

Հետագայում Մ. Մուրադյանը նյութեր է քաղում Հայաստանում վերաբնակված նախկին մոկսեցի բարբառախոսներից և, հիմք ընդունելով Շ. Օրբելու գրառած բանահյուսական նյութերն ու բառարանը, հրատարակում խոսվածքին նվիրված մի ամբողջական աշխատանք⁷: Հեղինակն իր աշխատության նախաբանում բարձր գնահատական է տալիս տաղանդավոր հայագետի կատարած աշխատանքին: Երիտասարդ գիտնականը, ըստ Մ. Մուրադյանի, ճշտորեն է ընկալել ու ներկայացրել Սոկսի խոսվածքի թե՛ հնչյունական, թե՛ ձևաբանական հատկանիշները, ինչպես նաև քաղաքի և շրջակա գյուղերի ենթախոսվածքների նմանություններն ու տարբերությունները: Մ. Մուրադյանը գրում է, որ Շ. Օրբելու «բառարանի արժեքն առանձնապես բարձր է քերականական նշումներով, բառակապակցությունների ու խոսքանմուշների առկայությամբ, որոնք հնարավոր են դարձնում քաղաքի խոսվածքի գլխավոր հատկանիշների ճանաչումը»⁸:

Հետաքրքիր ծածկալեզու է հայտնաբերում Շ. Օրբելին Սոկսց աշխարհում իր գործուղման ընթացքում: Այն կոչվում էր կատանների «գողական» լեզու կամ «ծտի» լեզու: Բուրդ գգողներին ու թաղիքագործներին տեղացիները, ինչպես նաև ոգմեցիները, կոչում էին *կատաններ*: Նրանք ամեն աշնան հեռանում էին արտագնա աշխատանքների և վերադառնում միայն ուշ գարնանը: Հասնում էին մինչև Բաբու, Թիֆլիս, Դոնի Ռոստով: Կատանները հոչակված էին որպես բրդի

⁷ Տե՛ս Մ.Մուրադյան, Ուրվագիծ Սոկսի բարբառի. – *Հայերենի բարբառագիտական ատլաս*, հ. 1, Ե., 1982:

⁸ Նույն տեղում, էջ 111:

ճարպիկ գողեր: Հաճախակի գտնվելով օտար միջավայրերում՝ կատաններին անհրաժեշտ էր լինում ծածկալեզվով հաղորդակցվել միմյանց հետ: Նույնիսկ տեղի քրդերը և այլ մասնագիտությունների տեր հայերը չէին տիրապետում այդ լեզվին: Ոմանք դրա բառապաշարից մի քանի բառ գիտեին միայն:

Ի դեպ, ժամանակին Ռաֆֆին Արևմտյան Հայաստան կատարած ուղևորության մասին իր հուշերում գրանցել է հայերի՝ ծածկալեզու ունենալու փաստը: Արևմտահայ բարբառների հավաքչական աշխատանքներ կատարելիս մենք նույնպես որոշ բարբառախոսներից տեղեկացել ենք, որ մայրենի խոսվածքին զուգահեռ «ծտի» լեզու էլ է եղել իրենց հայրենի բնակավայրում: Մակայն դրան մենք՝ բարբառագետներս, հատուկ չենք անդրադարձել:

Կատանները դժկամությամբ էին Հ. Օրբելուն ծանոթացնում իրենց բառապաշարին ու լեզվական գաղտնիքներին՝ որքան էլ երիտասարդը հավատացնում էր, որ դրանք ինքը չի հրապարակի: Մի անգամ մի կատան Հ. Օրբելուն այսպես է պատասխանում. «Ուզում ես՝ մատնիր, միննույն է, վաղը ես ուրիշ բառեր կհորինեմ»⁹: Այսինքն՝ նրանց ծածկալեզուն ենթակա էր անընդհատ փոփոխության: Այդուամենայնիվ, երիտասարդ գիտնականի կազմած Մոկսի խոսվածքի բառարանը, որը պարունակում է չորս ու կես հազար բառ, դրանից 200-ը կատանների ծածկալեզվի բառապաշարից է: Ի դեպ, այդ ծածկալեզուն հեղինակը գրի է առել հիմնականում Ոզում, որտեղի կատանները նույնպես դրան տիրապետում էին:

Ծածկալեզուները սովորաբար հենվում են տվյալ լեզվական միավորի քերականական համակարգի վրա: Դրանք ստեղծողները հնչյունապես փոփոխում են բառերը, ոչ շատ թվով նոր բառեր են հորինում: Կան այլաբանություններ, օրինակ՝ կատանների լեզվով՝ *առուծ* նշանակում է «նախիր», *կյածօ* և *զըրօ* «թուրքական դրամ՝ լիր», *ծուրիլ* «փախնեյ», *ծէթիլ* «ուտել», *մատ* «եղբայր», *քյօյ* «փախուստ» և այլն: Իսկ հիմնական իմաստներով այս բառերը խոսվածքում այլ իմաստներ ունեն:

Երիտասարդ հետազոտողի ուշադրությունը գրավում է տեղի բնակչության երկլեզվության փաստը: Արևմտյան Հայաստանում, հայտնի է, պետական լեզուն թուրքերենն էր, բայց Մոկաց աշխարհում

⁹ И.А.Орбели, *Избранные труды*, т. 2, էջ 21:

գերիշխում էին խոսակցական հայերենն ու քրդերենը: Հ. Օրբելին նկատել էր, որ տեղաբնակ հայերը խոսքի մեջ հաճախ էին գործածում քրդերեն բառեր, երբեմն էլ ամբողջական նախադասություններ (թևավոր խոսքեր, ասույթներ): Տեղացի քրդերը, իրենց հերթին, Մոկսի խոսվածքից առանձին բառեր էին կիրառում իրենց խոսքում, բայց ոչ՝ ամբողջական նախադասություններ: Ուրեմն, պետք է եզրակացնել, որ հայերը ավելի լավ էին տիրապետում քրդերենին, քան քրդերը՝ հայերենին, քանի որ որևէ լեզվից նախադասություններով կապակցություններ փոխառելը տվյալ լեզվի՝ ավելի խորը իմացության արդյունք է:

Հ. Օրբելուն համոզել էին, որ առանց տեղական քրդերենի գրանցման Մոկսի խոսվածքի ուսումնասիրությունը ամբողջական չի կարող լինել: Եվ 1912 թ. զարնանը, ինչպես վերը նշեցինք, վերադառնալով Մոկս՝ նա սկսում է քրդերեն - ռուսերեն բառարանի համար նյութեր հավաքել՝ կիրառելով Մոկսի հայերեն խոսվածքի համար իր ստեղծած տառադարձումը: Երիտասարդ ուսումնասիրողն արդեն նկատել էր, որ զարմանալիորեն իրար նման են տեղի քրդերենի և Մոկսի խոսվածքի հնչյունները: Ի դեպ, երկու տարբեր լեզուների խոսվածքների հնչյունական համակարգերի այս նմանության խնդիրը, կարծում ենք, կարոտ է լուրջ ուսումնասիրության:

Մինչ Հ. Օրբելին հավաքչական գործով զբաղվողների ուշադրության կենտրոնում եղել են զուտ բանահյուսական նյութերը: Նա, որպես իսկական լեզվաբան, հայտնաբերում էր որոշակի տարբերություններ, անճշտություններ իր հավաքած նյութերի և մինչ այդ Մոկսի խոսվածքին վերաբերող հրատարակված աշխատանքների միջև:

Հետագայում, վերադառնալով Պետերբուրգ, Հ. Օրբելին կազմում է Մոկսի խոսվածք - ռուսերեն բառարան, որը բաղկացած էր տարբեր ծավալների 3 մասից: Բառարանի հիմքը հենց Մոկս քաղաքի ենթախոսվածքն էր, ինչպես նաև շրջակա 10 գյուղերի ենթախոսվածքները: Տեղեկատու բարբառախոսները մոտ 20 հոգի էին: Որոշ դեպքերում հեղինակն իր գրառումներում տեղեկություններ է տալիս բանախոսների վերաբերյալ:

Երկու գործուղումների ընթացքը տևել է 3 ամիս՝ 1911 և 1912 թթ.: Տաղանդավոր արևելագետը այդ կարճ ժամանակահատվածում կատարել է մանրակրկիտ ու ծավալուն աշխատանքներ թե՛ հուշարձանների ուսումնասիրության, թե՛ բարբառագիտական, թե՛ ազգա-

գրական ու բանահյուսական նյութերի հավաքման ուղղությամբ: Հարկ է նշել, որ Հ. Օրբելին խուսափում էր հեքիաթներ գրանցելուց, որովհետև նկատել էր, որ համարյա բոլոր հեքիաթասացները, որոնց հետ նա ծանոթացել էր, կա՛մ նոր էին վերադարձել օտարությունից, կամ էլ նախկինում երկար ժամանակով բացակայել էին իրենց երկրից և սկսել էին մայր խոսվածքին խառնել օտար բարբառային բառեր ու արտահայտություններ: Այսինքն՝ երիտասարդ հետազոտողը իր գործին մոտենում էր ամենայն պատասխանատվությամբ՝ որպես իսկական բարբառագետ ու բանահավաք: Նա նախընտրում էր փոքրածավալ, սրամիտ պատմություններ, առակներ գրի առնել, հազվադեպ էլ որևէ հեքիաթ էր գրանցում և հատկապես՝ գյուղերի բնակիչներից, որոնց լեզուն, բարբառային առումով, ավելի անաղարտ էր ու տարբերվում էր 5 թաղամաս ունեցող Մուկս քաղաքի ենթախոսվածքից:

Հ. Օրբելին Մոկկաց աշխարհում, հնագիտական ուսումնասիրություններին զուգահեռ հասցնում է ձայնագրել բարբառային լեզվով 35 բանահյուսական երգ և ավանդազրույց: Հաճախ երիտասարդը նյութերը գրի էր առնում տեղի շուկայի օրերին՝ հենց շուկայում: Իսկ երգերը ձայնագրում էր հարսանիքներում: Դրանց մեջ կային աշխարհիկ երգեր, որոնք այն ժամանակ արդեն աստիճանաբար անհետանալու եզրին էին: Եվ երգերում, և՛ բանահյուսական գրույցներում, հատկապես առակներում ու անեկդոտներում, հստակ գծագրվում են տեղացիների սովորույթները, նիստուկացը, հումորը: Առակները Հ. Օրբելին մեկնաբանում էր՝ որպես մշակութային պատմաբան՝ դրանց մեջ տեսնելով դրանց պատմական աղբյուրները, սոցիալական տարբեր շերտերի հարաբերությունները և մարդկանց աշխարհայացքը: Բանահյուսության բաժնում մեծ գիտնականի հիմնական խնդիրն էր ցույց տալ, որ այդ նյութերի հիմնական մասը, հատկապես առակները, մտնում են միջազգային «ռեպերտուարի» մեջ¹⁰: Օրինակ՝ կային այնպիսիները, որոնց աղբյուրները միջնադարյան հայ հեղինակներ Վարդան Այգեկցու, Մխիթար Գոշի կամ Կոիլովի առակներն էին: Գրանցված են սրամիտ պատմություններ Մոկսի խոսվածքով տերտերների կամ էլ մովլանների մասին՝ քրդերենով: Հ. Օրբելու կարծիքով՝ դրանք իրեն հիշեցնում էին Բոկասչյոյի «Դեկամերոնի» նովելներ-

¹⁰ Sté u **Р.Р.Орбели**, *О научных материалах собранных И.А.Орбели в Моксе.* – **И.А.Орбели**, Избранные труды, т. 2, էջ 14:

րը: Սակայն, մյուս կողմից էլ, երիտասարդ հետազոտողը համոզված էր, որ մոկսեցիները չէին կարող ծանոթ լինել այդ ստեղծագործությանը¹¹: Ուրեմն բերնեբերան պատմվելով էին նման պատմությունները փոխանցվում նաև հայ ժողովրդի տարբեր հատվածներին:

Հ. Օրբելուն հատկապես դուր էր եկել 2 գողի մասին հեքիաթը, որը նրան պատմել էր մի երիտասարդ: Այն հիշեցնում էր Հերոդոտոսի «Պատմություն» գրքի 2 գողի մասին հեքիաթը, որը տպագրվել է ավելի քան 40 լեզուների բանահյուսական նյութերում: Հ. Օրբելին գրանցել է նաև «Մոկաց Միքզա» և «Ասլան-աղա» պատումները, որոնք, այլ վերտառությամբ և որպես բալլադներ, ժամանակին թարգմանել էին Վ. Բրյուսովն ու Ն. Տիխոնովը¹²:

Տաղանդավոր արևելագետը եղավ առաջին և վերջին ականատեսն ու հետազոտողը Մոկաց աշխարհի հին հուշարձանների, տեղաբնակ հայերի ու քրդերի լեզուների բանահյուսության ու ազգագրության: Ընդամենը երեք տարի անց՝ 1915 թ., եղավ հայոց Մեծ եղեռնը, և Մոկաց աշխարհը հայերից դատարկվեց: Կոտորածից մազապուրծ փախած մոկսեցիների չնչին բեկորները, իրենց բախտակից մյուս արևմտահայերի նման, սփռվեցին աշխարհով մեկ: Ավաղ, այսօր Մոկսի խոսվածքը մեռած բարբառային միավորների շարքին է դասվում:

Մոկսի բանահյուսական ամբողջական նյութերը՝ դրանց ռուսերեն թարգմանությամբ հանդերձ, Մոկսի խոսվածք - ռուսերեն բառարանը լույս տեսան Հ. Օրբելու «Избранные труды», т. 2 աշխատության մեջ՝ 2002 թ., որում զետեղված էին նաև Մոկաց աշխարհի բնակչության ու նիստուկացի նկարագրությունները (մինչ այդ լույս էր տեսել նրա «Фольклор и быт Мокса» աշխատանքը): Հարկ է նշել, որ հեղինակի բարբառային նյութերը տպագրվել են Մ. Մուրադյանի կիրառած տառադարձամբ:

Микаелян Жанна – Армянский фольклор и говор Мокса в наблюдениях И. Орбели. – Летом 1911 г. И. Орбели параллельно с археологическим исследованием памятников Мокса изучает особенности говоров местных армян и курдов, обычаи двух народов и составляет словарь мокского говора. Он был последним армянином,

¹¹ Տե՛ս **И.А.Орбели**, *Фольклор и быт Мокса*, էջ 46:

¹² Տե՛ս նույն տեղում:

который до Геноцида армянского народа 1915 г. посетил Мокский край и провел неоценимые научные исследования.

Mikayelyan Zhanna – The Armenian Folklore and Subdialect of Moks in Hovsep Orbeli’s Observations. – While examining the archaeological monuments of Moks in summer 1911, Hovsep Orbeli carried out a parallel and profound study of linguistic peculiarities of local Armenians and Kurds, described their traditions and compiled a dictionary of the dialect of Moks. Prior to the Armenian Genocide, H. Orbeli was the last Armenian who carried out a research in the territory of Moks.

Միքայելյան Ժաննա (Հայաստան,
ԳԱԱ Հ.Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ)

**ԱՐՑԱՆԻ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՄԻՍՎՈՐՆԵՐԻ
ՔՄԱՅԻՆ ԲԱՂԱՋԱՅՆՆԵՐԸ**

Հնչյունների քմայնացման երևույթը հատուկ է հայերենի արևելյան և արևմտյան խմբակցությունների որոշ բարբառների, ինչպես՝ Ղարաբաղի, Մեղրու, Ագուլիսի, Վանի, Խոյ-Մարաղայի և այլն: Երկու տարածքների բարբառային այս միավորներում լայն գործառություն ունի Հ. Աճառյանի օրենքը, որը հեղինակը հայտնաբերել է *ա* ձայնավորի համար: Հիշեցնենք. «*Վանի բարբառում ա ձայնավորը գտնվելով գրաբարի թրթռուն պայթականից առաջացած խուլի մոտ, դառնում է ւ, իսկ խուլից առաջացած խուլի մոտ մնում է ա*»¹:

Ժամանակին, ուսումնասիրելով Ղարաբաղի բարբառի և Վասպուրականի տարածքի քմային ձայնավորները, մենք, փոքր լրացում կատարելով, այսպես ենք վերասահմանել սույն օրենքը. «*Հայերեն որոշ բարբառներում գրաբարյան ձայնեղ (հպական, կիսաշփական, շփական) բաղաձայններին համապատասխանող հնչյուններից հետո ձայնավորները ձեռք են բերել առաջնալեզվային արտասանությունը*»²: Այսինքն՝ դա վերաբերում է հետին շարքի *ա, օ, ու* ձայնավորների՝ առաջնալեզվայինի վերածվելուն: Ինչպես Հ. Աճառյանն է նկատել, նախ տվյալ դիրքի ձայնավորներն են քմայնանում, ապա այդ բարբառային միավորների մեծ մասի հնչյունական համակարգերում խլանում են քմային ձայնավորներին նախորդող ձայնեղ հպականները: Հարկ է նշել, որ *գ, կ, ք* բաղաձայնները և *լ* ձայնորդը նույնպես առաջնալեզվային արտասանություն են ձեռք բերում ոչ միայն քմային ձայնավորներից, այլ նաև առաջին շարքի փակ *է, ի, թույլ ի*՝ հնչյուններից առաջ: Այսպես՝ *գիրաղէն* «կույր աղիք» (Մեղրի), *քինսւյ, կինի, կւարի, կ'օղ, լէց* (Ղար.), *կ'օղ, կիք* «կայիք(դուք)» (Վան), *կէտ, կէրան*, «գերան», *յւււ* (Գորիս) և այլն:

¹ Հ.Աճառյան, *Քննություն Վանի բարբառի*, Ե., 1953, էջ 20:

² Ժ.Միքայելյան, *Վասպուրականի խոսվածքների քմային ձայնավորները*, Ե., 2009, էջ 69:

Ի դեպ, Ն. Աճառյանն ընդհանրապես լեզուներում և հատկապես հայերեն բարբառներում առաջնալեզվային կամ քմային է համարում *է, ի, օ, ու, ս* ձայնավորները³:

Բարբառներում քմայնացում կարող է լինել ձայնավորների ներդաշնակության օրենքով նույնպես՝ առաջընթաց, թե հետընթաց: Նման դեպքերում հաճախ առաջնային արտասանություն են ձեռք բերում քմայինների նախորդող կամ հաջորդող, այսինքն՝ կից վանկերի ձայնավորները, հետևաբար՝ առնմանությամբ կարող են քմայնանալ նաև դրանց հարևանությամբ գտնվող վերոհիշյալ բաղաձայնները: Օրինակ՝ *կիրօ՛ւ ս* «գրել է», *լիվնցւո՛ւ ս*, *մւրսնք՛* և այլն:

Ն. Աճառյանի օրենքը լայն գործառնություն ունի հատկապես Արցախի խոսվածքներում: Հնչյունական մի հետաքրքիր երևույթ է նկատվում այդ տարածքի բարբառային միավորներում, որը ցայսօր լուրջ ուշադրության չի արժանացել: Լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնում առկա՝ ըստ ՀԲԱ ծրագրի լրացված՝ Ղարաբաղի բարբառային նյութերը ուսումնասիրելիս պարզվում է, որ զանազան հանգամանքներում և դիրքերում քմայնանում են Ղարաբաղի տարածքի խոսվածքների գրեթե բոլոր բաղաձայնները: Կարծում ենք՝ սա եզակի բնույթ է կրում հայերեն տարբերակների հնչյունական հավակարգերում ընդհանրապես, քանի որ այլ բարբառային միավորներում նմանատիպ քմայնացում չի հանդիպում:

Կ. Դավթյանը «Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը» աշխատությունում բաղաձայնների կրած փոփոխությունների մասին խոսելիս՝ գրում է. «*Բառի սկզբին համարյա բոլոր ձայնավորներից առաջ ունենք գ>կ՝, միայն չի պատահում ծանր ա-ից և է-ից առաջ... Գ-ն քմայնանալով դառնում է կ՛, ք՛, գ՛ բոլոր դիրքերում... գ-ն ստացվում է բառամիջում և բառավերջում, մանավանդ՝ ն ռնգայինից հետո*»⁴: Գրքում հեղինակի բերած օրինակներից են՝ *քիրէլ* «գոլալ», *հինգէր*, *պէնձիգ* «կոտրած կավամանի կոտր», *ախճիգ*, *ծւնննգ*, *թւննգ*, *կարսնք*, *քըշէնք*, *քէցէք*՝ «զնացեք»: Խուլ հպական *կ-*ի քմայնացում կա մի քանի բառում, ինչպես՝ *կմարմուր*, *կմպիտ*, *զմնվնկ*, *պօպուկ*, *կրծիկ*, *պմրսնկ* և

³ Ն. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, Ե., 1971, էջ 111, 119:

⁴ Կ. Դավթյան, *Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը*, Ե., 1966, էջ 54:

այլն⁵: Քմային լ ձայնորդի համար նույնպես Կ. Դավթյանը մի քանի օրինակ է բերում՝ *տալի, քըննալի, կալի* (գոյականը)⁶: Այլ բաղաձայանների կրած նմանատիպ փոփոխության մասին ոչ մի խոսք չի ասվում:

Ա. Պողոսյանը Հաղորդի խոսվածքին նվիրված իր գրքում փաստել է *ի, տ, ք, ձ, ծ, ց, ճ, չ, ժ* քմային հնչյունների առկայությունը բարբառային այդ միավորում, որոնք, սակայն, ըստ հեղինակի, ունեն հազվադեպ գործածություն⁷:

«Ղարաբաղի բարբառի բառարան»-ի նախաբանում Ա. Սարգսյանը բաղաձայնների քմայնացման խնդրի վերաբերյալ գրում է. «*Գրական լեզվի համեմատությանը նորություններ են գ, կ, ք, լ բաղաձայնները, որոնք ներկայացնում են համապատասխան գ, կ, ք, լ հնչյունների քմային արտասանությունը*»: *Այնուհետև շարունակում է. «Հազվադեպ գործածություն ունեն ի, տ, ք, ձ, ծ, ց, ճ, չ, ժ բաղաձայնները, որոնք առանձին որակ չեն կազմում և հնչությանի արժեք չեն ներկայացնում*»⁸:

Նույն հեղինակն իր մեկ այլ գրքում՝ «Շաղախի ենթաբարբառը Հաղորդի ենթաբարբառի միջավայրում», այսպիսի միտք է արտահայտում. «*Ա. Պողոսյանը Հաղորդի ենթաբարբառին հատուկ է համարում ի, տ, ք, ձ, ծ, ց, ճ, չ բաղաձայնները: Այդպիսի հնչյունները, սակայն, ունեն հազվադեպ գործածություն և հատուկ չեն Շաղախի խոսվածքներին*»:

Հարկ է նշել, որ ն՝ Ա. Պողոսյանը, և՛ Ա. Սարգսյանը Ղարաբաղի խոսվածքների ոչ բոլոր քմայնացած բաղաձայններն են իրենց աշխատություններում հիշատակում: Բացի այդ, մեր կարծիքով՝ պարտադիր չէ, որ քմային բաղաձայնները հնչությանի արժեք ունենան, որպեսզի արժանի լինեն հատուկ քննության:

Ըստ մեր ձեռքի տակ եղած բարբառային նյութերի՝ փորձենք պարզել, թե նախ՝ որ դիրքերում, ինչ հանգամանքներում են խնդրո

⁵ Նույն տեղում, էջ 69:

⁶ Նույն տեղում, էջ 64:

⁷ Ա. Պողոսյան, *Հաղորդի բարբառը*, Ե., 1965, էջ 11:

⁸ Ա. Սարգսյան, *Ղարաբաղի բարբառի բառարան*, Ե., 2013, էջ 6:

⁹ Ա. Սարգսյան, *Շաղախի ենթաբարբառը Հաղորդի ենթաբարբառի միջավայրում*, Ստեփանակերտ, 2009, էջ 6:

առարկա տարածքի բաղաձայնները քմային արտասանություն ձևերը բերում՝ բացի առաջին շարքի ձայնավորների հարևանությամբ գործառնելուց: Օրինակ՝ բաղաձայնահանգ բառավերջ՝ քմային *գ. շէգ, խրրէգ, կրնէգ, ծաղէգ, լալէգ, կաղէգ, տէգ* «տիկ», *կրլտէգ* «թլվատ», *մրհէնգ, հէնգ, ճանգ, թանգ, տրպտրպոտիգ* «պեպենտ», *ախչիգ, փօջիգ, իլիգ, պօլիգ*: Քմային *ք.ախպերք, բադարաք, հրբասնէք, կրնանէք, ծէք, էք, յէկէք, խօխէք, փրպլէնք, սրբփանք* «ընկերք», *օտիք, նրստիք, քրնիք, պէժինք, կէ/ըմէք* «ատամ», *կէ/րէք, քրցիք, յէրգինք, կրլօլօք* «կոլոլենք», *բայց՝ ըխչըկերք, մարթիք, քրվերք, խէլունք, աղօթք*: Քմային *լի բառավերջում. քանդիլ, թոլլ, կանլ, ման կանլ, շօռ կանլ, կօնալ, հօլլ* «ուլ» *կուտիլ* «կույտանել», *հրորշնիլ* «կարմրել», *բայց՝ քինալ, կուփէ տալ* «հրել»: Եթէ *ի-ն*, փակ *է-ն* առաջին շարքի ձայնավորներ են, և նրանցից հետո բաղաձայնի քմային արտասանությունը բացատրելի է առնմանության օրենքով (օր *լիգք, կրնէգ*), ապա խոսվածքներում բաց *է-* ից, *օ-*ից հետո նկատվող բաղաձայնների քմայնացումը մնում է անբացատրելի:

Արցախի բարբառային միավորներում քիչ չեն քմային *գ, կ, ք*, բաղաձայններով ու քմային *լ* ձայնորդով բառերը: Եվ սրանց առաջնալեզվային արտասանություն է նկատվում նույնիսկ, երբ այդ հնչյունների հարևանությամբ չկա որևէ քմային ձայնավոր. *հինգըցնէլ* «հանգցնել», *քրնից* «գնաց», *կնործէս ա* «գործում է», *կինձու* «համեմի», *մար տալլ* «կոճկել», *կօխ տալլ, շաղ տալլ, մօլլ* «ծուխ» և այլն:

Կապանի տարածքի խոսվածքները, որոնք մտնում են Ղարաբաղի բարբառի մեջ, բառավերջում *գ-ի* առաջնալեզվային տարբերակներ են հայտաբերում, ինչպես *հէնգ, կրնէգ, ծաղէգ, խրրէգ*: Ընդհանրապես ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հատկապես *գ, կ, ք* բաղաձայնները միտում ունեն քմայնանալու: Ինչպես հնչյունաբան Ա. Ն. Խաչատրյանն է նկատում «... *հայերենի կ, գ, ք հնչույթները կազմավորվում են բերանի ոչ շատ խորը մասում, փափուկ քիմքի առաջամասում*», այսինքն՝ դրանք «*հետքմային պայթական բաղաձայններ են*»¹⁰: Ուշագրավ մեկ փաստ ենք նկատել. այն բարբառակիրները, որոնց խոսվածք-

¹⁰ Ա.Ն.Խաչատրյան, *Մամանակակից հայերենի հնչույթաբանություն*, Ե., 1988, էջ 168-169:

ներում բացակայում են քմային ձայնավորները, ինչպես նաև որևէ բարբառի չտիրապետողները, արևելյան լեզուներից կատարված փոխառյալ բառերի հիշյալ ձայնավորները չեն կարողանում արտասանել, այնինչ հեշտությամբ են արտաբերում *զ, կ, ք*: հնչյունները: Օրինակ՝ *գաղա, գառ, ջիգար, կյառ, քալալ, քաբաբ, քարթու, քոռ, քօփակ քաչալ* և այլն:

Խնդրո առարկա տարածքի խոսվածքներում բառավերջում այլ բաղաձայններ ևս առաջնալեզվային են դառնում. *պէնյ, փապ, դօրթ, սամէթ, կաթ* «կաթի», *քէթ, ճիթ, մէճ, խազ, խօզ, պօզ, վէզ* (բայց՝ *կնոզ*, ոչ քմային *զ*), *ճանջ, լիջ, պած* «կայծ», *քէմուլի, պուլիուլի* «կլոր», *պաչ, կիժ, թիժ* «թեժ» *կէչ, կօրէզ, աղտիրսիժ, բօմ* «քուն», *տափէմ* «գետնից», *շէնքէմ, սրնձէմ, սրզնէմ* և այլն:

Բառասկզբի և բառամիջի դիրքերում հանդիպող առաջնալեզվային բաղաձայններ. *կըռնաս* ա «դառնում է», *կնրսնոր, կիվօղ* «եկող», *կէցալ* «հագալ», *ծըրանու* «ծիրանի», *սնր/էքրրսնէն, օխծը* «օձ», *ծիժաղ, կուժի* «փոքր». *ժանգ, չանջ/ պէժիմք, խէժնը, դիյնը* «եղունգ», *տիմակէն, քիմում* ա «գնում է», *իմում* ա «լինում է», *իքմավէղ*. *խըզստակ* «ծոծրակ», *սիստսնկ, ճնւշ, ճնոր, ճօրէ* «շորի», *քրչէլագ, վէրցակ, խապիված*: Բարբառային նյութերի օրինակներում հաճախ է հանդիպում ռնգային քմայնացած ձայնորդ հնչյունը: Ինչպես օսցիլոգրաֆիկ քննությունից է պարզվում, ընդհանրապես այն հակում ունի քմային արտասանության¹¹:

Սակայն վերը նկարագրված հնչյունական պատկերը ոչ բոլոր գյուղերում է հանդիպում: Օրինակ՝ *զ, ք, կ, լ* հնչյուններից բացի բաղաձայնների այլ քմայնացում չի գրանցվել Շահումյանի շրջանի Բուզլուղ, Հաղրութի Խրըմանջուղ, Տումի գյուղերի խոսվածքների նյութերում:

Այսպիսով՝ մի բերելով վերոշարադրյալը, կարելի է կատարել որոշ դիտարկումներ: Նախ Ղարաբաղի տարածքի բարբառային միավորների այստեղ ներկայացված երևույթը՝ բաղաձայնների քմայնացումը, մասնագետների կողմից ուսումնասիրված չէ: Անգամ հարևան տարածքային միավորների (օրինակ՝ Ղարադաղի) հնչյունները նշված տեսանկյունով չեն քննվել:

¹¹ Ա.Ն.Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 174-175:

Ինչ վերաբերում է մեր եզրակացությանը, կարող ենք ասել միայն, որ բաղաձայնների քմայնացումը խնդրո առարկա տարածքում մեկ միասնական հնչյունական օրենքի գործառությամբ հնարավոր չէ բացատրել: Այսպես, եթե առաջնային շարքի ձայնավորների հարևանությամբ գտնվելով բաղաձայնները կարող էին քմայնանալ, ապա ինչ բացատրություն կարող է ունենալ հետին շարքի՝ հետնալեզվային ձայնավորների մոտ բաղաձայնների քմայնացումը:

Թերևս կարող ենք ենթադրել, որ հնարավոր է՝ սա որևէ այլ լեզվի ազդեցություն է: Հիշեցման կարգով ասենք, որ ռուսերենը երկար ժամանակ եղել է հաղորդակցման լեզու, և, հետո, Ղարաբաղի բնակչությունը միատարր չէ: Օրինակ՝ Հաղորդի շրջանի շատ գյուղերում վերաբնակվել են «...Ղարաղաղից տարբեր ժամանակներում գաղթած հայեր»¹²: Կան նաև Մարաղայից գաղթածներ: Սակայն չենք կարծում, թե խնդրո առարկա երևույթը այդ խոսվածքներից է ներթափանցել:

Микаелян Жанна – Палатальные согласные в говорах Арцаха. – В говорах Арцаха встречается такое фонетическое явление, которое не характерно для других армянских диалектов: в разных позициях в словах палатализируются почти все согласные звуки говоров территории Арцаха. Этот факт не поясняется никакими фонетическими законами, которые функционируют в этих говорах. Быть может, это влияние других языков (например, русского языка).

Mikayelyan Zhanna – Palatal Consonants in the Dialectical Units of Artsakh. – A phonetic phenomenon, typical of no other Armenian dialect, exists in the speech variants of Artsakh. Almost all the consonants of the system become palatalized in various word positions. This is not explained in any of the phonetic laws. Supposedly, it is a result of influences.

¹² Ա. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 5:

Միքայելյան Սոնա (Հայաստան,
ԳԱԱ Հ.Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ)

**ԱՆՏԻՈՔԻ ՀԱՅԵՐԵՆ ԲԱՐԲԱՌԱՆՄԲԻ ԱՐԱԲԱԿԱՆ
ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱԻՍԱՍՏԱՅԻՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ**

Անտիոքի հայերեն բարբառախմբի արաբական փոխառություններն առանձին ու համակողմանի չեն ուսումնասիրվել, քանի որ հայ բարբառագիտության հիմնական նպատակը եղել է հայերենի տարածքային միավորների հայտնաբերումն ու գիտական գրանցումը, որը, ի դեպ, այսօր էլ օրակարգային է: Հետազոտողները հաճախ բավարարվել են տարածքային այդ տարբերակներում առկա օտար փոխառությունների բառացանկեր ներկայացնելով: Մինչդեռ հավաքվել է բավական նյութ, որի բազմակողմանի քննության արդյունքներն անհրաժեշտ են ոչ միայն հայ բարբառագիտությանը:

Նյութի ոչ բավարար ուսումնասիրված լինելու պատճառով, կարծում ենք, հայերեն բարբառների օտար փոխառություններին վերաբերող հարցերում հեղինակավոր ուսումնասիրողներն անգամ երբեմն կատարում են համապատասխան փաստերով չհիմնավորված եզրակացություններ: Ա. Ղարիբյանը, օրինակ, Անտիոքի բարբառախմբի Արամոյի խոսվածքի¹ վերաբերյալ գրում է. «Արամոյի բարբառում արաբերեն բառերը կարելի է հաշվել հազարներով, իսկ հայերեն բառերը՝ շուրջ հազարի սահմաններում: Մակայն այդ բառերը կազմում են կենսական անհրաժեշտություն ներկայացնող բառապաշարը, այսպես կոչված բառային հիմնական ֆոնդը»²:

Հեղինակի կողմից, իհարկե, թվերը չափազանցված են: Անտիոքի բարբառային միավորների գիտական հետազոտություններում արաբական փոխառությունների ամենածավալուն բառացանկեր ներառում են Քեսաբի (մոտավորապես 600 բառային միավոր)³ և Սվե-

¹ Հայերենի բարբառային միավորների անվանումները ներկայացնում ենք ըստ բազմահատկանիշ վիճագրական դասակարգման սկզբունքի. տե՛ս **Գ.Ջահուկյան**, *Հայ բարբառագիտության ներածություն*, Ե., 1972, էջ 132-136:

² **Ա. Ղարիբյան**, *Հայերենի նորահայտ բարբառների մի նոր խումբ*, Ե., 1958, էջ 10:

³ Տե՛ս **Յ.Չոլաքեան**, *Քեսապի բարբառը*, Ե., 2009, էջ 310-341:

դիայի (մոտավորապես 300)⁴ խոսվածքներին նվիրված մենագրությունները: Թեպետ նշված աշխատանքների հեղինակները գրում են, որ արաբական փոխառությունների թիվն այդ բառացանկերում կարելի էր ավելի մեծացնել, բայց, իհարկե, ոչ հազարներով: Բացի այդ՝ Անտիոքի հայերեն բարբառախմբի բառապաշարում քիչ չեն նաև բառային հիմնական ֆոնդին վերաբերող արաբերեն բառաձևեր, ինչպես՝ *սմս* «1. հորեղբայր, 2. աներ» – արաբ. ‘amm, *սմունք* «հորեղբայրենք» – ‘amm + *-ունք*, *իման* «մարդ» – insān, *սմսմ* «մարդկություն» – ‘aālam «1.աշխարհ, 2. ժողովուրդ, հանրություն», *սյլուտ* (*սիլաթ*) «շատվոր, տոհմ» – ‘aā’ila, հզն. ‘aā’ilāt «ընտանիք, տոհմ, ազգանուն», *համար* «ընտանիք» – qamar, *մահիդու* «ստամոքս» – ma’ida, *հարբ* «զերեզման» – qabr, *հալ* «ասաց» – qāla «1.ասել, խոսել, 2. ասաց» և այլն:

Ա. Ղարիբյանի դիտարկումը, կարծում ենք, հենվում է Արամյոյի բնակիչ երկվեզվյա անհատի մատուցած նյութի վրա (ավելի մանրամասն ստորև):

Ա. Ղարիբյանը Արամյոյի խոսվածքի 70, 80, 90 բացարձակ, ինչպես նաև դասական թվականներ նշանակող բառերը համարում է արաբերեն, սակայն դրանք որևէ ձևով (հայերեն տառադարձամբ կամ արաբական գրությամբ) իր հիշյալ աշխատանքում արտահայտված չեն⁵: Մինչդեռ Անտիոքի բարբառային միավորների մյուս հետազոտողները, իրենց աշխատանքներում բերելով այդ ձևերը՝ *յլթմըշ*, *սսքզան*, *դոհզան* և *-հնջա* մասնիկով կազմված դասական թվականները՝ *իքինջա*, *ուչունջա* և այլն, նշում են դրանց թուրքական ծագումը:

Որոշ վերապահությամբ, կարծում ենք՝ կարելի է ընդունել Ա. Ղարիբյանի այն տեսակետը, ըստ որի՝ Արամյոյի (նաև բարբառախմբի մյուս խոսվածքների) «քերականական կառուցվածքի մեջ արաբերենի հետք չկա»⁶:

Ինչպես հայտնի է, արաբերենը թեքական լեզու է, իսկ հայերենը՝ կցական: Երկու լեզուներին (նաև բարբառներին) էլ, սակայն, բնորոշ է նախահար և վերջահար ածանցումը, այսինքն՝ մասնիկների

⁴ Տե՛ս **Տ.Անդրեասյան**, *Սվեդիայի բարբառ*, Ե., 1967, էջ 168-187:

⁵ Տե՛ս **Ա.Ղարիբյան**, նշվ. աշխ., էջ 10, 34:

⁶ Նույն տեղում, էջ 10:

կցումով նոր բառաձևերի ստեղծումը: Անտիոքի բարբառախմբում արաբերենի այդպիսի մասնիկների գործառույթություն չենք գտնում:

Բառարմատների կառուցվածքային յուրահատկությունների առումով ևս հայերենը և արաբերենը խիստ տարբեր են: Հայերենը վանկային կամ բաղաձայնաձայնավորային, իսկ արաբերենը բաղաձայնական տիպի լեզու է⁷: Այս առումով իրենց մայրենի լեզուներից չեն տարբերվում նաև Անտիոքի հայերեն բարբառները և արաբերենի սիրիական բարբառը: Այդ է պատճառը, որ Անտիոքի հայերեն տարածքային տարբերակներն արաբերենից բառարմատներ՝ որպես այդպիսիք, չեն կարող վերցնել, քանի որ արաբերենի արմատի իմաստի հիմնական կրողը եռաբաղաձայն հաջորդականությունն է, որ ձևաիմաստային կոնկրետություն է ստանում այս կամ այն ձայնավորի (ձայնավորների) ներառմամբ, այսինքն՝ վանկի (վանկերի) ձևավորմամբ (օր.՝ *ğls* արմատից՝ *ğālis* «նստող», *ğālis* «հարևան», *mağlis* «խորհուրդ» և այլն): Այդ իսկ պատճառով թեև արաբերեն բառը հաճախ Անտիոքի հայերեն բարբառային միավորներ է թափանցում խոսքի շղթայում ձեռք բերած իր ձևաբանական դրսևորմամբ, բայց փոխառու լեզվում (բարբառում) ընկալվում է որպես ուղիղ բառաձև՝ արմատ: Այսպես՝ Քեսաբի, Սվեդիայի բառապաշարում առանձին դեպքերում արաբերենի հոգնակի թվով բառաձևերը, ընկալվում են որպես եզակի թվով բառեր՝ *mınu* «կանոն, կարգ» – ծագում է արաբ. ’usūl, «կանոններ, դրույթներ» ձևից, որը ’aşl բառի հոգնակին է, *hınuşu* «սահման» – հստակ «սահմաններ», եզ. թ. hadd, *ğırız* «դրուշ, դրամի տեսակ» – գրսի «դրամներ», եզ. թ. qırş, *hıwıwı* (*hıwıwı*) «շրջապատել» – հալազ, եզ. թ. halqa «1. մատանի, օղ, 2. օղակ» և այլն:

Արաբական փոխառությունների մի մասը ժամանակի ընթացքում հիմնական բառապաշարի անդամներ են դարձել և նույնպիսի բառակազմական կառույցների մեջ են մտնում, ինչ և բնիկ բառերը, ինչպես՝ *hıwıwı-ı* «պարանով կապկպել» – հաբ (պարան), *şıwıwı-nıwı-nıwı* «օճառոտ» – sâbûn (օճառ), *şıwıwı-nıwı* «հորեղբայրենք» – ‘amm (հորեղբայր), *şıwıwı-ı* «փոքր գմբեթ» – qubba, *şıwıwı* «ազատ» – «1.

⁷ Տե՛ս Գ.Ջաուկյան, *Универсальная теория языка*, Е., 1999, էջ 106:

մաքուր, անկեղծ, 2.ազատ», *խսնիլի* «ազատել» - xalaşa «1. մաքուր, անկեղծ լինել, 2. ազատ լինել» և այլն:

Հատկապես բայական ձևերում համապատասխան իմաստներն արտահայտվում են ոչ թե մասնիկների կցումով, այլ՝ նկարագրական եղանակով: Կազմվում են հիմնականում հարադիր բարդություններ, ինչպես՝ *հսնիլ ինիլ (ինիլ < անել)* «մարսել» – արաբ. hađm «մարտդություն», *սնիլսնիլ ինիլ* «արագ անել, արագացնել» – ‘ağala «արագություն, աճապարանք», *կսնիլ ինիլ, ընել (ինիլ, ընել < լինել)* «ընդունել» – qābil «ընդունող, դիմավորող (լինել)», *իֆթարի ինիլ* «նախաճաշել» – ifār «նախաճաշ» և այլն:

Չ. Չոլաքյանն առաջին տիպի կազմությունները համարում է արաբերենից անմիջական փոխառություններ, իսկ վերջինները՝ թուրքերենի ազդեցությամբ կազմված ձևեր⁸: Սակայն, ինչպես հայտնի է, հայերենին նույնպես բնորոշ է բայիմաստի նկարագրական ձևերով արտահայտվելը, և դրանք ոչ միշտ են նորաբանություններ:

Անտիոքի հայերեն բարբառախմբի արաբական փոխառությունները աշխատել ենք դասակարգել ըստ իմաստային-թեմատիկ խմբերի, որի համար հիմք են ծառայել Գ. Ջահուկյանի կազմած քսաներեք համապատասխան խմբերը⁹: Հեղինակն առաջնորդվել է ընդհանուր լեզվաբանության մեջ ընդունված սկզբունքներով, որոնք արտացոլված են Դ. Բաքի բառարանում¹⁰. այդ պատճառով է, որ բաժանումները (22 խումբ) միմյանցից գրեթե չեն տարբերվում: Գ. Ջահուկյանը նույնպես բառապաշարը դասակարգում է ըստ բառիմաստային մերձավորության, բացառությամբ իր կողմից ավելացրած 23-րդ խմբի (դերանուններ և մասնիկներ), որտեղ բառերն ընդգրկվում են խոսքիմասային ընդհանրության սկզբունքով¹¹:

Այս խմբերում աշխատել ենք ներառել Անտիոքի հայերեն բարբառախմբում առկա արաբական փոխառությունների՝ մեր ձեռքի

⁸ Տե՛ս Թ. Չոլաքյան, նշվ. աշխ., էջ 183:

⁹ Տե՛ս Գ. Ջահուկյան, *Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան*, Ե., 1987, էջ 204-222:

¹⁰ Տե՛ս C.D.Buck, *A Dictionary of selected synonyms in the principal Indo-European languages*, Chicago-London, 1965:

¹¹ Տե՛ս Գ. Ջահուկյան, *Հայոց լեզվի պատմություն...*, էջ 206:

տակ եղած ողջ նյութը, որի հետազոտությունը թույլ է տալիս կատարել որոշ եզրակացություններ:

Խնդրո առարկա բարբառախմբի միավորների արաբական փոխառություններն ընդգրկվում են հիշյալ բոլոր խմբերում: Խոսվածքների բառապաշարում արաբական փոխառություններից, ինչպես և պետք էր սպասել, առավել մեծ թիվ են կազմում կենցաղային իրերի և հասկացությունների անվանումները՝ ուտելիք, ըմպելիք, կերակրի պատրաստում, ամանեղեն, հագուստ, անձնական զարդարանք, ինչպես նաև երկրագործական, բուսական աշխարհին վերաբերող բառերը, ինչպես՝ *ըրրոզ* «բրինձ» – արաբ. *urz*, *մըշմէշ* «ծիրան» – *mišmiša*, *պէտիէխ* «սեխ» – *baṭīx*, *թէնճերու* «կաթսա» – *taṅğara*, *շւրպւթ* «օշարակ» – *šarbāt*, *ղարպուշ* «գլխարկ» – *ṭarbūš* «ֆես», *կումաշ* «կերպաս» – *qumāš* «1. կտոր 2. կտավ», *ճուրպա* «գուլպա» – *ğaurab*, *շըրըտ* «ժապավեն» – *šarīt*, *բահուն* «ռեհան» – *rihān*, *զընպօր* «իշամեղու» – *zunbūr*, *հալըզուն* «խխունջ» – *ḥalazūn* և այլն:

Քանի որ նշված վայրերի հայ բարբառախոսները բնակվում են օտար պետության մեջ, հասարակական հարաբերություններ, պետական, սոցիալ-տնտեսական կառույցներ, օրենսդրական-իրավական հասկացություններ և այլն նշանակող բառերը նրանք հիմնականում փոխառել են արաբերենից. *մուտըր* «կատավարիչ» – արաբ. *mudīr*, *մէջըրս* «ժողով» – *maǧlis*, *կատա* «դատավոր» – *qāḍin*, *գոււմըրք* «մաքսատուն» – *ğumruk*, *շահաղ* «վկա» – *šāhid*, *ջէզու* «պատիժ» – *ğazāʔ*, *հոօկ* «իրավունք» – *haqq* և այլն: Հնարավոր է նաև, որ այս խմբերում տեղ գտած արաբերեն ծագումով որոշ բառեր ժամանակին փոխառվել են օսմանյան թուրքերենից:

Ուշագրավ է, որ խոսվածքում, թեկուզ երկու բառաձևով, ներկայացված են լեզուներում ամենադժվար փոխառվող քերականական-բառային միավորները՝ դերանունները՝ *ղէր* «ուրիշ» – *ğayr* «1. ուրիշ, 2. բացի», *ֆըլուն* – *fulān* «այսինչ, ոմն» (Քեսաբ), *ղւյր* (*ղէրու*) «ուրիշ, այլ» – *ğayr* «1. ուրիշ, 2. բացի» (Սվեդիա): Բարբառախմբի արաբերեն փոխառյալ բառապաշարում առկա չեն միավորներ ու տասնյակներ արտահայտող քանակական թվականները:

Կրոնական ոլորտի փոխառությունները վերաբերում են իսլամին, իսկ քրիստոնեական հասկացություններ նշանակող արաբական

տերմինները բարբառախմբում, բնականաբար, գրեթե բացակայում են: Թեպետ հայերեն հիշյալ տարածքային միավորներում առկա են արաբական այնպիսի փոխառյալ բառեր, որոնց արտահայտած կրոնական հասկացությունները (*աստված, չարք, անեծք, հրեշտակ* և այլն) ընդհանուր են երկու ժողովուրդների ըմբռնմամբ, սակայն հայ բարբառախոսները արաբական տերմինները, գործածում են իսլամի համատեքստում, իսկ քրիստոնեության ավանդական հասկացությունների բարբառային անվանումները՝ քրիստոնեական. *ւնգուն, նաղլուօթ* «անեծք» – հայ. *էնիսուգ, նաղլաղիլ* «անիծել» – *էնիծիլ, պէրէքի* «օրհնություն» – *ուրթնութէն* և այլն:

Անտիոքի, հատկապես Միրիայի հայերեն բարբառային միավորներում, ինչպես, օրինակ, Քեսաբի խոսվածքում, դիտվում է հետևյալ երևույթը: Որոշ փոխառություններ, անգամ առօրյա կենցաղին վերաբերող, գրական արաբերեն ձևեր են, մինչդեռ սպասելի էր, որ դրանք հայերը պետք է վերցնեին իրենց անմիջական հարևանների բարբառից սիրիական արաբերենից: Այսպես՝ *նիկդի* «կետ, վերջակետ» – գրակ. արաբ. 'nuqta, Միր.բրբ.՝ nu'ta: Մի շարք հայ հեղինակներ (Չ. Թովուզյան, Չ. Չոլաքյան, Տ. Անդրեասյան, Ա. Փաշայան և ուրիշներ) գրում են, որ մինչև օսմանյան լծից ազատագրվելը (XX դ. 20-ական թթ.) Քեսաբը, օրինակ, իր շրջակա փոքր գյուղերով հայախոս էր: Նույնիսկ 1920-ական թթ. հետո շրջան թափանցած ալևիները հայերի հետ հաղորդակցվում էին նրանցից սովորած Քեսաբի խոսվածքով¹²:

Կարծում ենք՝ նշված երևույթի պատճառը հետևյալն է: Թուրքական լծից ազատագրվելուց հետո Միրիայում բացվող պետական ուսումնական հաստատությունների լեզուն դարձավ արաբերենը (մինչ այդ թուրքերենն էր), և դպրոցներում հայերենին հատկացվող մի քանի ժամերը չէն օգնում հայերենի և Անտիոքում նրա տարածքային տարբերակների աստիճանական նահանջի կասեցմանը: Այսօր արդեն հայ երկլեզվյա անհատները տեղի մայրենի խոսվածքով խոսելիս ոչ միայն արաբերեն նոր բառեր են օգտագործում, այլև հին փոխառություններն արտասանում են կամ գուտ գրական, կամ գրական

¹² Տե՛ս Չ.Թովուզյան, *Միրիայի և Լիբանանի գաղթօջախների պատմություն*, Ե., 1986, էջ 214-232:

խոսակցական տարբերակներով: Ահա թե ինչու Ա. Ղարիբյանը Արամոյի խոսվածքում արաբերեն փոխառությունները հաշվում էր հազարներով: Անտիոքում երկլեզվության աճը նպաստում է տեղի հայերեն խոսվածքների վերացմանը և, իհարկե, սպառնալիք է նաև գրական արևմտահայերենի համար:

Микаелян Сона – Формально-смысловое исследование арабских заимствований в армянской диалектной группе Антиохии. – Армянские диалекты Антиохии не являются заимствованиями из арабского языка корневыми словами, так как они обычно переходят в другой язык со своим морфологическим проявлением. Но в данном языке они воспринимаются как корневые слова. Некоторые такие формы проникли в основной лексикон диалектов Антиохии и также проявляют себя как коренные слова.

Mikayelyan Sona – A Morphological and Semantic Overview of the Arabic Borrowings in the Group of Armenian Dialects in Antioch. – Arabic roots, as such, have not been borrowed by the Armenian dialects of Antioch as they usually penetrate into another language as a morphologically inflected word-forms used in speech. But in the new language, they are perceived as non-inflected word-forms or roots. A number of similar word-forms have penetrated into the main vocabulary of Antiochian dialects, and they are used as native words in relevant structures.

Միխիթարյան Գայանե (Հայաստան,
ԳԱԱ Հ.Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ)

**ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ «ՄԱՍՆԱ ԾՈՒՆՐ» ԷՊՈՍՈՒՄ ՀԻՇՍԱՍԿՎԱԾ
ՄԱՋ ԲԱՌԱՆՎԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ**

«Մասնա ծոեր» էպոսը, դարեր շարունակ բանավոր ավանդվելով, ներառել և գեղարվեստորեն համադրել է հայ ժողովրդի տարբեր դարաշրջանների նյութական և հոգևոր կյանքի էական իրադարձությունները, դարձել պատմամշակութային կարևոր հուշարձան:

«Մասնա ծոեր»-ը ժանրային առումով խոսքային-երաժշտական վիպերգ է, որտեղ միաձուլված են վերամշակված ու փոխակերպված հնագույն առասպելները, ավանդական վիպական սյուժեները, հեթանոսական պաշտամունքային տարրերը (ջուրը, արևը), պատմական երգ-գրոյցները: Ինչպես նկատում է Մ. Աբեղյանը, հայկական վաղ միջնադարում բանահյուսության դրամատիկական հոսանքները մնացել են նախնական հունի մեջ, և մենք ուշ միջնադարում ու նոր ժամանակներում բախվում ենք այդ նախաստեղծ ձևերին ու նրանց հիշողությանը¹:

Էպոսի ամենավաղ գրառումը վերաբերում է XIX դ. 2-րդ կեսին, մինչդեռ ակունքները շատ ավելի խորն են: Վաղմիջնադարյան գուսաններին, վիպասաններին ու փանդոահարներին ուշ շրջանում հաջորդում են այլ սերունդներ: Մակայն պատումները, երգային հատվածները, նվագներով ուղեկցվող խոսքը առավել գուսանական բնույթ են կրում: Սովորաբար էպիկական ասքերում և ավանդություններում վկայություններ կան երգի, նվագի և պարի մասին: Հին Կտակարանում ևս հիշատակվում է «թմբկօք եւ պարուք» միմյանց ընդառաջ գնալը, որը Մ. Լիսիցյանը համարում է առաջավորասիական պարերգի դրսևորում²:

Էպոս պատմել կամ ասելը պահանջում է կատարողական բարձր վարպետություն. խոսքից անցում երգի, ապա՝ արտասանության, այնուհետև՝ թվերգի: «Մասունցի Դավիթ» ճյուղում Մսրա Մե-

¹ Տե՛ս Մ.Աբեղյան, Գուսանական երգեր. – *Երկեր*, հ. Բ, Ե., 1967, էջ 192-193:

² Տե՛ս Ս.Ս.Лисициан, *Старинные пляски и театральные представления армянского народа*, т. I, Е., 1958, էջ 158:

լիքի դեմ կովի պատրաստվելիս Դավթի զինվելու և կովի գնալու հատվածները կազմված են հիմնականում երգերից: Այսինքն՝ կարելի է ասել՝ գործողությունը զարգանում է երգից երգ: Էպոսում երգելով են ասվում մաղթանքները, խնդրանքները, գովքերը, ողբերը, անգամ՝ հրամաններն ու իրադրության նկարագրությունները: Այդ առումով հիշատակվում են գուսանները նվագարաններով, Մհերի ջոջ սազը, փողը, նշվում է, որ Դավիթը ևս երգող ու նվագող է:

Մհերի ջոջ սազ էտու զարնել...

Մհերի փող էտու փչել³:

Դավիթը գնում է կովի, զարկում է Մհերի սազը, փչում է Մհերի փողը, և հավաքվում է ողջ Սասունը: Ահա այս **սազ** նվագարանի «զարնելն» էր կովից առաջ, որ որոշ ենթադրությունների տեղիք տվեց: Արդյոք *սազը*, որ գուսանական լարային նվագարան է, կարո՞ղ էր ռազմական ազդանշանային հզոր ձայն ունենալ, լինել այնքան հնչեղ ու գորեղ, որի կոչով հավաքվեր մի ողջ ժողովուրդ: Նշենք նաև, որ գավառացի ասացող Մարգարիտ Մարգարյանը հիշատակում է **կովի սազ**-ը, որն արդեն Ռշտունյաց տարբերակն է.

Կ'ասա.-Հա՛ շ կացեք, կովու սազի ձեն կը գայ⁴:

Իբրև գուսանական-աշուղական նվագարան՝ *սազը* սիրված և տարածված է եղել արևելյան ժողովուրդների շրջանում: Անվանումը պարսկական ծագում ունի, նշանակում է «նվագարան ընդհանրապես»⁵: Բառարաններում անվանումն այդպես էլ մեկնվում է՝ «Գուսանական նվագարան»⁶, «Պղնձե լարերով արևելյան երաժշտական գործիք»⁷: «Հայոց լեզվի բարբառային բառարան»-ը վկայում է, որ *սազը*՝ իբրև արևելյան լարային նվագարան, տարածված է Ղարաբաղի, Ուրմիայի, Վանի, Մշո բարբառներում⁸: Նշենք, որ էպոսի պատմող-ասացողների մեծ մասը Արևմտյան Հայաստանից էր՝ Սասունից, Մուշից, Բաղեշից, Մոկքից, Շատախից, Վանից, Խլաթից, Արձեշից, Մա-

³ Մ.Աբեղյան, *Սասնայ Օռեր*, Պատում ԺԵ, Ե., 1936, էջ 806:

⁴ Նույն տեղում, Պատում ԲԱ, էջ 930:

⁵ Տե՛ս **Գ.Նալբանդյան**, *Պարսկերեն-հայերեն բառարան*, Ե., 1987, էջ 330:

⁶ Տե՛ս **Ա.Գոսանեան**, *Բազմիք հայերեն լեզուի*, Պէրոպ, 1998, էջ 43:

⁷ Տե՛ս **Էդ.Աղայան**, *Արդի հայերենի բացատրական բառարան*, հ. 2, Ե., 1976, էջ 1267:

⁸ Տե՛ս *Հայոց լեզվի բարբառային բառարան* (այսուհետև՝ ՀԼԲԲ), հ. Ե, Ե., 2008, էջ 243:

նազկերտից, Ալաշկերտից, Բայազետից: Պատումների լեզուն հիմնականում արևմտահայ բարբառներն են, թեպետ երբեմն նկատելի է նաև արևելահայ բարբառների ազդեցությունը, քանի որ XIX-XX դդ. նշված գավառներից գաղթած վիպասացների ու նրանց սերունդների միջոցով «Մասնա ծոերն» անցել է Արևելյան Հայաստան:

Համեմատելով «Մասնա ծոեր»-ի պատումները, մասնավորապես գավառից և շատախցի ասացողներից գրի առածները՝ նկատել ենք, որ էպոսում հիշատակված **սագը** այս պատումներում միանգամայն այլ նշանակություն ունի: Շատախի **սագը**, ըստ էության, ոչ թե լարային նվագարան է, այլ մեծ թմբուկ, որ հարվածում էին թակիչներով: Այդ սագի լուսանկարը տրված է Ս. Լիսիցյանի գրքի լուսանկարներում⁹: Նշվում է նաև, որ Շատախի սագը Վասպուրականի տարբեր շրջաններում անվանում էին *նաղարա*¹⁰: Անվանումն արաբերեն է՝ *na'ara*, որ նշանակում է «գոչին, աղաղակ»: Հայերենում բառի գործածությունը վերաբերում է XIII-XIV դդ.: XIV դ. հայերեն ձեռագրերի հիշատակարաններից մեկում գրված է. «ԳԻհալսն դմդմէին, զնաղարայսն հարկանէին...»¹¹: Հ. Աճառյանը այն համարում է «յետին ռամիկ բառ», որը մեկ անգամ գործածվում է Միխայիլ Ասորու «Ժամանակագրութեան» մեջ (XIII դ. թարգմանություն). «Չորս ալամ սեաւ եւ շղթայ մի պարանոցին եւ գաւազան ոսկի եւ նաղարայ եւ փողս»¹²: Բառը գործածված է նաև Գրիգոր Տաթևացու աշակերտ Առաքել վարդապետի՝ Դավիթ Անհաղթի Սահմանքի լուծմունքում (XV դ.). «Արդ՝ ձեռոք որպէս դուֆուլ, և նաղարայ, և դաբ, և ծնծղայք...»¹³: «Միջին հայերենի բառարանում» նաղարայի հզոր ձայնին վերաբերող մի ակնարկ կա. «Թէ ձին լսէ նաղարային ձայնն՝ ահուն հիւանդանայ»¹⁴:

«Մասնա Ծոեր»-ի շատախցի ասացողները հիշատակում են նաև *խանսագ*, *ջոջ սագ*, *թարխան սագ* անվանումները.

⁹ Տե՛ս **С.С.Лисициан**, նշվ. աշխ., таблица LXXXI, фото 2:

¹⁰ Տե՛ս նույն տեղում:

¹¹ *ՇԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ*, կազմեց՝ Լ.Ս.Խաչիկյան, Ե., 1950, էջ 578:

¹² **Հ.Աճառյան**, *Հայերեն արմատական բառարան* (այսուհետև՝ ՀԱԲ), հ. Գ, Ե., 1977, էջ 424:

¹³ *Լուծմունք Սահմանացն Դավթի*, Մաղրաս, 1797, էջ 615:

¹⁴ **Ռ. Ղազարյան**, **Հ. Ավետիսյան**, *Միջին հայերենի բառարան*, Ե., 2009, էջ 564:

Խանսագ որ կը տան տփել,
 Խորքուր էլաւ ուր տեղ կայնաւ,
 Փանջարից ուր, գըրլիս տուս էխան,
 Ըրըշկից, տեսաւ մէկ նորամանուկ՝
 Մհերի ձին խեծներ էր, կայներ¹⁵:

Դալիթ Մհերի ջոջ սագ էտու ծեծել
 Ջուռնէն էլ էտու փչել:
 Դալիթ գնաց կոխ¹⁶:

Խան-ը *ղան* ձևով Հ. Աճառյանը համարում է փոխառյալ բառ, որ նշանակում է «իշխան, մանաւանդ թաթարների թագաւորը կամ իշխանը», կիրառվում է թաթարերենում, ուլգուրերենում կամ ուլդուրերենում, պարսկերենում¹⁷: *Ջոջ*-ը հայերենի բարբառներում նշանակում է «մեծ», «խոշոր»¹⁸, այսինքն ակնհայտ է, որ խոսքն առնչվում է **մեծ թմբուկին**: Ինչ վերաբերում է *թարխան*-ին, ապա այն ընդհանուր եզրեր ունի *ջոջ սագի* և *խանսագի* հետ: Ուշագրավ է, որ պատումները համեմատելիս համազուտացի ասացողներից (երկուսն էլ Շատախի Հինենց գյուղից էին) Ավո Ջադոյանը ասում է *թարխան սագ*, մինչդեռ Գրիգորը *ջոջ սագ*: Ի՞նչ է *թարխան*-ը: Անվանումը ծագում է պարսկերենից: *Թարխան* էին անվանում Կենտրոնական Ասիայի տեղական իշխաններին Սասանյանների օրոք: Հ. Աճառյանը նշում է, որ «...այդպես էին կոչում, անվանում այն մարդկանց, որոնք ազատ և արտոնյալ էին արքունի պահանջներից»¹⁹: Այսինքն՝ *թարխան*-ը ազնվական տիտղոս է: Այդ դեպքում կարելի է ենթադրել, որ **թարխան սագ**-ը իշխանական, ազնվական նվագարան է: Հետաքրքիր է, որ երբ Սասունցի Դալիթը պետք է գրավեր հոր գահը՝ պատումներից մեկում նշվում է մի յուրօրինակ արարողակարգ, որտեղ առանձնահատուկ, կարելի է ասել, պատվավոր դեր ու տեղ է հատկացվում **սագին**, տվյալ դեպքում **Շատախի սագին** կամ **մեծ թմբուկին**.

Սագ տարան Տալթի տեմաց. սագով առին պիրին,
 Տրին անու խօր տեղ. Տալթ էլաւ ճոջ²⁰:

¹⁵ Մ. Աբեղյան, *Սասնայ Օռեր*, Պատում ԻԱ, էջ 930:

¹⁶ Նույն տեղում, Պատում ԺԵ, էջ 743:

¹⁷ Տե՛ս չՄԱԲ, հ. Գ, էջ 164:

¹⁸ Տե՛ս չՂԲԲ, հ.Ե, էջ 192:

¹⁹ չՄԱԲ, հ. Բ, Ե., 1973, էջ 160:

²⁰ Մ.Աբեղյան, *Սասնայ Օռեր*, Պատում ԺԴ, էջ 720:

Այսպիսով, ակնհայտ է, որ շատախցի և գավազցի ասացողների հիշատակած **սագը** էապես տարբեր է մեզ ծանոթ լարային համանուն նվագարանից: Այն ունի ռազմական բնույթ. գործածվում է կռվի գնալիս, գորքին դիմավորելիս, ժողովրդին թշնամու վերահաս վտանգից պաշտպանելիս:

Հնում հաճախադեպ է նվագարանների անվանումների մեկը մյուսի փոխարեն կիրառությունը, երբեմն միևնույն անվանումը կարող է վերաբերել մի քանի նվագարանների: Հայտնի փաստ է, որ նվագարանների շատ տեսակներ միաժամանակ գործածվում են մի քանի երկրներում, և տարբեր ժողովուրդների մոտ նրանք ձեռք են բերում ուրույն առանձնահատկություններ և ինքնատիպություն: Անդրադառնալով միջինասիական ժողովուրդների աշուղական նվագարաններին՝ հետազոտողները նշում են **սագին** ազգակից այլ նվագարաններ: Այդ թվում հիշատակվում է **նայ թամբուրը**, բայց ոչ թե թմբուկ իմաստով, այլ իբրև **սագ**²¹: Դա պայմանավորված է թերևս նրանով, թե ինչ նշանակություն ունի նվագարանը տվյալ ժողովրդի կյանքում, որն է նրա սոցիալական դերը: Տվյալ դեպքում՝ ինչ նպատակով էին գործածում **սագը** Վասպուրականում, Ռշտունիքում, այն ինչ որոշակի գործառույթներ ունեւ ժողովրդական կենցաղում և նրա ծիսակարգում:

Էպոսի ձևավորման ժամանակաշրջանը թեպետ ընդունված է համարել արաբական տիրապետության ժամանակահատվածը (VII-X դդ.), սակայն Սանասարի և նրա եղբոր մասին հնագույն գրավոր ավանդությունը պահպանվել է Աստվածաշնչում (Թագ. IV, ԺԹ, 37), հիշատակվել է նաև Խորենացու Պատմության մեջ (Գիրք Ա, ԻԳ): Այսինքն՝ բանավոր ավանդվելով ու սերնդեսերունդ փոխանցվելով՝ էպոսի արմատները հասնում են վաղնջական ժամանակներ: Դա հիմք է տալիս ենթադրելու, որ էպոսում հիշատակված Վասպուրական-Ռշտունյաց **սագը** աղերսներ ունի Աստվածաշնչյան **պղնձե տավիռի** հետ: Աստծո տապանակը Աբդեղոմի տնից հանելու և նորընծա խորան տեղափոխելու համար Դավիթը պատվիրում է՝ Ղևտացվոց իշխանները հավաքեն ժողովրդին և նվագներով ուրախության ձայներ հնչեցնեն. «Եւ սաղմոսանուագքն՝ Եման եւ Ասափ եւ Եթան տաւղօք

²¹ См. у Т.С.Вызго, *Музыкальные инструменты Средней Азии*, М., 1980, էջ 118-119:

պղնձեօք, լսելի առնել զձայնն» (Ա Մնաց., ԺԵ, 19): Ռուսերեն Աստվածաշնչում նշվում է. «Еман, Асаф и Ефан играли громко на медных кимвалах» (I Пар, 15:19): **Պղնձե տավիղը** Վ. Հացունիի համարում է **ռազմական թմբուկ**. «Եզրիպտոս եւ Պարթեւք ...եւ Հայք – ունէին ասոր պատերազմական ալ, մեծ, գլանաձև կամ տակառաձև, երկու բերանները ծածկուած կաշուով, զոր կը բախէին բռնցի»²²: Ինչ վերաբերում է *տավիղ* անվանմանը, ապա Սուրբ Գրքում այն գործածվում է «խառն ձեռով քնարին հետ ի միասին»²³: Այնուհետև նշում է Աստվածաշնչում դրա կիրառությունների մասին և ընդգծում. «տավիղը ծագած է յն. *տարբալա* կամ *տարբելա* բառէն, որ կը նշանակէր Պարթեւաց ռազմական թմբուկը... Այս իմաստով տեղ մը թարգմանած է յն. *կիւմբալունը*, որ է թմբուկ. «տաւղօք պղնձեօք», որոյ տեսակը նիւթէն ալ յայտնի է. եւ ս. Եփրեմի թարգմանիչը կը գրէ թէ՛ զինուորը պատերազմի մէջ կը լսէ «զձայն տաւղի բախելոյ եւ զհարկանել փողոց», ուր տավիղը բախելի գործի մ'է, ուստի դարձեալ թմբուկը. եւ լարատրն արդէն տկար կը մնար մարտի շոինդին մէջ»²⁴:

Այսպիսով, էականը ժողովուրդների և լեզուների աղերսներն են, պատմական իրադարձությունները և շփման հարատևությունը, որը հնարավորություն է ընձեռում պատմականորեն բացահայտելու հայերենի բարբառներում առկա լեզվական արժեքավոր ու ինքնատիպ դրսևորումները:

Мхитарян Гаяне – О термине *саз*, упоминаемом в эпосе “Сасна Црер” – Эпос “Сасна Црер” по своему жанру является словесно-музыкальной эпопеей. При сравнении повествования “Сасна Црер”, в частности, Гавашских и Шатахских сказателей, выявилось, что упомянутый в эпосе саз – не обычный струнный, а музыкальный инструмент из семейства ударных. Инструмент был задействован во время войны - под его ударами встречали и провожали войска, предупреждали о нападении врагов. Для выявления точного смысла термина существенно важны отношения языков и народов, события и непрерывность контактов, которые дают возможность исторически идентифицировать ценные и уникальные языковые отображения в армянских диалектах.

²² Վ.Հացունի, *Հայրուհին պատմութեան առջեւ*, Վենետիկ-Ս.Ղազար, 1936, էջ 266:

²³ Նույն տեղում, էջ 267:

²⁴ Նույն տեղում:

Mkhitaryan Gayane – The Remark on the Term *Saz* Mentioned in the Epos “*Sasna Tsrer*”. – The epos on the genre is verbal and musical epic. Comparing narrations of Gavash and Shatakh storytellers it's noticed that saz mentioned in the epos is not a string, but a musical instrument from family of percussions. It was used during war, under its blows met and saw off troops, warned about attack of enemies. To identify the precise meaning of the term are essential relationship of languages and people, events and continuity it's contacts which give the chance historically to identify valuable and unique language discoveries in Armenian dialects.

Մկրտչյան Գարիկ (Հայաստան,
ԳԱԱ Հ.Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ)

**ՄՇՈ ԲԱՐԲԱՌԻ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ
ՏԱՐԱՍՏԵՐՉԱՆՈՒՄ***

Գեղարքունիքի մարզը համարվում է Հայաստանի Հանրապետության տարածքով ամենամեծ և ամենախիտ բնակեցված մարզը: Այն գտնվում է ՀՀ տարածքի արևելքում՝ շրջապատելով Սևանա լիճը: Արևելքից սահմանակից է Ադրբեջանին, Արցախին, հյուսիսից և արևմուտքից՝ Տավուշի, Կոտայքի, Արարատի, հարավից՝ Վայոց Ձորի մարզերին: Մարզը ներառում է Գավառի, Ճամբարակի /նախկին Կրասնոսելսկ/, Մարտունու, Սևանի և Վարդենիսի շրջանների տարածքները: Բնակչության թվաքանակը, ըստ 2001թ. տվյալների, կազմում է 215.371 մարդ¹: Մարզն ընդգրկում է 93 բնակավայր, որոնցից 87-ը գյուղական համայնքներ են: Քաղաքները հինգն են՝ Գավառ, Ճամբարակ, Սևան, Մարտունի, Վարդենիս:

Այս տարածաշրջանը, պետք է կարևորել, անհիշելի ժամանակներից եղել է հայաբնակ, սակայն 1604 թ. ամայանում է տեղաբնիկներից, երբ Շահ Աբասը պատմական Հայաստանում կազմակերպում է բռնագաղթ դեպի Պարսկաստան: Գաղթերին հավելվում է նաև 1679 թ. ամռանը տեղի ունեցած երկրաշարժը, որով Գեղարքունիքը իսպառ հայազրկվում է: Սակայն, XVII դ. սկսած՝ դատարկ ու ամայի այդ բնակավայրերում աստիճանաբար բնակություն են հաստատում թուրքական քոչվոր ցեղերը և զավթում հայկական բնակավայրերը: Մինչ XIX դ. սկիզբը հայերը փոքրամասնություն էին կազմում այստեղ, իսկ եղածները հետագայում ձուլվում են նոր եկող հայերին: Իրավիճակը փոխվում է XVIII դ. վերջերում և հատկապես XIX դ., երբ 1828-1830 թթ. ռուս-թուրքական պատերազմներով պայմանավորված՝ Գեղարքունիք են ներգաղթում Արևմտյան Հայաստանի մի շարք

* Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության շնորհիվ՝ № SCS 13-6B382 գիտական թեմայի շրջանակներում:

¹ Տե՛ս **Ս.Հակոբջյան**, *Հայաստանի մարզեր, Գեղարքունիքի մարզ, պատմական հանրագիտարան*, Ե., 2010, էջ 4:

բնակավայրերից՝ Ալաշկերտից, Մուշից, Հին Բայազետից, Դիադինից, Վանից, Կարսից, Մակուից մեծաթիվ հայեր: Ոչ մեծ քանակությամբ ներգաղթյալներ կան նաև 1914-22 թթ. տեղի ունեցած դառնաղետ իրադարձությունների ընթացքում: 1988-1990-ական թթ. հատկապես Ճամբարակի ու Վարդենիսի տարածաշրջանում են հանգրվանում նաև Ադրբեջանից բռնագաղթած հայերը:

Նշված վիճակագրական տվյալները վկայում են, որ տարածքը հարուստ է բարբառներով և, կարելի է ասել, գործ ունենք լեզվական տարասեռ հատկանիշներով բնութագրվող բարբառների և խոսվածքների հետ: Պետք է ասել, որ տարածքային այս գոտում Մշո բարբառը և նրա տարբեր խոսվածքները լավագույնս պահպանվել են մինչ օրս: Ըստ տարբեր տարածաշրջանների ունենք հետևյալ պատկերը.

ա/ **Գավառի տարածաշրջան՝ Գանձակ** համայնք /ներգաղթյալներ են Մուշից, Ալաշկերտի Դիզա գյուղից, եղել են նաև որոշ բայազետցիներ/, **Գեղարքունիք** / ներգաղթյալներ են Մուշի, Ալաշկերտի գյուղերից և այլ բնակավայրերից/, **Լճափ** /բայազետցիներ են, բայց կան նաև Վարդաձորից, Վերին և Ներքին Գետաշեն գյուղերից/, **Օաղկաշեն** /կան նաև եկվորներ Ալաշկերտի Դիզա գյուղից ու Մուշից/:

բ/ **Մևանի տարածաշրջան՝ Գեղամավան** /ներգաղթյալներ են Մակու գավառի Անձուկ, այդ թվում՝ Ալաշկերտի գյուղերից/:

գ/ **Մարտունու տարածաշրջան՝ Մարտունի** քաղաք, **Արծվանիստ** /Ալաշկերտ, Մուշ, Մակու և այլն/, **Աստղաձոր** /Ալաշկերտ/, **Գեղհովիտ** /Ալաշկերտի Քոքփռան գյուղից, Մուշի և այլ շրջանի գյուղերից/, **Երանոս** /Ալաշկերտից, Մուշից, Խաստուր գյուղից/, **Զուլաքար** /Ալաշկերտի Զիրոյ/Զիրավ/ գյուղից/, **Լիճք** /Ալաշկերտի Հողաբերդ և Մուշի գյուղերից/, **Օակքար** /Ալաշկերտի Հասանշահ, Ֆերան, Քարաձոր, Մաշկերտ կամ Մազկերտ և Սիֆր գյուղերից/, **Օովասար** /Ալաշկերտ, Մուշ/, **Օովինար** /Ալաշկերտ, նաև Մուշից ու Վանից/, **Չորագյուղ** /Ալաշկերտի Զլկան գյուղ/, **Մաղինա** /վերաբնակյալներ Ներքին Գետաշեն գյուղից/, **Ներքին Գետաշեն** /Ալաշկերտ, Մուշ/, **Վարդաձոր** /Ալաշկերտի գյուղեր/, **Վարդաշեն** /Ալաշկերտի, Մուշի գյուղերից/, **Վարդենիկ** /Ալաշկերտի, Մուշի գյուղերից, նաև Մասունից/, **Վերին Գետաշեն** /Ալաշկերտի Խաստուտ/Խացտուր/Հացտուր գյուղից, Մուշից/:

դ/ **Վարդենիսի տարածաշրջան՝ Ախաբաձոր** /Մուշից, Մասունից և այլ բնակավայրերից/, **Լճավան** /հիմնականում Մուշից, նաև՝

Պարսկահայաստանի նահանգներից, Կարսի մարզից ու Բուլանըղից/**Խաչադըբուր** /Բասենի, Մուշի, Վանի գյուղերից, Երզնկայից, Ալաշկերտից և այլ բնակավայրերից/, **Օովակ** /Մուշ, Ալաշկերտ/, **Կարձադըբուր** /Մուշ, Ալաշկերտ/, **Մաքենիս** /Վանի, Մուշի, Կարսի գյուղերից/, **Մեծ Մասրիկ** /Մուշից, Բասենից, Կարսից, Վանից/, **Նորակերտ** /Վանի գավառի Սեղ գյուղից, Մուշից, Ալաշկերտից եկած գաղթականներ/:

Մշո բարբառը բացակայում է միայն Ճամբարակի տարածաշրջանում:

Մեր՝ այս արտալեզվական ուղիներով վերականգնումները փաստվում են նաև Հայաստանի ազգային արխիվի 1931, 1836 թթ. մարդահամարի համապատասխան ֆոնդերի տվյալներով / ֆոնդ՝ 90, ցուցակ՝ 1, գործ՝ 88, 89, 318/: Մարտունու տարածաշրջանում հանգրվանած մշեցիների վերաբերյալ առաջին լեզվապատմական հիշատակումը կատարել է Հ. Աճառյանը «Հայ բարբառագիտություն-Ուրվագիծ և դասավորություն հայ բարբառների» /1911թ./ աշխատության մեջ: Հեղինակը գրում է. «Վերջին երկու ռուս-տաճկական պատերազմներու ժամանակ Մուշեն և Ալաշկերտեն երկու մեծ գաղթականություն դուրս գալով՝ հաստատվեցավ Երևանի նահանգը...»²:

Վերոբերյալ փաստերը թույլ են տալիս ասելու, որ Մշո բարբառը Գեղարքունիքի մարզում հիմնականում ներկայանում է Մարտունու տարածաշրջանում, իսկ Գավառի տարածաշրջանի **Գանձակ**, **Գեղարքունիք**, **Լճափ**, **Օաղկաշեն** ու Սևանի տարածաշրջանի **Գեղամավան** համայնքներում հանգրվանած մշեցիները լեզվական հիմնական հատկանիշներով ձուլվել են Բայազետի բարբառին՝ մայր բարբառից պահպանելով որոշ լեզվական տարրեր: Այդ մնացուկներն արտացոլվում են խոսքի գրեթե բոլոր մակարդակներում, օրինակ՝ հնչյունական համակարգում շնչեղ ձայնեղների պահպանումը, հետնալեզվային ձայնավորների ոչ առաջնալեզվայնությամբ գործառելը, էտալոնային *h* հազագի պահպանումը, այն դեպքում, երբ Բայազետում դրանք ներկայանում են հետնալեզվային *խ*-ով, ձևաբանական համակարգում *կը եղանակիչ+գրաբարյան ներկա* կադրապարով սահմանական եղանակի ներկա և անցյալ ժամանակաձևերի կազմումը,

² **Հ.Աճառեան**, *Հայ բարբառագիտություն. ուրուագիծ և դասավորություն հայ բարբառների (բարբառագիտական քարտեզով)*. Մոսկուա-Նոր Նախիջևան, 1911, էջ 116:

հանդա/հրմա/կո մասնիկներով շարունակականի իմաստ արտահայտելը բայական ժամանակաձևերի հետ, ուղղական-հայցական հոլովներով ներգոյականի իմաստ արտահայտելը և այլն: Ընդհանուր առմամբ Մշո բարբառի խոսվածքների՝ Բայագետի բարբառին համաձուլմանը նպաստել է նաև այն, որ լեզվական առումով երկու բարբառներն էլ ներկայանում են միջակա գծերի առատությամբ ու ընդհանրությամբ, որն ավելի է դյուրինացրել այդ գործընթացը: Մշո բարբառի Ալաշկերտի խոսվածքին է հատկապես խոսքս վերաբերում, որը Մշո և Բայագետի բարբառների հետ ունի լեզվական ընդհանրությունների հավասարաթեք համակարգեր:

Խնդիրն ավելի է դժվարանում Վարդենիսի տարածաշրջանի դեպքում, քանի որ, ինչպես ցույց են տալիս տվյալները, այստեղ խոսվածքները ի սկզբանե համասեռ չեն եղել. բնակավայրերը ներկայանում են տարբեր խոսվածքակիրների՝ դիադինցիների, մշեցիների, վանեցիների, բայագետցիների, սասունցիների, արցախցիների համատեղ գոյակցմամբ, հետևաբար երկու դարը բավական է, որ առաջանան միջբարբառային, խառը լեզվական համակարգեր՝ այս կամ այն բարբառի լեզվական տարրերի գերակշռությամբ: Առայժմ կխուսափենք այս շրջանում Մշո բարբառի լեզվական դրսևորումների վերաբերյալ վերջնական տեսակետ հրապարակելուց, քանի որ այդ տարածաշրջանի ուսումնասիրություններն ընթանում են:

Տարածաշրջանում Մշո բարբառը հայտաբերվում է ոչ բոլոր խոսվածքներով: Ըստ հայերենի բարբառների բազմահատկանիշ-վիճակագրական դասակարգման՝ Մշո բարբառն ունի ինը խոսվածք³: Մարտունու համայնքներում գործում են միայն **Մշո**, **Ալաշկերտի**, **Բաղեշի** երբեմնի խոսվածքները: Պետք է ասել, որ Մարտունու տարածաշրջանում Մշո բարբառն ու նրա խոսվածքներն ավելի անադարտ են պահպանվել: Մեր այս գնահատականին նպաստում է այն, որ առիթ ունեցել ենք Մշո բարբառն ուսումնասիրելու մեկ այլ տարածաշրջանի՝ Ապարանի շուրջ վեց խոսվածքների տվյալներով⁴: Կարծում ենք՝ Վճռորոշ է տարածաշրջանի դիրքը և Երևանից համե-

³ Տե՛ս **Գ.Ջահուկյան**, Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972, էջ 134:

⁴ Տե՛ս **Գ.Մկրտչյան**, *Ապարանի տարածաշրջանի բարբառային և խոսվածքային տարբերակների քննություն* [ատենախոսություն, ԳԱԱ Հ. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ], Ե., 2011, էջ 66:

մատաբար հեռու լինելը: Քննվող տարածաշրջանի խոսվածքների անադարտության վերաբերյալ այս տարածքը հետագոտած Ռուբեն Բաղրամյանը ժամանակին գրել է. «Քննակավայրերում ու շրջկենտրոններում խոսում են մի քանի բարբառներով, գրական երանգ ստացած խոսվածքներով ու լեզուներով: Նույնիսկ շրջկենտրոններից հեռու գտնվող գյուղերում մաքուր բարբառախոսներ այլևս անհնար է գտնել. մի տեղ, ուր դպրոցն ու գրականությունը, մամուլը, ռադիոն և էլեկտրականությունը կենցաղ են, ուր մուտք են գործել ավտոբուսն ու գյուղատնտեսական մեքենաները, քամու բերան են տվել գյուղերը կղզիացնող անջրպետները, բարբառները դատապարտվել են վերացման»⁵: Այս գնահատականը թյուր է և իրականությանը չի համապատասխանում: Հարցումները և վերլուծությունները ցույց են տալիս, որ, անկախ XX դ. և մեր օրերի գիտատեխնիկական հաղթարշավից, բարբառների գործառույթը տարբեր տարածքներում, այդ թվում Գեղարքունիքում, բացարձակ իրողություն է, որը ներառում է տարբեր տարիքի բարբառախոսներ ու սոցիալական խմբեր: Բարբառախոսները հատկապես լավ են պահպանում հնչյունական և քերականական համակարգերը: Այս համակարգերը բարբառների պահպանման ու նրանց տարբերակման գործում ամենակարևոր հատկանիշներն են, իսկ բառապաշարային իրողությունների դեպքում բազմաթիվ բառահասկացությունների անգործածելի դառնալը, ակտիվությունից դեպի պասիվության մղվելը կամ լեզվական համակարգից իսպառ դուրս գալն օրինաչափ է, քանի որ լեզվի, այս դեպքում բարբառի, բառապաշարը նույնպես փոփոխվում է՝ հասարակական կյանքում տեղի ունեցող իրադարձություններով պայմանավորված: Տարածքները ենթակա են այն բառ-հասկացությունների կորստին, որոնք այլևս չեն գործառում և հեշտությամբ ընդունում են այն բառամիավորները, որոնց կենսագործունեությունը կազմակերպելու համար գրավոր կամ բանավոր ճանապարհներով մուտք են գործում բարբառախոսների ակտիվ բառապաշար: Մշո բարբառը Գեղարքունիքի մարզում հենց այսպիսի պատկեր ունի՝ հնչյունական համակարգի և քերականական կառուցվածքի կայունությամբ և բառապաշարի հարափոփոխությամբ ու կորստով:

⁵ Ռ.Բաղրամյան, *Հայերենի բարբառներ. Սևանա լճի ավազանի խոսվածքները*, Ե., 1972, էջ 3-4:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ Մշո բարբառի Մարտունու տարածաշրջանի խոսվածքները սահմանազատվում են իրարից հատկապես հնչյունական համակարգերում: Ջուգադրահամադրումների շնորհիվ պարզ է դառնում, որ գործող խոսվածքների համար որպես առաջին տարբերանշան հիմք կարող է դառնալ հետնալեզվային *խ* խուլը և կոկորդային *հ* հագագը: **Երանոսի, Վարդաձորի, Չորս-գյուղի, Լիճքի, Ներքին Գետաշենի, Վերին Գետաշենի, Մաղինայի** խոսվածքներում գործում է էտալոնային *հ* խուլը՝ *հարս, հագար, համ, հին, հինգ* և այլն, իսկ մյուս խոսվածքներում՝ **Մարտունի քաղաքում, Արծվանիստում, Աստղաձորում, Գեղ-հովիտում, Չոլաքարում, Տակքարում, Օովինարում** հայերենի *հ*-ն ներկայանում է *խ* խուլի տեսքով՝ *խարս, խագար, խամ, խին, խինգ* և այլն: Այս տարբերությունը, կարելի է ասել, հստակ սահմանազատում է Մշո բուն խոսվածքը Ալաշկերտի խոսվածքից: Նման դիրքերում *հ* հնչյունի սահմանափակումը վկայում է, որ **Աստղաձորում, Գեղհովիտում, Օովասարում, Օովինարում, Վարդաշենում, Վարդենիկում** տեղի է ունեցել *հ*-ախոսների ասիմիլացում՝ ի նպաստ *խ*-ախոսության, քանի որ վիճակագրական տվյալների համաձայն՝ այդ բնակավայրերում ապրել են նաև մշեցիներ: Նմանօրինակ հատկանիշները նպաստում են, որ այս տարածքում բարբառայնությունն ավելի է խորացել: Իսկ **Վարդաձոր** համայնքում գործող *հ*-ախոսությունը ի չիք է դարձնում այն գիտական տեսակետը, որ պատմական Ալաշկերտը *խ*-ախոս է եղել: Վերականգնված փաստերը վկայում են, որ նշված գյուղում ապրում են ներգաղթյալներ բացառապես Ալաշկերտի գյուղերից: Չենք բացառում, որ այստեղ գործ ունենք նաև վիճակագրական անճշտության հետ:

Հնչյունական մյուս հատկանիշը, որով, կարծում ենք, հարկ է տարբերակել տարածքի Մշո բարբառի խոսվածքները, հետնալեզվային *ղ*, *խ* շփականների գործառական սահմանափակումներով ներկայանալն է ու դրանց տարբերակումը: Չայնեղությամբ ու խլությամբ իրար հակադրվող *ղ/խ* շփականների հակադրությունը պայմանավորված է բառի տարբեր դիրքերում գործածվել: Կենտրոնական Հայաստանի խոսվածքներում բառասկզբի դիրքում տիպաբանորեն բացառելի է *ղ*-ի առկայությունը: Եղած բարբառայնությոը և տարածաշրջանում այսօր ապրող բարբառախոսների կողմից գործածվող բառասկզբյան *ղ* հնչյունը չունի ձայնաբանական այն առանձնահատկությունները, որոնք բնորոշ են համահայերենյան և դիտարկվող խոս-

վածքների բառամիջում ու բառավերջում ի հայտ եկող *ղ*-ին: Խոսվածքներում եղած բառասկզբի *ղ*-ն, որը, ի դեպ, հիմնականում հանդիպում է արևելյան լեզուներից կատարված փոխառություններում՝ ներառելով հատուկ և հասարակ անունները, կոկորդային, ըմպանային արտաբերում ունեցող մի հնչյուն է՝ տառադարձվելով այս՝ *ղ*-ի կերպ, արաբերենից փոխառյալ հնչյուն է: Այդ հնչյունը կա նաև թուրքական, պարսկական միջնորդավորված բազմաթիվ փոխառություններում, որոնց մայր լեզուն դարձյալ արաբերենն է՝ *ղաբիզ, ղազալ, ղամիշ, ղրժալ, ղրբաղ, ղուշ, ղոլ, ղոչաղ* և այլն: Ընկալողական դրույթներով կատարված վերլուծությունները ցույց են տալիս, որ Մարտունու տարածաշրջանի բուն Մշո տարածքը ներկայացնող խոսվածքներում այս օտարամուտ *ղ*-ն աստիճանաբար միտում ունի վերանալու, բայց ոչ թե ի հաշիվ համահայերենյան ու խոսվածքների բառամիջում ու բառավերջում ի հայտ եկող *ղ*-ի, այլ ետնալեզվային շփական *խ*-ի, որի հետ *ղ*-ն լծորդական հակադրության մեջ է՝ *խազան, խաթըր, խալաթ, խալմախալ, խամագ, խայիմ, խասաբ, խըղիզ, խըրկել* և այլն: Մաօրինաչափ երևույթ է, քանի որ նշյալ բառամիավորներն արաբերենում չունեն *խ* հնչյունը, այլ հայերենում ներկայանում են *կ*-ով և *ղ*-ով, իսկ Մշո բուն տարածքի խոսվածքներում գործում են *ղ*-ով փոխառված տարբերակները, ուստի դրանք միջնորդավորված փոխառություններ են թուրքերենից ու պարսկերենից: Ինչ վերաբերում է *ղ*>խ անցմանը, ապա, կարծում ենք, դա աստիճանաբար տեղի ունեցող երևույթ է: Քանի որ Մշո տարածքում կան *ղ*-ով տարբերակներ, հետևաբար դրանք փոխառվել են հենց այդպես, իսկ *խ*-ի վերածվել կամաց-կամաց:

Իսկ Ալաշկերտի շերտը ներկայացնող խոսվածքներում նշյալ բառերը զուգահեռ ներկայանում են հետնալեզվային, ըմպանային *կ* խուլով՝ *կազան, կաթըր, կամագ, կայիմ, կասաբ, կըղիզ* և այլն՝ լրացուցիչ բաշխման հարաբերության մեջ մտնելով *խ*-ի և *ղ*-ի հետ: Այս երևույթը Հ. Մուրադյանը բացատրում է նրանով, որ *ղ*-ի համար բա-

ռասկիզբը բացառված դիրք է հայերենում⁶, ուստի բառասկզբյան *դ*-ի արտասանությանը խորթ տարածքային միավորներում օտար այդ հնչյունի փոխարեն գործածում են հետնալեզվային կ կամ խ՝ չնայած կ-ն նույնպես օտար հնչյուն է: Նկատենք մի հատկանիշ ևս. փոխառյալ կ և ղ հնչյունները Ալաշկերտի շերտի խոսվածքներում երբեմն շատ դժվար է տարբերել իրարից:

Գեղարքունիքի Մշո բարբառով խոսվող գյուղերում տարբերակիչ հատկանիշ կարող ենք համարել նաև պայթական բաղաձայնների ցուցաբերած դրսևորումները: Դիտարկենք բառամեջը և բառավերջը: Եթե Մշո բուն խոսվածքներում բառամիջում և բառավերջում կան շնչեղ խուլեր՝ *անհօք, պատարաք, շօք, բ՛արթ, անմարթ, վարթ, դ՛արփին, սըրփեղ* և այլն, ապա Ալաշկերտի շերտը ներկայացնող խոսվածքներում նշված դիրքերը ներկայանում են պարզ խուլերով՝ *անհօկ, պադարակ, շօկ, բ՛արտ, անմարտ, վարտ, դ՛արպին, սըրպեղ* և այլն:

Խոսելով ընդամենը երեք հնչյունական տարբերակիչ հատկանիշների մասին, որով Մշո բարբառը և նրա խոսվածքները սահմանագատվում են իրարից Գեղարքունիքի մարզում, կարևորենք, որ բազմաթիվ հնչյունական իրողություններով նույնական են նրանք: Որպես օրինակ՝ հիշատակենք շնչեղ ձայնեղներով համակարգի լիակատար պահպանումը համահայկական բառերում, երկբարբառների առկայությունը բառասկզբում *n* և *t* ձայնավորակիզբ բառերում և միավանկ բառերի փակ վանկերում, դիրքային, շեշտից կախված և պատմական տարաբնույթ հնչյունափոխությունները, փոխազդեցական հնչյունափոխության դրսևորումների առատ փաստերը և այլն:

Ինչ վերաբերում է ձևաբանական համակարգերին, տարբերությունները, ի հակադրություն ընդհանրությունների, մեծ չեն տասնյոթ խոսվածքների տվյալների համադրմամբ, որն արտացոլվում է գրեթե քերականական բոլոր կարգերում ու դրսևորումներում: Անդրադառնանք մի քանի տարբերությունների: Բուն Մշո տարածքի խոսվածքներում գործառում է -ստան հոգնակերտը՝ *օսկէստան, տարէստան, էրէխէստան* և այլն, իսկ Ալաշկերտի շերտում բացակայում է, Մշո

⁶ Տե՛ս Ն.Մուրադյան, *Հայոց լեզվի պատմական քերականություն, Հնչյունաբանություն*, հ. 1, Ե., 1982, էջ 214-215:

շերտում գործում է կցադիր *q* նախդիրը, Ալաշկերտի շերտում՝ բացակայում: Մշո շերտի խոսվածքներում գործում է չորս խոնարհում, իսկ Ալաշկերտի շերտում՝ երեք: Մշո շերտն ունի նաև ու խոնարհումը՝ *վերում/վերում/վերում/ վերունք/ վերուք/ վերուն:* Եթե Մշո շերտի խոսվածքներում պակասավոր եմ օժանդակ բայը խոնարհվում է *h* խոնարհիչով՝ *իմ/իս/է/ ինք/իք/ին*, ապա Ալաշկերտի շերտի խոսվածքներում՝ *ե* խոնարհիչով՝ *էմ/էս/ ա/էնք/էք/էն:* Եթե Մշո շերտի խոսվածքներում սահմանական եղանակի վաղակատար ներկա ժամանակաձևում եզակի և հոգնակի թվերը հստակորեն տարբերակվում են դիմաթվանիշ վերջավորություններով՝ *մանցեր իմ/ մանցեր իս/մանցեր է/մանցեր ինք/ մանցեր իք/, մանցեր ին*, ապա Ալաշկերտի շերտի խոսվածքներում՝ հոգնակի թվի երրորդ դեմքը եզակիաձև է, ինչպես նաև՝ վաղակատարի իմաստն արտահայտվում է -աձ մասնիկով՝ *մանցեր էմ/ մանցեր էս/մանցեր ա/մանցեր էնք/ մանցեր էք/, մանցաձ ա:*

Այստեղ ցանկանում ենք անդրադառնալ մեկ կարևոր խնդրի ևս: Խոսքը վերաբերում է սահմանական եղանակի ներկա և անցյալ ժամանակաձևերի կազմությանը: Հայտնի է, որ Կը ճյուղի բոլոր բարբառներում այս ժամանակաձևերը կազմվում են կը եղանակիչ+գրաբարյան ներկա կաղապարով: Սակայն Մարտունու տարածաշրջանի հատկապես Մշո շերտը ներկայացնող խոսվածքներում համակարգային է նաև գրաբարաձև ներկայի և անցյալի արտահայտումը ներկա և անցյալ ժամանակաձևերի իմաստով: *Կուդիմ, ինչ ա կըսիս, լըսա, կը վազիմ, քասնիմ դաշտըն, արի հեդսի* կառույցները բարբառախոսները ներկայացնում են գրաբարաձև՝ *ուդիմ, ինչ ա կըսիս, լըսա, վազիմ, հասնիմ դաշտըն, արի հեդսի /ներկա/, կամ՝ կերտէնք շըմնօվ դաշտըն խօթ քաղէլու, կսօվրի, օր մաոթ դառնի* կառույցները կլինեն այսկերպ՝ *երտէնք շըմ-նօվ դաշտըն խօթ քաղէլու, սօվրի, օր մաոթ դառնի /անցյալ/* և այլն: Նշենք, որ ներկայի կազմության այսպիսի իրողություններ արձանագրել ենք նաև Ապարանի տարածաշրջանի Մշո շերտի խոսվածքներում, որն արտացոլված է նաև մեր ատենախոսության ու համապատասխան հրապարակման մեջ⁷: Կարծեք թե, Մշո շերտի

⁷ Տե՛ս Գ.Մկրտչյան, Սահմանական եղանակի ժամանակաձևերի դրսևորումները Ապարանի խոսվածքներում. – *Ջահուկյանական ընթերցումներ-2009*, Հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումներ, Ե., 2009, էջ 131:

խոսվածքներում այս իրողությունների առկայությունը վկայում է, որ միայն Խոտորջուրի բարբառին չէ հատուկ գրաբարաձև ներկա ունենալը⁸: Ավելին, եթե Խոտորջուրում գրաբարաձև ներկան վերաբերում էր միայն բաղաձայնով սկսվող բառերին, ապա Մշո շերտի խոսվածքներում այդ տարբերակումն ուղղակի չկա: Գրաբարաձև ներկայի այսօրինակ երևույթը չի կարելի լեզվական մնացուկ համարել, քանի որ այն համակարգային է. ընդամենը մինչ օրս պահպանվում են հինհայերենյան լեզվական օրինաչափությունները, որոնցով, ի դեպ, հարուստ է Մշո բարբառը:

Մշո շերտի խոսվածքները բարբառային այն տարագրված միավորներից են, որոնք մինչ օրս լավագույնս պահպանվել են ՀՀ տարածքում: Այս հարցում Գեղարքունիքի մարզը կարևոր է, քանի որ, ըստ մեզ, Մշո բարբառի տիպաբանությունը կարելի է լիովին վերհանել հենց այս տարածաշրջանում. ամբարված ու հինավուրց լեզվական միավորների առատությունն այդ անելու հնարավորությունն ընձեռում են:

Гарик Мкртчян – Современное состояние мушского диалекта в Гегаркуникском регионе. – В статье рассматривается современное состояние наречий мушского диалекта в Гегаркуникском регионе. Делается вывод, что в Южной Армении изгнанные из своих земель мушцы до сих пор сохраняют свой родной диалект. Исследования показывают, что мушцы в основном живут на территории Мартуни, а в других районах представлены меньше. В статье развивается точка зрения, что типологию мушского диалекта можно выявить именно на этой территории, потому что обилие древних языковых единиц предоставляет эту возможность.

Mkrtchyan Garik – The Current State of the Dialect of Moush in the Region of Gegharkunik. – In this article the current state of the dialect of Moush in the Region of Gegharkunik is discussed. The author came to the conclusion that the emigrants from Western Armenia preserve their dialect quite well in the territory of the Republic of Armenia. The research has shown that nowadays people from Moush mainly live in the territory of Martuni. The typology of the dialect of Moush can fully be revealed in this region as the abundance of ancient linguistic units stored there give the opportunity to do so.

⁸ Դ. Կոստանյան, Խոտորջուրի բարբառային յուրահատկությունների լեզվաաշխարհագրական բնութագիրը. – Հայերենի բարբառագիտական ատլաս, պրակ 2, Ե., 1985, էջ 58:

Պապիկյան Միլվա (Հայաստան,
ԳԱԱ Հ.Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ)

**ԽՍՂՔ – ԽԱՅՏԱՌԱԿ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՄԲՌՆՈՒՄԸ
ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ**

Խաղք-ը խաղ բառի հոգնակին է, որի հոգնակերտ *ք*-ն ժամանակի ընթացքում կորցրել է հոգնակիի նշանակությունը և ձեռք բերել ածանցի արժեք: Ածանցը, ինչպես հայտնի է, կցվելով բառարմատին կամ հիմքին, փոխում է նրա իմաստը, կազմում նոր բառ նոր իմաստով: *Խաղք-ը*, ժամանակի ընթացքում իմաստափոխվելով, ձեռք է բերել նոր իմաստ, սակայն չի կորցրել իր նախնական իմաստերից մեկը՝ «ծաղր, կատակ, այպն»¹:

Խաղք բառը ՆՀԲ-ում *ռասկ*. նշումով է՝ «ամօթալից, այպն, ծանակ», և բացատրությունը հղվում է «խաղ» բառին, օրինակ՝ «*Խաղք ու խայտառակ* կացուցանէ զսատանայ ապաշխարութիւն»²: Մտ. Մալխասյանցի «Հայերէն բացատրական բառարանում» բառը բացատրվում է «խայտառակ»³:

Բարբառներում *խաղք*-ից կազմված են՝ *խաղքընայ* (Էվր.) «բամբասանքի առարկա դառնալ, խայտառակվել», *խաղքոել* (խաղքոնել, խաղքրել) – «ամոթանք տալ, խայտառակել», *խաղք լինել*-խայտառակվել, *խաղք շինել*, *խաղք ու խայտառակ անել* (էնել, ընել, *խաղք ու առակ դառնալ* «խայտառակվել», *խաղք ու խայտառակ լինել* (ըլնել), *Պոլսի բարբառում՝ խաղք ու պատատ ընել* «խայտառակել», *խաղք-խատիկ էլնել* (Վն.) հարադիր բայերը, *խաղքին դուռը* (Պլ.) «խայտառակ», *խաղք-խատիկ* (Վն.) «խայտառակություն», *խաղքկտոր* (Մլթ.) «խայտառակ, խայտառակություն», *խաղքություն* (Թբ., Պլ., Վն. Կր.) բառերը: Կա ասացվածք՝ «*Խաղք* էղանք, խաղող ալ չկերանք», այսինքն՝ «Ոչինչ չշահեցինք, անտեղի խայտառակվեցինք»:

¹ Տե՛ս նոր բարգիրք հայկազեան լեզուի (այսուհետև՝ ՆՀԲ), հ. 1, Վենետիկ, 1836, էջ 915:

² Նույն տեղում, էջ 917:

³ Տե՛ս Մտ.Մալխասյանց, *Հայերէն բացատրական բառարան* (այսուհետև՝ ՀԲԲ), հ. 2, Ե., 1944, էջ 234-235:

«Հայոց լեզվի բարբառային բառարանում» *խաղը* բառն ունի հետևյալ իմաստները. 1. Խայտառակ վիճակ, խայտառակություն: 2. Ծաղրի առարկա: 3. Տիկնիկ, պաճուճապատանք: 4. Ժողովրդական զվարճություն՝ խեղկատակություն բարեկենդանի ժամանակ⁴:

Խաղը շինել արտահայտությունը, ինչպես բացատրում է ՀԲԲ-ն, ժողովրդական զվարճություն էր բարեկենդանի ժամանակ. Իշխաններին, փաշաներին ծաղրելու համար մի մարդու հագցնում էին իշխանի կամ փաշայի նման, երկար բեղերով, սահարկու կերպարանքով, էշին հակառակ նստած, ձեռքին ճիպոտ, հագին փալասներ, երեսին մուր քսած, հանդիսավոր կերպով ման էին ածում փողոցներով. *խաղը եղածը* էշի վրայից իշխանական հրամաններ էր արձակում, իսկ բազմությունը նրան ծաղր ու ծանակի էր ենթարկում՝ շարունակ բղավելով՝ «յալլա՛, յալլա՛ »:

Խաղքին մասնակցողները երեսները սպիտակեցրել են այլուրով, և այդ սովորությունը պահպանվել է դարերով: Գ. Լևոնյանը, հղելով Պերճ Պռոշյանին, բերում է Փարպի գյուղում կատարվող *խաղքի* ներկայացումները: *Խաղքի* մասնակիցների վրա այլուր է շաղ տրվում. «... իսկ վերևիցն այլուրը շաղ են տալիս խանի գլխին, փոշին ողջ բակը բռնում է, բոլորն այլուրոտվում են»⁵:

Բարբառներում և ժողովրդախոսակցական լեզվում *խաղը* բառը սովորաբար գործածվում է *խայտառակ* բառի հետ՝ *խաղը ու խայտառակ*:

Խայտառակ բառի գործածությունը V դարից է: Ըստ ՆՀԲ-ի՝ «առակելի կամ առակեալ՝ խաղ առնելով. առակ նշուակի, ծանակ, ծաղաճանակ...»⁶: Կազմված են *խայտառակարար*, *խայտառակագոյն*, *խայտառակամահ*, *խայտառականք*, *խայտառակեմ*, *խայտառակիչ*, *խայտառակութիւն* բառերը: Աստվածաշունչ մատյանում բառը գործածված է երեք անգամ⁷: Օրինակ՝ «...եւ բազմացար, եւ մեծացար, եւ եկիր մտեր դու ի քաղաքս քաղաքաց, ստինք անկան քո, եւ մագք արձակեցան, եւ դու մերկ էիր, *խայտառակ*» (Եզեկ. ԺԶ. 7)՝ «Աճեցիր և

⁴ Տե՛ս Հայոց լեզվի բարբառային բառարան (այստուիւետևս՝ ՆԼԲԲ), հ. 2, Ե., 2002, էջ 273:

⁵ Գ. Լևոնյան, *Թատրոնը հին Հայաստանում*, Ե., 1941, էջ 153:

⁶ ՆՀԲ, հ. 1, 15 918:

⁷ Համարաբար գրաբար Աստվածաշնչի, Ս. Էջմիածին, 2012, էջ 856:

ուռճացար, եկար մտար քաղաքների այս քաղաքը, ստինքներդ կազմավորվեցին, մազերդ փարթամացան, բայց դու խայտառակ կերպով մերկ էիր» (խոսքը Երուսաղեմ քաղաքի մասին է)։ «Եւ ընկեցից ի վերայ քո զպղծութիւնս եւ զաղտեղութիւնս քո եւ արարից զքեզ *խայտառակ*» (Նաոււմ, Գ. 6)՝ «Քեզ վրայ պիտի նետեմ քո պղծություններն ու աղտեղությունները և *խայտառակ* պիտի անեմ Քեզ» (Աստուածաշունչ, 1999) (Խոսքը Նինվե քաղաքի մասին է)։

Ժամանակակից հայերենում բառի հիմնական իմաստներն են՝ 1. ամոթալի, 2. ծաղր ու ծանակի առարկա դարձած, 3. վատ, անհանդուրժելի, 4. ստորոցուցիչ, 5. վարկաբեկված⁸։

Խայտառակ բարդ բառը կազմված է *խայտ* արմատից և *առակ* բառից՝ «նշաւակ ծաղրի առականաց նշան» բացատրությամբ⁹։

Խայտ բառը հնդեվրոպական նախալեզվից է՝ *khaid- արմատից¹⁰։ Ունի «1. ամ. բիծ ունեցող, պիսակաւոր, խատուտիկ, 2. գ. բիծ, նշան» իմաստները¹¹։ Հ. Աճառյանը *խայտ* արմատի «նշան» իմաստից է առաջացած համարում *խայտառակ*, *խայտառակամահ*, *խայտառականք*, *խայտառակել* բառերը¹²։ *Խայտ* առանձին անգործածական արմատը ունի նաև «ուրախութիւն, ցնծութիւն» իմաստը՝ *խայտալ*, *խայտանք*, *խայտալից*, *խայտախնդութիւն*, *բացախայտալ*¹³։

Առակ-ը կազմված է *առ* նախդիրից և *ակն* «աչք» բառից՝ *առակն*. նախնական նշանակությունն է «օրինակ» և հաճախ գործածվում է *օրինակ* բառի հետ՝ *առակ օրինակի*։ Ունի նաև «դիտելու բան, տեսնելու առարկա» իմաստը¹⁴՝ «Որպէս *յառակն* ամենեքեան զարմացմամբ հային» (Ն.Լամբրոնացի)¹⁵։

ՆՀԲ-ում բառը բազմիմաստ է. «1. Առած նմանաբանական կամ այլաբանական, 2. Առեղծանելիք, մթին ասացուած, 3. Օրինակ, ձև, 4.

⁸ **Էդ. Աղայան**, *Արդի հայերենի բացատրական բառարան* (այսուհետև՝ ԱՀԲԲ), Ե., 1976, էջ 560։

⁹ **Հ. Աճառյան**, *Հայերեն արմատական բառարան* (այսուհետև՝ ՀԱԲ), հ. Բ, Ե., 1973, էջ 326։

¹⁰ Տե՛ս նույն տեղում։

¹¹ Տե՛ս ՀԲԲ, հ. 2, էջ 237։

¹² Տե՛ս ՀԱԲ, հ. Բ, էջ 326։

¹³ Տե՛ս նույն տեղում, էջ 327։

¹⁴ Տե՛ս ՀԱԲ, հ. Ա, Ե., 1971, էջ 249։

¹⁵ Օրինակը՝ ըստ ՆՀԲ, հ. 1, էջ 283։

Ինչ մի առաջի եղեալ ի տեսիլ ամենեցուն, կամ առարկայ հանդիսի, 5. Որպէս Զրոյց հասարակաց, առած, 6. Որպէս Առակ նշաւակի, նշաւակ, ծանականք. նախատինք. խայտառակութիւն և խայտառակ: Վերջին իմաստի համար օրինակներից մեկը Մանդակունու ճառերից է. «Զկապեալսն մեղօք զմեղաւորսն յաշխարհատես հրապարակին ցուցանիցեն *առակ* և ծանակ՝ անտանելի ամօթով»¹⁶: Աստվածաշունչ մատյանում *առակ* բառը գործածված է 115 անգամ, ընդ որում, Նոր կտակարանում՝ ավելի շատ: Հին և Նոր կտակարաններում բառի իմաստների միջև նրբերանգային տարբերություններ կան:

Հին կտակարանում՝ «Եւ տաց գղոսա ի ցրումն ընդ ամենայն թագաւորութիւնս երկրի, եւ ի նախատինս, եւ *յառակ*, եւ ատելութիւն եւ յանէծս յամենայն տեղիս ուր մերժեցից գղոսա անդր» (Եր. 24. 9), աշխարհաբարով՝ «Դրանց պիտի ցրեմ աշխարհի բոլոր թագավորությունների մէջ՝ նախատինքի, *անարգանքի*, ատելութեան և անէծքի արժանացնելով ամենուրեք...» (Աստվածաշունչ, Ս. Էջնիածին, 1999): *Առակ*-ը թարգմանված է *անարգանք*:

Սողոմոնի առակներում կարևորվել է մարդկային կյանքում ձեռք բերված փորձառության փոխանցումը մի սերնդից մյուսին. այստեղ *առակ* բառն ունի խրատի, խոհի, իմաստության գաղափար:

Նոր կտակարանում բառի իմաստը հիմնականում կապվում է Քրիստոսի առակների հետ, քանի որ նա ժողովրդին հասկանալի լինելու համար իր վարդապետությունը բացատրում էր առակների միջոցով¹⁷: Այստեղ *առակ*-ը այլաբանական իմաստ ունի:

Միջնադարյան *առակ* հասկացությունը ավելի լայն է, քան գիտակցվում է այժմ: Միջնադարյան բեմական արվեստում, առավելապես նրա հին, բանահյուսական ձևերում *առակն ու խաղը*, խոսքն ու դրությունը երբեմն հանդես են գալիս փոխներթափանցված: Մարդկանց հետաքրքրել են ոչ միայն դրությունները (նոր տերմինով՝ բեմավիճակները), այլև խոսքը, սրամիտ երկխոսությունները, համեմատությունները:

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ «Եւ խօսէր ընդ նոսա բազումս *առակօք*...» (Մտթ. 13.3) կամ «Զայս ամենայն խօսեցաւ Յիսուս առակօք ընդ ժողովուրդսն, եւ առանց *առակի* ոչինչ խօսէր ընդ նոսա» (Մտթ. 13. 34):

ՀԲԲ-ում *սոսկ* բառն ունի 6 իմաստ. այստեղ բառի առաջնային (դոմինանտ) նշանակությունն է «Համառոտ պատմուածք, արձակ կամ ոտանատր, որի մէջ դուրս են բերվում մարդիկ, անասուններ, նույնիսկ անշունչ առարկաներ, այլաբանական արտաքին ձևով, որի տակ թաքնված է ներքին բարոյական իմաստ»: «Նմանություն, օրինակ»-ը բառի երրորդ իմաստն է¹⁸:

Ժամանակակից հայերենում *սոսկ*-ը բարոյախոսական բնույթի գրական ստեղծագործություն է, որտեղ այլաբանության միջոցով ներկայացվում, ծաղրվում և քննադատության են ենթարկվում մարդկանց արատները: Մովորաբար *սոսկի* վերջում հեղինակը դրսևորում է իր հատուկ վերաբերմունքը նկարագրածի հանդեպ, որն էլ առակի բարոյախոսությունն է: Առակը օգնում է մարդուն սովորել օրինակով: Այն դաստիարակչական բնույթ ունի: Ժողովրդական առակները եկեղեցականների կողմից համարվել են գեղջկական, ուստի՝ անարժեք՝ իրենց աշխարհիկ բնույթի պատճառով:

Բարբառներում *սոսկ* բառը հիմնականում ունի «խայտառակ» իմաստը, Պոլսի բարբառում *սոզոց սոսոզ* նշանակում է «շատ խայտառակ», Նոր Նախիջևանի բարբառում՝ *սոկէ էլնէլ*՝ «ամոթը կորցնել», *սոսկ անէլ* (Դրբ.)՝ «խայտառակել», *սոկէ հանէլ*՝ «անպատկառ դարձնել», *սոսկել* բայը՝ «խայտառակել»՝ «Աղվոր մը *սոսկեցի* անոր»¹⁹:

Սնասոսկ բառը կա շատ բարբառներում. ընդ որում, արևմտյան բարբառներում այն ունի «չար, անհանդարտ» իմաստը, մինչդեռ արևելյան բարբառներում՝ «անբարոյական, լկտի» իմաստները: Ինչպես նշում է Հ. Աճառյանը, Ոզմի բարբառում «անառակ» նշանակում է «խելացի, իմաստուն», իսկ *սոսկօք*-ը՝ «անառակ»²⁰:

Սոսկ բառը մի քանի բարբառներում՝ Մուշ, Պոլիս, Սեբաստիա, նշանակում է «հայեղյանք, նախատական խոսք, հանդիմանություն»՝ «*Սոսկ չմնաց, տվավ*», «*Սոսկ չմնաց, տղուն գլխուն թափեց*»²¹: *Սոսկ-զսոսկ* (Մուշ, Վան), *սոսկ-չսոսկ* (Վան), *սոսկ-պսոսկ* (Ար. Դրբ.) բառն ունի «խաղբ-խայտառակ, լարախաղացի

¹⁸ Տե՛ս ՀԲԲ, հ. 1, Ե., 1944, էջ 214:

¹⁹ ՀԼԲԲ, հ. 1, Ե., 2001, էջ 97:

²⁰ Տե՛ս ՀԱԲ, հ. Բ, էջ 250:

²¹ ՀԼԲԲ, հ. 1, էջ 97:

ծաղրածու», Վանի բարբառում՝ նաև «սեթևեթանք» իմաստները: *Առակություն* բառը Մշո բարբառում ունի «խայտառակություն» իմաստը. ընդ որում ասվում է, երբ ծեր կլինը կամ տղամարդը կրկին ուզում է ամուսնանալ:

Մի շարք բարբառներում *խայտառակ անել*, *խայտառակել* բայը նշանակում է «բռնաբարել, անպատվել» (Ղրբ.), օր.՝ «Ասըմըն թա էդ գադատ նախանց ըխչըկանը *խայտառակ ա արալ*»²²: Գրական հայերենում այդ իմաստը չկա:

Տեսնենք՝ ի նչ առնչություններ ունեն *խաղը* և *խայտառակ* բառերը:

Ինչպես նշեցինք, *խաղը*-ը *խաղ* բառի հոգնակին է, որը հետագայում ենթարկվել է իմաստափոխության կցորդության հիմունքով: *Խաղ* բազմիմաստ բառի իմաստներից մեկն էլ հանդիսության, ցուցադրության հետ է առնչվում, որից՝ *խաղալիկ*²³ – պարող, *խաղարար*, *թատերախաղը*²⁴: Այս իմաստը պահպանված է ժամանակակից հանդիսանքային արվեստներում՝ թատրոն, կինո և այլն (օր.՝ Վ. Փափագյանի *խաղը* հմայեց բոլորին):

Խաղը շինել արտահայտությունը նշանակում էր ցուցադրել, ի տես ներկայացնել, *առակ*-ը նույնպես արտահայտում էր ցուցադրելու, աչքին տեսանելի դարձնելու իմաստը. *խայտ* առանձին անգործածական արմատը ունի «ուրախ, ցնծալի» իմաստը, ուրեմն *խայտառակ* բառը արտահայտում էր «ցուցադրվող, ի տես ներկայացվող ինչ-որ զվարճալի բան, ուրախ տեսարան» իմաստը:

Папикян Сильва – Восприятие понятий «xalk՝» и хауտֆակ в диалектах. – Слово xalk՝ множественное число слова хаł. Частица k՝ в течении времени потеряла значение множественности и получила смысл суффикса. В армянских диалектах от слова «xalk՝» образованы xalk՝nal,

²² ՀԼԲԲ, հ. 2, էջ 278:

²³ Կարաւս կայթից և ցոյս վազից, *Խաղալկացն* դիւաց գարշէլեաց ճարտար խաբողաց ծուրթեամբս իմով շնորհեցի (**Գ.Նարեկացի**, *Մատենանոցի թուրքերգութեան*, Ե., 1977, ԻՄ, էջ 72):

²⁴ *Թատերախաղը*-ը՝ «խաղ թատերաց», անվանվում էին ժողովրդական խաղերը. «Յորժամ թատերախաղքն հարկանին՝ յայնժամ ողբայ էկեղեցի զկրուստ ժողովրդեան» (ՆՀԲ, հ. 1, էջ 798):

xałk'řel, xałk' šinel, xałk' u xaytarak anel, xałk' u patař ənel, xałk'-xatik ēnel, xałk'ktor и другие слова и словосочетания.

В диалектах и народно-разговорном языке «xałk'» обычно употребляется со словом “xaytarak”, которое состоит из и/е корня “xayt” и слова arak – ar + akn. Отдельно неупотребляемый корень “xayt” имеет значение “веселый”. Слово “xaytarak” означало “показ какого-то веселого зрелища”.

Papikyan Silva – Understanding of “khaghk” and “khaytarak” (disgraceful, shameful) concepts in dialects. – “Khaghk” is the plural form of the word “khagh”. Over the course of time the plural suffix “k” has lost its plural meaning and obtained affix value. Many words and expressions in dialects such as xałk'nal, xałk'řel, xałk' šinel, xałk' u xaytarak anel, xałk' u patař ənel, xałk'-xatik ēnel, xałk'ktor are composed of the word “khaghk”. In dialects and slang “khaghk” usually is used with the word “khaytarak”. “Khaytarak” is formed by the root word “khayt” and the word “arak”. The latter consists of the prefix “ar” and the word “akn” (eye). The root word “khayt” separately disused has the meaning of “funny, exultant”. The word “khaytarak” meant “displaying, showing something funny, a diverting scene”.

Արեն Մանթոյան, Լիլիթ Պետրոսյան (Հայաստան,
Վանաձորի Հ.Թումանյանի անվ. ՊՄՀ)

**ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԸ ՄՇՈ ԲԱՐԲԱՌՈՎ ԳՐԱՌՎԱԾ
ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ**

Անվանաբանությունը լեզվաբանության բաժին է, որն զբաղվում է հատուկ անունների, ցեղանունների և մասնավորապես ազգանունների քննությամբ, նրանց ծագման, պատմականորեն կրած ձևափոխության փոփոխությունների հարցերով¹:

Գեղարվեստական անվանադրության² համակարգում առանձնանում են հեքիաթանունները, որոնք առնչվում են ոչ միայն ոճաբանությանը, գեղագիտությանը, այլ նաև բարբառագիտությանը:

Հայկական ժողովրդական հեքիաթներում ճանաչողական նշանակություն ունեն և՛ հատուկ, և՛ հասարակ անձնանիշ գոյականները, քանի որ այստեղ հիմնականում գործում է **անանունություն** գեղարվեստական պատկերավորման միջոցը. «Մասնագիտությունը և կամ էլ սոցիալական պատկանելությունը մի հերոսին մյուսից տարբերող հատկանիշ է»³:

Բարբառագիտության ուսումնասիրման մեջ սովորաբար կարևորվում են բարբառների հնչյունական, բառական և քերականական համակարգերը: Դրանցից մենք առանձնացրել ենք ժողովրդական հեքիաթներում պահպանված անձնանունները: Հոդվածում լեզվաբանական հայեցակետերով ուսումնասիրել ենք միայն Մուշի Տուրուբերան նահանգի Հարք (Մուշ-Բուլանըխ) գավառի ժողովրդական հեքիաթների անձնանվանական համակարգը, սակայն այն ավելի ամբողջական կլինի բոլոր հեքիաթների անվանադրական համակարգերի համեմատության դեպքում:

Հեքիաթանունները ունեն գեղարվեստական նշանակություն, որը, բացի անվանողական արժեքից, ունի նաև բնութագրող, ոճական

¹ Տե՛ս *Լեզվաբանական բառարան*, Ե., 1975, էջ 20:

² Տե՛ս **Օ.И.Фонякова**, *Имя собственное в художественном тексте (учебное пособие)*, Л., 1990:

³ **Մ.Մանթոյան**, Էպիկական կերպարի ստեղծման չափումները, Վանաձոր, 1994, էջ 43:

տիպական գործառույթ: Հերոսի անունը միջոց է գեղարվեստական կերպար ստեղծելու համար: Անունը հերոսին հաղորդում է ազգային հատկանիշ: Անունները լեզվում աննշանակիչ միավորներ են. դրանք իմաստավորվում են միայն խոսքում: Անվան իմաստի բացահայտումը ստեղծագործության էության բացահայտումն է. «миф – развернутое магическое имя»⁴:

Անվան իրի էությանը համապատասխանելու կամ չհամապատասխանելու բնույթի հարցը գլխավոր է եղել դեռևս հունական փիլիսոփայության մեջ՝ փոսեյ և Թեթեյ անվանումով, որը ժամանակակից լեզվաբանության մեջ հանդես է գալիս իբրև նշանի չպատճառաբանվածության և պատճառաբանվածության հարցադրում⁵:

Կյանքում մարդկանց անունները դրվում են ծնվելու ժամանակ, իսկ հեքիաթի հերոսները հիմնականում անվանադրվում են՝ ըստ իրենց բնավորության գծի կամ ըստ ասացողների աշխարհայացքի, ինչպես՝ *Ժամանակով քաղքի մե մեջ մարդ մե կեղնի, օր կը խոսեր, թագավոր լե էղներ, խոսքն օր յիգեր վրը լեզվին, չըր քաշվի, ճակտին կը զարկեր: Անուն կը դնին ճշմարտախոս*⁶:

Հեքիաթանունների ստուգաբանությունից պարզ է դառնում, թե տվյալ տարածքի ժողովուրդը որ ազգերի հետ է շփվել, ինչ կարգի փոխառություններ է կատարել:

Հունական փոխառություններ – *Լուսեղեն* անվանումը՝ «լուսից շինված» իմաստով համապատասխանում է *Φωτεινα* անվանը, որ նշանակում է «լուսավոր». հմմտ. «Վկայաբանութիւն սրբուհւոյն Փոտինայ, որ թարգմանի Լուսեղեն» (Հ.Ա. 438)⁷: *Գելո* անունը *Γεώργιος* երկրագործ նշանակությամբ *Գեորգ* անվան հնչյունափոխված տարբերակն է (Հ.Ա. 454): *Գորգի* անունը *Γρηγόριος* արթուն նշանակությամբ *Գրիգոր* անվան տարբերակն է (Հ.Ա. 519):

Թուրքական փոխառություններ – *Գյուլ* թագուհի անվանումը ծագում է *Գիլհանըմ* ցմ վարդ *hanem տիկին* բառերից. այն գործածական էր անցյալ դարում արևմտահայերի մեջ (Հ.Ա. 474): *Ռուրմիշ*

⁴ Տե՛ս **Ա.Փ.Լոսեւ**, *Диалектика мифа*, М., 2001, էջ 404-418:

⁵ Տե՛ս **Գ.Բ.Զահուկյան**, *Լեզվաբանության պատմություն*, հ. 1, Ե., 1960 էջ 39:

⁶ Տե՛ս *Հայ ժողովրդական հեքիաթներ*, հ. X, Ե., 1967, էջ 257:

⁷ Փակագծերում ներկայացված են **Հ. Աճառյան**, *Հայոց անձնանունների բառարան* (Ե., հ. Ա, 1942, հ. Բ, 1944) գրքի համապատասխան էջերը:

թուրքական անվան հնչյունափոխված տարբերակն է *Դրմո* անունը՝ *durmes* «կանգուն, կանգնած» իմաստով (Հ.Ա. 20):

Պարսկերեն փոխառություններ – *Դռնո* անվանումը *Դռուդանա* *durr-dane* «մարգարտի հատ» անվանման համառոտումն է (Հ.Ա. 82): *Խուռշուղ* անվանումը *Խուռաւշահ* *xurram* (ուրախ) *šah* (թագավոր) բառերի արտակարգ հնչյունափոխության արդյունքն է (Հ.Ա. 562):

Դալու օղլան Եգիպտոսի հայազգի գորավար Դալա-իբն-դալատ-էլ-Մելիք-էսսալիհն է: Եգիպտոսի խալիֆայի վեզիրը՝ Աբբասը, սպանեց խալիֆային և նրա մանկահասակ որդուն գահ բարձրանալով՝ իր ուզածի պես կառավարում էր երկիրը (Հ.Ա. 1154):

Կան հնչյունափոխված հեքիաթանուններ, որոնց սկզբնական ձևը միանշանակ ներկայացնել հնարավոր չէ, ինչպես *Բարո* անվանումը կարող է ծագել կամ Բարսեղ՝ հունարեն Βασίλειος թագավոր բառից, կամ Բարխուդար՝ պարսկերեն *Barxurdār* անունից, որ նշանակում է բախտավոր (Հ.Ա. 390):

Թագավոր հերոսները ներկայացված են՝ ըստ տեղանունների, ինչպես՝ *Ուռուսի* թագավոր թալեր է վըր մըզի (44) ...կը կարգե *Մսրա* թագավորի աղջկա հետ (57)որ դառնա *Արևելոց* ու *Արևսյոց* թագավոր (62) ...յելի գնա *Մինամ* թագավորին (67) Կրսեն թե՛ *Լաթարա Պոռո* թագավոր որ մե ուր քոշկից գիջնա Նագուկա ծովափ (70): – *Չինուսաչինի* թագավորի աղջիկ բերե (104):

Հայկական ծագում ունեցող հատուկ անունները հիմնականում բաղադրյալ կազմություն ունեն. դրանք ըստ էության նորաբանություն-անվանումներ են՝ դիպվածային արտահայտություններ՝ ներքին բնութագրման շարահյուսական կաղապարով, որը հատուկ է միայն տվյալ հերոսին, ինչպես՝ – *Չը լսե՞ր իս, ընձի Լուսեղեն կրսին* (17),տղի անուն կը դնին *Նասնհաս* (84):

Կազմությամբ բարդ հեքիաթանուններ են կազմվել նաև փոխառություն-արմատներով՝գանուն կը դնին *Ասլանգաղե*, *չրմքի շայիշ կենին*, *որ առու՛ ճն է ընդոր կաթ տվի* (63): *Օսկեքչամ տղեն յըմնօր կը հարցու....* (182):

Հեքիաթանուններն ունեն կառուցվածքային և իմաստաբանական բարդ համակարգ: Դրանք ասացողների կողմից մտածված, որոշակի բովանդակությամբ արտահայտություններ են, որոնց իմաստաբանությունը հասկանալի է դառնում ստեղծագործության ընթերցա-

նության ժամանակ⁸: Անձնական փոխակերպման (տրանսֆորմացիայի) օրենքով հեքիաթանուններն արտահայտում են անցյալում և հեռավոր երկրներում ապրող մարդկանց անվանումները, ինչպես՝ *Մայրամ, Հիսո՛ւ ու Քրիստո՛ւ, Ադամ, Մուրբ Սարգիս, Թուխմանուկ* սրբանունները, *Խիկար Իմաստուն (294), Հարոն-Խարոն Չանգին (32)*⁹ հայտնի անունները խորհրդանշում են անցյալի հերոսներին: *Միրզա Մահմուդ, Ավջի Սհմադ, Ջումշիդ, Յուսուփ* անունները վերագրված են ոչ մշեցի հերոսներին. դրանք նույնպես համապատասխանաբար խորհրդանշում են Մուշի հետ հարաբերություն ունեցող երկրները:

Հեքիաթանունները հիմնականում ենթարկվում են արտակարգ հնչյունափոխության, սակայն հնչյունափոխությունը կատարվում է այնքան, որ բառապատկերը խորքում պահպանվի, ինչպես՝ *Պզտիկ ախպեր Ներսես էր, Ներսո կը կանչեն (41)*: Հնչյունափոխված հիմքերով անունները սովորաբար վերագրվում են հասարակ մահկանացուներին՝ բացառությամբ «Մլիկ էրեց» հեքիաթի, որտեղ երեցը, հանդիպելով աստվածաշնչյան հերոսներին, նրանց մեղադրում և արտակարգ հնչյունափոխության է ենթարկում նրանց անունները՝ որակելով նաև մականուններով, ինչպես *Ադամ գիկա ռաստ: Ես Ադամն իմ....-Ի՛մալ. տո՛ Ադո, Ադո.... Մատոս ադեն կը հանպտի իրիցուն: -Տո քրքրուկ Մատո.... Մովսես մարգարեն գիկա ռաստ: (132)-Տո՛ թոլ Մոսես.... Դավիթ մարգարեն էկավ ռաստտո պոժի՛կ Դվո.... զՈւրիեն սպանիր.... Հոգեառ Գաբրիել իրեշտակն իմ.... – Տո՛, քոո Գրո.... կը լարե Գաբրիելի յետև (134)*:

Մեկ հնչյունի հակադրությամբ են ներկայացվում ընկեր հերոսների անունները՝ *Յարո // Նարո (182), Կրմոն // Դրմոն (206), Հարոն // Բարոն (26)*, ինչպես նաև ամուսինների՝ *Նոնուն ու Դոնոն մարդ ու կնիկ են (366), Մուշոն ու Նուշոն (198)*:

Գեղարվեստական ստեղծագործություններում չկան անխոս, ոչինչ չասող անուններ: Եթե գեղարվեստական ստեղծագործության հերոսի անվան ընտրությունը կախված է հեղինակից, ապա հեքիաթանունը պետք է լինի ժողովրդական, ասացողը այն փոփոխել չի

⁸ Տե՛ս **Ю.А.Карпенко**, *Имя собственое в художественной литературе. – Научные доклады высшей школы: Филологические науки*, 1986, 4. էջ 34-40:

⁹ *Հարոն-խարոն* նշանակում է հարստություն: Այս դեպքում ակնարկվում է արաբ ամիրապետ Հարուն ալ Ռաշիդի հարստությունը:

կարող, այլապես հեքիաթը, որ հաճախ վերնագրվում է հերոսների անուններով, կկորցնի իր նշանակությունը, ինչպես՝ *Վասվասա Մխոն* (186) *Թանթոռո* (629), *Մշակ Յովանեսի հեքիաթ* (630):

Ճեքիաթանունները խոսքի միավորներ են, որոնք, տարածվելով և լայն գործածականություն ստանալով, անցնում են լեզվական մակարդակ: Կան այնպիսի հեքիաթանուններ, որոնք լայն շրջանառություն են ստացել, իհարկե, որոշակի բառակազմական փոփոխություններով, ինչպես՝ *Լուսեղեն – Լուսինե*, *Նոանհաստ – Նոանե* և այլն:

Քերականական մակարդակում հեքիաթանուններն ունեն հետևյալ առանձնահատկությունները:

1. Կոչականները հարաշեշտ են – *–Սալա՛նգադէ, ո՛րդի, – կըսէ թագավոր....* (63) – *Կը մեննի, Ա՛ղամորդի, – կըսէ աներևութ ձեն մե* (270):

2. Ուղղականաձև հատկացուցիչ – *....կը զարկէ Սալանգադէ պառեկ* (66): *....օր զշինական Սըքո ձեռ հինգ մեջտյա դրիր....* (191): *Կրմո մտքով լէ չընցնա.... Կրմո միտք կը փոխվի....* (206)

3. Գրաբարյան հայցական – *Քեռին զՆոանհաստ կը դնէ վըր ուր վզին....*(85) *....զՍըքո ադեն թալ ի դժոխք....* (191), *Հարոն զԲարոն կը կըրցու* (29), *Աղջիկ օր կը տեսնա զՀարոն....* (30):

Ճեքիաթանուններում առանձնանում են մականունները՝ իբրև հերոսին բնութագրող հատկանիշ: Մականվանական հիմքերով կազմված անունները լինում են մենաբառ, ինչպես՝ *կը կանչին Յոկընլա* (202), *Քայլիկ* (110) և բազմաբառ, ինչպես՝ *Ճետոռ-պետոռ* (384) Անոդորմ Պետրոսին (302), *Արտմերտու Խնձոր աղջիկ* (222): Մականուններով հարուստ է «Միրզա Մահմուդ» հեքիաթը. – *Քու անունն ի՞նչ է: – Պակաս Նեռ թալոդ Այի: – Քու անունն ի՞նչ է: – Իմ անու՞ն՝ Պակաս Խուլ Այի: – Քու անուն ի՞նչ է: – Իմ անու՞ն՝ Պակաս Քելոդ Այի: – Ախպեր, քու անուն ի՞նչ է: – Քըչկեր Այի: – Քու անուն ի՞նչ է: – Իմ անու՞ն՝ Կես-սագրանդ Այի: – Քու անուն ի՞նչ է: – Իմ անու՞ն՝ Անուծ Այի* (122):

Ճեքիաթների հատուկ անուններից են նաև տեղանունները¹⁰ և **կենդանունները**. Վերջիններս հազվադեպ են Մուշի բարբառներում, չնայած այն հանգամանքին, որ դրանք նույնպես ժողովրդական ստեղծագործություններ են և բարբառների հատկանունների բաղադրիչն

¹⁰ Տեղանունների ուսումնասիրությանը սույն հոդվածում չենք անդրադարձել:

են կազմում և ունեն բնութագրող հատկանիշ, ինչպես՝*դուք ի՞նչ իք իմ յառեջ, ես Ասուրգ կատուն իմ* (328-329): *Գեղցու կով կը ծնի, խորտոխի հորթիկ մե կը բերե, հորթկու անուն կը դնին Մինամ: Մինամ կը մեծնա, կեղնի հերվենա, դրկեցի աչք գրնկնա ի Մինամ.... Մինամն ի՛մ մայն է... կը լծե գՄինամ* (331): *Մոտոտ քուռակ անկըջեն փսփսաց... հեծավ գՄոտոտ քուռակ... Մոտոտ քուռակ լե քըզի... Մոտոտ քուռկու մոտ Մոտոտ քուռկին կը պատմե... (124-131): Կամ ես, կամ Չոմար – ռեսի շուն՝ Չոմար* (210):

Հեքիաթանունների ուսումնասիրությունն ունի ազգագրական-բանասիրական և բարբառագիտական արժեք: Հեքիաթանունները, որպես կանոն, չեն կրկնվում. իբրև հատուկ անուններ դրանք արտահայտում են եզակի գաղափարներ: Անձնանունները ժողովրդական գեղարվեստական երկերում ունեն հանգուցային բառի և դիցաբանական խորհրդանիշի արժեք: Անվանադրության ուսմունքը, որն ընկած է մարդակենտրոն կիրառական քննությունների հիմքում, բացահայտում է բարբառախոսի լեզվամտածողությունն ու աշխարհայացքը:

Сантоян Арен, Петросян Лилит – Антропонимы в сказках мушского диалекта. – В истории диалектологических исследований мы выделяем антропонимы, сохранившиеся в народных сказках. Наше исследование посвящено анализу антропонимической системы народных сказок провинции Туруберан Харьковской губернии Муша в лингвистическом аспекте.

Сказочные антропонимы имеют особое художественное значение, которые кроме номинативной ценности приобретают также характерологические, стилистические и типологические функции. Имя героя становится средством для создания художественного образа.

Исследование сказочных антропонимов имеет филолого-этнографические и диалектологические цели. Сказочные антропонимы, как правило, не повторяются в качестве собственных имен – они выражают уникальность единичных идей. Антропонимы в народных художественных произведениях имеют ценность ключевых слов и мифологических символов. Наречение именем, которое находится в основе антропоцентричного прикладного исследования, выявляет языковое мышление и мировоззрение диалектофонов.

Aren Santoyan, Lilit Petrosyan – People’s Names in the Tales in the Dialect of Mush. – In the studies of the history of dialectology, we have singled out people’s names which have been preserved in folk tales.

From linguistic perspectives we have done research into the system of people’s names of the folk tales of the system of people’s names of Hark province (state of Turuberan, Mush).

The names of the tales bear an artistic meaning, which has a stylistic, typifying function apart from that of nomination. The name of the hero is a means of creating an artistic character.

The study of tale names has ethnographical, philological and dialectological aims. The names of tales, as a rule, are not repeated: as proper nouns they express unique ideas. In national literary works people’s names bear the value of the main word and mythological symbol. The study of naming which forms the basis of human-centred applied investigations reveals the outlook of the dialect user.

Մարգարյան Նվեր (Հայաստան,
ԳԱԱ Հ.Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ)

**ՀԱՅ ԲԱՐՔԱՌԱՍԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ՇՐՋԱՆԱԲԱԺԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ունենալով շատ հին ակունքներ՝ հայ բարբառագիտությունն այսօր գտնվում է զարգացման մի փուլում, որն ամենից առաջ բնութագրվում է բարբառների բազմահատկանիշ դասակարգմամբ կամ բարբառային վիճակագրությամբ: Ժամանակակից գիտության մակարդակին համապատասխան և նորագույն մեթոդներով արված, հնարավորինս ամբողջական և ճշգրիտ չափանիշներ ապահովող այս դասակարգման հիմքում Գ. Ջահուկյանի հիմնարար աշխատությունն է, որը գիտական նվաճում է ոչ միայն հայ բարբառագիտության մեջ¹: Իրականացած փաստ է հայերենի բարբառային բառերի բառարանի յոթհատորյակի հրատարակությունը², հրապարակի վրա են բազմաթիվ մենագրություններ ու հոդվածներ, պաշտպանվել են մի շարք ատենախոսություններ: Մյուս կողմից, ավարտական փուլում են հայկական բարբառագիտական ատլասի ստեղծման աշխատանքները, և նրա հրատարակումը կարող է հայ բարբառագիտության մեջ մինչև այդ արվածի յուրատեսակ ամփոփումն ու ամբողջացումը լինել, դառնալ հայ բարբառների վերաբերյալ տարատեսակ տվյալների շտեմարանը, հիմք հանդիսանալ նորանոր ուսումնասիրությունների: Այս ամենը, որքան էլ վերաբերում է հայ բարբառագիտության արդի վիճակին կամ հեռանկարին, այնուամենայնիվ հաստատում է այն պարզ պնդումը, որ չի կարող լինել քիչ թե շատ զարգացած հայերենագիտություն, նաև հայագիտություն՝ առանց զարգացած բարբառագիտության: Ավելին, իր բարբառային տարբերակվածությամբ, տարբեր ժամանակներում ձևավորված ու առաջացած բարբառների, խոսվածքների մեծ քանակությամբ, դրանց հարակից գոյությամբ, ներթափանցումների և լեզվական ազդեցությունների ինքնատիպությամբ, կատարված տեղաշարժերի յուրահատուկ բնությամբ և այլ առանձնահատկություններով հայերենը ոչ միայն չի զիջում աշխարհի մի շարք

¹ Տե՛ս Գ.Ջահուկյան, *Հայ բարբառագիտության ներածություն*, Ե., 1972:

² Տե՛ս *Հայոց լեզվի բարբառային բառարան*, հհ. Ա-Է, Ե., 2001-2012:

լեզուների, այլև կարող է գերազանցել և մատուցել համաշխարհային, համընդհանուր նշանակություն ունեցող փաստեր ու տվյալներ:

Հենց այս համապատկերի վրա էլ ակնհայտ է դառնում, որ մինչև XX դ. 2-րդ տասնամյակի սկիզբը եղած հայ բարբառագիտության առանձին օջախների, արտասահմանյան հայագիտական դպրոցների և անհատների ներդրումը համարժեք գնահատություն չի ստացել, որն էլ անհամապատասխանության տեղիք է տվել հայ բարբառագիտության պատմության պարբերացման մեջ: Ճիշտ է, մեզանում հայ բարբառների ուսումնասիրության գիտաճյուղային փուլի սկիզբը XX դ. երկրորդ տասնամյակից դնելու աննպատակահարմարության վերաբերյալ եղել են ակնարկներ կամ դիտարկումներ³, բայց թե՛ այդ հարցը, թե՛ XIX դ. երկրորդ կեսի բարբառագիտական ժառանգության (հատկապես Ա. Այտընյանի լեզվաաշխարհագրական և Ք. Պատկանյանի ձևաբանական դասակարգումների) վերագնահատությունն ու վերլուծությունը պետք է կատարել առանձնակի քննությամբ, համեմատաբար հանգամանորեն, որին էլ միտված է սույն հոդվածը:

Անհրաժեշտություն չենք տեսնում՝ կրկնելու մինչև խնդրո առարկա ժամանակահատվածը եղած հիշատակությունները, հայտնի օրինակներն ու ձևակերպումները՝ սկսած Կորյունից, Եզնիկից, Խորենացուց, Թրակացու առաջին մեկնիչներից մինչև Ստեփանոս Սյունեցի, Հովհաննես Հովվից ու Ռիվոլայից մինչև Շրյոդեր ու Սեբաստացի, մինչև Աստվածատուր Ներսեսովիչի, Հակոբ Վիլլոտի, Հովսեփ Արցախեցու և ուրիշների բառարաններն ու բառացանկերը: Դրանցում դեռևս ձևավորված ու ամրակայված չէ գիտական քննության միասնական հայեցակարգը, և ուսումնասիրության շրջանակները սահմանափակվում են ա) կա՛մ բարբառների գոյության վերաբերյալ ընդհանուր ու մասնավոր հիշատակումներով, բ) կա՛մ բարբառային առանձին հատկանիշների և իրակությունների մատնանշումով, գ) կա՛մ տարբեր բառարաններում բարբառային առանձին բառերի ընդգրկումով:

³ Տե՛ս **Հ. Պետրոսյան**, *Հայերենագիտական բառարան*, Ե., 1987, էջ 131, **Ա. Պողոսյան**, *Հայ բարբառագիտություն*, Ե., 1996, էջ 35, **Ա. Մարգարյան**, *Հայոց լեզվի բարբառային ասոլյաս*, պրակ Ա, Ե., 2008, էջ 16-17, **Ն. Մարգարյան**, *Միսիթարյանները և հայ բարբառների դասակարգման հարցը*, – Բազմավեպ, հատուկ թողարկում, Վենետիկ, N 1-4, 2001, էջ 277-288:

Ուզում ենք կարևորել հատկապես XIX դ. երկրորդ կեսը: Շրջադարձային այդ փուլի սկզբում Գ. Հախավերդյանի աշխատությունն է⁴, որի անգնահատելի արժեքը միայն այն չէ, որ անհայտության, մոռացումի մշուշից վերադարձվեց հայ և համաշխարհային քնարերգության մեծերից մեկի՝ Սայաթ-Նովայի բանաստեղծական ժառանգության հիմնական մասը: Այն արժեքավոր է նաև որպես Թիֆլիսի բարբառի քննություն: Էմիին ուղղված նամակներից մեկում հեղինակը գրում է. «Թե որքան եմ տանջվել այդ երգերի վերծանման համար՝ միայն աստծուն է հայտնի: Ձեռագրից դու նոր գաղափար կկազմես թե՛ երգչի, թե՛ իմ աշխատանքի մասին... Կարող եմ համարձակ հավաստիացնել քեզ, որ իմ դիտողությունները ճիշտ են, բայց գուցե ես համապատասխան մեթոդ չեմ կարողացել ընտրել իմ դիտողությունները հաղորդելու համար: Համենայն դեպս, այս ամենը նորություն է, յուրօրինակ... Իմ նպատակն է ուրիշներին էլ դրոշել ուսումնասիրելու մյուս հայկական բարբառները»⁵: Էմիին աշխատանքը որակեց «գերազանց է» արտահայտությամբ՝ նկատի ունենալով, որ դա բարբառի գիտաճյուղային քննության նմուշ էր ինչպես տեսական հիմնահարցերի շրջանակով, այնպես էլ գործնական մոտեցումներով⁶:

Իսկ Ա. Այտընյանի աշխատության երևումով (Վիեննա, 1866)⁷ հայ բարբառների ուսումնասիրությունը հստակորեն ամրակայվում է գիտական հունի մեջ: Կարելի է ասել՝ արդեն առկա է ուսումնասիրության նյութի, առարկայի և ուսումնասիրության սկզբունքների ու մեթոդների որոշակի փոխհարաբերության գիտական կայուն մոտեցում, գծագրվում են գիտաճյուղային ուսումնասիրության բավականաչափ համակարգված դաշտն ու դրա դիտարկման ուղղությունները:

Դրանց համար կիրառելով հիմնականում «գավառական» անվանումը՝ իր կոթողային աշխատության տարբեր հատվածներ, իսկ «Նախաշավիղի» ամբողջ մի գլուխը (իններորդը) Ա. Այտընյանը նվիրել է դրանց, որը փաստորեն բարբառների ուսումնասիրության նրա

⁴ Տե՛ս Գ. Ախավերդյան, *Սայաթ-Նովա*, Մ., 1852:

⁵ Գ. Ախավերդյան, *Նամակներ*, Ե., 1964, էջ 243:

⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 347:

⁷ Տե՛ս Ա. Այտընյան, *Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի*, Ե., 1987 (բոլոր քաղվածքները հոդվածում կատարվում են ըստ այս հրատարակության, ուստի շարադրանքում կնշվեն միայն բնագրի համապատասխան էջերի թվահամարները):

մեթոդի ու տեսության բանալին է, իհարկե՝ գուգակցված լեզվաբանական մյուս ընդհանուր դրույթների հետ (չմոռանանք, որ նրա հիմնական նպատակը աշխարհաբարի կամ նոր գրական հայերենի ուսումնասիրությունն է), և այդ ծիրի մեջ է, որ նա բարեբախտաբար անդրադառնում է նաև գավառականներին: Վերջիններս կապելով նոր լեզվի, նաև ժողովրդի տեղաշարժերի ու գաղթումների հետ և դրանց առատությունը դնելով հատկապես «ստորին դարերէն սաղին» (XV-XIX դդ.)՝ նա լեզվի այդ անհամար ճյուղավորությունները ամփոփում է հետևյալ գլխավոր խմբերում. «Ա. միջին գւռ. Հայաստան. (Վան, միջագետք եւն). Բ. – Կոստանդնուպոլիս – Փոքր Ասիա. Գ. արեւմտեան. Լեհաստան – Առտեալ. Դ. արեւելեան. Աժտերխան – Պարսկաստան. որ կը ձգուի Ռուսաստանէն մինչեւ Հնդկաստան» (էջ 166):

Ապա կատարում է մի այլ խմբավորում ևս՝ առաջին երեքը համարելով արևմտյան, իսկ վերջինը՝ արևելյան. «երեքը քիչ շատ կը միաբանին իրարու, մի քան զմի հնագոյն կամ նորագոյն ձեւերով. միայն չորրորդը (արեւելեան գաւառականը) անկախ մըն է միւսներէն» (նույն տեղում):

Իրեն հատուկ նուրբ դիտողականությամբ Ա. Այտընյանը նախ նշում է այդ չորս գավառականների ընդհանրությունները, միավորող գծերն ու հատկանիշները, հատկապես՝ «ընդհանուր պարզութիւն. համաձայնութեան հաստատ շարքըն եւ նշանակութիւնները հին ռմկ. համեմատ, աննախդիր հոլովներ. հին ապառնույ ի սպառ բարձում. կու մասնիկի անհրաժեշտ անբաժին. ընդհանրապէս բայերու եւ մանաւանդ կրատրականի շէնքը. սղմունք եւ ամփոփմունք՝ լեզուին կնիքն եղած. ըն վերջաւորութեանց զեղչում» (էջ 167) և այլ իրողություններ: Այնուհետև նա առանձին-առանձին, ըստ խմբերի դիտարկում է դրանցից յուրաքանչյուրին բնորոշ առանձնահատկությունները, հնչյունական, բառային, քերականական տիպական հատկանիշները, որը լեզվաբանական – բարբառագիտական քննության աննախադեպ և օրինակելի մի նմուշ է: Հատուկ նշում է, որ նոր հայերենի երկու ճյուղերի հիմքում ընկած են Բ (արևմտյան) և Դ (արևելյան) տեսակները:

Ա. Այտընյանի այս դասակարգումը բնութագրված է որպես աշխարհագրական (տերիտորիալ): Թերևս կոչել լեզվատարածքային կամ լեզվաաշխարհագրական, բայց եղած տերմինը պահպանելու դեպքում էլ հարկ է նկատի ունենալ երկու կարևոր հանգամանք.

ա) դա զուտ աշխարհագրական դասակարգում չէ, բարբառային խմբերն առանձնացվում են ոչ միայն ըստ աշխարհագրական կամ տեղաշարժային գործոնների, այլև ըստ հնչյունական, բառային, ձևաբանական, շարահյուսական և այլ կարգի հատկանիշների, հաշվի են առնվում ինչպես դրանց ընդհանրությունները, այնպես էլ տարբերակիչ գծերը. մի մոտեցում, որ այնուհետև հայ բարբառագիտության մեջ դարձավ առանցքային, բ) դա միայն բարբառների դասակարգում չէ, անմիջականորեն առնչվում է հայ բարբառագիտության (իբրև գիտաճյուղի) ձևավորման և զարգացման ընթացքին, ուստի գնահատումը այս տեսակետից ևս պետք է կատարվի: Իսկ այդ առումով Ա. Այտընյանը առաջինն է ոչ միայն իր ժամանակի մեջ, այլև շատ հարցերում կանգնած է գիտական այսօրվա համար էլ բարձր մակարդակի վրա, և ինչպես նշում է Գ. Ջահուկյանը իր «Ընդհանուր և հայ լեզվաբանություն» աշխատության մեջ՝ «նա գերազանց գիտեր հին հայոց լեզուն, կանգնած էր լեզվաբանական գիտության նվաճումների մակարդակին և տիրապետելով լեզվաբան-հետազոտողի անուրանալի որակների՝ շատ բաներում կանխորոշեց հետագա խոշոր լեզվաբանների առանձին դրույթներ ու մտքեր»⁸: Այդ կապակցությամբ էլ, ի բաց առնելով Ա. Այտընյանի լեզվաբանական քննության հայեցակարգի հանգամանակից վերլուծությունը (որի հնարավորությունն ու ժամանակը այս դեպքում չունենք)⁹, խիստ համառոտ անդրադառնանք նրա՝ բարբառների ուսումնասիրության բնագավառում առաջադրած և կիրառած սկզբունքներին ու դրույթներին, որոնք նույնպես, ի թիվս նախորդ ասվածների, բարբառագիտության հետագա ընթացքի համար դարձան անբաժանելի ու հիմնարար իրողություններ: Նշենք մի քանիսը.

1) պատմական հայեցակետի անհրաժեշտություն. լեզուն սերտորեն կապված է հանրության պատմության հետ: Դիտել տալով, որ լեզուն նույնպես բնականորեն անցնում է «ծնանիլ – ապրիլ – իր նմանը յառաջ բերել – մեռնիլ» փուլերով, և այդ անցումները կատարվում են տևականորեն, աստիճանաբար, առանց ուստյունների՝ Ա. Այտըն-

⁸ Գ. Ժաուկյան, *Общее и армянское языкознание*, Е., 1978, էջ 324:

⁹ Հետաքրքիրվողներին հղում ենք **Ա. Ա. Աբրահամյանի** «Արսեն Այտընյանի լեզվաբանական հայացքները» (Ե., 1984) աշխատությանը, որում ոչ միայն վերլուծվում են մեծ գիտնականի ընդհանուր լեզվաբանական հայացքները, այլև ներկայացվում են դրանց վերաբերյալ եղած կարծիքներն ու գնահատումները:

յանը լեզվի և նրա ամեն մի ճյուղավորման մեջ (այդ թում՝ նաև բարբառներում), կատարվող փոփոխությունները պահանջ է դնում ուսումնասիրել հենց իրենց պատմական զարգացման ընթացքի մեջ՝ պահպանելով ինչպես ընդգրկման ամբողջականություն, այնպես էլ ժամանակագրական հնարավոր ճշտություն:

2) Համեմատությունների արդյունավետ կիրառություն. ընդ որում համեմատության եզրեր կարող են լինել ոչ միայն նույն լեզվի գոյության տարբեր ձևերն ու փուլերը, այլև տարբեր լեզուների համանուն երևույթները:

3) Լեզվի հասարակական, ոճական և տարածքային տարբերակների փոխհարաբերության հաշվառում:

4) Գրական լեզուների և բարբառների փոխհարաբերության խնդիրը. այս առումով արծարծված բազմաբնույթ ու բազմաշերտ հարցերի շրջանակից առանձնացնենք հատկապես երկուսը. ա) դեռևս գրաբարի կողքին բարբառների առկայության ու գոյության հարցը. «Հայաստանի պես ընդարձակ երկրի մը բազմաթիւ գաւառներուն մէջ հին ժամանակները քանի մը այլակերպ բարբառներ գործածուիլն այնչափ բնական էր, որ եթէ գրաւոր վկայութիւններն ալ լռէին՝ լոկ մակաբերութիւնը դէռ կարժէր» (էջ 43): Եվ, իհարկե, տքնաջան հավաքողի իր հետևողականությամբ նա բերում է նաև փաստեր:

բ) Իսկ ինչ վերաբերում է արևելահայ և արևմտահայ գրական լեզուների բարբառային հիմքերին, Ա. Այտընյանը դրանք ոչ թե հանգեցնում է ուղղակի Պոլսի և Արարատյան բարբառներին, այլ դրանց հիմքի վրա աճած խոսակցական լեզուներին: Կարելի է դեռ շարունակել հարցերի թվարկումը՝ ներառելով նոր դրույթներ բարբառների տարածական բաշխվածության, բարբառային փոխազդեցությունների, այլ լեզուների հետ ունեցած շփումների, փոխառությունների բնույթի և այլնի վերաբերյալ, բայց եզրակացությունը լինելու է նույնը. բարբառների ուսումնասիրության ընթացքի մեջ սկսվել է մի նոր փուլ, առաջացել է, գոյացել է բոլորովին նոր մի որակ:

Այդ շրջանի նշանավոր հայ մտավորականներից, գիտնականներից, ուսուցման կազմակերպիչներից մեկն էլ Ք. Պատկանյանն է, որը, ստանալով հիմնավոր կրթություն (Լազարյան ճեմարան, Դորպատ, Պետերբուրգ), որոշ ժամանակ ուսուցչություն անելով Թիֆլիսում, 1861 թ. հաստատվում է Պետերբուրգում՝ աշխատանքի անցնելով համալսարանում: Տիրապետում էր բազմաթիվ լեզուների, 50

տարեկանում արդեն գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ էր: Տվյալ դեպքում մեզ հետաքրքրում է Ք. Պատկանյանի բարբառագիտական ժառանգությունը, որը հիմնականում ամփոփված է ռուսերեն հրատարակած ծավալուն աշխատություններում¹⁰: Նրա դերը նույնպես մեծ է հայ բարբառագիտության հիմունքների ձևավորման ու ամրակայման, քննության շրջանակների ու մեթոդների հաստատման, բարբառագրության մշակման և բազմաթիվ այլ հարցերում: Ա. Այտրնյանի հետ թռուցիկ համեմատությունն անգամ ցույց է տալիս, որ Ք. Պատկանյանը՝ ա) առանձին դեպքերում պարզապես համաձայն է Ա. Այտրնյանի առաջադրած դրույթներին, ընդունում և կիրառում է դրանք. օրինակ՝ հայ բարբառները արևելյան և արևմտյան խմբերի բաժանելը, բ) առանձին դեպքերում նույն կարծիքն ունի, բայց դրանից ու նյութից բխող եզրակացությունն է տարբեր՝ գրաբարից առաջ էլ բարբառների գոյության փաստն ընդունելը, բայց դրանք գրաբարից կտրելը, միայն հնդեվրոպական նախալեզվի հետ չափելը, գրաբարը ընդհանուր խոսակցական լեզու չհամարելը, արևելյան անվանված լեզվի հիմքում Աստրախանի բարբառը դնելը և այլն, գ) հաճախ էլ առաջադրում է տեսական ու գործնական նոր հիմնադրույթներ: Այս վերջին դեպքում հատկապես պետք է կարևորել նրա դասակարգումը: Բարբառների առանձնացման համար առաջնային համարելով տարբեր կարգի (հատկապես՝ ձևաբանական) հատկանիշների ընտրությունը՝ Ք. Պատկանյանը արևելյան և արևմտյան խմբերը մանրամասնելու համար առաջ է քաշում այդպիսի տարբեր հատկանիշներ. սահմանական եղանակի ներկա և անցյալ անկատար ժամանակների կազմությունը մասնիկների կամ դերբայի օգնությամբ, *-ու* վերջավորությամբ ներգոյական հոլովի առկայությունը կամ բացակայությունը, ապառնիի արտահայտությունը *կու*, *կը* մասնիկների կամ *պիտի* բառի հարադրությամբ, *-ել* կամ *-եր* վերջավորությամբ վաղակատար դերբայ: Հիմնականը սրանք են, չնայած չեն անտեսվում նաև հնչյունական, բառային ու քերականական այլ հատկանիշներ, առանձին բարբառային հնաբանություններ: Սա մեզանում, փաստորեն, տարահաստ-

¹⁰ Տե՛ս **К.Патканов**, *Исследование о составе армянского языка*, СПб, 1864, **Նույնի**, *Исследование о диалектах армянского языка*, СПб, 1869, **Նույնի**, *Материалы для изучения армянских наречий*, Вып. 1, *Говор Нахичеванский*, Вып. II, *Мушский диалект*, СПб, 1875, **Նույնի**, *Материалы для армянского словаря*, 1-2, СПб, 1882-1884:

կանիշ ձևաբանական դասակարգման առաջին փորձն էր, որով առանձնացվում և ներկայացվում էին հայերենի ութ բարբառներ: Դժվար չէ տեսնել, որ ընտրված ձևաբանական հասկանիշներից մեկն էլ հետագայում դառնում է հիմք Հ. Աճառյանի միահատկանիշ դասակարգման համար:

Ա.Այտընյանից ու Ք. Պատկանյանից հետո շատ ավելի բուռն շարունակություն ստացավ հայ բարբառների ուսումնասիրությունը, իրար հաջորդեցին տարբեր գիտնականների (Լ. Մսերյանց, Ս. Սարգսյան, Ա. Տուման, Հ. Հանուշ և ուրիշներ) բարբառագիտական հոդվածներն ու աշխատությունները, որոնք տարբեր կողմերով լրացնում էին եղած տեսական դրույթներն ու բարբառային փաստական նյութը: Դարավերջին Հ. Աճառյանը արժեքավոր աշխատանքներ հրատարակեց Ասլանբեկի (1898), Սուչավայի (1899), Ղարաբաղի (1901) բարբառների մասին:

Ոչ միայն տվյալ ժամանակահատվածի, այլև մեր գրական, գիտական ոլորտների, հասարակական մտքի հետագա առաջընթացի մեջ վճռական էր խոշորագույն դեմքերի գործունեության ու ստեղծագործության դերը (Խ. Աբովյան, Մ. Նալբանդյան, Ստ. Նազարյան, Ռ. Պատկանյան, Բաֆֆի, Ղ. Աղայան և ուրիշներ), բայց դա այս հոդվածում քննելը մեր նպատակներից դուրս է:

Բոլոր թվարկված (նաև չթվարկված) գիտնականների բարբառագիտական ժառանգությունը իրականում չպետք է անտեսել, առավել ևս՝ համարել ոչ գիտական: Առաջին հերթին նրանց ջանքերով, նրանց գիտական վաստակով է, որ հայ բարբառագիտությունը ձևավորվել ու ամրակայվել է որպես առանձին գիտակարգ, կատարվել են հայ բարբառների լեզվաաշխարհագրական և տարահատկանիշ ձևաբանական դասակարգումներ, առաջացել են հիմքեր հետագա դասակարգումների համար (միահատկանիշ ձևաբանական, տիպաբանական, հնչյունաբանական, բազմահատկանիշ): Այլ հարց է, իսկ դա գիտության զարգացման օրենքն է, որ Հ. Աճառյանը շատ հարցերում գերազանցում է իր նախորդներին, ուղղում է նրանց շատ սխալներ, մերժում առանձին դրույթներ, հաստատում նրանց կողմից արված զանազան ենթադրություններ, առաջ քաշում տեսական նոր սկզբունքներ, համալրում և ամբողջացնում է հայ բարբառագիտության ընդհանուր շենքը, նշանավորում է զարգացման մի նոր աստիճան, նրա հիմնարար աշխատությունները սկիզբ են դնում նոր

փուլի¹¹, հենց նրա դասակարգումով գիտական քննության դաշտ են բերվում շուրջ երեքուկես տասնյակ բարբառներ, որոնցից տասի վերաբերյալ նա ունի առանձին մենագրություններ, առաջին հերթին հենց Հ.Աճառյանի շնորհիվ էր, որ Հայաստանը մեկընդմիջտ ու հաստատապես դարձավ հայ բարբառագիտության խոշորագույն կենտրոնը աշխարհում (նախորդները գործում էին հայրենիքի սահմաններից դուրս):

Հաշվի առնելով ասվածը՝ անդրադառնանք պարբերացման հարցին:

Հայ բարբառների ուսումնասիրության պատմության լավագույն պարբերացումը կատարել է Գ. Ջահուկյանը՝ առանձնացնելով հետևյալ փուլերը.

1) Բարբառների առանձնակի նկարագրության և աշխարհագրական (տերիտորիալ) դասակարգման փորձերի շրջան (V–XX դ. սկիզբ):

2) Ձևաբանական դասակարգման սկզբունքի առաջբաշման և տիրապետության շրջան (XX դ. սկզբներից մինչև 40-ական թթ. սկիզբ): Այս շրջանը բնութագրվում է Հ. Աճառյանի գործունեությամբ և նրա կատարած ձևաբանական դասակարգմամբ՝ ՌԻՄ, Կ, ԵԼ, ճյուղերի առանձնացումով, ապա և Ա. Ղարիբյանի կողմից (1939) մի նոր՝ Մ ճյուղի առանձնացմամբ:

3) Հնչյունաբանական դասակարգման սկզբունքի առաջբաշման և ձևաբանական դասակարգման հետագա ճշգրտման և մանրամասնման շրջան (1940-ական թթ. սկզբից մինչև 1970-ական թթ. սկիզբ): Այս շրջանն էլ բնութագրվում է Ա. Ղարիբյանի 1941 և 1953 թթ. առաջբաշած հնչյունաբանական և Է. Ադայանի (1954) ձևաբանական - տիպաբանական դասակարգումներով:

4) Բազմահատկանիշ դասակարգման սկզբունքի առաջբաշման և բարբառագիտական ատլասի նախապատրաստման շրջան, որը բնութագրվում է միանգամայն նոր մոտեցմամբ ու մեթոդներով՝ արված Գ. Ջահուկյանի կողմից, որի մասին արդեն ասվեց սկզբում:

¹¹ Տե՛ս **Հ.Աճառյան**, *Հայ բարբառների դասակարգումը (ֆրանսերեն)*, Փարիզ, 1909, **Նույնի**, *Հայ բարբառագիտություն. ուրուագիծ և դասաւորութիւն հայ բարբառների (բարբառագիտական քարտէսով)*. Մոսկուա-Նոր Նախիջևան, 1911, **Նույնի**, *Հայերէն գաւառական բառարան*, Թիֆլիս, 1913:

Այս չորս շրջանները հայ բարբառագիտության մեջ ընդունված է անվանել նաև բարբառների ոչ գիտաճյուղային (V-XX դդ. սկիզբ) և գիտաճյուղային ուսումնասիրության փուլեր:

Կատարված շրջանաբաժանումները որքան էլ ճիշտ են արտացոլում հայ բարբառների ուսումնասիրության փուլերը՝ իրենց ընդհանուր ուղղվածությամբ, բնորոշ հատկանիշներով, մեթոդներով, քննության հայեցակետերով ու այլ առանձնահատկություններով, այնուամենայնիվ նկատվում է մի փոքր համահարթեցում. XIX դ. կեսերից մինչև XX դ. սկիզբն ընկած ժամանակահատվածը, որ ինչպես արդեն տեսանք, բոլորովին նոր որակ է, հավասարաբեռոտ են չի տեղավորվում ոչ նախորդ շրջանի մեջ (այսինքն՝ բարբառների առանձնակի նկարագրության և աշխարհագրական դասակարգման փորձերի, առավել ևս՝ ոչ գիտաճյուղային որակվածի), ոչ էլ հաջորդի (այսինքն՝ ձևաբանական դասակարգման սկզբունքի առաջաշարժման և տիրապետության շրջանի) մեջ: Կարևոր տեղ պետք է հատկացնել ոչ միայն բարբառների դասակարգման սկզբունքներին, այլև բարբառագիտության (իբրև գիտաճյուղի) զարգացման ու կայացման ընթացքի մեջ որակական նոր փուլեր պայմանավորող սկզբունքներին ու մեթոդներին:

Ըստ այդմ էլ՝ անհրաժեշտ է կատարել ժամանակագրական մի փոքր տեղաշարժ և նշված ժամանակահատվածը ներառել շրջանաբաժանման առկա համակարգի մեջ հետևյալ կերպ. նախ առանձնացնել երկու մեծ շրջաններ՝ ա) առնչակցային կամ ոչ գիտաճյուղային ուսումնասիրության, բարբառների առանձնակի նկարագրության շրջան՝ V-XX դդ. կեսը և բ) գիտաճյուղային՝ XIX դ. կեսից մինչև մեր օրերը: Իսկ վերջինս էլ իր հերթին բաժանել հետևյալ ենթաշրջանների. ա) գիտաճյուղային ուսումնասիրության հիմունքների ձևավորման, լեզվաաշխարհագրական և տարահատկանիշ ձևաբանական դասակարգման սկզբունքների նախնական առաջաշարժման շրջան՝ XIX դ. կեսերից մինչև XX դ. 10-ական թթ. (նկատի ունենալով Հ. Աճառյանի հիմնարար աշխատությունների հանդես գալը), բ) գիտաճյուղային ուսումնասիրության ամրակայման, միահատկանիշ դասակարգման տիրապետության շրջան՝ XX դ. առաջին տասնամյակի կեսից մինչև 40-ական թթ. սկիզբը: Հաջորդ շրջանները մնում են անփոփոխ:

Այսպես ավելի ամբողջական ու ներդաշնակ է արտացոլվում առանձնացվող յուրաքանչյուր շրջանի ժամանակագրական սահման-

ների և դրանց բնութագրական հատկանիշների, արժեքների փոխհարաբերությունը:

Саргсян Нвер – О периодизации истории армянской диалектологии. – В статье коротко излагается история изучения армянских диалектов, дается общий обзор диалектологического наследия ученых второй половины XIX в., оценивается их вклад в развитие армянской диалектологии и в формирование ее как самостоятельной научной дисциплины. Более подробно анализируются и представляются классификации и концепции А. Айттыняна и К. Паткяна. Предлагается вторую половину XIX в. считать отдельным этапом и сделать соответствующую поправку в периодизации истории армянской диалектологии.

Sargsyan Never – About the Periodization of History of the Armenian Dialectology. – In the article the history of studying the Armenian dialects is shortly stated, the general review of dialectological heritage of scientists of the second half of the 19th century is given, their contribution in development of the Armenian dialectology and in its formation as independent scientific discipline is estimated. Classifications and concepts of A. Ayttynyan and K. Patkanyan are in more detail analyzed and represented. It is offered to consider the second half of the 19th century as a separate stage and to make the relevant amendment to a periodization of history of the Armenian dialectology.

Տեր-Գրիգորյան Լիլիթ (Հայաստան,
Խ.Արքվյանի անվ. ՀՊՄՀ)
Մկրտումյան Անահիտ (Հայաստան,
ԳԱԱ Հ.Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ)

**ԶԳԱՅԱՐԱՆՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐՈՎ ԲԱՂԱԴՐՎԱԾ
ԴԱՐՉՎԱԾՆԵՐԸ ՊԱՐՄԿԱՀԱՅ ՏԱՐԱԾՔԻ ԽՈՍՎԱԾՔՆԵՐՈՒՄ**

Հայոց լեզվի դարձվածային կազմում նշանակալի տեղ են զբաղեցնում այն դարձվածները, որոնք որպես հիմնական կամ երկրորդական բաղադրիչ ունեն մարմնի որևէ մասի անվանում: Սա բացատրվում է նրանով, որ մարմնի մասերի անունները ոչ միայն բառապաշարի ակտիվ շերտի բաղադրիչներ են, այլև լայն գործածություն ունեն խոսքում, ինչի շնորհիվ էլ դրանք, որպես կանոն, բազմիմաստ բառեր են: Բազմազան նշանակություններն ու փոխաբերական իմաստները լայն հնարավորություն են ստեղծում բազմաբնույթ դարձվածների առաջացման համար: Մարմնի մասերի անունների փոխաբերացման գործընթացում կարևոր դեր ունեն նաև դրանց վերաբերյալ հասարակության մեջ ձևավորված պատկերացումներն ու գուգորդումները, որոնք հաճախ տարաբնույթ են լինում, հետևաբար տարբեր ուղղություններով էլ ընթանում է փոխաբերացման ու դարձվածացման գործընթացը:

Պարսկահայ տարածքի խոսվածքները ևս հարուստ են բաղադրիչային նման կազմ ունեցող դարձվածներով, որոնց զգալի մասը ընդհանուր է գրական հայերենի և այլ բարբառների դարձվածների հետ, իսկ մի մասն էլ ձևով, պատկերային հիմքով կամ իմաստով յուրահատուկ է և հանդիպում է միայն այս խոսվածքներում:

Դարձվածային միավորների մեջ զգայարանների անունները կարող են դրսևորվել որպես հենց զգայարանի կամ մարմնի մասի անվանում, ինչպես օրինակ՝ *Վաչք բ՛անալ* «ապրել, հասկանալ», *Վաչք փակի՛ել* «1.քնել, 2. ինչ-որ բան չուզենալ տեսնել», *Վանգրջին ասի՛ել* «շշնջալ», *լիզուև շըլընքովը դ՛ուս գ՛ալ* «շատ հոգնել», *բ՛էրնիցը ջավահիր թափվի՛ել* «շատ խելոք և հաճելի խոսել», *բ՛էրնին ո՛սսպ չըղըռչըրվի՛ել* «անզաղտնապահ լինել», *քինթը քարին դ՛իպչի՛ել* «անհաջողության

հանդիպել», *քինթը տըրօր^հ էլ գէդնին* «հանդիմանել, նվաստացնել» և այլն: Մակայն ավելի հաճախ դարձվածներում դրանք գործածվում են զգայությունների փոխարեն, այսինքն՝ կատարվում է փոխանունություն՝ *ճաճկէրով ուտ^հ էլ* «անթարթ, սևեռված նայել», *ճաճկըն ընգն^հ էլ* «անսպասելի տեսնել», *ճաճկը վըրէն պահ^հ էլ* «հետևել», *ճանգըն^հ էրը խըըը^հ էլ* «լսողությունը լարել», *ճանգաճովն ընգն^հ էլ* «անորոշ կերպով լսել», *ճանգաջը ծանդրանալ* «խլանալ», *ճանգաջ անե/դ^հ էլ* «լսել», *լիզուն վըրա ած^հ էլ* «շատախոսել», *չար լիզու* «չարախոս», *լիզուն յ^հ էտ տալ* «պատասխանել» և այլն, և դրանք իմաստային առումով շատ դեպքերում հնարավոր է փոխարինել զգայությունն անվանող այնպիսի բառերով, ինչպիսիք են տրված օրինակների համար *հայացք*, *լսողություն*, *խոսք* բառերը (*լեզու* բառին տվյալ դեպքում համապատասխանում է ոչ թե զգայությանը համապատասխանող *համ* բառը, այլ *լեզու* բառի՝ «մարդու խոսելու կարևորագույն գործարան» իմաստին համապատասխանող *խոսք* բառը)¹: Հասկանալի է, որ բերված օրինակներում (և դա ընդհանրապես հատուկ է դարձվածներին) կատարված իմաստային փոփոխությունը մեկը չէ, և դարձվածային պատկերի ձևավորման ժամանակ իմաստափոխության կարող են ենթարկվել մեկից ավելի բաղադրիչներ, կամ կարող է տեղի ունենալ կրկնակի իմաստափոխություն: Այսպես՝ *լիզուն կապ ընգն^հ էլ* «պապանձվել» դարձվածում պատկերի ձևավորման գործընթացում *լեզու* բառի իմաստափոխությունից բացի՝ փոխաբերացման է ենթարկվել նաև *կապ ընգն^հ էլ* բառը, համանման ձևով՝ *ճաճկումը գալ* «հավանել մեկին», *ճանգաջը տան^հ էլ* «ձանձրացնել», *ճաճկէրը մըթն^հ էլ* «տեսողությունից զրկվել», *բէրանը չըըըփացն^հ էլ* «ուտելիքի կարոտ լինել» և այլն:

¹ Պարսկահայ տարածքի խոսվածքներից բերված դարձվածները քաղված են ստորև ներկայացված աղբյուրներից և մեր (Մ.Մկրտումյան) հավաքչական աշխատանքների ընթացքում ձեռք բերված անտիպ նյութերից, այստեղ և այսուհետև տե՛ս **Վ.Անդրեասեան**, *Չհալմահալ գաւառը*, Նոր Ջուղա, 1977: **Մ.Բաբումեան**, *Չհալմահալի անգիր գրականություն*, հ. 1-2, Թեհրան, 1984: *ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվային նյութեր*, անտիպ: *Հայ ազգագրություն և բանահյուսություն*, հ. 22, Ե., 2007: *Հայոց լեզվի բարբառային բառարան* (այսուհետև՝ ՀԼԲԲ), հ. Ա-Զ, Ե., 2001-2010:

Ստորև փորձ կարվի ներկայացնելու իրենց կազմի մեջ մարդու միայն երկու զգայարանների (*աչք* և *ակահնջ*) անվանումներ ունեցող դարձվածները պարսկահայ խոսվածքներում՝ վեր հանելով և վերլուծելով դրանց դարձվածացման գործընթացի լեզվական և արտալեզվական որոշ երևույթներ:

Աչք բառը էդ.Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում»² ներկայացված է տասնյոթ իմաստներով (դրանցից երկուսը՝ փոխաբերական), սակայն այդ իմաստներից մի քանիսն են պարսկահայ տարածքի խոսվածքներում հիմք դարձել դարձվածացման համար՝ «1. տեսողության գործարան, 2. տեսողություն, 3. հայացք, նայվածք, 4. հսկողություն, խնամք»: Այսպես՝ «*տեսողության գործարան*» իմաստով այսպիսի դարձվածներ են ձևավորվել՝ *ճակերը չըռել* «վախից կամ հիացմունքից աչքերը լայն բացել», *ճակերը ցած քրճել* «աչքերը կախել», *ճակը կրպճել* «քնել», *ճակը բճաց* «կենդանի, ողջ», *ճակերը խըփել* «քնել» և այլն, «*տեսողություն (տեսնել, նայել)*» իմաստով՝ *ճակ ճակի քրճել* «նայել», *ճակըն ընգնել* «անսպասելի տեսնել», *ճակ /ման/ ածել* «դիտել, որոնել», *ճակից կորչել* «անհետանալ» և այլն, «*հայացք*» իմաստով՝ *ճակը վըրեն մնալ* «կարոտ մնալ մեկի (մի բանի)», *ճակը վըրեն ընգնել* «հավանել մեկին (մի բան)», *ճակը ճամփին մընալ* «շատ սպասել» և այլն, «*հսկողություն, խնամք*» իմաստով՝ *ճակը վըրեն պահել* «հետևել», *ճակ տալ* «հետևել» և այլն:

Կան դարձվածներ, որոնց մեջ իմաստափոխության է ենթարկվել դարձվածային միավորի՝ ոչ զգայարան անվանող բաղադրիչը, ընդ որում այս դեպքում ձևավորված դարձվածում մարմնի մասի անվանումը կարող է ա իմաստափոխության ենթարկված չլինել, ինչպես՝ *ճակը բճուռ անել* «լավ տեսնել», *ճակերը բճընըփել* «կուրանալ», որոնցում դարձվածային իմաստի հիմքում ընկած է համապատասխան կապակցության մեջ *բճուռ անել* և *բճընըփել* բառերի վերափոխատավորումը, սակայն, կարող է բ կատարված լինել նաև ամբողջ կապակցության վերափոխատավորում, ինչպես՝ *ճակի փուշը թըռցընել* «շատ կարճ քնել», *ճակի էրու կապը կըտըրվել* «շատ վախենալ», որոնց մեջ կարևոր է ոչ միայն *ճակի փուշ* և *ճակի կապ*, այլև *փուշը*

² Տե՛ս Է.Աղայան, *Արդի հայերենի բացատրական բառարան* (այսուհետև՝ ԱՀԲԲ), հհ.1-2, Ե., 1976, էջ 92:

թըռցըն՝ էլ և կապը կըտըրըվ՛ էլ կապակցությունների փոխաբերությունը: Ո՞րն է *‘աճկի կապ-ը*, որի *կտրըվ՛ էլ-ը* կարող է «վախենալու» պատճառ դառնալ կամ որևէ կերպ զուգորդվել դրա հետ: Դարձվածային այս սերտաճումների ձևավորման հիմքում առկա է ամբողջական պատկերի իմաստափոխությունը:

‘աճկ բճնալ/բճաց ան՛ էլ «ապրել, հասկանալ», *‘աճկը բճաց* «ճարպիկ», *‘աճկը փակ* «անփորձ» օրինակներում դարձվածային իմաստը ձևավորվել է նույն հիմքով: Այսպես՝ *‘աճկ բճնալ/բճաց ան՛ էլ* բառակապակցության հիմքում ընկած դարձվածային իմաստը զուգորդվում է մարդու ծնվելու պահի հետ. լույս աշխարհ գալով մարդը բացում է աչքերը և սկսում է **ապրել** (հմմտ.՝ *‘աճկը բճաց* «կենդանի»): *‘աճկ բճնալ/բճաց ան՛ էլ* դարձվածում «*աչք*» բառը դրսևորվել է «տեսողության օրգան» նախնական իմաստով: Կապակցության մեջ արդեն «աչքը բաց լինելու» հանգամանքը զուգորդվում-նույնանում է «տեսնել կարողանալու», այսինքն՝ «տեսողություն» իմաստի հետ: Այս իմաստափոխության հիման վրա կատարվում է իմաստային հաջորդ անցումը՝ ձևավորելով դարձվածային պատկերը. աչքը բացելով մարդը տեսնում ու ճանաչում է աշխարհը, սովորում է **հասկանալ** ու կողմնորոշվել կյանքում, այսինքն՝ սկսում է **ապրել**:

‘աճկը բճաց «ճարպիկ» (կա նաև՝ *‘աճկը բճացվ՛ էլ* «ճարպկանալ»), *‘աճկը փակ* «անփորձ» դարձվածների իմաստները նույնպես ձևավորվել են ամբողջական պատկերի վերաիմաստավորման՝ փոխաբերացման ճանապարհով: *Աչքը բաց* վիճակում մարդը շատ բան է տեսնում, շատ բաների մասին գիտի, ուրեմն՝ շատ բան է հասկանում և նաև գիտի ինչպես դուրս գալ կամ խուսափել այս կամ այն իրավիճակից, այսինքն՝ մարդը *ճարպիկ* է (հմմտ.՝ այդ իմաստի զարգացումն է *‘աճկոյլ ան՛ էլ* «ակնարկել» դարձվածը). համապատասխանաբար՝ *‘աճկը փակ* մարդը չունի այդ հատկանիշները, այսինքն՝ *անփորձ* է:

Պարսկահայ տարածքի խոսվածքներում, ինչպես և հայերենի դարձվածների ընդհանուր կազմում, զգայարանի կամ մարմնի որևէ անդամի անուն պարունակող դարձվածների մեջ հաճախ են հանդիպում հակադիր իմաստներ ունեցող դարձվածներ: Վերևում բերված օրինակները, որոնք հակադիր պատկերային հիմքեր ունեն՝ *‘աճկը լի(քը)* «1. գոհ, կուշտ, 2. հպարտ» – *‘աճկը ծակ/ծակ ‘աճկ* «աչ-

քածակ, ազահ, անկուշտ», *Վաճկ(եր)ը բացի էլ /բանալ «արթնանալ» – Վաճկ(ի)երը փագի էլ/խը փի էլ/կը պցընի էլ «քնել», Վաճկն առնի էլ/ընգնի էլ // Վաճկ(ուս)ը գճալ «հավանել» – Վաճկիցը քըցի էլ // Վաճկիցը ընգընի էլ «համակրանքից զրկվել, ասելի դառնալ» և այլն: Դժվար չէ նկատել, որ հականիշությունը ձևավորվել է *աչք+այլ՝ հականիշ բառ(եր)* կաղապարով: Վերջիններիս հակադրության շնորհիվ է, որ հակադիր պատկերային հիմքեր և դարձվածային իմաստներ են ձևավորվում: Մինչդեռ վերևում բերված օրինակներից *Վաճկը բճուռ անի էլ* «լավ տեսնել», *Վաճկի էրը բճոռնը փի էլ* «կուրանալ» դարձվածներում դիտարկվում է յուրահատուկ մի երևույթ. հականիշությունը ձևավորվել է *աչք+նույնարմատ բառեր* կաղապարով: Առաջին դեպքում դարձվածային պատկերը հավանաբար գուգորդվում է լավ տեսնելու համար տեսողությունը կենտրոնացնելու, «սրելու» պատկերի հետ³, իսկ երկրորդ դեպքում, կարծում ենք, ձևավորվում է *բռնել* բառի՝ մի բանի մակերևույթը պատել, կապել» իմաստի հիման վրա:*

Վերախմաստավորման հետաքրքրական նմուշներ են պարսկահայ խոսվածքում տեղ գտած հետևյալ դարձվածները՝ *Վաճկերը գի էլ տի էղի էն ծակած* «խորամանկ», *Վաճկըն իստագ* «մաքուր, բարոյական», *Վաճկերու սի էլը գճնալ, ճի էրմագը գճալ* «ուշաթափվել», *գճրօղի Վաճկին չեր էվալ* «շատ տգեղ լինել», *Վաճկադեմ անի էլ/ըլ էնալ* «սպասել/եցնել», *Վաճկի էրը չոօրս ըլ էնալ* «շատ սպասել», *ցած Վաճկօվ տընդըղի էլ* «թերագնահատել», *Վաճկը բճուռ անի էլ* «լավ տեսնել», *Վաճկի բճուռը կըտըրը փի էլ* «տեսողությունից զրկվել» և այլն: Բերված օրինակները դարձվածային սերտաձուռներ են, և դրանցից յուրաքանչյուրն ունի դարձվածացման յուրահատուկ ճանապարհ անցած դարձվածային

³ Հարկ է նշել, որ պարսկահայ տարածքի խոսվածքներում *բճուռ* բառն ունի նաև «տեսողություն» (տե՛ս **Ս.Բարումեան**, նշվ. աշխ., էջ 76) իմաստը, հմմտ.՝ Վաճկի *բճուռ* «տեսողություն» (տե՛ս նույն տեղում, էջ 10), սակայն, կարծում ենք, այս դարձվածը պատկերային այլ հիմքով է ձևավորվել, որը *բճուռ* բառի նշված իմաստից չի սերում:

պատկեր՝ հիմնված պարսկահայ հանրության մեջ ամրակայված համապատասխան պատկերացումների վրա:

Մեր ուսումնասիրությունների համաձայն՝ բերված օրինակները ձևային և իմաստային տվյալ հատկանիշներով հատուկ են միայն պարսկահայ տարածքի խոսվածքներին: Այսպես, *‘աճկի էրը չ՞ն՞ օրս ըլնէնալ* «շատ սպասել» դարձվածը, որն առկա է վերոնշյալ խոսվածքներում, չկա ո՛չ Ա.Սուրիասյանի և Ս.Գալստյանի «Հայոց լեզվի դարձվածաբանական բառարանում» (այսուհետև՝ ՀԼԴԲ), ո՛չ Պ.Բեդիրյանի «Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարանում» (այսուհետև՝ ՀԴԸԲԲ), ՀԼԲԲ-ում: ՀԼԴԲ-ում կան այդ դարձվածին «նման» կամ «մոտ» *աչք(եր)ը չորս անել/շինել/բանալ/բացել* ձևերը և հետևյալ իմաստներն ունեցող դարձվածային տարբերակները՝ «1. զարմանքից, անակնկալից, հիացմունքից աչքերը լայն բանալ, ապշել, 2. անակնկալից զգաստանալ, ուշադրությունը լարել, 3. ուշադիր նայել, լավ հսկել, աչալուրջ հետևել»՝ ներկայացված մեկ բառահոդվածով⁴: Համանման պատկեր է արտացոլված նաև ՀԴԸԲԲ-ում, միայն թե *աչք(եր)ը չորս անել/շինել* «ուշադրությունը, տեսողությունը լարել» և *աչք(եր)ը չորս բաց անել/բանալ* «ա) ապշահար նայել, բ) շատ ուշադիր զգաստ նայել, գննել» դարձվածները տրված են տարբեր բառահոդվածներով⁵: ՀԼԲԲ-ում կա *աչքերը չորս անել/շինել* դարձվածը՝ «1. սաստիկ զարմանալ, 2. ուշադրությունը լարել, ուշադիր նայել, հետևել» իմաստներով⁶:

Աչք բառի հետ կապված պատկերացումները և վերաիմաստավորված ու պատրաստի դարձվածների վերածված կապակցություններն արտացոլվել են նաև պարսկահայ տարածքի խոսվածքներում գործածվող օրինանքներում ու անեծքներում, որոնց մենք հանդիպել ենք մեր (Ա.Մկրտումյանի) հավաքչական աշխատանքների ընթացքում և անտիպ նյութերում⁷: Դրանցից են, օրինակ, օրինանքներ՝ *‘աճկի լուսով ապրի՛ էք, Աստված չար ‘աճկից հեռու պահի, ‘աճկի լուսով կէնասս*, անեծքներ՝ *‘աճկըտ քօսանսա, լուսըտ քօսանսա, ‘աճկըտ*

⁴ ՀԼԴԲ, էջ 36:

⁵ ՀԴԸԲԲ, էջ 90-91:

⁶ ՀԼԲԲ, էջ 89:

⁷ Տե՛ս նաև ՀԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվային նյութեր, անտիպ:

դ՞ուս գ՛ա, Կաճկիդ լուսը ձերմըզի, Կաճկրտ բ՛ընից դ՞ուս գ՛ա, անԿաճկի լուս մընաս, էրկու Կաճկոլ քոտանաս, էրկու Կաճկոլ քոտ նասո՞հ էս, Կաճկրտ էր՞հայիդ քոտ նըստո՞հ էս, Կաճկի էրրտ ձերմագ փարդա բ՛ըռնի, արածըս լավությունը Կաճկի էրրտ բ՛ըռնի, Կաճկի լուսից յ՞էդ նասո՞հ էս, մէ Կաճկըդ դավ ըլնէնա և այլն: Ինչպես դժվար չէ նկատել, օրինանքների և անեծքների մեջ զգալի տեղ են զբաղեցնում աչքի լույս, չար աչք հասկացությունները, որոնք հենց նույն ձևով նաև դարձվածներ են:

Ականջ բառը ԱՀԲԲ-ում⁸ ներկայացված է յոթ իմաստներով (դրանցից փոխաբերական են երկուսը), որոնցից պարսկահայ տարածքի խոսվածքներում դարձվածացման համար հիմք են դարձել երեքը՝ «1. լսողության գործարան, լսելիք, 2. լսողության գործարանի երևացող մասը, արտաքին ականջ, 3. լսելու ընդունակություն, լսողություն»: Համեմատենք համապատասխանաբար՝ 1. *իջի Կանգրջումը քընած* «անտեղյակ», *Կանգաջը* (Կանգրջին) *հասնի՛ էլ* «լսել, տեղեկանալ», 2. *Կանգրջի միսն ուսնի՛ էլ* «շարունակ կրկնել», *Կանգրջի յեդելը տենալ* «մի բանից զրկ(վ)ել (սպառնալիք)», *մի էնձ կտ՞որը Կանգաջը թողի՛ էլ* «սպառնալիք», *Կանգաջը ըլօրի՛ էլ/քաշի՛ էլ* «պատժել», *Կանգաջը կըտրի՛ էլ /արնօտի՛ էլ* «ամուսնացնել» բայց 3. *Կանգաջը կըտրի՛ էլ* «խաբել (առևտրի մեջ)», *Կանգաձը ծանդըրանալ* «խլանալ» և այլն:

Ականջ բառն ունեցող դարձվածային միավորներում նկատվել է հետաքրքրական երևույթ. մի կողմից՝ միննույն իմաստը կարող է արտահայտվել *ականջո+հականիջ բառեր* կապակցությամբ, ինչպես՝ *Կանգրջնի էրը տընգի՛ էլ/ցըցի՛ էլ* – *Կանգրջնի էրը/Կանգրջնին կախ անի՛ էլ*, որ պարսկահայ տարածքի խոսվածքներում հանդիպում է «լսել» նշանակությամբ, *Կանգաջը լըցնի՛ էլ* – *Կանգաջը ծակի՛ էլ* նշանակում է «1. հայտնել, 2. չարախոսել» (անշուշտ *ծակել* և *լցնել* բառերն անմիջականորեն հականիջներ չեն, սակայն անուղղակիորեն՝ իմաստային տվյալ դաշտում կարծես հակադրվում են այն հիմունքով, որ եթե մի բան լցվում է մի տեղ, ապա այդ տեղը պետք է որ փակ լինի),- մյուս կողմից՝ նկատվում է բազմիմաստության երևույթ՝ *Կանգաջը կըտրի՛ էլ* «1. նշան դնել, 2. պատժել, 3. խաբել», *Կանգաջը կախի՛ էլ* «1. ուշադրությամբ լսել, 2. տխրել, մտահոգության մեջ ընկնել, 3. համաձայնել, ենթարկվել», *Կանգրջի տակը քորի՛ էլ* «1. հեզնել, 2. անգոր զգալ» և այլն, երբ բառերի

⁸ Տե՛ս ԱՀԲԲ, էջ 15:

նույն կապակցությունը մի դեպքում հիմք է դառնում դարձվածային միանգամայն տարբեր պատկերների, հետևաբար՝ տարբեր իմաստների ձևավորման, մյուս դեպքում՝ նույն պատկերի (ինչպես *‘անգաճը կախի՞ էլ* դարձվածի դեպքում) միանգամայն տարբեր վերաիմաստավորումների, ինչի արդյունքում դրսևորվում է դարձվածային բազմիմաստություն կամ համանունություն:

Մյուս կողմից դարձվածներում նկատվում է լեզվական մեկ այլ երևույթ, երբ *ակասնջ+այլ բառ(եր)* կադապարով կազմված տարբեր կապակցությունները ձևավորում են տարբեր պատկերներ և ունենում նույն(մոտ) իմաստը(ներ), այսինքն՝ դրսևորվում է դարձվածային հոմանիշություն: Ընդ որում, եթե *‘անգաջը ծանդրը – ‘անգրջնի՞ էրից ի՞նչ էրճ* «1. խուլ, 2. լսողությունը թույլ», *‘անգրջ(նի՞ էր)ը բ՛նորթ/բամբակ կօյնի՞ էլ – ‘անգաջը բաղմանչու ‘անգաջ շինի՞ էլ* «չլսելու տալ, անտեսել», *‘անգրջի ծակ չունի՞ ենալ – քառ՛անգաջ ըլինալ* «չլսել, չնկատել», *‘անգաջը տանի՞ էլ – ‘անգրջի միսն ուտի՞ էլ* «մի բանը շարունակ կրկնելով՝ ձանձրացնել» դարձվածներն իրենց բաղադրիչային կազմով նկատելիորեն տարբերվում են միմյանցից, ինչը, բնականաբար, ազդում է հոմանիշ դարձվածների պատկերային հիմքերի վրա, ապա *‘անգաջը դ՛րռանը – ‘անգաջը դ՛ըրսումը – ‘անգաջը ճ՛ենի* «սպասողական դրության մեջ», *‘անգրջնի՞ էրը չ՛որս անի՞ էլ – ‘անգրջնի՞ էրը սըրի՞ էլ* «լսողությունը լարել», *‘անգրջին հասնի՞ էլ – ‘անգաջն ընգնի՞ էլ* «տեղեկանալ» հոմանիշ դարձվածները, ի տարբերություն նախորդների, տարբերվում են հիմնականում միայն մեկ բաղադրիչով, սակայն դարձյալ ունեն միմյանցից միանգամայն տարբեր պատկերային հիմքեր, ինչով էլ բացատրվում ու հիմնավորվում է գուգահեռաբար տրված դարձվածների՝ հոմանիշ, այլ ոչ թե տարբերակ լինելը:

Հարկ է նշել, որ մեր կողմից ուսումնասիրված աղբյուրների տվյալների համաձայն՝ ստորև ներկայացվող դարձվածները տրված իմաստներով հանդիպում են միայն պարսկահայ տարածքի խոսվածքներում՝ *‘անգրջնի՞ էրը կախի՞ էլ* «չափազանց հոգնել», *‘անգրջի տակը քօրի՞ էլ* «անգոր լինել», *‘անգաջը կըտրի՞ էլ* «խաբել», համապատասխանաբար՝ *‘անգաջը կըտրօղ* «խորամանկ, խաբեբա», *‘անգաջը ջ՛նուր ածի՞ էլ* «խաբել», *գ՛նէրնին ‘անգաջ դընի՞ էլ* «քնել»: Ընդ որում *‘անգաջը ջ՛նուր ածի՞ էլ*, *գ՛նէրնին ‘անգաջ դընի՞ էլ* և *‘անգաջը կըտրօղ* դարձվածները

այլ աղբյուրներում չեն հանդիպում, իսկ *«անգրջն^h էրը կախ^h էլ*, *«անգրջի տակը քոր^h էլ*, *«անգաջը կրտր^h էլ* դարձվածները բերված իմաստներով է, որ հատուկ են միայն պարսկահայ տարածքի խոսվածքներին:

Այսպես՝ ՀՂԸԲԲ-ում բերվում է *ականջները կախել* երեք համանուն դարձված, որոնցից ոչ մեկը չունի «չափազանց հոգնել» իմաստը. հմմտ.՝ 1. «ա/ ծույլ-ծույլ շարժվել, բ/ (հլու) լսել, ականջ դնել, գ) լսողությունը լարել (ու հետևել)», 2. «ա) խռովել, թթվել, բ) (բրբ.) տրտմիլ, մտածել տրտմությամբ», 3. «զոջալ»⁹: ՀԼԴԲ-ում տրված է այսպես՝ *ականջ(ներ)ը կախել/ կախ անել* «1. ուշադրությամբ լարված լսել, ունկն դնել, ականջ դնել, 2. զիջել, հնազանդվել, համաձայնել, լռել, 3. տխրել, մտահոգության մեջ ընկնել»¹⁰: ՀԼԲԲ-ում *ականջ(ը) կախել* բացատրվում է իմաստների հետևյալ հաջորդականությամբ՝ «1. համաձայնել, անսալ, ենթարկվել, 2. տխրել, մտահոգության մեջ ընկնել, 3. ուշադրությամբ լարված լսել, ականջ դնել»¹¹: ՀՂԸԲԲ-ում *ականջի տակը քորել* դարձվածը բացատրվում է այսպես՝ «մտորումների մեջ ընկնել, մտորել»¹², ՀԼԴԲ-ում ներկայացվում է այլ իմաստով՝ «հեզնել, ձեռք առնել»¹³, ՀԼԲԲ-ում՝ «1. հեզնել, մտքում ծիծաղել, 2. ինչ անելը չիմանալ, անգոր գգալ (օրինակները տրված են Երևանի կամ Արարատյան բարբառով)» իմաստներով¹⁴: Ինչպես տեսնում ենք, Արարատյան բարբառի խոսվածքներում հանդիպող դարձվածն իր մեկ իմաստով նույնանում է պարսկահայ տարածքի խոսվածքներում հանդիպող դարձվածի հետ, և դա, բնականաբար, ունի իր բացատրությունն ու հիմնավորումը, քանի որ պարսկահայ խոսվածքը Արարատյան բարբառի նախնական՝ անփոփոխ տարբերակն է ներկայացնում¹⁵: *Ականջը կտրել* ՀՂԸԲԲ-ում բացատրվում է՝ «նշանադրել, ամուսնացնել»¹⁶,

⁹ ՀՂԸԲԲ, էջ 25:

¹⁰ ՀԼԴԲ, էջ 7:

¹¹ ՀԼԲԲ, էջ 25:

¹² ՀՂԸԲԲ, էջ 23:

¹³ ՀԼԴԲ, էջ 10:

¹⁴ ՀԼԲԲ, էջ 26:

¹⁵ Հայտնի է, որ պարսկահայ խոսվածքների կրողները մոտավորապես չորս դար առաջ հիմնականում Արարատյան դաշտից բռնի տեղահանվածներ են: Ապրելով մեկուսացած՝ ավելի անխառն են պահել մայրենի՝ Արարատյան բարբառը:

¹⁶ ՀԼԲԲ, էջ 20:

ՀԼԴԲ-ում՝ «1. տղային նշանել, նշան դնել»¹⁷, ՀԼԲԲ-ում՝ «1. նշանել, նշան դնել, 2. նշան անել, 3. պատժել»¹⁸: Այսպիսով՝ պարսկահայ տարածքի խոսվածքներում ներկայացված երեք դարձվածներում բառերի նույն կապակցությամբ ձևավորված դարձվածային պատկերը այլ լրացուցիչ իմաստավորում է ստացել, որը, հավանաբար, պայմանավորված է տարածաշրջանում ընդունված սովորություններով ու պատկերացումներով:

Մեր հավաքչական աշխատանքի ընթացքում և ուսումնասիրած աղբյուրներում *ականջ* բառը պարունակող մեկ անեծք է հանդիպել՝ *թիթէտ Կանգրջօկ կուլ տաս*, իսկ օրինանքներ ընդհանրապես չեն հանդիպել:

Այսպիսով, զգայարանների անվանումներով բաղադրված դարձվածները կարող են սերված լինել այդ բառերի տարբեր իմաստներից՝ դարձվածացման գործընթացում ընդգրկելով բաղադրիչների տարբեր կազմ և ենթարկվելով տարբեր աստիճանի վերաիմաստավորման-փոխաբերացման. ընդ որում՝ դարձվածային պատկերի ձևավորման վրա կարևորագույն ազդեցություն են ունենում տվյալ տարածաշրջանում հանրության մեջ տարածում ստացած կամ հաստատված պատկերացումներն ու արտալեզվական գուգորդումները՝ դրանով ձևավորելով դարձվածներ մի կողմից՝ համընդհանուր՝ հայերենի համար ընդհանրապես, մյուս կողմից՝ յուրահատուկ՝ տվյալ դեպքում միայն պարսկահայ տարածքի խոսվածքների համար՝ կամ միայն իմաստով, կամ միաժամանակ և՛ ձևով, և՛ իմաստով: Հայերենի բարբառների ուսումնասիրությունը և միայն տվյալ բարբառում հանդիպող դարձվածային միավորների բացահայտումը ոչ միայն հարստացնում է հայերենի դարձվածային կազմի ազգային գանձարանը, այլև օգնում է՝ վերականգնելու և պահպանելու տվյալ տարածքին հատուկ լեզվամտածողության յուրահատկությունները:

Тер-Григорян Лилит, Мкртумян Анаит – Фразеологизмы с наименованиями органов чувств в говорах армян, проживающих на территории Ирана. – В статье представлены некоторые фразеологизмы с наименованиями органов чувств *глаз* и *ухо* в своем составе, существующие только в говорах армян, проживающих на территории Ирана. В

¹⁷ ՀԼԴԲ, էջ 5:

¹⁸ ՀԼԲԲ, էջ 25:

число таких фразеологизмов авторами статьи включены как единицы, не имеющие аналогов и вариантов в литературном языке или в других говорах армянского языка, так и фразеологизмы, имеющие идентичную форму с фразеологизмами, общеизвестными в армянском языке, но совершенно отличающимися одним или несколькими значениями. Выявление таких фразеологических единиц с одной стороны обогащает фразеологический состав армянского языка, с другой стороны способствует восстановлению особенностей языкового мышления.

Ter-Grigoryan Lilit, Mkrtumyan Anahit – Idioms Based on the Sense Organs in the Subdialects of the Armenians Living in the Territory of Iran. – In this article the authors discussed some of the idioms related to the sense organs in their composition (such as *eye* and *ear*), existing only in the dialects of the Armenians living in the territory of Iran. Among such idioms the authors included both the completely unique idioms that have no analogues in the literary language or in other dialects of the Armenian language, as well as the idioms that have identical structure with the idioms widely known in the Armenian language, but have a completely different meaning. Identifying such idioms enriches the physiological structure of the Armenian language on the one hand and helps to restore peculiarities of linguistic thinking on the other hand.

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Գալֆայեան-Փանոսեան Հիլտա (Ֆրանսիա)

ՊՈԼՍՈՑ ԲԱՐԲԱՆԷՆ ԴԷՊԻ ԱՐԵՒՍՏԱՀԱՅ ԳՐԱԻՈՐ ԿԱՐԳԱԻՈՐՈՒԱԾ ԼԵՁՈՒ

Հայ լեզուն հարուստ է բարբառներով, որոնք տարբեր գաւառներու խօսակցական լեզուներն են: Հաւանաբար, այդ լեզուներէն Արարատեան գաւառի լեզուն, Մաշտոցի եւ իր գործակիցներու կողմէ մշակման ենթարկուելով վերածուած է գրաւոր լեզուի, կոչուելով Գրաբար: Մինչեւ XII դ., տկարանալով հանդերձ, գրաբարը պահած է միջբարբառային լեզուական միաւորողի իր դերը՝ առնուազն գրաւոր լեզուի պարագային: Սակայն Բագրատունեաց թագաւորութեան վերացման եւ Կիլիկեան թագաւորութեան ստեղծման հետեւանքով, գրաբարի եւ **"կը" ճիւղի բարբառներու** հիմքի վրայ, նաեւ տարածաշրջանային ֆրանսական, լատինական, արաբական լեզուներէն ազդեցութիւններ կրելով, հետզհետէ կազմաւորուած է **միջին հայերէնը** եւ դարձած՝ Կիլիկեան թագաւորութեան գրական, պաշտօնական լեզուն, ունենալով զարգացած գրականութիւն:

Թագաւորութեան կործանումին (1375 թ.) յաջորդող դարերուն, Կիլիկիայի տարածքը մտնելով Օսմանեան կայսրութեան սահմաններուն մէջ, կիլիկեան միջին հայերէնը գաղթականներու բազմութեան հետ տարածուած եւ յառաջացած է դէպի կայսրութեան մայրաքաղաքը՝ Կոստանդնուպոլիս: Այսպէս, **կիլիկեան միջին հայերէնը, հետզհետէ շփուելով ու շաղխուելով "կը" ճիւղի Պոլսոյ բարբառին հետ, նաեւ կրելով տարածաշրջանային թրքերէն լեզուի ազդեցութիւնը, ձեւաւորուած է որպէս պոլսահայ բարբառ:**

Պոլսահայ բարբառը, որպէս անմիջական ժառանգորդը միջին հայերէնի, բայերու սահմանական ներկան եւ անկատար ժամանակները կը կազմէ **"կը"** նախադաս մասնիկի օգնութեամբ, ապառնին **"պիտի"** մասնիկի օգնութեամբ, հրամայականը՝ **"Ը"** կամ **"ա"** վերջաւորութեամբ (գրէ, խօսէ, խաղա): "Եմ" օժանդակ բայի սահմանական ներկայի եզակի երրորդ դէմքն է՝ **"Ը"** (եմ, ես, է): Բայը ունի չորս լծոր-

դուփին (ել, իլ, ալ, ուլ): Հոլովներու թիւր վեց է, սակայն ուղղականը եւ հայցականը ձեռով նման են, նոյնպէս սեռականը եւ տրականը: Բառերու յոգնակին կը կազմէ **"եր"** կամ **"ներ"** մասնիկներու աւելացումով եւ երբեմն բարբառային ձեւերով (ինչպէս՝ **"աչուրներս, մատուրներս, ձեռուրներս"**): Բառերու մեծ մասին սեռականը կ'ենթարկուի **"ի"** հոլովման (աթոռի, տունի, շունի) + **"ն"** որոշիչ յօղով (աթոռին), յոգնակին **"ու"+ն** (սեղաններուն), բացառականը՝ **"է"**, իսկ գործիականը՝ **"ով"** վերջաւորութիւնով՝ առանց յօղի: Ստացական դերանուններն են **"իւնս, քուկդ, իրը"** (երբեմն **"իւն"** նախկին յոգնակերտ մասնիկի յաւելումով՝ **"իմիւնս, քուկիւնդ"**): Անձնական դերանուններն են՝ **"ես, դուն, ան, ինք"**, իրենց ինքնայատուկ հոլովումներով, եզակին՝ **"ես, զիս (հայց.), իմ, ինծի, ինձմէ, ինձմով"**, յոգնակիները՝ **"մենք, մեզ (հայց.), մեր, մեզի, մեզմէ, մեզմով"**: Ցուցական դերանուններն են՝ **"այս, այդ, այն"** կամ **"աս, ատ, ան"**, սեռականը՝ **"ատոր, ատոր"**, (խօսակցական լեզուի մէջ նաեւ **"սա, դա, նա"**, որոնց եզակի սեռական-տրական հոլովները կը կազմուին՝ **"որ"** մասնիկով՝ **"սա+որ"** կամ սրտը), բացառականը՝ **"կէ"** մասնիկով՝ **"ասկէ, ատկէ"** (խօսակցականը՝ **"սակէ"** կամ **"սըկէ"**), գործիականը՝ **"ով"** մասնիկով՝ **"ատով, ատով"** (խօսակցականը՝ **"սատով"**): Ժխտականը կը կազմուի **"չ"** ժխտական մասնիկով, որ կը դրուի **"եմ"** օժանդակ բայի սկիզբը (**"Չեմ գար, չես գար"**), իսկ երրորդ դէմքի ժխտական մասնիկն է **"չի"** (որ **"չէ ի գար"** ձեւի կրճատումն է): Իսկ ձայնաւորով սկսող բայերու պարագային, **"չի"** ժխտական մասնիկի **"ի"**-ն կը գեղջուի եւ կը դրուի ապաթարց **"չ"**, օրինակ՝ **"չ'ուտեր"**, **չ'երգեր**:

Բառապաշարով եւ ձեւաբանութեամբ պոլսահայ բարբառը մօտ է գրաբարին, իսկ հնչիւնական-արտասանական գետնի վրայ պոլսահայ բարբառը ունի արեւմտեան "կը" ճիւղի բարբառներու յատուկ բաղաձայնների երկաստիճան խլագուրկ դրութիւն (բ-փ, գ-ք, դ-թ), որով կը տարբերուի գրաբարէն եւ արեւելահայ "ում" ճիւղի բարբառներէն:

Կայ նաեւ բայի ներկայ ժամանակին ընկերացող **"կոր"** մասնիկը, որու մասին կարծիք կայ թէ թրքերէնի ազդեցութիւն է, **սակայն "կոր"**, **պոլսահայ բարբառի մէջ անմիջական ներկայ կը շինէ**, քանի որ առանց իրեն, գործողութեան ժամանակը անորոշ կը մնայ (օրինակ՝ **"կու գամ"** ձեւը չի բնորոշեր թէ ե՞րբ կու գամ, խօսքի պահուն, թէ աւելի յետոյ կը մտադրեմ գալ): Իսկ **"կու գամ կոր"** կը նշանակէ թէ

գործողութիւնը կատարման ընթացքի մէջ է (պարագան նոյնն է անգլերէնի "**ing**" մասնիկին համար, որ քաղաքացիական իրաւունք ստացած է անգլերէնի մէջ): "Կոր"-ի մասին կայ նաեւ կարծիք, թէ Մահմանական ներկայ ժամանակի ընկերացող "**կը**" անփոփոխ եղանակիչ մասնիկի կրկնութիւնն է՝ կարգ մը բարբառներու մէջ՝ "**կը գամ կը**" եւ կամ "**գամ կը**" ձեւերով արտայայտուած:

XV-XVIII դարերը եղած են թաթարական, թրքական, մոնղոլական կոտորածներու, աներումի եւ զանգուածային գաղթի դարեր, թէ՛ բուն Հայաստանի եւ թէ Կիլիկեան Հայաստանի համար: Ուսումնական կեդրոնները փակուած, մտաւորական կեանքը սահմանափակուած է վանքերու մէջ: Գրաբար լեզուն հետզհետէ կորսնցուցած է իր մաքրութիւնը եւ հասկնալիութիւնը: Այս դարերուն է որ կատարուած է արեւմտահայերէնի եւ արեւելահայերէնի աստիճանական հեռացումը իրարմէ, որպէս արդիւնք՝ բուն Հայաստանի եւ Օսմանեան կայսրութեան մէջ ցրուած հայերու աշխարհագրական եւ մտաւոր խզումին:

Գաղթելով դէպի արեւմուտք եւ սերտօրէն շփման մէջ մտնելով եւրոպական քաղաքակրթութեան ու մտաւորական շարժումներու հետ, պոլսահայերը որոշ կենդանութիւն ցուցաբերած են, մանաւանդ տպագրութեան գիւտէն յետոյ: Արդարեւ, նախ՝ Վենետիկ, 1512 թ., աւելի յետոյ Ամսթերտամ (1666 թ.), Մարսիլիա, Պոլիս, եւ Չմիտնիա, բացուած են հայկական տպարաններ եւ մեծ քանակութեամբ գրականութիւն լոյս տեսած է: Հրատարակչական այս շարժումի գլուխը կը գտնուի Մխիթար Աբբահայր, որ ռահվիրան կը հանդիսանայ XVIII դ. այս իմացական շարժումին: Մխիթարեանները, իրենց հայագիտական, ուսումնական, պատմագրական, թարգմանչական գործերով, նաեւ դպրոցներու բացումով, թերթերու հրատարակութեամբ եւ թատերական գործունէութեամբ իսկստ զարկ տուած են հայ լեզուի եւ գրականութեան զարգացման, ժողովրդի մտաւոր մակարդակի բարձրացման, եւ ազգային ոգիի ամրապնդման: Իրենց հրատարակութիւնները եղած են ընտիր գրաբարով: Արդէն, Մխիթարեաններու նպատակն է եղած գրաբարի մաքրագտումը եւ վերականգնումը: Մակայն գրաբարը այլեւս անհասկնալի դարձած ըլլալով, իր տեղը ստիպողաբար զիջած է ժողովրդախօսակցական լեզուին: **Գրաբարի, միջին հայերէնի եւ Պոլսոյ թրքախառն բարբառի միաձուլմամբ ձեւաւորուած նոր հայերէնն է սա, որ օգտագործուած է Օսմանեան կայսրու-**

թեան մէջ ապրող հայերու մօտ, առեւտրական գործառնութիւններու, նաեւ գրականութեան մէջ, եւ կոչուած է Արեւմտահայ Աշխարհաբար: Այս շրջանին է որ Մխիթարեան Հայր Արսէն Այտընեան, իր "Քննական քերականութիւն" գիրքով պարգած է արեւմտահայ աշխարհաբարի քերականական կանոնները (1866 թ.), եւ Մխիթարեանները հետզհետէ անցած են արեւմտահայ աշխարհաբարի օգտագործման ու մշակման աշխատանքին:

1800-1870 թթ., Եւրոպայի մէջ կրթուած հայ նոր սերունդը, երկիր վերադառնալով, ձեռնարկած է հայ ազգային կեանքի մէջ ժողովրդավար սկզբունքներ կիրարկելու: Գրիգոր Օտեան, Նահապետ Ռուսինեան, Ստեփան Ոսկան, գլխաւոր անձերն են, որոնք հրապարակագրական գործունէութեամբ ձեռնարկած են յեղաշրջել ազգի վարչական, կրթական եւ լեզուական հին դրոյթները: Իրենց ժողովրդավար ջանքերու արդիւնքն է Ազգային Սահմանադրութիւնը, որ կը վաւերացուի Սուլթանի կողմէ 1863 թ.: **Զարթօնքի Մերունը** կոչուած այս երիտասարդները կ'աշխատին նաեւ աշխարհաբար լեզուն մշակել եւ գրական մաքուր լեզուի վերածել՝ որպէսզի ժողովուրդը զարգանայ իրեն հասկնալի լեզուով: Առ այդ, հրապարակային բուն պայքար կը մղեն գրաբարեաններու դէմ: Ահա նմուշ մը, անդրդուելի գրաբարեաններու խումբէն -

"Ի համեմատել մեր այսպէս որեւիցէ թարգմանութիւն Ե. դարու ընդ բնագրին, անհնար է չգարմանալ ընդ հմտութիւն թարգմանչին յունարէնի եւ ընդ առաւելութիւն հայերէնին ճշտութեամբն հանդերձ անհնարին բեղմնատր, մինչեւ կարել հատուցանել բնագրին ընդ միոյ երկուս կամ երիս": (Մատաթիա Գարագաշեան):

Նահապետ Ռուսինեան ջանացած է պարզեցնել այս գրաբարախառն հայերէնը իր "Ուղղախօսութիւն" գրքով (1853 թ.), բառերը կրճատելով, (Օր **"ուսմական"** = "ուսումնական" -ի փոխարէն), **"անց"** = "առանց" -ի փոխարէն), բայերու անորոշ դերբայի համար առաջարկելով միասնական կերպով **"էլ"** վերջաւորութիւնը (**"Սպասէլ, գրէլ"**), յոգնակիներու համար ալ միասնական **"էր"** վերջաւորութիւնը (**"անձէր, Յոյնէր"**): Ահա քանի մը տող իրմէ -

"... Մակայն տաս տասհինկ տարիէ ի վեր՝ ուսումնական անձէր մասնատր ու պարբերական գրվածներով զանի շատ շքտկեցին եւ ազգն իր հին կորուսած լեզուին տեղ, ունի այսօր, թէ ոչ կատարեալ, գէթ բաւական գործածելի արդի լեզու մը ազգային, գոր շատ մարդիկ

իրարմէ քիչ տարբերութեամբ կը գրեն, հասարակութիւնը աւելի վարժ կերպով կը խօսէ՞:

Ն.Ռուսինեանի "Ուղղախօսութիւն"-ը հրապարակային սաստիկ վէճերու առիթ կը հանդիսանայ եւ կը մերժուի: Յիշատակելի են գրաբարէն հետզհետէ ձեռքազատուող Մկրտիչ Պէշկկթաշլեանը, իր ռոմանթիկ բանաստեղծութեամբ, Պետրոս Դուրեանը, իր գրեթէ մաքուր աշխարհաբարով, նաեւ Յակոբ Պարոնեանը՝ ժողովրդախօսակցական լեզուն արտացոլող իր երգիծական գրականութեամբ, որով իյիստ նպաստած է աշխարհաբարի տարածման:

Ժողովրդավարութեան եւ լեզուի մաքրագտման դիմող ժողովուրդին խանդավառութիւնը կ'ընդհատուի յանկարծ: Պերլինի վեհաժողովի (1878 թ.) հայ դատին նկատմամբ աննպաստ որոշումը, յաջորդող համիտեան խժոժութիւնները, զպումները, գրաքննութիւնը, կը կասեցնեն լեզուական յառաջընթացը: Սակայն, "Արեւելք", "Մասիս", "Հայրենիք" թերթերու շուրջ կը համախմբուին նոր գրողներ, որոնք կը նպատակադրեն գեղարուեստական գրականութեամբ գաղափարական եւ լեզուական յեղաշրջում յառաջ բերել: Իրենց նշանաբանը կը դառնայ "նկարագրել կեանքը՝ ինչպէս որ է": Առ այդ, պոլսահայ կեանքի կողքին, կը պատկերեն նաեւ Օսմանեան կայսրութեան գաւառներու ստրկացուած հայութեան կեանքը իր անարդարութիւններով, նաեւ Պոլիս ապաստանած գաւառացի պանդուխտներու խղճալի վիճակը:

Մեր գրականութեան մէջ **"Իրապաշտներ"** կոչուած այս նոր գրողները կը ձեռնարկեն մաքրագտել հայ լեզուն օտար տարրերէ: Առաջին հերթին լեզուէն կը հեռացուին թրքերէն բառերը **"ամա"** (բայց), **"խօշ"** (զուարճալի), **"փէք"** (շատ), **"աճապա"** (արդեօք), **"տահա"** (դէռ), **"Խաֆա"** (զլուխ), **"թուհաֆ"** (տարօրինակ), **"գաւալլը"** (խեղճ), **"խսմէթ"** (բախտ), **"հէմէն"** (անմիջապէս), եւլն.: Նոյնպէս, թրքաբանութիւնները կը փոխարինուին հայերէն բառերով, օրինակ՝ **"խօսքը բռնել"** (sözünü tutmak) = խօսքը յարգել, **"երես տալ"** (yüz vermek)=շփացնել, **"առաջքը առնել"** (özünü almak) = կանխել, **"իր երեսէն"** (onun yüzünden) = իր պատճառով, **"վազ անցնիլ"** (vaz geçmek) = **հրաժարիլ**, նաեւ՝ հարցումի ընկերացող **"մի"** կամ **"մը"** մասնիկը = (տեսա՞ր **մի**, ըսի՞ր **մը**), նոյնպէս **"տէ"**, **"քի"** մասնիկները ("բողոքեցիր **տէ** ի նչ եղաւ" = բողոքդ ի նչ արդիւնք տուաւ), ("իրեն ըսէ **քի** էս հոս էմ = իրեն ըսէ **որ** էս հոս էմ") եւլն.:

Թրքական բառերով խճողուած հայերէնի որպէս նմոյշ, ահա "Ձկնորսին սերը" խորագրուած պատմուածքէն առնուած հետեւեալ երեք նախադասութիւնները, որոնց մէջ Երուանդ Սրմաքէշիանլեան կը հնչեցնէ ժամանակաշրջանի խօսակցական պոլսահայերէնը.

"– Ա՛ն աղօղկս, ըսաւ ձկնորս Սերգիսը, ծրար մը երկնցնելով աղջկան, **ամա մօրդ ըսէ, չափուխ վլայ, զիրէ չամաշքը չունիմ:** "...Ասկէց կ'էլլամ, դուրսը աղուոր **օտա** մը կը պոնեմ **քի** կարգուինք **նէ ըռահաթ ըլլաւ:**

– Մարս **խայիլ չ'ըլլար կոր**, ըսաւ մանկամարդ աղօղկը":

(Թարգմանութիւն Բ. տողի. "Բայց մօրդ ըսէ որ շուտ լուայ, որովհետեւ փոխնորդ չունիմ: Այստեղէն կ'էլլեմ եւ դուրսը լաւ սենեակ մը կը բռնեմ (կը վարձեմ), որպէսզի երբ ամուսնանանք, հանգիստ ըլլաւ":

– Մայրս չի յօժարիք, ըսաւ մանկամարդ աղօղկը":

Այս պարբերութեան մէջ "վլալ" = լուալ բայն է, որու "վ" եւ "լ" հնչիւնները տեղափոխուած են): Իսկ հետաքրքարականը, թրքական "**քի**" (որպէսզի) մասնիկէն բացի, նաեւ "**նէ**" (**երբ, երբ որ**) *խօսքի մասնիկն է, որ բարբառային է (կ'ըսիմ նը, տեսնիս նը)*: Պէտք է անդրադառնալ նաեւ "**կը պոնեմ**" (կը բռնեմ) բային, որու նախահնչիւն "**բ**"-ն արեւմտահայերէնի պարագային դարձած է պարզ խուլ "**պ**": Իսկ "**խայիլ ըլլալ**" որ թրքերէնի մէջ կը նշանակէ "յօժար ըլլալ", իր "**խ**" հնչիւնով թրքերէն չէ, քանի որ թրքերէնը "**խ**" հնչիւն չունի իր մէջ, այլ կու գայ Վանի, Խոյի, Բայազետի բարբառներէն, որոնց մէջ "**հ**" հնչիւնը կը հնչուի "**խ**", ինչպէս "**հաց - խաց**", "**Չայ- Խայ**": Այս բարբառային ազդեցութեան պատճառով է որ թրքերէն բառերու "**ք**" հնչիւնը պոլսոյ բարբառին մէջ միշտ կը վերածուի "**խ**"-ի:

Թրքերէնէն յետոյ ֆրանսերէն բառերն են որ թարգմանութեամբ հայացուած են: Զօհրապի նորավէպերուն մէջ, օրինակ, կան բազմապիսի ֆրանսերէն բառեր, ինչպէս "**տանթել**", "**քազիսօ**", "**քառնէ**", "**քօսսէ**", "**ֆօրմիլ**", "**ռէվոլվեր**", "**ժիւփ**", եւլն., որոնք յետագային վերածուած են հայերէնի "**ժանեակ**", "**խաղատուն**", "**ճոցատետր**", "**սեղմիրան**", "**բաղադրատոմս**", "**ատրճանակ**", "**շրջագգեստ**": Թարգմանութեան անկարելիութեան պարագային ստեղծուած են նոր բառեր՝ գրաբարի հիմքի վրայ եւ համաձայն հայերէնի բարդութեան ու ածանցման կանոններուն, օրինակ՝ "**փաստաբան**", "**գեղարուեստ**", "**մանրէ**", "**մեներգ**", "**մասնագէտ**". եւլն.:

Նաեւ ֆրանսաբանութիւններն են հայացուած, օրինակ՝ "որոշում առնել" բացատրութիւնը վերածուած է "**որոշում տալ**" ու: Երբեմն ալ նոյն արտայայտութեան համար առաջարկուած են նոյնիմաստ բառեր, օրինակ՝ "**original**" բառի փոխարէն՝ "ինքնատիպ, սկզբնատիպ, իսկատիպ":

Օտարաբանութիւններէ յետոյ, բարբառային արտայայտութիւններն ալ փոխարինուած են գրաւոր ձեւերով: Օրինակ՝ "**ինտո ը**" = "ինչպէ՞ս", "**աղէկ**" = լաւ, "**երիկ**" (այրիկ) = ամուսին, "**կնիկ**" = կին, "**կ'օգտէ**" = կը բաւէ, "**Ի՞նչ տ ըլլի**" = ի՞նչ պիտի ըլլայ, "**ընենց**" = այնպէս, այնպիսի, "**ներսիդիէս**" = հոգիէս ներս, "**ի՞նչ պիտոր**" (պիտի որ) = ի՞նչ պիտի, "**հեղ մը**" = անգամ մը, "**կայնիլ**" = կանգնիլ, կենալ, "**օլորուեցաւ**" = տեղափոխուեցաւ, "**մէջքը շտկել**" = ուղղուիլ, քալել դէպի, ելն.:

1900-1915-ական թթ., լեզուական բոլոր այս բարեփոխումները կատարուած են հրապարակային վիճարկումներով, մամուլի էջերուն վրայ: Զարթօնքի եւ մանաւանդ Իրապաշտ սերունդի ջանքերուն շնորհիւ մաքրագտուած արեւմտահայ գրականութիւնը կ'ընդգրկէ այլեւս կեանքի բոլոր ոլորտները: Հոգեբանական վեպը, խորհրդապաշտութիւնը, իմաստասիրութիւնն ու ներգագնողութիւնը կ'առաջնորդեն Ա.Արփիարեանի, Գր. Զօհրապի, Լ.Բաշալեանի, Արտաշէս Յարութիւնեանի, Ե.Սրմաքէշխանլեանի, Մ.Կիւրճեանի, Զապէլ Եսայեանի, Չոպանեանի, Երուանդ Օտեանի նման գրողները, թէեւ, որոշ գրուածքներու մէջ դեռ կը տեսնուին բայերու ժխտական ներկայի երրորդ դէմքի սխալ օգտագործման ձեւեր, օրինակ՝ "չգիտցուիր", "յազենար", փոխանակ "չի գիտցուիր", "չի յազենար" քերականական ճիշդ ձեւերուն, որոնք կ'ամրապնդուին հետզհետէ:

Բանաստեղծութիւնն ալ կ'ապրի իր փառքի շրջանը՝ Վարուժանով, Ռ.Սեւակով, Մեծարենցով, Սիամանթոյով, Տիրան Զրաքեանով (Բնտրա), Զարիֆեանով, Թեքեանով, որոնք կ'օգտագործեն այլեւս բիւրեղացած եւ իր վերջնական ձեւը ստացած աշխարհաբարը, արտադրելով արուեստի գործեր: Այս շրջանէն յիշատակելի կը մնան Յովհ.Գազանճեանի "Արդի հայ լեզուի դասընթացք"-ը (1910 թ.), նաեւ Զապէլ Հ. Ասատուրի "Գործնական քերականութիւնը"-ը (1915 թ.):

Մեծ Եղեռնը անկիւնադարձ մը կը կազմէ: Մէկ ու կէս դար, մշակութային հսկայ զարթօնք մը արձանագրելէ յետոյ, 1915-էն սկսեալ մինչեւ 1950 թ., գրական ամուլ շրջան մը կ'ապրի պոլսահայութիւնը,

քանի որ արեւմտահայ բոլոր գրական տիրական դէմքերը բնա-
ջնջուած են:

Երկրորդ աշխարհամարտէն յետոյ կ'երեւին քանի մը պոլսահայ
երիտասարդ բանաստեղծներ, որոնք գրականութիւն ընել կը փորձեն,
հակառակ իրենց աղքատ հայերէնին: Այս նորերը, կը նպատակադրեն
եսակեղրոնութիւնը ջնջել բանաստեղծութեան մէջ, առարկայական
ըլլալ, քերթողին անձնական, յուզական-զգացական վիճակներուն փո-
խարէն, գոյութեանական պայքար մղող ժողովուրդին ցաւերը պատկե-
րել՝ յանգ, չափ եւ կէտադրական ձեւեր զանցող ազատ բանաստեղ-
ծութեամբ ու չափազանց պարզ լեզուով: Այսպէս է որ կը ծնի ընկերա-
յին բնոյթով **"Պոլսահայ Նոր Բանաստեղծութիւնը"**, իր հիմնադիր
վաղամեռիկ **Կարայիս Ճանճիկեանի** գրիչով (1920-1946 թթ.), **"Օրէ օր"**
հատորով, յետ մահու հրատարակուած (1950 թ.): Ահա իր **Ներքող
հացի** խորագրուած բանաստեղծութիւնը.

չեմ մոռնար ծախելս
ճերմակեղէններս կօշիկս գիրքերս բոլոր
անօթութեանդ եւ քու համիդ անհամբեր
ու ես փութերուն դոներուն առջեւ
տաք հացին բոյրը
խորոված միսի չափ համեղ
աստուծմէ կը հայցեմ առողջութիւնս եւ քեզ

Այսպէս կը շարունակուի, մինչեւ որ **Զահրատ (Զարեհ
Եալուզճեան)**, Մխիթարեանցի մը, միջազգային գրական նորութիւն-
ներուն հաղորդակից, ֆրանսերէն լեզուին զիտակ, իր բնատուր տա-
ղանդով եւ գերիրապաշտ արուեստով երկրորդ յեղաշրջում մը կը
ստեղծէ "նոր քերթողութեան" մէջ, 1950-ական թթ. սկսեալ:

"Տասը տողով, տասը մարդու տասը տեսակ վիշտը կ'երգեմ"
կ'ըսէ Զահրատ եւ կը պատկերէ իր ժամանակաշրջանի միջին մարդը,
զոր կ'անուանէ ԿԻԿՕ: Ահա թէ ինչպէս կ'անդրադառնայ Կիկոյի չքա-
տրութեան, **«ՍՅԹԻՓ – ԹԻԶ»** խորագրուած չորս տողանի քերթուածին
մէջ, սեւեռելով նաեւ բառերու կազմութեան.

ՆԱԽ հագուիլ պէտք է
ՅԵՏՈՅ արուեստով հանուելու համար
Կիկօ արուեստը սորվեր է **ՇԱՏՈՆՑ**
ՀԻՄԱ հագուստին կը սպասէ

Ինչպէս կը տեսնուի, Զահրատ, Կիկոյին ջբաւորութիւնը (այսինքն քերթուածին նիւթը), հրաշալիօրէն կը համապատասխանեցնէ իր քերթողական արուեստին հետ, որ ծնունդ կ'առնէ "նախ", "յետոյ", "շատոնց", "հիմա" ժամանակական մակբայներուն միջոցով: Արդարեւ, **Զահրատ, առաջին անձն է հայ բանաստեղծութեան մէջ, որ բանաստեղծական սեւեռումի նիւթ կը դարձնէ հայ լեզուի բառերը**, որպէս թուղթին վրայ գրուող, հետեւաբար տեսանելի եւ վերլուծելի առարկայացած գոյութիւններ, եւ այդ սեւեռումներէն իմաստ կը հանէ մարդոց կեանքին առնչուած: Կը սեւեռի բառերու արմատներուն, բարդութեան կամ անձնական ենթարկուած ձեւերուն, բառերու հնչիւններուն, վանկերուն, բառի մասերուն տեղափոխութեամբ ստացուած իմաստներու: "Չօն խափշիկ բանաստեղծի մը" շարքէն "Վանկ" խորագրուած քերթուածին մէջ օրինակ, գերիբապաշտ պատկերով մը կը նկարագրէ խարոյկի շուրջ կատարուած պար մը, որու ընթացքին պարողները դէպի երկինք կը նետեն վանկեր՝ **Ա-եր, Տու-եր, Զա-եր, Թիւն-եր**.

Երկինքը կը լեցուի գոյն գոյն վանկերով,
մինչեւ որ գարնան անձրեւի նման

ԱՉԱՏՈՒԹԻՒՆ-ը իջնէ մեր վրայ

Զահրատի օգտագործած լեզուական խաղերն ու հնարքները կը բխին իւրաքանչիւր քերթուածի ներքին պահանջներէն: Ահա թէ ինչպիսի քնարականութիւն մը եւ երաժշտականութիւն մը կը ծորի մաքրամաքուր հայերէնով գրուած **"ԻՐ ԱՉՔԵՐԸ"** քերթուածէն.

Համբուրելով համբուրեցէք

Այդ սեւ աչքերը որոնցմէ խանդաղատանք կը ծորի

Ու սիրելով սիրեցէք

Այդ թարթիչներն որոնք թել թել ձեր շրթներուն կ'երկարին

Գինովնալով գինովցէք

Երբ այդ աչքերը կը խօսին ձեր աչքերուն հետ միայն

Այդ պսպղուն սեւութեան դէմ պահ մը ամէն չափ մոռցէք

Հիանալով հիացէք

Զահրատ կը կիրարկէ ազատ բանաստեղծութիւնը, ձերբազատուած՝ չափի եւ յանգի կաշկանդումներէն, սակայն չ'անտեսէր բանաստեղծական կշռոյթին կարեւորութիւնը եւ հնչական խաղերուն օգտագործումը: Իր գերիբապաշտ պատկերներուն կողքին, մանկունակ

շունչ մը, զուարթախոհութիւնը, երգիծանգը, հեգնանքը կը յատկանշեն Չահրատեան քերթողութիւնը:

Մեծ մըն է Չահրատ, որ իր ազդեցութիւնը գործած է հայ բանաստեղծութեան վրայ, արդիականացնելով եւ միջազգային գրական հոսանքներուն ծանօթացնելով զայն:

Չահրատի կողքին երկրորդ զագաթ մըն է **Ջարէն Խրախունի (Արթօ Ճիւմպիշեան)**, որ դարձաւ Պոլսահայ նոր բանաստեղծական շարժումին տեսաբանը եւ շարժումին տուաւ դպրոցի մը հանգամանքը, մօտ յիսուն հետեւորդներով, որոնք նոյն սկզբունքներէն կ'առաջնորդուին: Պերկսոնեան փիլիսոփայութեան հետեւող Խրախունի, իր արուեստի ուղղութիւնը կը կոչէ "Առարկայական խորհրդանշապաշտութիւն" (symbolisme objectif) եւ զայն կը բացատրէ սապէս - "Առարկայական խորհրդանշապաշտութիւնը ո՛չ-անձնական, այլ ընդհանրական խորհրդանշաններու էութեանական վերլուծման ճամբով իմաստներու ամբողջութիւն մը կերտելու արուեստն է": "Երեւութաբանական գեղագիտութեան (esthétique phénoménologique) վրայ հիմնուող այս քերթողութեան համար անհրաժեշտ է ճանչնալ առարկայի գանազան երեւոյթները, թափանցել անոր էութեան եւ բացայայտել "գեղեցիկը" որ կայ այդ երեւոյթներուն մէջ թաքնուած":

Ճանաչողական նպատակով, ուրեմն, Խրախունի կը դիտէ եւ իրենց հիմնական գիծերուն մէջ կը նկարագրէ սուկական առարկաները (ինչպէս՝ ծառ, լեռ) կամ առարկայացած գոյութիւնները (ինչպէս՝ գաղափար, զգացում, սպիտակ էջին վրայ գրուող բառ, վանկ), որմէ յետոյ կ'ընդլայնէ նկարագրութիւններու ծիրը, այսինքն, կեդրոնական պատկերը՝ երկրորդական պատկերներով, փոխաբերութիւններով, բառախաղերով, բառանշատումներով, որոնք զիրար կը ծնին, ընթերցողին մօտ յառաջացնելով զգացական-մտածական վիճակներով լեցուն սպասողական դրութիւն, մինչեւ որ յանկարծական ձեւով աւարտի քերթումածը եւ ընթերցողին պարզեւէ տուեալ առարկայի "**էութեանական իմաստը**": Ահա, օրինակ, ՔԱՐ շարքի "**Լեռն ի վեր**" խորագրուած քերթումածը՝ "**որ**" յարաբերական դերատունի հոլովաձեւերուն օգտագործմամբ.

Այս այն լեռն է

Որ ամենուս բիբին խորն է բեւեռուած

¹ **Չ.Խրախունի**, *Մայր գիծը*. – ԹՕ ամսագիր, Իսթանպուլ, 1959, թիւ 2, էջ 14-21:

Որ ամենուս մորթին տակն է - միս ոսկոր
 Որ ապրում է գոյութին է իրական
 Ու երազ է առասպել է անսահման
 Այս այն լեռն է
 Որմէ կու գայ վճիտ ջուրի ուղիներու պէս արիւնը մեր երակին
 Որուն կ'երթայ օդասլաց համբոյրի պէս վերջին շունչը մեր
 կուրծքին

Այս այն լեռն է
 Որմէ որքան կը հեռանանք այնքան կը զգանք թէ իրն ենք
 Որուն որքան կը մօտենանք այնքան կը զգանք թէ ի՞նչ ենք

Խրախունիի բանաստեղծական արուեստին հիմը անկասկած իր հարուստ, սքանչելի լեզուն է: Խրախունիի հայ լեզուի սակաւաթիւ վարպետներէն մէկն է: Իր քերթողութեան մէջ Մեծաւասանը կը հմայէ ու կը զարմացնէ ընթերցողը՝ արտայայտութեան իր անսահման կարեւորութիւններով, ճկունութիւններով, նրբութիւններով: Բազմաթիւ իմաստներու եւ երանգներու մէջէն կ'ընտրէ ճիշդ պէտք եղած բառը: Իսկ անհրաժեշտութեան պարագային կը ստեղծէ նոր բառեր, բարդութեան, ածանցման եւ հոլովման կարեւորութիւններ տուող բառեր, որոնք շատ բնական կը հնչեն, կարծէք դարերէ ի վեր գոյութիւն ունենային, ինչպէս՝ **"դարձանի"** = կարուսել, **"լուսնարշա"**՝ ազգերու միջեւ լուսնի տիրապետութեան համար կատարուող մրցում, **"լուսնապարտեզ"** = լուսնափարք, **"իրերականչում"** = գաղափարի զուգորդութիւններ, **"ձեւագեղծում"** = տեֆորմացիա, եւլն.:

Հայերէնի իր իմացութեամբ իրաւամբ նկատուած է փիլիսոփայական, մտածական քերթողութեան ներկայացուցիչը: Նաեւ գերազանցապէս ազգաշունչ եւ դիւցազներգակ բանաստեղծ է, որ էութեանական վերլուծման կ'ենթարկէ Հայոց պատմութեան յատկանշական դէպքերը: Յանգի-չափի կաշկանդումներէն ազատած իր քերթողութիւնը ունի սակայն ներքին կշռոյթ եւ ներքին յանգեր, որոնք կը ստեղծեն հիանալի երաժշտականութիւն:

Պուլտոյ մէջ ստեղծագործած են նաեւ վիպագիրներ Արեգ Տիրազանը, իր **"Գազանն աստուած մը կ'ուզէ"** (1955 թ.) եւ **"Փորձի կալ"** (1975 թ.) վէպերով, Զաւեն Պիպեռեանը, իր **"Լկրտածը"** եւ **"Մրջիններու վերջալոյսը"** վէպերով, թատերագիր եւ փրուստեան հոգեբանական վէպի հեղինակ Ռոպեր Հատտեճեանը իր **"Առաստաղ"** երկհա-

տոր վէպով (2000 թ.): Անոնք կարողացան Ազգային Աղէտի ճիրաններէն փրկել հայ լեզուն եւ արդիականացնել հայ գրականութիւնը:

Իսկ Մփիւռքի մէջ ստեղծուած է յետ-Եղեռնեան "Կարօտի գրականութիւն"ը, որ աշխարհի երեսին հայրենագուրկի իր ցարը պոռթկալու փորձ մըն է, առանց արուեստի մտահոգութեան: 1930-ական թուականներուն Լիբանանի մէջ յայտնուած են նոր գրողներ՝ Վահէ Վահեան, Մուշեղ Իշխան, Անդրանիկ Ծառուկեան, Ժաք Յակոբեան, որոնք սակայն լեզուամտածական սխրանքով չեն փայլած: Իսկ Տրանսայի մէջ 1930-ական թթ. կը ծնի "**Մենք**"եան շարժումը, Շահան Շահնուրի, Վազգէն Շուշանեանի, Շաւարշ Նարդունիի, Հրաչ Զարդարեանի, Զարեհ Որբունիի նման վիպագիրներու միասնութեամբ, որոնք իրենց վէպերով կը պատկերեն հայկական արւանդապաշտութեան բախումը եւրոպական ազատ ու սանձարձակ կեանքին, եւ հայոյ ինքնութեան նահանջը: Դժբախտաբար, "**Մենք**"եան խմբակը երեք տարի յետոյ ցրուած է, մեր գրականութեան տալով հայ նոր վէպը եւ Նիկողոս Մարաֆեանի նման սքանչելի բանաստեղծ մը: 1970-ական թթ., Մփիւռքի զանազան կողմերը յայտնուող նոր սերունդի գրողներ փորձած են հայկական արւանդականին կիրարկել արեւմտեան ամենամոր գրական նորութիւնները, սակայն իրենց գրուածքները, իբր օտարոտի պատուաստ, անհասկնալի կը մնան եւ մանաւանդ լեզուական-քերականական խախտումներ նշմարելի են: Օրինակ ցուցական դերանուններու "**ասի**", "**ատի**", "**անի**" ձեւերը, որոնք բարբառային են: Նոյնպէս հակում կայ զեղչելու հայցական հոլովը՝ "**գոր**", "**գայն**", "**գինք**":

Եզրակացնելով ըսենք, թէ նորարարութեան եւ հայ լեզուի բառերուն մտածական սահմանները ընդլայնելու տեսակետով յատկանշական աշխատանքները կատարուած են Պոլսոյ մէջ՝ 1950 թ. սկսեալ մինչեւ մեր օրերը, վերոնշեալ Պոլսահայ գրողներու շնորհիւ, որոնց արուեստը արեւմտահայ աշխարհաբարը հասցուցած է իր բարձրակետին:

Калфаян-Паносян Хильда – От разговорного константинопольского диалекта до нормированного письменного западноармянского. – Классический письменный армянский язык – габар, созданный Маштоцем, сохранил свое исключительное положение вплоть до XII в. Затем в Киликийской Армении официальным языком стал «среднеармянский» – сочетание местного диалекта западноармянского с габаром.

Позже в Константинополе (Стамбуле) в результате взаимодействия местного разговорного армянского диалекта с среднеармянским языком сформировался «константинопольский диалект армянского языка». В течение XVIII и XIX веков Конгрегация Мхитаристов и молодые армяне, получившие образование в Европе и находясь под ее влиянием, превратили константинопольский диалект армянского языка в современный «западноармянский», создавая богатую литературу вплоть до жестокого геноцида в 1915 г. В шестидесятые годы XX в. появляются два очень больших поэта – Захрат и Храхуни, оба из Константинополя, поднявшие качество западноармянского на самый высокий уровень.

Kalfayan-Panossian Hilda – From the Spoken Dialect of Constantinople to the Structured Written Western Armenian. – The classical written Armenian formed by Machtotz, the Grabar, kept its exclusive statute up to the XII century. Then, in the kingdom of Cilicia, the official language became a combination of a local dialect of the western style with the Grabar: the Middle Armenian. Later in Constantinople /Istanbul/, the Armenian dialect of Constantinople took form by interaction of the local spoken Armenian dialect with the Middle Armenian. All along the XVIII and the XIX centuries, the Mkhitarian Congregation and the young Armenians trained in or influenced by Europe transformed the Armenian dialect of Constantinople into the modern Western Armenian, generating a rich literature up to a brutal stop in 1915. In the sixties, appear two very great poets, Zahrad and Khrakhouni both from Constantinople who raised the formal quality of the Western Armenian to the highest level.

ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆԸ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Գրող, մանկագիր, հեքիաթագիր, մանկավարժ, դպրոցական դասագրքերի հեղինակ Ղազարոս Աղայանի գրական ժառանգության պատկանելի մասն են կազմում նրա լեզվագիտական հոդվածները, որոնցում հեղինակն անդրադարձել է ժամանակի գրական աշխարհաբարի քերականության կանոնավորման մի շարք հարցերի:

Իր լեզվագիտական հոդվածներում Ղ. Աղայանը բազմիցս անդրադարձել է նաև հայերենի մի շարք բարբառների հնչունական, քերականական տարբերություններին, գրական լեզվի ու բարբառների փոխհարաբերություններին:

Ստ. Նազարյանի և Մ. Նալբանդյանի նման Ղ. Աղայանը ևս գրական լեզուն սահմանազատել է բարբառից: Դա որոշակիորեն երևում է «Լեզու» ուսումնաթերթի լեզվի մասին» հոդվածից, որտեղ նա բանավիճում է պոլսահայ անվանի լեզվաբան Հ. Տերվիշյանի հետ: Վերջինս վերոհիշյալ հանդեսում այն միտքն էր հայտնել, թե «ժողովուրդն է ազգային լեզվին անսխալ հորինիչն»:

Հ. Տերվիշյանի այդ մտքի առնչությամբ Ղ.Աղայանը երկու դիտարկում է անում: Նախ՝ Ղ.Աղայանը նկատում է, որ **ժողովուրդ** ասելով Տերվիշյանը նկատի ուներ միայն պոլսեցիներին: «ժողովուրդ ասելով նա միմիայն բնիկ պոլսեցոց է ակնարկում. ուրիշ ոչ մի գավառալեզու՝ Վանի, Զեյթունի, Մշո, Արարատյան, Արցախու, Գուգարաց աշխարհի և այլն, չունի ի նկատի, և լեզվագետ լինելով հանդերձ, չի երևում, որ ծանոթ լինի այդ բարբառներին»¹: Տերվիշյանի մտքի մյուս սխալը Ղ.Աղայանի կարծիքով այն է, որ վերջինս ժողովրդին է համարում ազգային (գրական) լեզվի ստեղծողը: Ըստ Ղ. Աղայանի՝ Տերվիշյանը գրական լեզուն չի տարբերում բարբառից: Ղ. Աղայանը գտնում է, որ գրագետներն են մշակում, հարստացնում և կանոնավորում համընդհանուրի համար հասկանալի գրական լեզուն՝ ի տարբերություն ժողովրդական լեզվի՝ բարբառի, որի ստեղծողն իրոք ժողովուրդն է: Աղայանը, սակայն, անմիջապես էլ զգուշացնում է գրագետներին. չգայթակղվել օտար ու խորթ ոճերով, լեզուն չդարձնել գրա-

¹ Ղ.Աղայան, Երկերի ժողովածու, հ. 3, Ե., 1963, էջ 293:

բար: Գրագետների խնդիրը, ըստ Աղայանի, գրական լեզվի քերականության կանոնավորումն ու հարստացումն է, կոնկրետ բառերի ճիշտ, չաղավաղված ձևերը որոշելն ու դրանք համընդհանուր գործածության համար առաջարկելը, քանի որ «ժողովրդական բարբառով գրելն այնքան էլ հեշտ չէ, ինչպես կարծում ենք, և ժողովրդի միակ բառերը բավական չեն, որ նոքա համարվեին ժողովրդյան կենդանի բարբառ: Այդ գործը ճշտապես կատարելու համար Խ. Աբովյանի պես տաղանդ է պետք, կամ ավելի ուղիղն ասել, հարկավոր է այնպիսի բնավորություն, որ ինչ կերպարանափոխության ուզե ենթարկված լինել նորա մտածողության մեքենան, դարձյալ կարողանար պտտվիլ այնպես, ինչպես մի ժամանակ, քանի որ չէր ենթարկվել այդ փոփոխության»²:

Ղ. Աղայանը հայերենի բարբառների հատուկ քննություն չի ձեռնարկել, բացառությամբ Ղարաբաղի բարբառի³: Նա դրանց հիմնականում անդրադարձել է իր լեզվագիտական գանազան հոդվածներում գրական լեզվի առնչությամբ՝ գրական լեզուն մշակելու գործում առաջարկելով նկատի առնել բարբառներում գործող լեզվական օրենքների կանոնավորությունը:

Ղ. Աղայանը գրական լեզվի և բարբառների փոխհարաբերության հարցը հասցնում է մինչև գրերի գյուտի ժամանակաշրջան. «Ինքը՝ Մեսրոպյան, ինչպե՞ս արավ, արդյոք մեկ բարբառի՞ համաձայնացրեց իր տառերը, թե՞ շատ: Քանի որ Մխիթարյանք այսօր այնքան են հասունացած, որ բևեռագրեր և նախամայր լեզուներ են հետագոտում, էլ չեն պնդում, որ հայր Ադամի լեզվով են խոսում, գիտե՞ն անշուշտ, որ Մեսրոպյի ժամանակ ևս հայոց մեջ շատ բարբառներ կային: Արդ, հարկավոր չէ՞ մեզ գիտենալ, թե՞ այդ շատ բարբառներից ո՞րն ընտրեց Մեսրոպյը կամ ի՞նչ բան է ոստանիկ ասված լեզուն. դա մի ժողովրդական բարբառ է, թե՞ մի տեսակ գրոց լեզու՝ ժողովրդին անհասկանալի: Ենթադրենք մի բոլակ, որ այդ մասին ոչինչ չգիտենք, այլ այսպիսի մի հարց առաջարկենք մեզ, թե՞ այժմյան շատ բարբառներից ո՞րն է ամենից մոտիկը գրոց լեզվին թե՛ իր բառակազմությամբ

² Նույն տեղում, էջ 283:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 453-460, նաև Գրականության և արվեստի թանգարան այսուհետև՝ (ԳԱԹ), Աղայան Ղազարոսի ֆոնդեր, հ.հ. 48, 49:

և թե՛ իր հնչյունաբանությամբ: Ես պնդում եմ, որ ամենից մոտիկը Արարատյանն է, կբերեմ և իմ ապացույցս»⁴:

Ղ. Աղայանը բարբառներին անդրադարձել է, իր իսկ խոսքերով ասած, կենդանի լեզվի օրինաչափությունները պարզելու համար: Նրա ուշադրության կենտրոնում են եղել միայն չորս բարբառներ՝ Արարատյան, Թիֆլիսի, Պոլսի և Ղարաբաղի: Այս բարբառները նա քննել է առաջին հերթին հնչյունական տեսակետից՝ ցույց տալու համար, թե դրանցից յուրաքանչյուրն ինչ տարբերություններ է դրսևորում մեսրոպյան հնչյունական համակարգից:

Ծագումով լինելով դարաբաղցի, ապրելով և ստեղծագործելով թիֆլիսյան միջավայրում՝ Ղ. Աղայանը, սակայն, մի ներքին բնագոյով զգում և պաշտպանում էր Արարատյան բարբառի՝ գրական լեզու լինելու իրավունքը: «Հայերեն հնչյունների մասին» հոդվածում, ինչպես արդեն ցույց ենք տվել մեր ատենախոսության «Ղ. Աղայանը հայերեն հնչյունների մասին» բաժնում⁵, վերջինս քննում է վերոնշյալ բարբառները հնչյունական կողմից, բացատրում նրանց կրած հնչյունական փոփոխությունների պատճառները: Ղ. Աղայանը Պոլսի, Թիֆլիսի, Ղարաբաղի բարբառների հնչյունական փոփոխությունները բացատրում է այն ժողովուրդների լեզուներով, որոնց ազդեցությանը երկար ժամանակ ենթարկվել են հիշյալ բարբառները: Իսկ Թիֆլիսի վրացագետ երիտասարդների ուշադրությունը փորձում է բևեռել բարբառի ավելի լուրջ ուսումնասիրման վրա, որով «կարողանան այնպիսի կանոններ դուրս բերել, որ մեզ կօգնեն նաև մյուս բարբառների քննության ժամանակ» (ընդգծումը Ղ. Աղայանինն է)⁶:

Այսպես՝ ըստ Ղ. Աղայանի՝ Թիֆլիսի բարբառը անհամեմատ անադարտ է պահպանել մեսրոպյան հնչյունները: Ղ. Աղայանը դրա պատճառը համարում է վրացերենը, որից էլ ազդվել է բարբառը: Ղ. Աղայանը նախ հիշեցնում է, որ վրացերեն տառերը ստեղծել է Մեսրոպ Մաշտոցը: Վրացերենը հնչյունական կազմով մոտ է հայերենին. վրացերեն այբուբենն սկսվում ու վերջանում է հայերենի նման. Վրացերենը հայերենի նման ուներ երեսունվեց հնչյուն: Աղայանն ասածը

⁴ Ղ. Աղայան, *Երկերի ժողովածու*, հ. 3, էջ 304-305:

⁵ Տե՛ս Ա. Հակոբջանյան, *Ղազարոս Աղայանի լեզվագիտական հայացքները*, Ե., 2009, էջ 19-29:

⁶ Ղ. Աղայան, *Երկերի ժողովածու*, հ. 3, էջ 243:

հաստատում է՝ համեմատելով հայերեն և վրացերեն, պարսկերեն, ռուսերեն, գաղիերեն լեզուների հնչյունները, ցույց տալով, որ մեր հնչյուններին ավելի շատ համապատասխանում են վրաց. Հնչյունները: Վրացերենը չունի *n, և, ը, ո, ի* հնչյունները, որի հետևանքով էլ, ըստ Աղայանի, Թիֆլիսի բարբառից բացակայում են այդ հնչյունները: Այսպես՝ *ձմեր, ամար, զար, սարույց, միր, ձիր, ծիր, քիզ, էկավ, էլավ, էկեղեցի, վուրթի, վուչ, օսկի, բարութին, գորութին, իր* և այլն:

Ղ. Աղայանը, սակայն, այս կորուստը մեծ չի համարում Պոլսի բարբառի հնչյունական կազմի կորստի համեմատությամբ: Նա այն տեսակետն է հայտնում, թե Պոլսի բարբառի վրա ազդել է տաճկերենը (թուրքերենը): Պոլսի բարբառը, ըստ նրա, մեծ փոփոխություններ է կրել սկսած Ռուբինյան իշխանության օրերից, և ապա ամբողջությամբ ենթարկվել տաճկերենի «ոճին»: Այս բարբառը տաճկերենի ազդեցությամբ կորցրել է հայերենի եռաստիճան բաղաձայնական համակարգի խուլ հնչյունները՝ դրանք վերածելով ձայնեղ բաղաձայնների, ձայնեղներն էլ դարձել են շնչեղ խուլեր: Միայն բուն շնչեղ խուլերն են պահպանել մերոպյան արտասանությունը: «Ոչ մի տաճկի, պարսկի, ռուսի և գերմանացու չես կարող մեր կողմի հայի հնչմամբ արտասանել տալ *ձ, ծ, ճ* հնչյունները: ... Ինչ դժվարություն որ ունին այդ տառերը հնչելու համար մի այլազգի, նույն և մի դժվարությունն է կրում Պոլսում ծնած ու սնած հայը, բայց ոչ մշեցին, ոչ վանեցին և արդվինցին»⁷: Այսպիսով, ըստ Աղայանի, Պոլսի բարբառում կորուստով ու հնչյունների շփոթմամբ են արտասանում հայերեն որոշ հնչյունները:

Տառադարձության այս շփոթը նկատել է նաև մեծանուն լեզվաբան Ա. Այտընյանը և խոստովանել, որ այդ կողմից Արարատյան բարբառը հավատարիմ է մնացել մերոպյան արտասանությանը: Ա. Այտընյանը նկատում է, որ այդ խառնակությունը պոլսահայ բարբառում սկսվել է ավելի քան հարյուր տարի առաջ: Ա. Այտընյանը, շփոթված լինելով ստեղծված իրավիճակից, պոլսահայերին խորհուրդ է տալիս հետևել երկու ուղղագրության. «Հին լեզվաց (այսինքն՝ հունարեն և լատիներեն) բառերը թարգմանել ըստ նախնյաց ուղղագրության, իսկ նոր լեզվի բառերը՝ ըստ այժմյան հնչման արևմտյան հայոց»⁸: Ղ. Աղա-

⁷ Նույն տեղում, էջ 240:

⁸ Նույն տեղում, էջ 253:

յանին խիստ մտահոգում է Այտընյանի նման մոտեցումը, որովհետև դրանով արևմտյան և արևելյան ուղղախոսությունների և ուղղագրությունների միջև տարբերություն դրվեց: Մինչդեռ, ըստ Ղ. Աղայանի, Ա. Այտընյանը կարող էր և պետք է վերջ դներ նման տառադարձությանը: «Հարյուր տարու չափ պոլսեցիք չեն ունեցել հայ վարժապետներ, այլ կա՛մ լատին, կա՛մ լատինացած հայեր են եղել դոցա վարժապետները և կա՛մ աղճատ հայախոս անգղիացի միսիոներներ: Այս օտար, խորթ մարդիկ, իրանց բերանն առնելով հայկական դպրությունը, մի նպատակ են ունեցել միայն՝ լեզուն կրոնափոխության միջոց շինել և ոչ թե հայոց լեզուն մշակել: 1714 թվականին Հռովմի «հավատո տարածման» տպարանում տպված լատիներենից հայերեն բառարանի միտքն ի՞նչ է եղել, որի մեջ ուրանում է Հայկազյան իշխանությունը, հայիոյում հայերին և փոխանակ գրելու Բագրատունիք, գրում է Փաքռատունիք և մյուս բառն էլ այսպիսի տառադարձությամբ աղճատում: Ուրեմն հետևե՛նք այդ խարդախ վարդապետին, որ ինքզինքը անվանում է Հակոբոս վարդապետ Հիսուսյան կարգեն...»⁹:

Իսկ բարբառախոս գրագետները, ըստ Աղայանի, անտեղյակ այս ամենից, «զարդարում են իրանց տաճիկ բարբառը Փարիզի նորելուկներով... Մեկն ասում է՝ եկեք էլ այսուհետև այսինչ բառը գործ չդնենք, մյուսն ասում է՝ այսինչ մասնիկը տգեղ է, հարկավոր է ոչնչացնել բոլորովին: Մեզ էլ խորհուրդ են տալիս, որ մեր ումեմ վերջավորությունը վերցնենք և դորա փոխանակ բայի սկզբումն ավելացնենք կը մասնիկը որպես ներկա ժամանակի մասնիկ»¹⁰: Պարսկահայ բարբառով համապատասխան օրինակ բերելուց հետո Աղայանը հարց է տալիս. «Ասացեք խնդրեմ՝ ո՞ր ազգի լեզվի մեջ կա այս տեսակ ներկա: Այս էլ հնչյունը չէ, որ լսողությունից կախում ունենա, մի թե ըմբռնում, դատողություն էլ չունին մեր պոլսեցիք»¹¹:

Ղ. Աղայանին հուզողը, ինչպես տեսանք, նախ և առաջ այն է, որ ցույց տա, թե Արարատյան բարբառն է ամենից հարազատ մնացել մեսրոպյան հնչյունական համակարգին:

Այս բարբառը, ըստ Ղ. Աղայանի, պահպանել է մեսրոպյան բոլոր հնչյունները: Եվ առհասարակ, Ղ. Աղայանը գրական արևելախա-

⁹ Նույն տեղում, էջ 254:

¹⁰ Նույն տեղում, էջ 250:

¹¹ Նույն տեղում, էջ 250:

յերենի իրողությունները քննում է՝ ելնելով Արարատյան բարբառի քերականական և հնչյունական դրսևորումներից: Ասվածի վկայություններն են նրա «Հայկական հնչյունների մասին», «Ն տառի մի քանի հատկությունքը մեր աշխարհաբարի մեջ», «Լեզու» ուսումնաթերթի լեզվի մասին», «Տառադարձության խնդիր», «Քննադատության տեղ աչքակապություն» հոդվածները: Վերջինում Ղ. Աղայանը քննում է բայի ժխտական ձևերը հիշյալ բարբառներում՝ ելակետ ունենալով Արարատյան բարբառի լեզվական իրողությունները:

Ինչպես տեսանք, գրական լեզվի ընտրության խնդրում Ղ. Աղայանը պաշտպանում է Արարատյան բարբառի իրավունքը, սակայն նկատելի է, որ քաջ տիրապետելով Ղարաբաղի բարբառին՝ ավելի շատ անդրադառնում է նրա լեզվական իրողությունների քննությանը:

Ըստ Ղ. Աղայանի՝ Արարատյան և Ղարաբաղի բարբառների համեմատությունը նման է «աթենացոց և սպարտացոց» լեզուների տարբերությանը. «Ղարաբաղի բարբառի մեջ տիրում է սաստիկ լակոնական ձևը, այս է նորա ոգին և կենդանությունը»¹²: Ղ. Աղայանը Ղարաբաղի բարբառի լակոնիզմով էլ բացատրում է այն հանգամանքը, որ այն չունեցավ «յուր անմահ Աբովյանը, վասն զի քաջության կողմանե պակասություն չկա, հերոսների թիվը չսփազանց շատ են, որոնց փոքրը մեծ է, քան թե Աղասին: Լեզուն է, որ տաղանդ է ծնում գրականական և ոչ տաղանդը՝ լեզու: ... Բայց ո՞վ էր տվել նորան այս զգացումը, այս լեզուն՝ ժողովուրդը»¹³: Ղ. Աղայանը հոգու թելադրանքով գրված գրական երկն է միայն կենդանի համարում: Այդպիսին էր, ըստ նրա, Խ. Աբովյանի «Վերքը»:

Ղարաբաղի բարբառի լակոնիզմն է պատճառը, որ, ըստ Ղ. Աղայանի, բարբառն ըմբռնելի է միայն դարաբաղցու համար: «Ղարաբաղցին շատ անգամ չի էլ խոսում, մի գլխի շարժումով, ձեռքի կամ ոտքի ցուցմամբ է հայտնում յուր միտքը, և այն շատ ընդարձակ միտք, տեսնողն արդեն գլխի է ընկնում, թե ինչ է ուզում ասել: Շատ անգամ մի բառ կասե միայն կամ միջարկություն և դորանով մի ամբողջ պարբերություն կհասկացնե: Արագ և ճարտար խոսիլ չունի աշտարա-

¹² Նույն տեղում, էջ 265:

¹³ Նույն տեղում, էջ 265 -266:

կեցու պես, մի քանի բառ կասե ծանր ու բարակ, այն էլ վերջին վանկերը թողնելով»¹⁴:

Ղ. Աղայանը նկատում է, որ Ղարաբաղի տարածքի հինգ գավառներում (Դիզակ, Վարանդա, Խաչեն, Ջրաբերդ, Գյուլիստան) միակերպ չեն խոսում, և դրանց տարբերությունը թեև շատ մեծ չէ, բայց քիչ էլ չէ: Իր հողվածներից մեկում Ղ. Աղայանը խոստովանում է, որ բավական ժամանակ է, ինչ ուսումնասիրում է Ղարաբաղի բարբառը և արդեն վերջացնում է նրա «մեկ մահալի՝ Խաչենու բարբառի քերականությունը և բառարանը, որից հետո սկսելու եմ մյուս մահալների և քաղաքինը»¹⁵: Ընդ որում՝ այդ տարբերությունը Ղ. Աղայանը բառերի և դարձվածքների տարբերությամբ է պայմանավորում, իսկ հնչյունական առումով բարբառի խոսվածքները որևէ տարբերություն չեն դրսևորում:

Նրա կարծիքով՝ «Ղարաբաղի բարբառի վերա ազդող տարրը եղել է պարսիցը, սակայն չպետք է մոռանալ, որ աղվանից լեզուն նույնպես դառել է այդ բարբառի բաղադրական մասներից մինը: Բայց ո՞վ գիտե, աղվանից լեզուն մի առանձին լեզո՞ւ էր, թե հայկական բազմաճյուղ բարբառներից մինը: Ահա մեկ նոր տարակարծության աղբյուր, որ ես հարկավոր եմ համարում առաջարկել մեր լեզվագետներին և ուսումնասերներին լուծելու»¹⁶:

«Ղարաբաղի բառարանը» ձեռագիր աշխատությունը¹⁷ բաղկացած է երկու մասից: Առաջին մասում Ղ. Աղայանը քննում է բարբառի քերականական որոշ, ավելի ստույգ՝ հնչյունական իրողություններ: Երկրորդ մասում տրված է բարբառի բառարանը՝ համապատասխան բացատրություններով:

Առաջին մասն սկսվում է բարբառի շեշտի քննությամբ: Շեշտը Ղարաբաղի բարբառում ընկնում է նախավերջին վանկի ձայնավորի վրա, ընդ որում՝ եթե բառն գաղտնավանկ ունի, ապա այն չի շեշտվում: Օրինակ՝ *տա յտակ, տըղա՛, մըրմընջա՛ ՚, կըրա՛ կ* և այլն: *Ա, է, ե* ձայնավորները, շեշտակորույս լինելով, դառնում են *ը*, ինչպես *ա՛ ըծաթ – ըրծա՛ թէն, ըրծա՛ թաւ. ա՛ ըկաթ – ըրկա՛ թաւ, ըրկըթնէ՛ ը*.

¹⁴ Նույն տեղում, էջ 266 - 267:

¹⁵ Նույն տեղում, էջ 453:

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ Տե՛ս ԳԱԹ, Աղայան Ղազարոսի ֆոնդեր, հհ. 48, 49:

է՛րգեան – ըրգընա՛ւուն, եէ՛ղ – երղըծեռ՛ւ և այլն: Օ ձայնավորը հնչյունափոխվելով դառնում է ու, ինչպես՝ օ՛ղ – ողէ՛րաւ, ողէ՛րան, օ՛շափ – ուշրփնէ՛ր, օ՛նք – ունքա՛ւէջ: Կոչականների շեշտն ընկնում է առաջին վանկի ձայնավորի վրա, ինչպես՝ Հըրա՛բէղ, Մա՛րքարիդ:

Ղ. Աղայանի վկայությամբ՝ Ղարաբաղի բարբառն ունի շուրջ 60 հնչյուն: Ղարաբաղի բարբառի բաղաձայնական համակարգը երկաստիճան ձայնեղազուրկ է. այստեղ չկան *բ, գ, դ, ջ* հնչյուններով սկսվող հայերեն բառեր: Օրինակ՝ *բալքյամ* (գուցե), *բիրդան* (միանգամայն), *բոլ ա* (բավական է), *բողագ* (կոկորդ): Թերևս բացառություն են կազմում *գիդալ* (գիտենալ) և *գիւրգ* (գոգ) բառերը, սակայն երկու դեպքերում էլ *գ*-ն, ըստ Ղ. Աղայանի, հնչվում է իբրև *գեաֆ* և ոչ *գ*: Այդ հնչյուններով սկսվող բառերը Ղարաբաղի բարբառում վերածվել են համապատասխանաբար *պ, կ, տ, ծ, ճ* հնչյունների: Օրինակ՝ *պերան* (բերան), *կյարի* (գարի), *կլոխ* (գլուխ), *տենակ* (դանակ), *ճուր* (ջուր): Իսկ *պ, կ, տ, ծ, ճ, ձ* հնչյուններով էլ օտար բառեր չկան: Մրա պատճառն էլ Ղ. Աղայանը բացատրում է նրանով, որ Ղարաբաղին հարևան ժողովուրդները չեն ունեցել այդ հնչյունները:

Չայնեղ *ձ*-ն Ղարաբաղի բարբառում վերածվել է *ծ*-ի: Օրինակ՝ *ծյուն* (ձյուն), *ծյու* (ձու), *ծեն* (ձայն) և այլն: Բարբառում *ձ*-ով սկսվող փոխառություններ էլ չկան վերը նշված պատճառով: Սակայն հայերեն բառերում *ձ*-ն ն-ից հետո պահպանվում է: Օրինակ՝ *տանձ, խնձոր, խանձուղ* (փայտի կիսաայրված, սևացած մասը) և այլն:

Ի տարբերություն Թիֆլիսի և Արարատյան բարբառների՝ Ղարաբաղի բարբառն ունի «բարակ» ձայնավորներ, որոնք դժվար է նույնությամբ գրի առնել և իրենց արտասանությամբ ներկայացնել ընթերցողներին: Ըստ նրա՝ այդ ձայնավորները կարելի է կարգավորել հետևյալ կերպ.

Չաստ	Բարակ
Ա	ային պարսից
Է	իե (միացած)
Ը	եր (միացած)
Օ	էօ (միացած)
Ու	իու (միացած)

Գտնվելով զանազան բաղաձայնների մոտ՝ այդ «բարակ» ձայնավորները ազդում են նրանց վրա և պայմանավորում բառերի

իմաստները: «Ասում են՝ *պէլ* (пэль), որ կնշանակե գիծ, խենթ, և *պել* (пэль), որ կնշանակե կնքահայր, *ծօր* – մեղրի ծոր, և *ծրօր* – ձոր»:

Ամենից հետաքրքրականը Ղ. Աղայանը համարում է *n* տառի դրսևորումները՝ *ւէ* (վէ), *ւը* (վը), *ւա* (վա)¹⁸: Բազմիցս նշելով, որ բարբառով կարելի է վերականգնել մեր լեզվի բառերի նախնական ձևերը՝ այստեղ էլ Ղ. Աղայանը ընթերցողի ուշադրությունը սևեռում է այն հանգամանքի վրա, որ գրական լեզվի *n*-ն Ղարաբաղի բարբառում վերածվել է *ւ* (վ) ձայնի, մի հանգամանք, որը խոսում է այն մասին, որ բառասկզբում *n*-ն սկզբնապես եղել է *ւօ* (վօ), և ոչ թե *օ*: Ուստի բառասկզբում հնչում է *ւէ* (վէ): Փոխանակ ասելու՝ *որդի, ոտն, ոսպ, ոսկի*, ասում են՝ *վէրթի, վէննը, վէսպ, վէսկէ*: Բառամիջում հնչվող *վօ*-ն ևս դառնում *վէ*, ինչպես՝ *գօրավոր, զինվոր – գօրավէր, զինավէր* և այլն:

Չետաքրքիր դրսևորում ունի *որ* բառը: Որպես դերանուն՝ այն դառնում է *ւէր*, իսկ որպես շաղկապ՝ *ւար*: Ղ. Աղայանը նկատում է, որ այս տարբերությունը դրսևորվում է միայն խաչենցիների խոսվածքում (այդպես էր խոսում Բաղդասար մետրոպոլիտը – Ղ.Ա.): Օրինակ՝ *n ր տունը – ւէ ր տունը, որ տանես – ւար տանես*: Այս դրսևորումները առաջացնում էին շուշեցիների զարմանքը, որոնք երկու դեպքերում էլ միայն *ւէր* էին գործածում: Այս դեպքում խաչենցիների խոսվածքը բառային տարբերություն է դրսևորում, որը մինչև օրս էլ այդպես է:

Ղ. Աղայանը նկատում է, որ Ղարաբաղի բարբառը առհասարակ բազմատեսակություն շատ ունի և շատ դեպքերում խիստ հեռանում է գրաբարից: Բառասկզբում *h*-ն ևս կարող է դառնալ *վ*: Օրինակ՝ *հող, հոտ, հոր – վէղ, վէտ, վէր*: *Օ* ձայնավորը մի տեղ դառնում է *օ* և *եօ*՝ *շլոր – շլեօր, ձոր – ձեօր, գող – կեօղ* և այլն, շատ տեղերում *ու*՝ *ցեխոտ – ցեխուտ, ախոտ – ախուտ, խաղող – հաղուղ, քարոզ – քարուզ*, մի այլ տեղ՝ *իւ*՝ *զու՛կ – կիւ՛մ, զումեշ – կիւմաշ* և այլն, և ընդհակառակն՝ Արարատյան բարբառի *ու*-ն դառնում է *օ*, ինչպես՝ *ուտ – օտ, շուն – շօն, քուն – քոն, թուխ – թոխ, գլուխ – կլլոխ* կամ *կլեոխ, թուշ – թօշ, փուշ – փօշ*: Այս օրինակափությունը անխտիր չի վերաբերում Արարատյան բարբառի բոլոր բառերին, քանի որ դրանցից շատերը պարզապես չկան Ղարաբաղի բարբառում. *շուտ* բառի փոխարեն Ղարաբաղի բարբառում գործածում են *ճէլի, կանուխ*, իսկ *ջուր* բառում փոխվում է ոչ միայն Արարատյան բարբառի *ու*-ն, այլև *ջ*-ն՝ *ճյուր*:

¹⁸ Տե՛ս Ղ.Աղայան, նշվ. աշխ., էջ 453-456:

Սակայն *ու*-ն այստեղ էլ, Արարատյան և այլ բարբառների նմանությամբ, ձայնավորից առաջ դառնում է *ւ* կամ *ը*, ինչպես՝ *տարուս, գործուած, գործուող, տրուս*:

Այսպիսով, առավել հանգամանորեն ուսումնասիրելով Ղարաբաղի բարբառը, առանձնապես նրա հնչյունաբանությունը՝ Աղայանը մատնացույց է անում, որ այդ բարբառում շատ հնչյուններ արտասանական զգալի տարբերություններ ունեն գրական լեզվից և մյուս բարբառներից: Դրանք նա որակում է *հաստ, միջին ու բարակ* տերմիններով, որոնք հաճախ նաև պատճառ են դառնում բառիմաստի փոփոխության: Այսպես՝ *ղա* դերանունն ունի *հաստ, միջին ու բարակ* հնչողությամբ արտասանություն: Երբ *ղա* դերանունն արտասանվում է բարակ հնչողությամբ, փոխվում է նաև բառիմաստը՝ *ղա*“, ձայնարկություն, որով ձիուն կամ ավանակին շարժվել են պարտադրում: Արտասանական նման տարբերություններ են ունենում նաև որոշ բաղաձայններ: Օրինակ՝ *չգիտեմ*-ը դառնում է *գրուղում չում, ձորը՝ ձրոր* (ձոր) և *ծոր* (մեղրի ձոր) և այլն: Ղ. Աղայանը այս ամենը փորձել է ներկայացնել բարբառային նշաններով: Այս սկզբունքով էլ նա ստեղծել է «Ղարաբաղի բառարան» աշխատության երկրորդ բառարանային մասը:

Акобджанян Анаит – Газарос Агаян об армянских диалектах. –

В статье представлены лингвистические взгляды армянских диалектов поэта, детского писателя, сказочника, учителя Газароса Агаяна. Рассмотрены четыре диалекта и языковые реалии Полиса, Арабата, Тифлиса и Карабаха. Агаян обратился к диалектам, чтобы показать, какой из них остался более близок к Месропской фонетической системе. Более тщательно Агаян исследовал Карабахский диалект.

Hakobjanyan Anahit – Ghazaros Aghayan about Armenian Dialects. – This article presents the prominent Armenian writer, children's author, fairy tale writer, and teacher Ghazaros Aghayan's linguistic views on Armenian dialects. It examines the dialects and linguistic realities of Constantinople, Ararat, Tbilisi, and Karabakh. Aghayan referred to these dialects as connected with literary language by showing which of the main Armenian dialects had more similarities with Mesrop Mashtots's phonetic system. More thoroughly Gh. Aghayan referred to the Karabakh dialect.

Մարգարյան Արմեն (Հայաստան,
ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ)

**ԱՐՏԱՍԱՆԱԿԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԻԾԱԿԱՆ ՄԱՆՐԱՊԱՏՈՒՄՆԵՐՈՒՄ
ԵՎ ԶՎԱՐՃԱՄՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Առօրյա կյանքում հաճախ ենք առնչվում զավեշտալի իրավիճակների՝ կապված հնչարտաբերման տարատեսակ դրսևորումների (բաղաձայնների կուտակում, երգեցիկ տոն և երկարացման երանգ, ձայնեղների իլացում ու խուլերի ձայնեղացում են) հետ, որոնք էլ, հետագայում վերապատմելիս վերաձևվելով ու վերափոխվելով, ժողովրդի մեջ սկսում են շրջանառվել իբրև անեկդոտ-զվարճախոսություններ: Դրանք հայերենի յուրաքանչյուր բարբառում ու խոսվածքում ինքնատիպ բառագանձով ու հնչարտաբերման առանձնահատուկ գծերով են ներկայանում՝ առիթ հանդիսանալով այլ տարածաշրջանների մարդկանց կողմից զանազան զավեշտալի պատմությունների ստեղծման: Անդրադառնանք հայկական անեկդոտ-զվարճախոսություններում հնչարտաբերմամբ զավեշտ արտահայտելու մի քանի բնորոշ դրսևորումների:

Հայ ժողովրդական երգիծական ստեղծագործությունների համատեքստում իրենց ինքնատիպությամբ առանձնանում են Լոռու անեկդոտ-զվարճախոսությունները: Վերջիններիս մեջ էլ ուրույն խումբ են կազմում զուտ լոռեցիների խոսվածքի հնչարտաբերմանը հատուկ երկարացման հնչերանգով ու երգեցիկ տոնով երկխոսական կառույցները: Այդպիսի երկխոսական զվարճախոսություններում լոռեցու ականա հարցումն էլ դառնում է անսպասելի ծիծաղի հենքը.

- *Անձրև ա գալի: – Դռանըըը ...*
- *Կռշիկըս սեխմըմ ա: – Ոտիիի դ...*
- *Ծննդատունը ո ըտեղ է: – Կընանտոո նգ...*
- *Մանկապարտեզը որտե դ է: – Ըրեխասա նգ...*
- *Գետի վրա կամուրջ են գցում – լենքովըըը ...*
- *Զվածեղ սարքե մ: – Զվոռո վ ...*
- *Քանի՞ երեխա ունես: – Մարթիցըըը ս...¹:*

¹ Ա.Մարգարյանի անձնական հավաքածու:

Նմանատիպ ստեղծագործությունները եթե փորձեն էլ, անհնար է այլ տարածաշրջանի վերագրել: Անհնար է նաև դրանք գրական հայերեն դարձնելը, քանի որ այդ դեպքում զվարճախոսությունները անմիջապես կկորցնեն իրենց համն ու հոտը :

Մեր գրանցած զվարճախոսություններից մեկում էլ անսպասելի ծիծաղը դրսևորվում է դարաբաղյան բարբառին հատուկ հնչարտաբերմամբ: Հենց դա էլ «նպաստում է» հայերենի օգնությամբ օտարալեզու բառի ուղղագրության «ստուգաբանությանն ու հիմնավորմանը».

Ղարաբաղցի մեկը մեկին հարցնում ա, ասմա.

– *Մերտվեցը ո՞նց ա զրրվըմ. յո-ով, թե՞ յ-ով:*

Ասմա՝ ը-ով:

Ասմա՝

– *Ընչի՞ ը-ով:*

Ասմա՝

– *Մտուգաբանվող բառ ա. մը՛ ռեկ ա՞:*

Հայերենի այբուբենի տառերից մեկին՝ Ի-ւ, տրվող անվան /վյուն-հյուն/, և Ղարաբաղի և Գորիսի բարբառներով *հյուն* /հոն – հոնի ծառի պտուղը/ բառի արտաբերման համանունությունը հետևյալ զվարճապատումի ստեղծման հիմք է հանդիսացել.

– *Դարչի՛ն ջան, ո՞նց էր ուսումնարանը. հավանեցի՞ր, մատա՛ղ, – հարցրեց մայրը նոր ուսումնարան ուղարկած երեխային:*

– *Հա՛, այեա ջան, շատ լաւն էր. համ էլ գիդաս ի՞նչ, աճի ջան, գրիս միջին լիւ /լ/ էլ կար, հիւն /ւ/ ն էլ ...ա՜յ:*

– *Բա՜, մատա՛ղ, էդպէս ա. թէ որ լաւ կարդաս, տանձ էլ կըլի, խաղող էլ՞:*

Հայ ժողովրդական երգիծական մանրապատումներում և զվարճախոսություններում զավեշտը ստեղծվում է նաև որոշ բարբառներին հատուկ ձայնեղների խլացմամբ և խուլերի ձայնեղացմամբ.

Համշենցու հետ ամուսնացածին հարցնում են.

– *Կարողացա՞ր կնգանդ բարբառը փոխել:*

– *Ի՞նչ փոխել. էսա 40 տարվա կնիկս ա, հնար չեղավ հասկաց-*

² Նույն տեղում:

³ *Ծիծաղի տոպրակ*, աշխատասիրեց դպիր Ս.Ս.Շահազիզեան, Թիֆլիզ, 1892, էջ 65:

նեւ, որ *Գրիշին կրիշ չասի, կրիշին /ռուս. 'կտուր/'* Գրիշ...⁴:

Վանեցիների բարբառում որոշյալ գոյականների ը-ն չարտաբերելը ասիա թե ինչպես է «մեկնաբանում» զվարճախոսությունը.

– *Միանգամայն ճիշտ ի... Մենք վանեցիներս այդ տառը խնայողությամբ կքործածենք⁵:*

Վանի բարբառում *բ,գ,դ,ձ,ջ* ձայնեղ բաղաձայնների դիմաց դրսևորվում են *պ,տ,կ,ծ,ճ* խուլեր, որն էլ այդ բարբառով արտաբերած ձեթ-ը, արևելահայոց շրջանում չընկալվելով, հարանունությամբ շփոթություն է առաջացնում ձեթ-ի հետ տեղիք տալով երկխոսական զվարճապատումի ստեղծման:

Օէթ ի, թէ պէտ ի

Երևանցի – լա վ աղ, լա վ աղ...

Վանեցի պառավ – Քա տղա, էտա ի նչ ի կրծախես:

Երևանցի – Մայրի՛ գ, աղ էմ ծախում:

Վանեցի – Պէ՛ խէմ /բեր նայեմ/, պէ՛ խէմ, ծէ՞թ ի, թէ պէ՞տ ի:

Երևանցի – Մայրի՛ գ, ձէթ չէմ ծախում, աղ էմ ծախում:

Վանեցի – Աղէկ, կրխասկընամ, պէ՛ խէմ, ծէ՞թ /մանր/ ի, թէ՞ պէտ /խոշոր/ ի:

Երևանցի– So մայրի՛ գ, ասում էմ՝ ձէթ չէմ ծախում, աղ էմ ծախում:

Վանեցի– Քա տղա՛, աղէկ... կրխասկընամ... պէ՛ խէմ, ծէ՞թ ի, թէ պէտ ի⁶:

Բայազետի բարբառին հատուկ է շրթնայնացած *մ* ձայնավորը: Զվարճապատում-զվարճախոսություններից շատերում էթե այդ հնչյունի արտաբերման հնչերանգը չպահպանվի, ասելիքը ամբողջ եությամբ չի կարող տեղ հասցվել.

Քյավառցին երէխին Լոնդոն ա տանում, մեկի տանը թողնում ա, որ մի տարի հետո լավ անզլերեն սովորի, նոր գա տանի:

Մի տարի հետո հերը գնում ա տղին բերելու: Դռան զանգը որ տալիս ա, դուռը տանտիրոջ նեզր ծառան ա բացում, քյավառցին հարցնում ա.

⁴ Ա.Սարգսյանի անձնական հավաքածու:

⁵ *Ծիծաղում են վանեցիները*, Կազմողներ՝ Վ.Հարությունյան, Ն.Մելիքյան, Ե., 2006, էջ 10:

⁶ **Գ.Զահուկյան, Ֆ.Խլղաթյան**, *Հայոց լեզու*, դասագիրք հանրակրթական դպրոցի 10-րդ դասարանի համար, Ե., 1998, էջ 100:

– Ա՞ռտակը տանն ա:

– Չէ, – ասմա էս նեզրը, – գոացե խոացի...⁷

Բայազետի բարբառի խոսվածքներից մեկում /Քյավառ-Գավառ/ Ռոզա-ն արտաբերվում է Հըռոզ, որն էլ զվարճապատումի ստեղծման և զավեշտի առաջացման պատճառ է դարձել:

Մի էրեվանցի տղա ուզքմ ա մի գեղացի ախշըկա խոսացնի:
Մոտենքմ ա, թե՛

– Քո՛ւր ջան, անունըդ ի՞նչ ա:

Էս աղջիկը ձեն չի հանքմ:

– Լա՛վ, գոնե առաջի տառն ասա:

Բա թե՛ Հ:

– Հասմիկ ա՞:

Աղջիկը ծրտտացնքմ ա, թե՛ չէ՛:

– Հերիքնա՞ գ:

Էլի ա ծրտտացնքմ:

– Բա ի՞նչ ա:

Հըռոզ...⁸:

Երգիծական մանրապատումներում և զվարճախոսություններում զավեշտ ստեղծվում է նաև արտասանության կերպի միջոցով՝ արագ և դանդաղ՝ դրանով իսկ ձգտելով հակառակ տպավորությունն ստեղծել:

Կընիկ մը կոյս /իբր/ ախճըգոնը կովերգովում էր, հայսին վնր գուտսնր:

– Հայսս /հարսս/ օրը լա՛թ /լվացք/ մը, օրը լա՛թ մը... Ամա ախճիգրս շապտուն /շաբաթը/ շրպըրտքը լաթ մը, շապտուն շրպըրտքը լաթ մը՝ /աղջկան վերաբերողը շատ արագ-արագ է ասվում, հարսինը՝ շատ դանդաղ/:

Բարբառով արտաբերած խոսքը՝ արագախոսությամբ, զավեշտի է վերածվում նաև, եթե խախտվում է արտասանական դադարը: Տարբեր տարածաշրջանների մարդիկ իրար ծաղրելիս օգտագործում են նմանօրինակ կառույցներ: Օրինակ՝ լոռեցիք շիրակցիների լեզուն տնագ անելիս ասում են.

⁷ Ա.Սարգսյանի անձնական հավաքածու:

⁸ Նույն տեղում:

⁹ Հ.Գուրուկյան, Համշենահայ բանահյուսություն, Ե., 1991, էջ 51:

– *Քակեցի փափաղըդ դիր, նոր գնա...քա կեցի փափաղըդ դիր, նոր գնա...*

Տարբերակ՝

Շիրակցի հարևանուհին, ցանկանալով իր բարեկամուհուն հյուրասիրել տաք կարկանդակով, ասում է.

*Քակեցի, տաք-տաք կեր, նոր կերթաս...*¹⁰:

Շիրակցիներն էլ լոռեցիների լեզուն ծաղրելիս հակադարձում են...

– *Ինչքամ ասըմ եմ՝ ածիլ մի, ածել եմ, ածըմ ա...*¹¹:

Գորիսի և Ղարաբաղի բարբառներում զավեշտը ստեղծվում է քմայնացմամբ և համանունության դրսևորմամբ.

Ղարաբաղցի թամադան /տարբերակներից մեկում՝ նախագահը/ մի քեֆի վերջում դիմում ա սեղանակիցներին, ասում ա.

– *Շըդովո րոդ ջան, էս մի պյաժակով էլ էկեք խմենք պըլյորիս /իմա՝ բոլորիս/ կենացը...*¹²:

Անեկոտ-զվարճախոսություններում զավեշտի աղբյուր կարող է դառնալ նաև բաղաձայների կուտակումը: Այսպես, «*Մենք խայ ենք*» պատումում ծաղրվում է վանեցիների բարբառում խ բաղաձայնի հաճախակի կիրառությունը.

Երկու վանըցիյի ին կուրբաթութե /օտարություն/, խասիր ի չում Ալմանի աշխար: Օրմ Ալմանի թակավոր տաշտի մեչ էսա վանըցերաց կը տիսնա, իտոնց խագած խայրվներաց կը խասկնա, որ իտոնք օտար մարթ են: Կը խարցուցի, թե ի նչ միլաթ եք:

– *Խայ ենք, – կասեն վանըցիք:*

Դե մեյ խա՛ճեր լեզվով գրուցելի, տիսնամ:

Խայերաց մեյն կը տառնա ու ինգրոչ կասի.

– *Խնամի՛ Խեպո, խունգար խրամե խայերեն խոսանք:/Խնամի Խեխո, թագավորը հրամայում է հայերեն խոսենք/:*

Ալմանի թակավոր որ կը լսի ինոնց գրոց, կասի.

*Ավա՛ր, ավա՛ր, էլ մեյի գրուցիե, մեր լեզվի մեչ էնկանդար խ,խ,խ լսեր եմ, որ էլ ուրիշի ասած խ-խ-ն չե ուզե լսեմ*¹³

¹⁰ Ա.Մարգարյանի անձնական հավաքածու:

¹¹ Նույն տեղում:

¹² Նույն տեղում:

¹³ Շիծաղում են վանեցիները, էջ 156:

Շիրակցիների խոսվածքին հատուկ է պայմանականի գ/կ/ եղանակիչի յուրահատուկ արտաբերումը.

– *Հարևանի ախշիկ մը ունիմ, սիրեմ գր:*

– *Հետո՞ :*

– *Հետո ամուսնանամ գր:*

– *Միրելն ու ամուսնանալը հասկացա, բա դրանց վերջի գ-ը՞ն՞ ինչն ա:*

– *Գուրգուրեմ գր¹⁴:*

Սխալ հնչարտաբերումը ևս կարող է անսպասելի ծիծաղի աղբյուր հանդիսանալ: Նման գվարձախոսական կառույցով զավեշտի ստեղծումը ոչ միայն ծիծաղ է առաջացնում, այլև օգնում է քննադատելու լեզվական սխալ վերարտադրությունը և քաղթենիական պահվածքը.

Մեկը հարցրնում է.

– *Քո՛ւր ջան, անունըդ ի՞նչ է:*

Ասմա՝ Ձիաննա /իմա՝ Դիաննա/:

– *Ճիշտն օր ըսեմ, ընձի էլ էշ Վալոդ կըսեն¹⁵:*

Ֆիզիկական թերության /ատամների/ պատճառով սխալ հնչարտաբերումը ևս կարող է անսպասելի ծիծաղի և զավեշտի առաջացման պատճառ դառնալ.

Կիրովականցի Ռուբենին հարցնում են.

Քանի՞ էրեխա ունես:

Ասմա՝

Շանաշարը, Շաշիկը, Շարոշ, Շրբուհիշ....

Ասմեն՝

– *Տնաշե՛ն, որ ատամներըտ ուզորա էրեխանցըտ անուններ դնեիր, չէր քի՞...¹⁶:*

Անեկդոտ-գվարձախոսություններում անսպասելի ծիծաղ կարող է առաջանալ որոշ բարբառներում առկա անհարկի հնչյունահավելման դրսևորումը: Այսպես, օրինակ, Լոռու խոսվածքում ռուսերեն *կալբասա* բառը ժողովուրդը արտասանում է *կալբաստ*: Լոռեցի գվարձախոսի կողմից *տ*-ի կիրառության ինքնատիպ մեկնաբանությունն էլ

¹⁴ Ա.Սարգսյանի անձնական հավաքածու:

¹⁵ Նույն տեղում:

¹⁶ Նույն տեղում:

դարձել է այդ պատումի գավեշտի մեխը.

Լոռեցի Ռուբենը մըտնըմ ա խանութ, թե՛

– Քիրա՛ ջան, ինձ մի կիլո կալբաստ տու:

Խանութպանն ասմա.

– Կալբասը հըլա հըսկացանք, Ռուբե՛ն քեռի, բա տ-ը՞ն ինչն ա:

Բալա՛ ջան, տ-ն էլ վրի կլեպն ա, /տարբերակ՝ կաշին ա/ – ասըմ ա Ռուբենը¹⁷:

Լեզվական արատի՝ կակազելու պատճառով կտրտված հնչյունախմբերով արտաբերված խոսքը պատճառ է դարձել մի շարք զվարճախոսությունների ստեղծման: Դրանք առկա են թե՛ XIX դ. երկրորդ կեսերին և դրանից հետո, թե՛ մեր օրերում հրատարակված ժողովածուներում ու նորօրյա գրառումներում.

Մինը հարցրեց միւսին.

– Անունդ ի՞նչ է,

Եվ նա կակազ լինելով, ասաց.

Մօ... մօ... մօ... սէս:

Եղբա՛յր, իմ անունս էլ Մօսէս է, բայց էղքան երկար չէ՞:

Լեզվական արատին առնչվող անեկոտոներ ստեղծվեցին նաև 1988 թ. երկրաշարժի տարիներին.

Լենինականցին հարցընում ա լոռեցուն.

Ախպե՛ր ջան, ուրդեղ կապրիս:

Դո-դո-դո- մի-կում:

Ես էլ դոմիկում կապրիմ, բայց իմըս էղքան էրգար չէ՞:

Այսպիսով, հնչյունական միջոցներով ու ոճական հնարանքներով (բաղաձայնների կուտակում, ձայնեղների խլացում ու խուլերի ձայնեղացում, երգեցիկ տոն և երկարացման երանգ են) հարուստ հայ ժողովրդական երգիծական մանրապատումները և զվարճախոսությունները հիմնականում առնչվում են կա՛մ հայոց լեզվի տարատեսակ բարբառների հնչարտաբերման կերպին, կա՛մ արտաբերողի կողմից խոսքի վերարտադրման կամա, երբեմն էլ ակամա գավեշտալի դրսևորմանը, սակավ դեպքերում նաև՝ բառերի անհարկի հնչյունահավելման կիրառությանը:

¹⁷ Նույն տեղում:

¹⁸ **Գ.Շիրմազանեան**, *Անեկոտոներ*, Թիֆլիս, 1878, էջ 156-157:

¹⁹ Ա.Մարգարյանի անձնական հավաքածու:

Саркисян Армен – Использование звуковоспроизводства в армянских анекдотах. – Армянские народные сатирические миниатюры и анекдоты, богатые различными звуковыми и стилистическими возможностями (концентрация согласных, оглушение звонких и озвончение глухих согласных, мелодичный тон и манера затягивать звук) в основном соотносятся либо с различной диалектной артикуляцией армянского языка, либо с сознательным и иногда неосознанным смешным воспроизводством рассказывающего, а в редких случаях и с использованием ненужных дополнительных звуков в словах.

Sargsyan Armen – The Use of Articulation in Armenian Folk Jokes and Humorous Sketches. – Different phonetic and stylistic modifications (such as consonant accumulation, devocalization of voiced and vocalization of voiceless consonants, melodious tone, pitch stresses, etc.) are intensely used in Armenian humorous folk sketches and jokes. They can be either manifestations of various sound articulation modes of different Armenian dialects or the teller's intentional/unintentional humorous expressions, and rarely applications of unnecessary sound additions.

Վարդանյան Սերգեյ (Հայաստան,
ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ)

**ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ԲՆԱԿՎՈՂ ՀԱՄԵՆԱՀԱՅԵՐԻ ԱՐԻ
ԼԵԶՎԱԿԻՃԱԿԸ**

Հայ նշանավոր գրող, իրավաբան, 1908 թվականից Օսմանյան կայսրության խորհրդարանի անդամ Գրիգոր Զոհրապը 1913 թ. Փարիզում, Մարսել Լեար ծածկանունով հրատարակած «Հայկական հարցը փաստաթուղթերու լույսին տակ» ֆրանսերեն գրքում, անդրադառնալով հայերի բռնի իսլամացմանը, հիշատակում է նաև համշենահայերին: Նա գրում է. «Վեց դարերէ ի վեր ինկած Օսմանեան տիրապետութեան տակ, իրենց պատմութիւնը ուրիշ բան չէ, եթէ ոչ երկար մարտիրոսագրութիւն մը: Շատերը, փրկելու համար իրենց կեանքն ու ստացուածքը, ստիպուած են իսլամանալ (Թորթումի, Պայպուրթի շրջան, Էրզրումի նահանգին մէջ՝ 1820: ... Սլիւանի շրջան, Պիթլիսի նահանգին մէջ՝ 1830: Համշենի, Քարատերէի շրջան, Տրապիզոնի նահանգին մէջ՝ 1830)»¹: Թեև Գ. Զոհրապը որոշակի թվականներ է նշում, անշուշտ, կրոնավիճակությունները գործընթացներ են, որոնք կատարվել են և՛ այդ թվականներից առաջ, և՛ հետո: Համշենի և Կարադերեի (Սև գետի) դեպքում բռնի իսլամացումը հիմնականում տեղի է ունեցել XVIII դ. առաջին կեսին²:

Որքա՞ն էր բռնի իսլամացված համշենցի հայերի թիվը՝ մեզ անհայտ է, քանի որ Օսմանյան կայսրության պետական վիճակագրական տարեգրքերում (սալնամե) իսլամ դավանող բոլոր բնակիչները գրանցվում էին նույն՝ «իսլամ» սյունակում, իսկ հայ էին համարվում միայն Հայ Առաքելական եկեղեցու հավատացյալները, որոնք արձանագրվում էին որպես «էրմենի», բայց կաթոլիկ և բողոքական հայերը

¹ Գ. Զոհրապ, *Երկերի ժողովածու, յօդուածներ եւ ուսումնասիրութիւններ*, հ. 3, Ե., 2002, էջ 514:

² Տե՛ս Ս. Հայկունի, *Նշխարներ, կորած ու մոռացուած հայեր, Տրապիզոնի հայ-մահմետական գիւղերն ու նրանց աւանդութիւնները*. – Սրբարատ, 1895, N 7, էջ 239-243, N 8, էջ 293-297, Ս. Վարդանյան, *Կարևոր սկզբնաղբյուր մահմեդականացված հայերի մասին*. – Պատմաբանասիրական հանդես, 2004, N 3, էջ 159-170:

հաշվառվում էին այլ ազգերի կաթոլիկների և բողոքականների հետ՝ համապատասխանաբար որպես «քաթոլիք» և «փրոթեստան»:

Անշուշտ, թուրքական արխիվներում կլինեն փաստաթղթեր, որոնք կօգնեն որոշ լույս սփռել այս հարցի վրա, որը թուրքական իշխանություններին ևս հետաքրքրում է: Այդ է վկայում այն, որ Թուրքիայի Ազգային անվտանգության խորհրդի հանձնարարությամբ են Մալաթիայի Ինտելյուսի անվան, Էլազըղի (Խարբերդ) Ֆըրաթ (Եփրատ) և Կայսերիի (Կեսարիա) Էրջիյես համալսարանների գիտնականներն ուսումնասիրել Թուրքիայում բնակվող ազգերի խճանկարը: Նրանք 2000 թ. կազմած զեկուցագրում թուրքերի, հայերի, քրդերի, արաբների, հրեաների, հույների, վրացիների, լազերի կողքին նշել են նաև Ռիզեի և Արդվինի նահանգների համշենցիներին (Hemşinliler)³՝ սրանով իսկ ակամա ժխտելով այն գիտնականների պնդումները, թե համշենցիները թուրք են: Ըստ զեկուցագրի՝ երկու նահանգների համշենցիների թիվը 13 հազար է: Թե ինչ սկզբունքով է արվել հաշվառումը, մեզ անհայտ է, եթե նույնիսկ հիմք է ընդունվել մայրենի բարբառի իմացությունը, ապա այն փոքրացված թիվ է: Վերջին տարիներին քանիցս շրջագայելով Թուրքիայի Արդվինի նահանգի Խոփայի (Հոփա) և Բորչքայի գավառներում, մեզ հաջողվել է պարզել բոլոր այն գյուղերը, որոնցում բնակվում են համշենցի իսլամադավան հայեր, և որոնք խոսում են հայերենի Համշենի բարբառի տեղական խոսվածքով, որն անվանել ենք Խոփայի խոսվածք, և որն ունի երկու ենթախոսվածք՝ արդալացիների և թուրցևանցիների (այսինքն՝ Արդալա գյուղի և դրսեցիների՝ մյուս գյուղերի բնակիչների): Խոփայի խոսվածքը մենք սկսել ենք ուսումնասիրել 1984 թ. Ղազախստանում և Ղրղզստանում, որտեղ բնակվում էին Աջարիայի սահմանամերձ գյուղերից 1944 թ. արքառված համշենցի հայերը: Արդալացիների և թուրցևանցիների ենթախոսվածքների տարբերություններից նշենք միայն առավել աչքի ընկնողը՝ արդալացիների ենթախոսվածքում *ը*-ն հնչյունափոխվում է *յ*-ի, կամ երկու ձայնավորների միջև սղվում է⁴:

³ Տե՛ս *Etnik rapor Malatya dosyasından çıktı.* - Agos, Istanbul, 2008, Haziran 13.

⁴ Տե՛ս *Հայն համշենական*, ժողովածու, հ. 3 (կազմեց, խմբագրեց, առաջաբանը գրեց և ծանոթագրեց Ս. Վարդանյանը), Ե., 1989, էջ 201-246, **Ս. Վարդանյան, Նախկին Խորհրդային Միությանում բնակվող մահմեդական հայերը. – Բազմավեպ, 1996, N 1-4, էջ 189-200, **Նույնի, Կրոնափոխ համշենահայերի****

Մեր մոտավոր հաշվումներով՝ միայն Խոփայի գավառի 33.724 (2013 թ.) բնակիչներից շուրջ 20 հազարը բարբառախոս համշենցի հայ է: Նրանք բնակվում են Խոփա քաղաքում (որի 18.487 բնակիչներից 10 հազարից ավելին համշենցի հայեր են), ինչպես նաև 22 գյուղերում և գյուղակներում՝ Բաշոբա (նախկին Խիգո, Խիգոբա), Յուլդերե (Չուրբիջի), Էշմեքայա (Արդալա), Փնարլը (Անչիոդ, Անչորոհի), Գյունեշլի (Չադրինա), Քոյունջուլար (Չալունա), Չաուշլու, Բալըքլը (Չենդիդ), Հենդեք (Գարջի) գյուղերում, Քեմալփաշա (Մաքրիյալ) գյուղախամբում, որի մեջ են մտնում Աքդերե (Չոլի քեդ), Քարասուանիյե (Խեցեղն, Հեցեղան), Օսմանիյե (Քաշոլլու քեդ), Չամուլու (Չանչաղան, Չանչախունա), Քյազիմիյե (Վելի Մարփ), Դերեիչե (Խելու քեդ), Քյոփրուջու, Ուչ Քարդեշ, Քայա գյուղերը (Քայա գյուղը կազմված է Հալբաշի, Շանա, Փափաթ, Չաքմադին գյուղակներից): Գավառի մյուս գյուղերի բնակիչները մայրենին մոռացած թուրքախոս իսլամացված լազեր են, որոնք, ըստ Ստամբուլի «Վոլ ա» (Ով է) երաժշտախմբի ղեկավար, համշենցիների «Հադիզ» միության փոխնախագահ Հիքմեթ Աքչիչեքի (ծնվ. 1963 թ. Մաքրիյալում) և Խոփայում հրատարակվող «Բիր յաշամ» (Մի կյանք) ամսագրի խմբագիր Ջեմիլ Աքսուի (ծնվ. 1977 թ.) վկայությունների՝ համշենցի հայերին «երմենի» են անվանում: Ի դեպ, համշենցի հայերն էլ նրանց ճան՝ «ջօն» են ասում:

Շուրջ 3 հազար իսլամացված, բայց հայախոս համշենցի հայեր են բնակվում հարևան Բորչքայի գավառի (բնակչությունը 2013 թ.՝ 24.662) Բորչքա քաղաքում, որի 11.770 բնակիչներից ենթադրաբար 1.500-ը համշենցի հայեր են, ինչպես նաև Չայլը (նախկին Բեդլիվան), Եշիլքոյ (Մանաստըր) և Չիֆթեքյոփրու գյուղերում: Նշենք, որ տեղում կատարած ուսումնասիրությունների շնորհիվ պարզել ենք, որ վերը թվարկված 25 հայախոս գյուղերից 4-ում՝ Խոփայի գավառի Էշմեքայա (նախկին Արդալա), Փնարլը, Գյունեշլի և Բորչքայի գավառի Եշիլքոյ գյուղերում խոսում են արդալացիների ենթախոսվածքով: Հասկանալի է, որ բնակչության տեղաշարժերի, քաղաքներում վերաբնակվելու, ամուսնությունների պատճառով հաճախ են երկու խոսվածքների կրողները ապրում նույն հարկի տակ կամ հարևանությամբ:

Թե երբ, որ թվականին են համշենցի կրոնափոխ հայերը բնակություն հաստատել այդ գավառներում, տեղի բնակիչները, որոնց հետ բազմիցս զրուցել ենք, չգիտեն: Ընդհանուր կարծիքն այն է, որ իրենց նախնիներն այդտեղ են եկել XIX դ.: Վենետիկի Մխիթարյան միաբաններից Հ. Մինաս վրդ. Բժշկյանը, որը տրապիզոնցի էր և 1818 թ. շրջագայել է Սև ծովի ափերով, եղել նաև Խոփայում՝ այն անվանելով «փոքր արև և նաատեղի», հայերի չի հիշատակում, իսկ ներկայիս համշենցի հայերի ամենամեծ գյուղի՝ Մաքրիյալի մասին, որն անվանում է Մաքրագալա, գրում է, որ «առաջ անուանի տեղ է եղեր, հիմա լազերու տեղ է»⁵: Բայց երբ 1878 թ. Սան Ստեֆանոյի և Բեռլինի պայմանագրերով Ռուսաստանին անցան Խոփա քաղաքից հյուսիս գտնվող Մաքրիյալն ու մյուս գյուղերը, արդեն դրանցում համշենցի հայեր էին բնակվում:

Առաջիններից մեկը, որ 1883 թ. մամուլում անդրադարձավ Բաթումի օկրուգին միացված գյուղերի մահմեդական հայերին, Հարություն Գաթենյանն էր: Նա գրում է, որ համշենցի մահմեդական հայերը հնուց սովորություն են ունեցել զարնանը ելնել Կղարջքի սարերը, ըստ այդմ պետք է ենթադրել, որ նրանք կամ վաղուց էին բնակվում Խոփայի գյուղերում, կամ Կղարջք էին գալիս Համշենից: Ո՞վ էր Հ. Գաթենյանը, որ ծանոթ էր այդ իսլամացված հայերի նիստուկացին: Ցավոք, հանրագիտարաններում նրա մասին ոչինչ չկա գրված: Երկար փնտրտուքից հետո մեզ հաջողվեց որոշ կենսագրական տեղեկություններ գտնել 1917 թ. Թիֆլիսում հրատարակված «Հայաստան» թերթում, որում տպագրված մահախոսականից տեղեկանում ենք, որ Թիֆլիսում հանկարծամահ է եղել Հարություն Գաթենյանը: Մահախոսականում նշված է նաև, որ նա «ունէր ձեռագիր աշխատութիւններ Արդւինի շրջանին թրքախօս հայերու վրայ, որոնք բաւական հետաքրքիր էին և ունէին պատմական մեծ արժէք, ... այս բոլոր գրաւոր աշխատութիւնները կորսուեցան Կարնոյ բոլոր ստացուածքին հետ»⁶: «Հայաստան» թերթից քաղելով՝ ներկայացնում ենք Հ. Գաթենյանի մասին կենսագրական որոշ տվյալներ: Նա ծնվել է 1852 թ. Շավշե-

⁵ Մ. վրդ. Բժշկեան, Պատմութիւն Պոնտոսի, որ է Սեւա ծով, Վենետիկ-Ս.Ղազար, 1819, էջ 98:

⁶ Վ.Ողբունի, Յարութիւն Գաթենեան. – Հայաստան (Թիֆլիս), 1917, նոյեմբերի 24:

թում, սովորել է Արդվինում ու Բաթումում, ուսուցիչ է աշխատել Կարսում, այնուհետև Արդահանում եղել պաշտոնյա՝ տեղամասի պետ: Գիտեր հայերեն, թուրքերեն, ռուսերեն և ֆրանսերեն, ինչի շնորհիվ 1901 թվականից Էրզրումի Ռուսական հյուպատոսության թարգմանիչն էր: Լինելով շավշեթցի՝ նա մանկուց շփվել է Խոփայի շրջակա գյուղերի հայերի հետ և 1883 թ. «Մշակում» տպագրել «Նամակ Արդահանից» վերնագրով մի փոքր հոդված, որում պատմում է այդ հայերի մասին. «Բաթումի մերձակայքում համշենցի հայախօս հայ-մահմեդականները, լինելով ըստ մեծի մասին տաւարապահ, հնուց սովորութիւն ունեն գարնանը ելնել իրանց տաւարների հօտերով... Արդահանի, Արդանուչի ու Շավշեթի մէջտեղերում գտնված Կղարջքի սարերի վրայ, Ճոթխ գետի հովիտների առատ արօտներում, իրանց հօտերը ազատօրէն արածացնելու համար: Մրանք առհասարակ շատ տաքարիւն մարդիկ են. նրանց կանայքը չափազանց գործունէայ և տնտէս են. ընտանեկան խօսակցութիւնները բոլորովին հայերէն լեզուով են կատարում, տաճկերէնը խօսում են ըստ հարկին: Նրանց խօսակցութիւնները մի որ և է հայ հեշտ չէ կարող հասկանալ, նրա համար որ սաստիկ շուտ ու կոկորդաձայն են խօսում: Նրանց ոճը թէն Խոտորջրի հայերի ոճին մի քիչ համաձայն է, սակայն խառն է շատ գրաբար ու խորթ և գաւառական բառերով»⁷:

Չինգ տարի անց՝ 1888 թ., նա Շավշեթին նվիրված իր հոդվածում կրկին անդրադառնում է Խոփայի իսլամադավան հայերի լեզվին. «Այս համշենցի հայ-մահմեդականները, թէև կորցրել են իրանց քրիստոնէական կրօնը, սակայն չեն կորցրել իրանց մայրենի լեզուն: Մրանց հայերէնը, որը իրանց ընտանեկան լեզուն է, մօտենում է մի քիչ մեր գրաբար լեզվին, բայց հնչիւնները անտանելի կերպով խորթ ու կոպիտ են, այնպէս որ շատ անախորժ է գալիս ականջին և դժուարալուր է լինում: ...Մրանք շատ հեռու են պահում իրանց միւս մահմեդականներից: ...Իրանց խօսքի համեմատ, սրանք իբրև հաշում են Անիի գաղթականներից, սակայն Համամաշէն քաղաքի բնակիչներից ևս հաշւել հաւանական է, ինչպէս և կոչվում են: ...Տաճկաստանի մէջ գտնված համշենցի հայ-մահմեդականների գիւղերն են, որքան իրանցից ստուգած եմ՝ Խօփայում կամ փոքր Համշէնում Զալինա 80 տուն, Խինկօբա 80 տուն, Զուրփիջի 30 տուն, Արդալա 60 տուն, Չավուշլուկ

⁷ Թ. Գաթէնեան, *Նամակ Արդահանից*. – Մշակ (Թիֆլիս), 1883, նոյեմբերի 5:

Նիկոմեդիայի (Իզմիթ) գավառում բնակություն հաստատած կրոնափոխ հայերի մասին այսքան կարևոր տեղեկություններ է հաղորդում: Պարզվեց, որ այդ հողվածի հեղինակը Մինաս Գասապյանն է, ով ծնվել է 1882 թ. Նիկոմեդիայի (Իզմիթ) Պարտիզակ քաղաքում, 12 տարի ապրել է Բուլղարիայում, Շվեյցարիայում ու Անգլիայում և 1908 թ. վերադարձել է ծննդավայր: Երիտթուրքական հեղափոխությունից հետո երկրում հաստատված որոշ ազատությունների օրերին՝ 1913 թ., նա արդեն իր իսկական անունով է հանդես գալիս և «Ազատամարտի» հողվածը, մի փոքր հավելելով, արտատպում է իր «Հայերը Նիկոմեդիոյ գաւառին մէջ» գրքում¹⁰: Էսկի Շեհիր քաղաքում վարժարանի տնօրեն աշխատելիս՝ 1915 թ., ձերբակալվում է և 3 տարի անցկացնում բանտում, որտեղից ազատվելուց հետո, որպես վերստին ծնված, ընտրում է նոր ծածկանուն՝ Վերածին: Նա 25 տարի թղթակցել է հայ մամուլին, 1940 թվականից եղել է «Ասպարեզի» (Լոս Անջելես) խմբագիր, մահացել է 1945 թ.¹¹:

Բացի վերոնշյալ նահանգների գյուղերից՝ բազմաթիվ հայախոս համշենցիներ բնակվում են նաև Թուրքիայի մեծ քաղաքներում, հատկապես Բուրսայում, Իզմիրում, Անկարայում, Ստամբուլում, որտեղ նրանք 2011 թ. հիմնել են Համշենական մշակույթի ուսումնասիրման և պահպանման «Հադիզ» միությունը:

Մեր մոտավոր հաշվումներով՝ այսօր Թուրքիայում բնակվում է շուրջ 35-40 հազար հայախոս իսլամ համշենահայ, որոնք իրենց անվանում են համշեցի կամ հոմշեցի:

Հետաքրքիր է, որ կրոնափոխ համշենցի հայերի շուրջ 14 գյուղ էլ կա Էրզրումի նահանգում: Ցավոք, դրանց մասին գրավոր աղբյուրներ մենք չենք գտել, միայն մեկի մասին կան տեղեկություններ 1903-1905 թթ. Վենետիկում հրատարակված «Պատկերագարդ բնաշխարհիկ բառարանում», որի Գզըլ-Գիլիսե կամ Գըզըլ-Քիլիսե բառահողվածից տեղեկանում ենք, որ գյուղն ունի 65 տուն, որից 30 տունը մահմեդականներ են, 35 տունը քրիստոնյա հայեր են: Գյուղացիները մեծ մասամբ 1830 թ. գաղթել են Տրապիզոնի նահանգի Համշեն

¹⁰ Տե՛ս Մ.Գասապյան (Ֆարիստ), *Հայերը Նիկոմեդիոյ գաւառին մէջ*, Պարտիզակ, 1913, էջ 143-147:

¹¹ Տե՛ս Գ.Լազեան, *Դէմքեր հայ ազատագրական շարժումէն*, Մոնթեբելլո, 1993, էջ 353-359:

գավառից, քրիստոնյա հայերը «մահմետականաց հետ արենակցութիւն և ազգականութիւն ունին, դեռ մինչև ցարդ՝ կը գտնուին Հայոց մէջ այնպիսիք, որոց կամ մօրաքրոջ, կամ հօրաքրոջ և կամ հօրեղբոր որդիք մահմետական են: Եկեղեցին՝ Ս. Նշան, բաւական մեծ և շքեղ է, կառուցեալ 1865-ին... Հայք ունին նաև վարժարան մը 52 աշակերտներով»¹²: 2012 թ. մեզ հաջողվեց լինել այդ գյուղում, որն այժմ կոչվում է Գյուղեյայլա: Գյուղացիները հիշում էին, որ իրենց նախնիները գաղթել են Համշենից, նրանք ցույց տվեցին եկեղեցու տեղը, որտեղ բացարձակապես ոչինչ չի պահպանվել, բոլոր հետքերն իսպառ վերացվել են: Մենք եղանք նաև Զաղջիք, այժմ Շենյուրթ կոչվող գյուղում, որի բնակիչների ասելով՝ իրենց նախնիները գաղթել են Չամլը-հեմշինի Մոլլավեյիս (այժմ Ուլքյու) գյուղից:

Յաքութիյե գավառի Գյուղեյայլա և Շենյուրթ գյուղերում, որոնց բնակիչներն արդեն ամբողջովին թուրքախոս են դարձել, կարճ ժամա-նակամիջոցում հնարավոր եղավ գրի առնել մեկ տասնյակից ավելի բառեր, որոնց մի մասը թեև ծագումով հայերեն չէ, բայց դարեր շարունակ լայնորեն օգտագործվել է հայերենում: Մեր գրառած բառերն են՝ **ագիշ**-ակիշ, **ախըր**-ախոռ, **աղփուն**-աղբյուրի մոտ կանաչ հատված, **դավար**-ոչխարի հոտ, ոչխարի քանակ, **էվէիք**-ավելուկ, **թանդըր**-թոնիր, **լավաշ**-լավաշ, **լօռ**-կաթնամթերքի տեսակ է, **հեղիք**-խորը ձյան վրայով քայլելու համար ձվաձև ճկված փայտից պատրաստված հարմարանք, որը պարաններով ամրացվում է կոշիկներին, **մերէք**-մարագ, **սոխարաձ**-սոխարած, **փանջար**-կաղամբի տեսակ է, **փեք**-բակ, փարախ, **քօմ**-գոմ:

Երկու գյուղերի բնակիչներից հարցուփորձ անելով, ինչպես նաև ճանապարհորդության ընթացքում պարզեցինք, որ Էրզրումի նահանգում կա կրոնափոխ համշենահայերի ևս 12 գյուղ, որոնց բնակիչներին երբեմն թուրքերը սխալմամբ լազ են անվանում, հավանաբար Տրապիզոնի նահանգի Լազիստանի սանջաքից, որի մեջ էր մտնում շեմշին գավառը, գաղթած լինելու և լազերի նման հազմվելու պատճառով:

¹² Ս.Էփրիկեան, Պատկերագրող բնաշխարհիկ բառարան, հ. Ա, Վենետիկ, 1903-1905, էջ 318:

Թուրքիայում վարչական միավորների և գյուղերի անվանումների փոփոխությունների պատճառով հաճախ դժվար է լինում ճշտել բնակչության շրջանում շրջանառվող հին անուններին փոխարինած նոր անվանումները: Ներկայացնում ենք էրզրումի նահանգի այն 14 գյուղերի ցանկը, որոնցում ապրում են Համշենից և Չամլեհեմշինից 1830-ական թթ. վերաբնակեցված կրոնափոխ հայեր, և որոնց լեզուն ուսումնասիրելով՝ կարելի է բազմաթիվ հայերեն բառեր արձանագրել՝ Գյուզեյայլա, Շենյուրթ, Քյոշք, Ադրըջըք, Էլլիհանե, Թորթումի գավառում՝ Քարլը (հին անունը՝ Նոր շեն), Յաղջիլար (Քարինքոս, Քարնգոց), Քըրմալը (Դանքար), Խաչութ (հավանաբար Աշոտի վանք կոչվող գյուղն է, որն այժմ կոչվում է Մեյդանլար), Ջիյարեթ (Խոզբիրիք), Բախտանց (գուցե նախկին Վախտանգաց գյուղն է, որն այժմ կոչվում է Թիփիլի), Գովանց, նաև Սպերի կողմերում գտնվող Էշքինքայա (Բիրդենգագ):

Կարևոր ենք համարում նշել, որ գյուղերի այս ցուցակն արտացոլում է 2012 թ. իրավիճակը և, հասկանալի է, չի պատկերում կրոնափոխ համշենահայերի 1830 թ. վերաբնակեցման քարտեզը, քանի որ անցած 180 տարվա ընթացքում, բնականաբար, եղել են բնակչության զգալի տեղաշարժեր:

Վերջապես անդրադառնանք Ռիզեի նահանգին, որի տարածքում է գտնվել պատմական Համշենը, որն այժմ բաժանված է տարբեր գավառների: Այսօր իսլամադավան հայեր են ապրում Ռիզեի նահանգի բազմաթիվ բնակավայրերում, բայց նրանց թիվը հատկապես մեծ է Հեմշին (հին անունը՝ Համշեն), Չամլըհեմշին, Իքիզդերե (Քուրա-ի Սեբա), Չայելի (Մափավրի), Փագար (Աթինա), Արդեշեն (Արտաշեն) գավառների գյուղերում և քաղաքներում: Մեր կարծիքով՝ նահանգի 328.205 (2013 թ.) բնակիչներից շուրջ 40 հազարը կրոնափոխ հայեր են, մի այդքան էլ, գուցե ավելի շատ, արտագաղթել են Թուրքիայի և այլ երկրների մեծ քաղաքներ, և միայն ամռան ամիսներին են նրանցից շատերը վերադառնում այդ չքնաղ բնաշխարհում գտնվող իրենց հայրենի օջախներ՝ արձակուրդն անցկացնելու:

Մի շարք վկայությունների համաձայն՝ մինչև 1960-1970-ական թթ. այդ գյուղերում դեռևս կային հայախոսներ: Ըստ Փագարի գավառի կրոնափոխված հայերի Սուբաշը (նախկին Խաչափիթ) գյուղի բնակիչ, ճանաչված երգիչ Գյոքհան Բիրբենի (ծնվ. 1967 թ.)՝ իր մոր օգտագործած բառերի 30-40 տոկոսը հայերեն է: Ասում են, որ այսօր էլ հատու-

կենտ բարբառախոսներ կան Չայեյլիի գավառի Ռաշոտ (այժմ Յըլդըզեյի) գյուղում: Ի դեպ, ծնունդով ռաշոտցի, ստամբուլաբնակ երգչուհի, թուրքերենի և թուրք գրականության դասախոս Այշենուր Քոլիվարի (ծնվ. 1976 թ.) վկայությամբ՝ գավառում ապրող իսլամ վրացիներն ու լազերը ռաշոտցիներին «սովելի», այսինքն՝ հայ են ասում: Ռաշոտից բացի՝ գուցե այլ գյուղերում ևս հայախոսներ կան, բայց, ընդհանրապես, այժմ շատերը միայն հայերեն բառեր ու առանձին դարձվածքներ գիտեն, ոմանք էլ կրկնում են մանուկ հասակում սովորած որոշ ժողովրդական աղոթքներ, բայց իմաստը չեն հասկանում:

Ռիզեի նահանգի բռնի իսլամացված հայերի գյուղերով շրջագայելիս¹³, նաև նախկին բնակիչներին տարբեր քաղաքներում, Խոփալում և Ստամբուլում հանդիպելիս գրի ենք առել նրանց խոսքում առկա բազմաթիվ բառեր, որոնք, մեր կարծիքով, հայերեն են կամ փոխառություններ են, որոնք ենթարկվել են բարբառի օրինաչափություններին:

Այս անգամ հրապարակում ենք Չայեյլիի գավառի Օրմանջըք (նախկին Չոթնես, Չոթինչ, Ջութինջ) գյուղում մեր գրառած բառերի և մանրատեղանունների մի մասը¹⁴: Նշենք, որ որոշ դեպքերում առկա են հնչյունափոխություններ, օրինակ՝ **ք>յ**, գորտնուկ-**գոյդուք**, սարդ-**սայիդ**, **ձ,ծ,ց>չ**, օրինակ՝ ձմեռոց-**չմեռոչ**, արծիվ-**այչիֆ**, **ծ>ջ** հնչյունափոխություն, օրինակ՝ ծմակ-**ջմազ** և այլն:

Կարծում ենք պատճառն այն է, որ Ռիզեի նահանգի կրոնափոխ հայերը, երկար ժամանակ մեկուսացված լինելով իրենց հայրենակիցներից, կամա թե ակամա կրել են թուրքերենի և համատեղ կամ հարևանությամբ բնակվող իսլամացված ժողովուրդների՝ լազերի, վրացիների և հույների լեզվական ու հնչարտասանական ազդեցությունը. **ագու**-ակոս, **ախօր**-ախոռ, **ավգոն**-աղբյուրի ջրահավաք գուռ, ջրավազան, **այչիֆ**-արծիվ, **առթուն**-պատշգամբ, **ավզուր**-ավազ, ավազախառը հող, **բարբա-բուրբիզ**-ցախավելին շորեր հագրած

¹³ Ռիզեի նահանգի բռնի կրոնափոխված հայերի բնակավայրերը 2010-2012 թթ. այցելել ենք թուրքագետ Լ.Սահակյանի հետ, տե՛ս Լ.Սահակյան, *Հավշենի մանրատեղանունները* (հայերեն, թուրքերեն և ռուսերեն), խմբագիր՝ Ս.Վարդանյան, Ե., 2012:

¹⁴ Օրմանջըք գյուղում մեզ աջակցելու համար խորին երախտագիտություն ենք հայտնում մեր հյուրընկալին՝ Քեմալ Նաբի Ունալին (ծնվ. 1954 թ.) և գյուղապետ Թեմել Գյունեյին, տոհմանունը՝ Խաչիկօղլու (ծնվ. 1958 թ.):

ծիսական տիկնիկ, պուպրիկ, որը երեխաները ձեռքներին յայլաներում շրջում են տնետուն, յուղ, ձու, սերուցք, հաց ու պանիր են հավաքում, ձվածեղ են պատրաստում, որպեսզի մշուշապատ, անբարենպաստ եղանակներն ավարտվեն և արև դուրս գա, **գարֆիչ**-կապիչ, **գաթէղերէվի**-բուսանուն է, **գափչին**-խամսի ձուկ, անձրուկ, **գեզմա**-կանթավոր սավոր, **գեղալ**-գղալի նմանվող շուրջ 2 մետրանոց հարմարանք, որի օգնությամբ քաղում են ծառի բարձր ճուղերի մրգերը, **գեռօջ**-կեռիկ, **գիլէմուր**-օջախի վրա առաստաղից կախված շղթա, որից ամրացնում են կաթսա, թէյնիկ և այլն, **գումբուր**-կուզ, **գունդէղ**-գոմում կովի պանկեյու տեղը, **գօթ**-կոտ, **գունչ**-խմորի գունդ, գունդ, **գօխօն**-հողը փորելու գործիք, թորիս, **գօյդուր**-գորտնուկ, **դօղէլ**-անհասկացող, բութ մարդ, **էլինչ**-էլինջ, **էչուր**-կովերին ջրի տանելու ձայնարկություն, **թէխքի**-թիկենի, **լուչ**-լուծ, **լօյդու**-խիտունջ, **լօրի**-լորենի, **խախէվ**-պնդուկի միջուկ, **խաշվերէլ**-խաշվել, **խաթթումա**-տանիքին խփելու համար փոքր տախտակ, **խավլիլիզ**-մասուր, **խեղվերդուշ**-խրտնէլ, **խէխաչ**-1.պանրի մերան, մակարդ, 2.հորած, բորբոսնած պանիր, **խիլ**-1.սարդոստայնի թել, 2. ձկան ոսկրափուշ, **խլէզ**-մողես, **խրթուլ**-շնչափող, **խրիք**-քլունգի պես աշխատանքային գործիք, **խուչաչուր**-կովի համար եփված ուտելիք, **խօղնօջ**-խտտանոց, խտտ պահելու շինություն, **խօնձօղթ**-փայտածուխ, **խօշ**-սուր փայտի կտոր, **խօրբօլ**-բուսանուն է, **դալափա**, **դօլօփա**-պնդուկի կեղև, **մառօն**-մառան, **մէշնուր**-հացի միջուկ, **մօղօրիք**-ոչ թունավոր օձ, **մօլօշ**-բուսանուն է, **մօլօշ-մօլօշ**-մուրր-մուրր, **չախչախուն**-ջրվեժ, **չանչուլ**-մրգով բեռնավորված ճյուղ կամ խաղողի վագ, **չեմեռօշ**-ձմեռոց, ոչխարների ձմեռելու տեղ, **չեմերքէն** (ասում են նաև՝ **ցեմերգան**) **դօնձ**-ձմռան տանձ, **չէղէլ**-ջարդել, ճգմել, **չերագթէլ**-լուսավորել, **չօրթան**-չորաթան, **ջէբօռդ**-կամիթ, **ջիգուն**-խտտի կապ, **ջեմագ**-ծմակ, **ջեմադէլ**-աչքերը տրորել, **ջեռնադուշ**-ոտքը սահել, ընկնել, **ջիլ**-ծիլ, **սեքմէխօղ**-բուսանուն է, **սայիդ**-սարդ, **սունգ**-սունկ, **վագնաթ**-կաթնամթերք է, **վանաք**-յայլայի մեջտեղի մասը, **ցեփուշ**-ծեփել, **փագ**, **փէզ**-փարախ, քարերով առանձնացված վայր ոչխարներին մեկտեղելու համար, **փաչխա**-փացխա, հյուղակ, **փեղուր**-բուսանուն է, **փեթէզ**-փեթակ, **փէչքուշ**-եզիպատացորենի գլխիկը պարփակող տերևները պոկել, **փիլօնչ**-բուսանուն է, **փէզուշ**-վագել, **փէլիթ**-առանց թթխմորի թխված կլոր հաց, **փերէնքթուշ**-փռտալ, **փիսիկ**-փիսիկ, կատու, **փուցխիչ**-փոցխ, **փօր**-

բոռ, **քեթե**-գաթա, **քեթաթ**-գայլթաթ, բուսանուն է, **քինյե**-կեղև, **քոնոց**-գոգնոց, **օգնի**-ոգնի, **օրոց**-որոց:

Նշենք նաև Չայեղիի գավառում մեր գրառած մանրատեղանուններից մի քանիսը. **Գարմի սահփուր**-Կարմիր աղբյուր, **Գարմի ջուր**-Կարմիր ջուր, գետ, **Գարմի սար**-Կարմիր սար, **Գյավուր մեզալուղ**-գյավուրների՝ անհավատների գերեզմանոց, գտնվում է բռնի կրոնափոխված հայերի Չուրուրլուհոջա (նախկին Բարիք) գյուղում, **Էղի լեռ**-Վերջին յայլա, սարատեղ, **Վեյի լեռ**-Վերևի յայլա, սարատեղ, **Խաչի փու**-Եկեղեցու հանդակ, հրապարակ, **Ղազարի փեթեգ**-Ղազարի փեթակ (սա մի ոչ մեծ ժայռ է, որի վրայի հանդակում Ղազար անունով մեկը նախկինում փեթակներ է ունեցել. այժմ էլ այդտեղ մեղվաբուծությամբ զբաղվողներ կան), **Մեձ օղ**-Մեձ բլուր, **Չեմեոց**-Չեմեոց, **Չերմեչ**-Չերմեչ, յայլա, **Սալսահփուր**-սալքար ունեցող աղբյուր, **Փիլինջուր**-փիլոնջ բույսի աճելու վայր: Ներկայացնում ենք Չայեղիի գավառում մեր գրի առած ևս մի քանի սարատեղերի և արոտավայրերի անուններ, որոնց մի մասը, կարծում ենք, հնարավոր է ստուգաբանել հայերեն. **Անձեր** (կա նաև գյուղանուն), **Էղնաջոր**, **Թավլաունք**, **Լազլաքար**, **Խոդգոնջ** **Շենջողուր** (**Շեմջողուր**), **Սարինջոր**, **Փեղաթ**:

Չիշեցնենք, որ այսքանը գրառել ենք ընդամենը մեկ գյուղում, կարծում ենք, որ Ռիզեի նահանգում հանգամանակից ուսումնասիրություններ կատարելու դեպքում ներկայացված բառացանկը կբազմապատկվի, միայն թե պետք է շտապել, քանի որ օր-օրի քչանում է նման բառապաշար ունեցող մարդկանց թիվը:

Варданыя Сергей – Нынешнее состояние языка Амшенских армян, проживающих в Турции. – В областях Турции Ризе, Ардвин, Эрзрум, Сакаря и Дюздже есть деревни, в которых проживают насильственно исламизированные в XVIII в. амшенские армяне, часть которых говорит на Амшенском диалекте армянского языка, а остальные в разговорной речи употребляют много армянских слов.

Vardanyan Sergey – The Linguistic State of Hamshen Armenians Living in Turkey. – In Rizeh, Ardvin, Erzurum, Saqarya and Dyuzgeh states of Turkey there are villages inhabited by Hamshen Armenians who were turned to Islamic religion in 18th century, the majority of which speak Armenian Hamshen dialect, the others use different Armenian words in their every day speech.